



«Իրավունքների  
պաշտպանություն առանց  
սահմանների» ՀԿ



Եվրոպայում անվտանգության և  
համագործակցության կազմակերպություն  
Երևանյան գրասենյակ

**«Մարդու իրավունքների կրթությունը  
զինված ուժերում»**

դասընթացի նյութեր

**2015**

## Ցանկ

1. «Զինապարտության մասին» ՀՀ օրենք.....	3
2. «Զինճառայողների նյութական պատասխանատվության մասին» ՀՀ օրենք.....	16
3. «Պաշտպանության մասին» ՀՀ օրենք. ....	20
4. «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենք.....	29
5. Հայաստանի հանրապետության զինված ուժերի ներքին ճառայության..... կանոնագիրք.....	51
6. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք, Քաղվածք.....	164

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
Օ Ր Ե Ն Ք Ը**

Ընդունված է Ազգային ժողովի կողմից  
16 սեպտեմբերի 1998 թ.

**ԶԻՆԱՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

**ԳԼՈՒԽ I**

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

**Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան**

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիների զինվորական հաշվառումը, զինվորական ծառայության նախապատրաստությունը, գորակոչը, զինվորական ծառայությունը, պահեստազորում պատրաստությունը կազմակերպելու և անցկացնելու հետ կապված հարաբերությունները:

**Հոդված 2. Զինապարտության մասին օրենսդրությունը**

Զինապարտության մասին օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերից, սույն օրենքից, այլ օրենքներից և իրավական ակտերից:

**Հոդված 3. Զինապարտությունը**

1. Զինապարտությունը Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցելու՝ քաղաքացիների սահմանադրական պարտականությունն է:  
Զինապարտներ են համարվում նախազորակոչային, գորակոչային տարիքի և պահեստազորում հաշվառված արական, ինչպես նաև զինվորական մասնագիտություն ունեցող կամ զինվորական ծառայություն անցած իգական սեռի քաղաքացիները:  
2. Քաղաքացիների զինապարտությունն ընդգրկում է՝ զինվորական հաշվառումը.

զինվորական ծառայության նախապատրաստությունը.  
գորակոչը և զինվորական ծառայությունը.  
պահեստազորում գտնվելը:

**Հոդված 31. Երկքաղաքացիների զինապարտությունը**

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ընդունած այլ պետության քաղաքացին ազատվում է պարտադիր զինվորական ծառայությունից, եթե մինչև Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ընդունելը ոչ պակաս, քան 12 ամիս ծառայել է այլ պետության զինված ուժերում կամ այլ պետությունում ոչ պակաս, քան 18 ամիս անցել է այլընտրանքային զինվորական ծառայություն, բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պետությունների:
2. Այլ պետության քաղաքացիություն ընդունած Հայաստանի Հանրապետության քաղաքացին չի ազատվում պարտադիր զինվորական ծառայությունից, անկախ այն հանգամանքից՝ ծառայել է նա այլ պետությունում, թե ոչ:
3. Երկքաղաքացին չի ազատվում գորահավաքից և վարժական հավաքից:  
**(31-րդ հոդվածը լրաց. 26.02.07 ՀՕ-76-Ն)**

**Հոդված 4. Զինապարտության կատարման ապահովումը**

1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, անկախ կազմակերպական-իրավական ձևից գործատու կազմակերպությունների և ուսումնական հաստատությունների պաշտոնատար անձինք պարտավոր են՝  
ա) ժամանակին և սահմանված ձևով վարել զինապարտների գրանցամատյանը, զինվորական հաշվառման ենթակա անձանց ցուցակները ներկայացնել նրանց հաշվառման (հաշվառում չունեցողներինը՝ փաստացի բնակության վայրի) զինվորական կոմիսարիատներ, ինչպես նաև տրամադրել հաշվառումից հանվելու, աշխատանքի (ուսումնական հաստատություն) ընդունվելու, տեղափոխվելու, ազատվելու (հեռացվելու) վերաբերյալ տվյալները.  
բ) համապատասխան զինվորական կոմիսարիատի պահանջով զինապարտներին ծանուցել զինվորական կոմիսարիատ կանչվելու մասին.

գ) զինապարտներին ազատել աշխատանքից կամ արձակել ուսումից՝ զինվորական ծառայության կամ զինվորական կոմիսարիատի ծանուցագրում նշված անհրաժեշտ ժամանակով:

2. Հայաստանի Հանրապետության ոստիկանության մարմինները պարտավոր են՝

ա) զինապարտներին անձնագիր տալու կամ փոխանակելու (բացառությամբ արտերկրում գտնվող պահեստազորայինների), ըստ բնակության վայրի հաշվառելու կամ հաշվառումից հանելու գործողությունները կատարել նրանց զինվորական փաստաթղթերում համապատասխան զինվորական կոմիսարիատի կողմից զինվորական հաշվառման վերաբերյալ նշումների առկայության դեպքում: Նախագորակոչային տարիքի զինապարտների անձնագրերն օտարերկրյա պետություններում վավերական լինելու մասին նշումը կատարել մինչև նրանց գորակոչային տարիքը լրանալը, իսկ գորակոչային տարիքը լրանալու դեպքում՝ պարտադիր զինվորական ծառայության գորակոչից ստացած տարկետման ժամանակով:

բ) զինվորական կոմիսարիատներին աջակցել զինապարտներին գորակոչելու, վարժական հավաքի կանչելու և հաշվառելու գործում:

3. Բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովները մեկշաբաթյա ժամկետում պարտավոր են համապատասխան զինվորական կոմիսարիատ հայտնել հաշմանդամ ճանաչված բոլոր զինապարտների մասին՝ անկախ հաշմանդամության խմբից:

4. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինները պարտավոր են մեկշաբաթյա ժամկետում համապատասխան զինվորական կոմիսարիատ հայտնել քաղաքացիական կացության ակտերում զինապարտների կողմից իրենց ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան տարեթիվը փոխելու, ինչպես նաև նրանց մահվան գրանցման մասին տվյալները:

5. Հետաքննության և նախաքննության մարմինները պարտավոր են մեկշաբաթյա ժամկետում համապատասխան զինվորական կոմիսարիատ հայտնել այն գորակոչիկների մասին, որոնց մեղադրանք է առաջադրվել, իսկ դատարանները՝ նշված անձանց վերաբերյալ՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռների և վերջնական որոշումների մասին:

Ազատագրված կամ կալանքի դատապարտված գորակոչիկների հաշվառման վկայականները, զինծառայողների զինվորական գրքույկներն ու դատավճռի պատճենները դատարաններն ուղարկում

են համապատասխան զինվորական կոմիսարիատ՝ դատավճիռներն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում:

Քրեակատարողական հիմնարկները պարտավոր են ազատագրված դատապարտված կամ ազատագրված վայրից արձակված զինապարտների մասին մեկշաբաթյա ժամկետում հայտնել նրանց հաշվառման (հաշվառում չունեցողներինը՝ փաստացի բնակության վայրի) զինվորական կոմիսարիատներ:

6. Հայաստանի Հանրապետության դիվանագիտական և հյուպատոսական մարմինները պարտավոր են՝

ա) Հայաստանի Հանրապետության զինվորական կոմիսարիատից ստացված իրազեկման հիման վրա իրենց հյուպատոսական տարածաշրջանում հյուպատոսական հաշվառման կանգնած գորակոչիկին Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ծանուցել դիվանագիտական մարմին կամ հյուպատոսական հիմնարկ ներկայանալու համար և ներկայացած անձանց ստորագրությամբ ծանուցագիր հանձնել պարտադիր զինվորական ծառայության գորակոչվելու մասին:

բ) իրենց հյուպատոսական տարածաշրջանում հյուպատոսական հաշվառման կանգնած զինապարտի վերաբերյալ տվյալները երկշաբաթյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով տրամադրել Հայաստանի Հանրապետության զինվորական կոմիսարիատին:

գ) իրենց իրավասությունների շրջանակում աջակցել նախագորակոչիկների և գորակոչիկների վերադարձին Հայաստանի Հանրապետություն:

7. Պաշտոնատար անձանց կողմից զինապարտության կատարման ապահովմանը խոչընդոտելն առաջացնում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

**(4-րդ հոդվածը խմբ., փոփ., լրաց. 01.06.06 ՀՕ-128-Ն, խմբ. 30.04.09 ՀՕ-102-Ն, փոփ., լրաց., խմբ. 18.11.09 ՀՕ-215-Ն, փոփ. 19.03.12 ՀՕ-38-Ն, խմբ. 21.06.14 ՀՕ-92-Ն)**

## ԳԼՈՒԽ II

### *ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ*

#### **Հոդված 5. Քաղաքացիների զինվորական հաշվառումը**

1. Զինվորական հաշվառումը նախագորակոչիկների (16-18 տարեկան), գորակոչիկների (18-27 տարեկան) և պահեստագործում գտնվող քաղաքացիների հաշվառման ու հանրապետության գորակոչային, վարժահավաքային և գորահավաքային ռեսուրսների վերլուծության պետական համակարգն է:

Զինվորական հաշվառման կարգը սահմանում է կառավարությունը:

2. Զինապարտների զինվորական հաշվառումը կատարում են նրանց բնակության վայրի զինվորական կոմիսարիատները:

Արտասահմանում բնակվող (մեկ ամսից ավելի) զինապարտների զինվորական հաշվառումը կատարում են դիվանագիտական և հյուպատոսական մարմինները:

Աշխատող և սովորող զինապարտների զինվորական հաշվառումը կատարվում է նաև ձեռնարկություններում, հիմնարկներում, կազմակերպություններում և ուսումնական հաստատություններում:

3. Նախագորակոչիկների զինվորական հաշվառումը համարվում է կցագրում: Կցագրման ենթակա են 16 տարին լրացած արական սեռի քաղաքացիները:

Կցագրումը կատարում են զինվորական կոմիսարիատների հանձնաժողովները՝ ընթացիկ տարվա հունվար-մայիս ամիսներին:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած 16-27 տարեկան արական սեռի զինապարտների կցագրումը կատարվում է սույն կետով սահմանված կարգով:

**(Օանուցում 01.06.06 ՀՕ-128-Ն, 28.11.07 ՀՕ-272-Ն, 18.11.09 ՀՕ-215-Ն, 19.03.12 ՀՕ-38-Ն, 21.06.14 ՀՕ-92-Ն օրենքներով սույն օրենքի 5-րդ հոդվածում կատարվող փոփոխությունները և լրացումները ի սկզբանե օրենսդրի կողմից հղվել են հոդվածի 2-րդ մասին, մինչդեռ պետք է կատարվեին 3-րդ մասում, որի պատճառով 5-րդ հոդվածի ինկորպորացիան չի բերվում:)**

#### **Հոդված 6. Զինվորական հաշվառման և պարտադիր զինվորական ծառայության գորակոչի իրականացման գործընթացում քաղաքացիների պարտականությունները (վերնագիրը խմբ. 18.11.09 ՀՕ-215-Ն)**

1. Քաղաքացիները պարտավոր են զինվորական հաշվառման, ինչպես նաև պարտադիր զինվորական ծառայության գորակոչվելու համար ներկայանալ իրենց հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրի զինվորական կոմիսարիատ:

2. Զինվորական ծառայությունից պահեստ արձակված քաղաքացիները պարտավոր են յոթնօրյա ժամկետում ներկայանալ հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրի զինվորական կոմիսարիատ՝ զինվորական հաշվառման համար:

3. Հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրը փոխելու դեպքում զինապարտները զինվորական հաշվառման կանգնելու համար պարտավոր են ներկայանալ համապատասխան զինվորական կոմիսարիատ՝ հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) նոր վայր ժամանելուց հետո՝ յոթնօրյա ժամկետում:

Զինվորական ծառայության ընթացքում դատապարտված և ազատազրկման ձևով պատիժ կրած անձինք պարտավոր են պատժի կրումից ազատվելու պահից յոթնօրյա ժամկետում ներկայանալ հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրի զինվորական կոմիսարիատ:

4. Զինապարտներն իրենց առողջական վիճակի, ընտանեկան դրության, հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրի, կրթության, աշխատավայրի և պաշտոնի փոփոխությունների մասին պարտավոր են յոթնօրյա ժամկետում հայտնել հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրի զինվորական կոմիսարիատ:

**(6-րդ հոդվածը փոփ. 01.06.06 ՀՕ-128-Ն, լրաց. 28.11.07 ՀՕ-272-Ն, խմբ., լրաց., փոփ. 18.11.09 ՀՕ-215-Ն, լրաց. 19.03.12 ՀՕ-38-Ն, փոփ., խմբ. 21.06.14 ՀՕ-92-Ն)**

**ԳԼՈՒԽ III**

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՁԻՆՎՈՂՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ**

**Հոդված 7. Բժշկական քննությունը և հետազոտումը**

1. Բժշկական քննությունը պարտադիր անցկացնում են զինվորական կոմիսարիատների հանձնաժողովների բժիշկ մասնագետները՝ զինապարտների կցագրման, գորակոչի, զինվորական ծառայության անցնելու և վարժական հավաքի կանչվելու ժամանակ: Եթե տեղում հնարավոր չէ ստանալ քաղաքացու՝ զինվորական ծառայությանը պիտանի լինելու մասին բժշկական եզրակացություն, ապա տեղական գորակոչային հանձնաժողովը պարտավոր է նրան ուղարկել համապատասխան բժշկական հիմնարկ՝ բուժհետազոտում անցկացնելու, իսկ անհրաժեշտության դեպքում նաև բուժում իրականացնելու համար: Այդ բժշկական հիմնարկների ցանկը հաստատում է կառավարությունը:

2. Սույն հոդվածում նշված դեպքերում զինապարտների բժշկական քննությունը և հետազոտումը կատարվում է առաջնահերթ և անվճար:  
**(7-րդ հոդվածը լրաց. 18.11.09 ՀՕ-215-Ն)**

**Հոդված 8. Նախագորակոչային պատրաստությունը**

Հանրակրթական դպրոցներում, նախնական մասնագիտական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում կազմակերպվում և անցկացվում է նախագորակոչային պատրաստություն՝ կառավարության սահմանած կարգով:

**(8-րդ հոդվածը փոփ. 19.03.12 ՀՕ-38-Ն)**

**Հոդված 9. Ուսուցումը պաշտպանական բնույթի մարզատեխնիկական կազմակերպություններում**

Նախագորակոչիկները զինվորական մասնագիտությունների ծրագրով զինվորական ծառայության նախնական պատրաստություն են անցնում պաշտպանական բնույթի մարզատեխնիկական

**կազմակերպություններում՝ զինվորական կոմիսարիատի ընտրությամբ և ուղեգրով:**

**Հոդված 10. Ուսուցումը ռազմաուսումնական հաստատություններում**

1. Ռազմաուսումնական հաստատությունների ընդունելության կարգը հաստատում է կառավարությունը:

Ժամկետային զինվորական ծառայություն անցած կամ անցնող քաղաքացիները ռազմաուսումնական հաստատություններ կարող են ընդունվել մինչև 23 տարին լրանալը:

2. Ռազմական ուսումնական հաստատություններ ընդունված քաղաքացիները համարվում են պարտադիր զինվորական ծառայության զինծառայողներ, օգտվում են օրենսդրությամբ նրանց համար սահմանված իրավունքներից ու արտոնություններից և կրում պարտականություններ՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Այդ հաստատություններից ազատված և հեռացված անձինք փոխհատուցում են իրենց ուսման հետ կապված ծախսերը և 18 տարեկանը լրացած լինելու դեպքում ուղարկվում են պարտադիր զինվորական ծառայության: Ձինվորական ծառայության ժամկետում տվյալ դեպքում հաշվարկվում է միայն առողջական վիճակի, ինչպես նաև ռազմական ավիացիոն ուսումնական հաստատություններում սովորելու դեպքում՝ թռիչքային անհամապատասխանության պատճառով ազատված անձանց ուսման և զինվորական ծառայության ընթացքում ռազմաուսումնական հաստատություններ ընդունված քաղաքացիների նախկինում ծառայած ժամանակաշրջանը: Մինչև 18 տարեկանը լրանալը ռազմական ուսումնական հաստատությունից ազատված կամ հեռացված անձինք հաշվառվում են իրենց հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրի զինվորական կոմիսարիատի գորակոչային բաժնում և 18 տարեկանը լրանալուց հետո հայտարարված գորակոչի ժամանակ ենթակա են գորակոչվելու պարտադիր զինվորական ծառայության՝ ընդհանուր հիմունքներով:

**(10-րդ հոդվածը լրաց. 25.10.00 ՀՕ-104, 18.11.09 ՀՕ-215-Ն, փոփ., լրաց. 19.03.12 ՀՕ-38-Ն)**

## ԳԼՈՒԽ IV

### ԶՈՐԱԿՈՉԸ

#### **Հոդված 11. Պարտադիր զինվորական ծառայության գորակոչը**

1. Պարտադիր զինվորական ծառայության են գորակոչվում 18-ից մինչև 27 տարեկան (բացառությամբ սույն օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքի) արական սեռի գորակոչիկները և մինչև 35 տարեկան առաջին խմբի պահեստագործի սպաները, ովքեր առողջական վիճակի պատճառով ճանաչվել են զինծառայության համար պիտանի՝ խաղաղ պայմաններում:
2. Պարտադիր զինվորական ծառայության գորակոչվելու ենթակա չեն այն անձինք, որոնց նկատմամբ կատարվում է հետաքննություն (նախաքննություն, դատաքննություն) կամ ովքեր նախկինում դատապարտվել են ազատազրկման՝ ծանր կամ առնվազն երկու անգամ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար և ազատազրկման վայրում պատիժը կրել են 3 տարուց ոչ պակաս, ինչպես նաև, եթե կատարել են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և Հայաստանի Հանրապետության դատախազության հաստատած ցանկում նշված հանցագործություն: Նախկինում ազատազրկման դատապարտված և ազատազրկման վայրում երեք տարուց պակաս ժամկետով պատիժ կրած անձանց պարտադիր զինվորական ծառայության գորակոչելու կամ պահեստագործում հաշվառելու կարգը սահմանում է պաշտպանության նախարարը:
3. Շարքային կազմի գորակոչը և գորացրումը կատարվում է Հանրապետության Նախագահի հրամանագրով սահմանված ժամկետներում՝ տարեկան երկու անգամ:
4. Պահեստագործի սպաների գորակոչը և գորացրումը կատարվում է Հանրապետության Նախագահի հրամանագրով սահմանված ժամկետներում: Զորակոչից տարկետում ստացող սպաների կատեգորիաների ցանկը հաստատում է կառավարությունը:
5. Զորակոչի ենթակա շարքային կազմի և պահեստագործի սպաների թվաքանակը սահմանում է կառավարությունը:
6. Պարտադիր զինվորական ծառայության գորակոչը հայտարարվելուց հետո բոլոր գորակոչիկները, ինչպես նաև 27 տարեկանից բարձր տարիքի գորակոչիկները՝ սույն օրենքի 14 հոդվածի 4-րդ մասով

նախատեսված դեպքում, պարտավոր են ծանուցագրում նշված ժամկետում ներկայանալ այն զինվորական կոմիսարիատ, որտեղ նրանք հաշվառված են:

7. Պարտադիր զինվորական ծառայության գորակոչի ժամանակ, ինչպես նաև պարտադիր զինվորական ծառայության ընթացքում բնակության վայրին մոտ գտնվող գորամասում ծառայելու արտոնությունից օգտվում են՝

ա) միայնակ և տարիքային կենսաթոշակի անցած կամ երրորդ խմբի հաշմանդամ հոր կամ մոր միակ զավակը.

բ) Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության, զինված ուժերում և այլ զորքերում ծառայության ընթացքում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետությունում տեղակայված օտարերկրյա պետությունների զինվորական ստորաբաժանումներում ծառայողական պարտականություններ կատարելիս զոհված (մահացած) հայր (մայր) կամ եղբայր (քույր) ունեցող գորակոչիկները.

գ) ամուսնացած և մեկ երեխա ունեցող գորակոչիկները.

դ) երկկողմանի ծնողազուրկ գորակոչիկները, ինչպես նաև միակողմանի ծնողազուրկ այն գորակոչիկները, որոնք չունեն չափահաս քույր կամ եղբայր.

ե) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով՝ այլ գորակոչիկները:

Բնակության վայրին մոտ գտնվող գորամաս է համարվում գորակոչիկի հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրից մինչև 150 կմ տեղակայված գորամասը:

8. Հայտարարված գորակոչի ընթացքում պարտադիր զինվորական ծառայության գորակոչվող եղբայրները, իրենց ցանկությամբ, ծառայության են գորակոչվում միննույն գորամաս:

**(11-րդ հոդվածը լրաց. 03.05.00 ՀՕ-57, 25.10.00 ՀՕ-104, 25.10.00 ՀՕ-106, փոփ., լրաց., խմբ. 01.06.06 ՀՕ-128-Ն, լրաց. 28.11.07 ՀՕ-272-Ն, փոփ., լրաց., խմբ. 19.03.12 ՀՕ-38-Ն)**

#### **Հոդված 12. Պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելը**

1. Պարտադիր զինվորական ծառայությունից ազատվում է՝

ա) հանրապետական գորակոչային հանձնաժողովի կողմից առողջական վիճակի պատճառով զինծառայության համար ոչ պիտանի ճանաչված քաղաքացին՝ հանվելով զինվորական հաշվառումից, կամ

խաղաղ պայմաններում զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչված քաղաքացին՝ հաշվառելով պահեստագործում.

բ) այն քաղաքացին, ում հայրը (մայրը) կամ հարազատ եղբայրը (քույրը) զոհվել (մահացել) է Հայաստանի Հանրապետության պաշտպանության կամ զինված ուժերում և այլ զորքերում ծառայողական պարտականություններ կատարելու ժամանակ, և նա այդ ընտանիքի միակ արու զավակն է.

գ) քաղաքացին՝ կառավարության որոշմամբ.

դ) մինչև Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունն ընդունելն օտարերկրյա պետությունների զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայություն անցած քաղաքացին.

ե) զիտական աստիճան (զիտության թեկնածու կամ զիտության դոկտոր) ունեցող քաղաքացին, եթե նա զբաղվում է մասնագիտական, զիտական կամ մանկավարժական գործունեությամբ:

2. Պահեստագործի սպաները պարտադիր զինվորական ծառայությունից ազատվում են սույն հոդվածի 1-ին մասի «ա» և «գ» ենթակետերի հիմքերով:

**(12-րդ հոդվածը լրաց. 11.10.00 ՀՕ-93, փոփ. 01.06.06 ՀՕ-128-Ն, լրաց. 19.03.12 ՀՕ-38-Ն)**

### **Հոդված 13. Պարտադիր զինվորական ծառայության գորակոչից ընտանեկան դրության բերումով տարկետում ստանալը**

1. Պարտադիր զինվորական ծառայության գորակոչից ընտանեկան դրության բերումով տարկետում տրվում է այն գորակոչիկին, որն ունի՝  
ա) անաշխատունակ հայր և մայր կամ միայնակ անաշխատունակ հայր կամ մայր, եթե նրանք չունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացի համարվող աշխատունակ, պարտադիր զինվորական ծառայության մեջ չգտնվող այլ զավակ:

Անաշխատունակ ծնողներ են՝

- ծերության կենսաթոշակի իրավունք տվող տարիքի հասած հայրը և մայրը,

- առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ հայրը և մայրը,

- դատարանի վճռով անգործունակ ճանաչված հայրը և մայրը.

բ) առանց մոր մեծացող երեխա.

գ) երկու և ավելի երեխա.

դ) առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ կին.

ե) մինչև 18 տարեկան կամ 18 տարեկանից բարձր, բայց առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ կամ դատարանի վճռով անգործունակ ճանաչված հարազատ քույր կամ եղբայր, եթե չկա նրա հետ բնակվող ընտանիքի անդամ համարվող աշխատունակ այլ անձ:

Զորակոչիկին տարկետում տրվում է նաև վերջինիս կնոջ՝ 2-րդ երեխայով կամ զույգ երեխայով վեցամսյա հղիության դեպքում:

2. Եթե քաղաքացին մինչև գորակոչային տարիքի հասնելն առնվազն 5 տարի եղել է որդեգրված, կամ ծնողներն ամուսնալուծվել են առնվազն 5 տարի առաջ, և կա սույն հոդվածով նախատեսված պայմաններից որևէ մեկը, ապա նա օգտվում է պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում ստանալու իրավունքից:

3. Պարտադիր զինվորական ծառայության գորակոչից սույն օրենքով չնախատեսված դեպքերում ընտանեկան դրության բերումով տարկետում տալու մասին որոշումն ընդունում է պաշտպանության նախարարը՝ հանրապետական գորակոչային հանձնաժողովի եզրակացության առկայության դեպքում:

4. Սույն հոդվածով նախատեսված դեպքերում գորակոչիկին տարկետում տրվում է մինչև նրա 27 տարեկան դառնալը: Եթե մինչև 27 տարեկան դառնալը նա չի կորցնում տարկետում ստանալու իրավունքը, ապա խաղաղ ժամանակ ազատվում է պարտադիր զինվորական ծառայությունից և հաշվառվում պահեստագործում:

**(13-րդ հոդվածը լրաց. 03.05.00 ՀՕ-57, 02.05.01 ՀՕ-180, փոփ. 01.06.06 ՀՕ-128-Ն, 28.11.07 ՀՕ-272-Ն)**

### **Հոդված 14. Պարտադիր զինվորական ծառայության գորակոչից ուսումը շարունակելու համար տարկետում ստանալը**

1. Պարտադիր զինվորական ծառայության գորակոչից ուսումը շարունակելու համար տարկետում տրվում է՝

ա) պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների (այդ թվում՝ օրդինատուրա, ինտերնատուրա և մագիստրատուրա) ցերեկային ուսուցման ուսանողներին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած ցանկում ընդգրկված միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների ցերեկային ուսուցման ուսանողներին.

բ) պետական գիտակրթական համակարգի ասպիրանտուրայում պետական պատվերով առկա ուսուցմամբ սովորողներին.



գ) պետական պատվերով, միջպետական և միջգերատեսչական համաձայնագրերով օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներին, օրդինատուրայում, ինտերնատուրայում, մագիստրատուրայում կամ ասպիրանտուրայում սովորողներին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դեպքերում և կարգով.

դ) արդարադատության ակադեմիայի ունկնդիրներին.

ե) հանրակրթական, ինչպես նաև հիմնական կրթության հիմքի վրա առանց ընդհատման նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրերով սովորողներին՝ մինչև նրանց 19 տարին լրանալը, եթե համապատասխան զինվորական կոմիսարիատ են ներկայացնում ուսումնական հաստատության պաշտոնատար անձի տված տեղեկանք՝ տվյալ ուսումնական հաստատությունում ուսումնառության վերաբերյալ:

2. Ասպիրանտուրա և մագիստրատուրա ընդունվելու կարգն ու պայմանները հաստատվում են կառավարության որոշմամբ:

Ատենախոսությունը պաշտպանած, բայց ԲՈՀ-ի հաստատումը դեռ չստացած և ասպիրանտուրան ավարտած ու ատենախոսության պաշտպանության օրը պաշտոնապես նշանակված անձանց պարտադիր զինվորական ծառայության գորակոչվելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. Ուսումը շարունակելու համար տարկետում ստացած և սույն հոդվածի 1-ին մասում նշված ուսումնական հաստատություններից հեռացված կամ ազատված (բացառությամբ ուսման վարձը չվճարելու պատճառով ուսումնական հաստատությունից հեռացված և մինչև պարտադիր զինվորական ծառայության գորակոչի հայտարարվելն ուսման վարձը վճարելու հիման վրա ուսումնառությունը վերականգնած) կամ անբավարար առաջադիմության պատճառով նույն կուրսում մնացած 18 տարին լրացած քաղաքացիները կորցնում են տարկետման իրավունքը և ենթակա են գորակոչի, եթե չեն օգտվում սույն օրենքով նախատեսված պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ պարտադիր զինվորական ծառայության գորակոչից այլ հիմքով տարկետում ստանալու իրավունքից:

4. Կրթությունը շարունակելու համար պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում ստացած անձինք պարտադիր զինվորական ծառայության են կանչվում մինչև 27 տարեկան դառնալը, բացառությամբ պետական պատվերով պետական գիտակրթական

համակարգի, միջպետական և միջգերատեսչական համաձայնագրերով օտարերկրյա պետությունների կամ սույն օրենքի 16 հոդվածի երկրորդ մասով նախատեսված դեպքում ասպիրանտուրայում սովորողների, ինչպես նաև արդարադատության ակադեմիայի ունկնդիրների, որոնց տարկետում տրվում է մինչև ուսման ավարտը: Եթե նշված անձինք ուսումն ավարտում են 27 տարեկանից բարձր տարիքում, ապա պարտադիր զինվորական ծառայության են կանչվում ասպիրանտուրան կամ արդարադատության ակադեմիան ավարտելուն հաջորդող գորակոչի ընթացքում:

Սահմանված կարգով պարտադիր զինվորական ծառայության գորակոչի ենթակա պահեստագործի առաջին խմբի սպաները, որոնք ավարտել են ասպիրանտուրան կամ ունեն գիտական աստիճան, պարտադիր զինվորական ծառայության են կանչվում ըստ իրենց մասնագիտացումների:

**(14-րդ հոդվածը խմբ. 06.03.00 ՀՕ-42, լրաց. 03.05.00 ՀՕ-57, 16.04.02 ՀՕ-325, 20.05.02 ՀՕ-345-Ն, խմբ. 01.06.06 ՀՕ-128-Ն, լրաց., խմբ. 21.02.07 ՀՕ-136-Ն, խմբ. 28.11.07 ՀՕ-272-Ն, 18.11.09 ՀՕ-215-Ն, լրաց. 25.05.11 ՀՕ-177-Ն, 19.03.12 ՀՕ-38-Ն, փոփ. 02.05.13 ՀՕ-54-Ն, լրաց. 21.06.14 ՀՕ-79-Ն)**

**Հոդված 15. Պարտադիր զինվորական ծառայության գորակոչից առողջական վիճակի պատճառով տարկետում ստանալը**

1. Առողջական վիճակի պատճառով բուժման կարիք ունեցող գորակոչիկներին պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում տրվում է 3 անգամ՝ մինչև 1 տարի ժամանակով: Երրորդ անգամ տրված տարկետման ժամկետը լրանալուց հետո գորակոչիկը բժշկական քննության արդյունքներով կամ ճանաչվում է պիտանի զինվորական ծառայության համար և գորակոչվում է զինվորական ծառայության, կամ ճանաչվում է խաղաղ պայմաններում զինվորական ծառայության համար ոչ պիտանի և հաշվառվում պահեստագործում, կամ ճանաչվում է զինվորական ծառայության համար ոչ պիտանի և հանվում զինվորական հաշվառումից:

2. Առողջական վիճակի պատճառով պարտադիր զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանի գորակոչիկներին գորակոչից տարկետում տրվում է 1 անգամ՝ 3 տարի ժամանակով: Տարկետման ժամկետը լրանալուց հետո գորակոչիկը բժշկական քննության արդյունքներով կամ ճանաչվում է պիտանի զինվորական ծառայության համար և գորակոչվում է զինվորական

ծառայության, կամ ճանաչվում է խաղաղ պայմաններում զինվորական ծառայության համար ոչ պիտանի և հաշվառվում պահեստագործում, կամ ճանաչվում է զինվորական ծառայության համար ոչ պիտանի և հանվում զինվորական հաշվառումից:

Սույն օրենքի 14 հոդվածի չորրորդ մասով նախատեսված ասպիրանտուրայում կամ արդարադատության ակադեմիայում սովորելու կապակցությամբ տարկետում ստացած և 27 տարեկանից բարձր տարիքում ուսումն ավարտած զորակոչիկներին առողջական վիճակի պատճառով բուժման նպատակով տարկետում կարող է տրվել 1 անգամ մինչև 6 ամիս ժամկետով, իսկ պարտադիր զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանի ճանաչելու դեպքում՝ մինչև 1 տարի ժամկետով: Տարկետման ժամկետը լրանալուց հետո զորակոչիկը բժշկական քննության արդյունքներով կամ ճանաչվում է պիտանի զինվորական ծառայության համար և գորակոչվում զինվորական ծառայության, կամ ճանաչվում է խաղաղ պայմաններում զինվորական ծառայության համար ոչ պիտանի և հաշվառվում պահեստագործում, կամ ճանաչվում է զինվորական ծառայության համար ոչ պիտանի և հանվում զինվորական հաշվառումից:

3. Սույն հոդվածի առաջին և երկրորդ մասերով նախատեսված տարկետումներ տալու մասին որոշումներն ընդունում է հանրապետական զորակոչային հանձնաժողովը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ ստեղծված կենտրոնական բժշկական հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

4. Սույն հոդվածի, ինչպես նաև սույն օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի հիման վրա առողջական վիճակի պատճառով պահեստագործում հաշվառված քաղաքացիները ենթակա են բժշկական վերափորձաքննության՝ 5 տարին մեկ անգամ: Մինչև 27 տարին լրանալը բժշկական վերափորձաքննության արդյունքներով պարտադիր զինվորական ծառայության համար պիտանի ճանաչված քաղաքացիները ենթակա են պարտադիր զինվորական ծառայության գորակոչի՝ ընդհանուր հիմունքներով:

**(15-րդ հոդվածը խմբ. 01.06.06 ՀՕ-128-Ն, լրաց. 28.11.07 ՀՕ-272-Ն, փոփ. 19.03.12 ՀՕ-38-Ն, 02.05.13 ՀՕ-54-Ն)**

## **Հոդված 16. Պարտադիր զինվորական ծառայության գորակոչից այլ հիմքերով տարկետում ստանալը**

1. Ազգային ժողովի պատգամավորներին, իրենց լիազորությունների ողջ ժամկետում, տրվում է պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում ստանալու իրավունք:
2. Առանձին դեպքերում կառավարությունը որոշում է քաղաքացիների կատեգորիաները և առանձին քաղաքացիներին, որոնց տարկետում է տրվում պարտադիր զինվորական ծառայության գորակոչից:

## **Հոդված 17. Տեղական և մարզային զորակոչային հանձնաժողովները**

1. Պարտադիր զինվորական ծառայության գորակոչն անցկացնելու համար կառավարության սահմանած կարգով ստեղծվում են զորակոչային հանձնաժողովներ՝ ըստ զինվորական կոմիսարիատների կողմից սպասարկվող տարածքների՝ տեղական, և ըստ մարզերի՝ մարզային (Երևանի քաղաքային):
2. Տեղական զորակոչային հանձնաժողովների կազմը հաստատում է մարզպետը (Երևանի քաղաքապետը)՝ համապատասխան զինվորական կոմիսարի ներկայացմամբ:  
Հանձնաժողովի նախագահ է համարվում զինվորական կոմիսարը:  
Տեղական զորակոչային հանձնաժողովները՝
  - կազմակերպում են զորակոչիկների բժշկական քննությունը,
  - որոշումներ են ընդունում զորակոչի և զորակոչիկներին՝ ըստ զորատեսակների զինված ուժերում և այլ գորքերում զինվորական ծառայության ուղարկելու մասին, ընտանեկան դրության բերումով և ուսումը շարունակելու համար տարկետում տալու վերաբերյալ,
  - կայացնում են նախնական եզրակացություն և մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողով են ներկայացնում սույն օրենքով չնախատեսված դեպքերում զորակոչիկներին ընտանեկան դրության բերումով տարկետում տալու վերաբերյալ փաստաթղթերը,
  - կայացնում են նախնական եզրակացություն և կենտրոնական բժշկական հանձնաժողով են ներկայացնում զորակոչիկներին բժշկական քննության արդյունքներով տարկետում տալու և պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու վերաբերյալ փաստաթղթերը՝ եզրակացության համար,
  - քննարկում են ռազմաուսումնական հաստատություններ ընդունվելու մասին դիմումները և կայացնում որոշում:

3. Մարգային (Երևանի քաղաքային) գորակոչային հանձնաժողովները կազմում է կառավարությունը: Հանձնաժողովի նախագահ է համարվում համապատասխան մարզպետը (Երևանի քաղաքապետը):

Մարգային (Երևանի քաղաքային) գորակոչային հանձնաժողովները՝  
- համակարգում են տեղական գորակոչային հանձնաժողովների գործունեությունը,

- **(կետն ուժը կորցրել է 19.03.12 ՀՕ-38-Ն)**

- որոշում են ընդունում գորակոչիկներին ընտանեկան դրության բերումով սույն օրենքով չնախատեսված դեպքերում տարկետում տալու վերաբերյալ և դա ներկայացնում հանրապետական գորակոչային հանձնաժողով:

4. Տեղական և մարգային (Երևանի քաղաքային) գորակոչային հանձնաժողովների որոշումներն ընդունվում են հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

**(17-րդ հոդվածը փոփ. 18.11.09 ՀՕ-215-Ն, 19.03.12 ՀՕ-38-Ն)**

#### **Հոդված 18. Հանրապետական գորակոչային հանձնաժողովը**

1. Զորակոչի ժամանակաշրջանում տեղական և մարգային (Երևանի քաղաքային) գորակոչային հանձնաժողովների աշխատանքը ղեկավարելու և գործունեությունը վերահսկելու համար կառավարությունն ստեղծում է հանրապետական գորակոչային հանձնաժողով:

2. Հանրապետական գորակոչային հանձնաժողովը՝

- քննարկում է տեղական կամ մարգային (Երևանի քաղաքային) գորակոչային հանձնաժողովների որոշումների վերաբերյալ գանգատները,

- որոշում է ընդունում առողջական վիճակի պատճառով պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու, բուժման կամ պարտադիր զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանիության կապակցությամբ տարկետում տալու մասին,

- եզրակացություն է տալիս ընտանեկան դրության բերումով՝ սույն օրենքով չնախատեսված դեպքերում տարկետում տալու մասին մարգային (Երևանի քաղաքային) գորակոչային հանձնաժողովների որոշումների վերաբերյալ և ներկայացնում պաշտպանության նախարարին:

3. Տեղական կամ մարգային (Երևանի քաղաքային) գորակոչային հանձնաժողովի որոշման վերաբերյալ գորակոչիկի կամ այլ անձանց գանգատը, մինչև դրա վերանայումը, չի կասեցնում որոշման կատարումը:

Գանգատների վերաբերյալ որոշումները հանրապետական գորակոչային հանձնաժողովն ընդունում է մեկամսյա ժամկետում՝ ձայների պարզ մեծամասնությամբ:

Հանրապետական գորակոչային հանձնաժողովի որոշումները, դրանց ընդունման օրվանից մեկամսյա ժամկետում, կարող են գանգատարկվել դատարան՝ օրենքով սահմանված կարգով:

**(18-րդ հոդվածը փոփ. 01.06.06 ՀՕ-128-Ն)**

#### **ԳԼՈՒԽ V**

#### ***ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ***

**Հոդված 19. Զինվորական ծառայությունը**

**(հոդվածն ուժը կորցրել է 03.07.02 ՀՕ-383-Ն)**

**Հոդված 20. Զինվորական ծառայության տեսակները**

**(հոդվածն ուժը կորցրել է 03.07.02 ՀՕ-383-Ն)**

**Հոդված 21. Զինվորական ծառայության ժամկետները**

**(հոդվածն ուժը կորցրել է 03.07.02 ՀՕ-383-Ն)**

**Հոդված 22. Զինվորական ծառայության անցնելը**

**(հոդվածն ուժը կորցրել է 03.07.02 ՀՕ-383-Ն)**

**Հոդված 23. Զինված ուժերի և այլ զորքերի շարքերից արձակելը**

1. Զինծառայողներին զինված ուժերի և այլ զորքերի շարքերից արձակում է զորամասի հրամանատարը՝ «Զինվորական ծառայություն անցնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածում նշված ժամկետներում և պաշտպանության նախարարի հրամանով սահմանված կարգով:

2. Ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվող զինծառայողները ժամկետից շուտ արձակվում են պահեստագոր, եթե

նրանք կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի կողմից հետագա զինվորական ծառայության համար ճանաչվում են ոչ պիտանի՝ առողջական վիճակի պատճառով:

Այն զինծառայողները, ովքեր ծառայության ժամանակաշրջանում սույն օրենքի 12 հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և 13 հոդվածի առաջին մասի «ա-ե» ենթակետերի ու երրորդ մասի հիմքերով ձեռք են բերել զինվորական ծառայությունից ազատվելու և գորակոչից տարկետում ստանալու իրավունք, արձակվում և հաշվառվում են որպես պահեստագորայիններ՝ մեկամսյա ժամկետում:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված զինծառայողներին արձակելու կարգը սահմանում է պաշտպանության նախարարը:

4. Սույն օրենքի 13 հոդվածի հիմքերով պահեստ արձակված անձինք կարող են ժամկետային զինծառայության գորակոչվել մինչև 27 տարեկան դառնալը, եթե տարկետում ստանալու հիմքերը վերացել են, և նրանց չճանաչած ժամկետը գերազանցում է 16 ամիսը:

5. Պարտադիր զինվորական ծառայության ընթացքում ազատագրվման դատապարտված անձինք դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիման վրա հանվում են գորամասի անձնակազմի ցուցակներից և հաշվառվում են իրենց գորակոչին իրականացրած զինվորական կուիսարիատի գորակոչային բաժնում, իսկ ազատագրվման վայրում պատժի կրումից ազատվելուց հետո հայտարարված գորակոչի ժամանակ ենթակա են գորակոչման պարտադիր զինվորական ծառայության չճանաչած ժամկետը շարունակելու, բացառությամբ սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի, ինչպես նաև եթե չեն օգտվում սույն օրենքով նախատեսված պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ պարտադիր զինվորական ծառայության գորակոչից ընտանեկան դրության բերումով կամ առողջական վիճակի պատճառով տարկետում ստանալու իրավունքից, որոնց առկայության պարագայում հաշվառվում են պահեստագորում՝ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով:

6. Բարձրագույն կամ միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցող, վարժական հավաքներ անցած և սահմանված ստուգարքները հաջող հանձնած զինվորներին և սերժանտներին ժամկետային զինվորական ծառայության ավարտից առաջ պահեստագոր տեղափոխելիս շնորհվում է սպայի կամ ենթասպայի կոչում: Պահեստագոր տեղափոխվելիս սպայի կամ ենթասպայի կոչում չստացած անձինք կարող են ներգրավվել պահեստագորի սպաների և

ենթասպաների պատրաստման համար կազմակերպվող զինապարտների վարժական հավաքներին:

Ստուգարքների հանձնման ժամկետները և կարգը սահմանում է պաշտպանության նախարարը:

**(23-րդ հոդվածը խմբ. 25.10.00 ՀՕ-104, փոփ. 03.07.02 ՀՕ-383-Ն, փոփ., լրաց. 01.06.06 ՀՕ-128-Ն, լրաց., խմբ. 19.03.12 ՀՕ-38-Ն)**

## ԳԼՈՒԽ VI

### ՊԱՀԵՍՏԱԳՈՐԸ

#### Հոդված 24. Պահեստագորը

1. Պահեստագորում ընդգրկվում և հաշվառվում են՝

- ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայություն անցած և պահեստ արձակված քաղաքացիները,

- **(պարբերությունն ուժը կորցրել է 18.11.09 ՀՕ-215-Ն)**

- սույն օրենքով սահմանված դեպքերում պարտադիր զինվորական ծառայությունից ազատված քաղաքացիները,

- իգական սեռի զինապարտները,

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած և 27 տարեկանը լրացած զինապարտները,

- սույն օրենքի 11 հոդվածի երկրորդ մասում թվարկված գորակոչային տարիքի անձինք

- սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցնելու դիմաց օրենքով սահմանված կարգով վճարներ կատարած քաղաքացիները:

2. Պահեստագորում հաշվառված քաղաքացիները կոչվում են պահեստագորայիններ և բաժանվում են պահեստագորի շարքային, ենթասպայական և սպայական կազմերի:

**(24-րդ հոդվածը լրաց. 01.06.06 ՀՕ-128-Ն, 28.11.07 ՀՕ-272-Ն, փոփ., խմբ., լրաց. 18.11.09 ՀՕ-215-Ն)**

#### Հոդված 25. Պահեստագորի շարքային կազմը

1. Պահեստագորի շարքային կազմը բաժանվում է երկու խմբի՝ ըստ տարիքային սահմանափակման: Առաջին խմբում հաշվառվում են

մինչև 45 տարեկան, իսկ երկրորդ խմբում՝ մինչև 50 տարեկան պահեստագորայինները:

2. Առաջին և երկրորդ խմբի պահեստագորը, ըստ զինվորական պատրաստության աստիճանի, բաժանվում է երկու կարգի:

Առաջին կարգի պահեստագորում հաշվառվում են անկախ ծառայության տևողությունից պարտադիր զինվորական ծառայություն անցած, բացառությամբ առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու հետևանքով վաղաժամկետ զորացրված քաղաքացիները, ինչպես նաև պատերազմի կամ մարտական գործողությունների մասնակիցները՝ անկախ զինվորական ծառայություն անցնելու հանգամանքից:

Երկրորդ կարգի պահեստագորում հաշվառվում են պարտադիր զինվորական ծառայություն չանցած, ինչպես նաև առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու հետևանքով վաղաժամկետ զորացրված արական սեռի և զինվորական հաշվառման մեջ գտնվող իգական սեռի քաղաքացիները:

3. Առաջին և երկրորդ խմբերի պահեստագորի երկրորդ կարգում հաշվառված քաղաքացիները երեք ամսից ոչ պակաս ընդհանուր տևողությամբ վարժական հավաքներ անցնելու դեպքում հաշվառվում են առաջին կարգի պահեստագորում:

**(25-րդ հոդվածը խմբ. 28.11.07 ՀՕ-272-Ն, 18.11.09 ՀՕ-215-Ն)**

**Հոդված 26. Պահեստագորի շարքային կազմի վարժական հավաքներ անցնելը և զինվորական վարժանքներ ու զորավարժություններ կանչելը**

**(վերնագիրը լրաց. 18.11.09 ՀՕ-215-Ն)**

1. Առաջին խմբի պահեստագորի առաջին կարգում հաշվառված պահեստագորայինները ռազմական ունակությունները կատարելագործելու և վերապատրաստելու նպատակով խաղաղ ժամանակ կարող են կանչվել վարժական հավաքների մինչև չորս անգամ, յուրաքանչյուր դեպքում՝ մինչև երեք ամիս ժամկետով, բայց ոչ ավելի, քան երեք ամիս՝ մեկ տարվա ընթացքում: Ընդ որում, նշված պահեստագորայինները կարող են վարժական հավաքի կանչվել պահեստ արձակվելուց հետո՝ մեկ տարուց ոչ շուտ:

2. Առաջին խմբի պահեստագորի երկրորդ կարգում հաշվառված պահեստագորայինները ռազմական ունակություններ ստանալու նպատակով խաղաղ ժամանակ կարող են կանչվել վարժական

հավաքների մինչև վեց անգամ, յուրաքանչյուր դեպքում՝ մինչև երեք ամիս ժամկետով, բայց ոչ ավելի, քան երեք ամիս՝ մեկ տարվա ընթացքում:

3. Առաջին և երկրորդ խմբերի պահեստագորի առաջին կարգում հաշվառված զինվորները, սերժանտները և ենթասպաները, որոնք պատրաստվում են սպայական պաշտոնի համար, վարժական հավաքների են կանչվում երեք ամիս ժամկետով:

4. Երկրորդ խմբի պահեստագորում հաշվառված անձինք վարժական հավաքների կարող են կանչվել 1-2 անգամ, յուրաքանչյուր դեպքում՝ մինչև երկու ամիս ժամկետով:

**5. (մասն ուժը կորցրել է 28.11.07 ՀՕ-272-Ն)**

6. Վարժական հավաքները հայտարարվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ յուրաքանչյուր տարվա զորահավաքային նախապատրաստության պլանների հիման վրա Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած միջոցառումների ցանկի, ժամկետների և ներգրավվող թվաքանակի ու մասնագիտությունների համաձայն: Նա իրավունք ունի անհրաժեշտության դեպքում պահեստագորի շարքային կազմին պահել վարժական հավաքներում՝ սույն հոդվածով սահմանված ժամկետներից մինչև երկու ամիս ավելի, ինչպես նաև ավելացնել հավաքների քանակը՝ չգերազանցելով հավաքներում գտնվելու՝ սույն հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված ընդհանուր ժամկետները:

7. Առաջին խմբի պահեստագորում հաշվառված քաղաքացիները զինված ուժերի զորահավաքային պատրաստականության ստուգման նպատակով խաղաղ ժամանակ կարող են կանչվել զինվորական վարժանքների (հրամանատարաշտաբային կամ շտաբային)՝ մինչև 10 օր ժամկետով, կամ զորավարժությունների (զորախաղերի)՝ դրանց ամբողջ տևողության ժամկետով: Զինվորական վարժանքները (հրամանատարաշտաբային կամ շտաբային) և զորավարժությունները (զորախաղերը) հայտարարվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով:

**(26-րդ հոդվածը փոփ., լրաց. 01.06.06 ՀՕ-128-Ն, փոփ. 28.11.07 ՀՕ-272-Ն, լրաց., փոփ., խմբ. 18.11.09 ՀՕ-215-Ն, խմբ., լրաց. 19.03.12 ՀՕ-38-Ն)**

## **Հոդված 27. Պահեստագործի ենթասպայական կազմը**

1. Զինված ուժերում և այլ զորքերում՝ որպես ենթասպաներ, զինվորական ծառայության են անցնում սպայական կոչում չունեցող պահեստագորայինները:
2. Զինված ուժերի և այլ զորքերի ենթասպաների կողմից զինվորական ծառայության անցնելու կարգը սահմանվում է օրենսդրությամբ:
3. Ենթասպաները կարող են գտնվել զինվորական ծառայության մեջ մինչև 45 տարեկան դառնալը: Նրանց համաձայնությամբ՝ այդ ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 5 տարով:  
Զինվորական ծառայությունից արձակված ենթասպաները զինված ուժերի և այլ զորքերի պահեստագորում գտնվում են մինչև 55 տարեկան դառնալը:

## **Հոդված 28. Պահեստագործի սպայական կազմը**

1. Պահեստագործի սպայական կազմը բաղկացած է՝
  - ժամկետային զինվորական ծառայությունից արձակված և պահեստագորում հաշվառված սպաներից, գեներալներից,
  - բարձրագույն կամ միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցող սերժանտներից և ենթասպաններից, որոնք անցել են ժամկետային զինվորական ծառայություն և սահմանված կարգով ստացել են սպայական կոչում,
  - բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու ընթացքում ռազմական պատրաստություն անցած և սահմանված կարգով սպայական կոչում շնորհված քաղաքացիներից,
  - զինվորներից, սերժանտներից և ենթասպաններից, որոնց սպայական կոչում է շնորհվել բարձրագույն և միջնակարգ մասնագիտական քաղաքացիական կրթության հիման վրա,
  - Հայաստանի հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության, ոստիկանության և ազգային անվտանգության ծառայության համակարգերից արձակվածներից՝ նրանց շնորհված հատուկ կոչումները հաշվի առնելով, բացառությամբ այդ համակարգերում զինվորական ծառայություն անցած և զինվորական կոչում ունեցողների,

- Հայաստանի հանրապետության քաղաքացիություն ստացած և սպայական կոչում ունեցող անձանցից՝ սպայական կոչումները հաշվի առնելով:

### **2. (կետն ուժը կորցրել է 03.07.02 ՀՕ-383-Ն)**

3. Զինվորական հաշվառման մեջ գտնվող սպա կանայք, իրենց մասնագիտությանը համապատասխան, անկախ զինվորական կոչումից, հաշվառվում են երրորդ խմբի պահեստագորում, և նրանց սահմանային տարիք է համարվում 50 տարեկանը:

4. Պահեստագորում սահմանային տարիքի հասած կամ առողջական վիճակի պատճառով խաղաղ և պատերազմի ժամանակ զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչված սպաները հանվում են զինվորական հաշվառումից:

**(28-րդ հոդվածը փոփ. 03.07.02 ՀՕ-383-Ն, լրաց. 01.06.06 ՀՕ-128-Ն, խմբ., լրաց., փոփ. 18.11.09 ՀՕ-215-Ն)**

## **Հոդված 29. Պահեստագործի սպայական և ենթասպայական կազմերի վարժական հավաքներ անցնելը և զինվորական ծառայության կանչելու կարգը**

**(վերնագիրը փոփ. 01.06.06 ՀՕ-128-Ն)**

1. Առաջին խմբի պահեստագորայինները կարող են կանչվել վարժական հավաքների՝ մինչև երեք ամիս, երկրորդ խմբի պահեստագորայինները՝ մինչև երկու ամիս, իսկ երրորդ խմբի պահեստագորայինները՝ մինչև մեկ ամիս ժամկետով: Խաղաղ ժամանակ առաջին խմբի սպայական ու ենթասպայական կազմերը ռազմական հմտությունների կատարելագործման և վերապատրաստման նպատակով կարող են կանչվել վարժական հավաքների՝ մինչև 30 օր, իսկ հրամանատարաշտաբային կամ շտաբային վարժանքների ու գորախաղերի դեպքում՝ մինչև 10 օր տևողությամբ:

Առաջին խմբի պահեստագործի օդաչուական անձնակազմը, բացի սույն մասով նախատեսված վարժական հավաքն անցնելուց, առաջին խմբի պահեստագորում գտնվելիս կանչվում է նաև վարժական հավաքների՝ թռիչքային վարժություններ կատարելու համար, մինչև հինգ անգամ՝ յուրաքանչյուր դեպքում երկու ամիս ժամկետով, բայց ոչ ավելի, քան երկու ամիս՝ մեկ տարվա ընթացքում:

2. Պաշտպանության նախարարն իրավունք ունի անհրաժեշտության դեպքում մինչև երկու ամսով երկարաձգել պահեստազորի սպաների և ենթասպաների վարժական հավաքների ժամկետները, ինչպես նաև քանակը՝ չգերազանցելով սույն հոդվածի առաջին մասում սահմանված ընդհանուր ժամկետները:

3. Պահեստազորի սպաները խաղաղ ժամանակ կարող են կանչվել՝

ա) զորակոչի միջոցով մինչև 3 տարի ժամկետով պարտադիր զինվորական ծառայության՝ կառավարության կողմից որոշվող մասնագիտությունների գծով և քանակով:

բ) պայմանագրային զինվորական ծառայության՝ անձնական ցանկությամբ և օրենսդրությամբ սահմանված կարգով:

(29-րդ հոդվածը փոփ., խմբ., լրաց. 01.06.06 ՀՕ-128-Ն)

## ԳԼՈՒԽ VII

### *ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ԶԻՆԱՊԱՐՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ*

#### **Հոդված 30. Զինծառայողների և զինապարտների իրավունքները, պարտականություններն ու պատասխանատվությունը**

1. Զինծառայողների և զինապարտների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են սույն օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով:

2. Զինվորական հաշվառման պարտականություններ կատարելու, զորակոչային տեղամասերին կցագրվելու և վարժական հավաքների կանչվելու ընթացքում մշտական աշխատանքի վայրում (անկախ կազմակերպական-իրավական ձևից) պահպանվում է քաղաքացիների աշխատատեղը (պաշտոնը) և միջին աշխատավարձը:

Մշտական աշխատանք չունեցող պահեստազորայիները վարժական հավաքների ավարտից հետո միանվագ ձևով վարձատրվում են Հայաստանի Հանրապետության զինված ուժերի պայմանագրային զինծառայողների համար սահմանված պաշտոնային դրույքաչափին համարժեք չափով և կարգով:

3. Ժամկետային զինվորական ծառայության զորակոչից, վարժական հավաքից, զորահավաքից և զինվորական հաշվառումից խուսափելու, ինչպես նաև զինվորական հանցագործություններ, զինվորական

հաշվառման բնագավառում իրավախախտումներ կատարելու համար զինծառայողները և զինապարտները պատասխանատվության են ենթարկվում օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Սույն օրենքով պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու իրավունք ձեռք չբերած և պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիները չեն կարող նշանակվել հանրային ծառայության մեջ ընդգրկված պաշտոններում:

(30-րդ հոդվածը փոփ., լրաց. 01.06.06 ՀՕ-128-Ն, խմբ. 18.11.09 ՀՕ-215-Ն, փոփ. 12.12.13 ՀՕ-159-Ն)

## ԳԼՈՒԽ VIII

### *ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ*

#### **Հոդված 31. Օրենքի ուժի մեջ մտնելը**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել 1991 թվականի դեկտեմբերի 9-ին ընդունված «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը՝ հետագա փոփոխություններով և լրացումներով:

#### **Հայաստանի Հանրապետության Նախագահ**

**Ռ. Քոչարյան**

Երևան

14 հոկտեմբերի 1998 թ.

ՀՕ-250

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
Օ Ր Ե Ն Ք Ը**

Ընդունված է 2003 թվականի դեկտեմբերի 17-ին

**ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ  
ՄԱՍԻՆ**

**ԳԼՈՒԽ 1.**

***ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ***

**Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան և գործողության ոլորտը**

1. Սույն օրենքը սահմանում է զինծառայողների և վարժական հավաքների կանչված քաղաքացիների կողմից ծառայողական պարտականությունները կատարելիս զորամասի գույքին պատճառված վնասի դիմաց նյութական պատասխանատվության պայմանները, ինչպես նաև այդ վնասի հատուցման կարգն ու չափերը:

2. Սույն օրենքի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և այլ զորքերի պարտադիր ու պայմանագրային զինծառայողների, ինչպես նաև վարժական հավաքների կանչված քաղաքացիների վրա:

**Հոդված 2. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները**

Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն հետևյալ իմաստները.

- 1) զորամասեր՝ զորամաս, զորախումբ, զորամիավորում, զինվորական կառավարման մարմին, ռազմաուսումնական հաստատություն, որտեղ օրենքով սահմանված կարգով անցնում են զինվորական ծառայություն.
- 2) հրամանատարներ (պետեր)՝ զորամասերի և զորամասերի կառուցվածքային ստորաբաժանումների հրամանատարներ (պետեր), նրանց տեղակալներ.
- 3) զորամասի գույք (այսուհետ գույք)՝ պետական սեփականություն համարվող և զորամասի տնօրինությանը (տիրապետմանը, օգտագործմանը) հանձնված նյութական ակտիվներ, որոնք արտահայտված են սպառազինության, ռազմական տեխնիկայի,

զինամթերքի, հիմնական այլ միջոցների, պաշարների (նյութերի, արագամաշ առարկաների), ինչպես նաև դրամական միջոցների ու դրանց համարժեքների ձևով.

4) իրական վնաս (այսուհետ՝ վնաս)՝ գույքի կորուստը կամ վնասվածքը, ինչպես նաև այն ծախսերը, որ զորամասը կատարել է կամ պետք է կատարի կորած կամ վնասված գույքը վերականգնելու (ձեռք բերելու) համար.

5) վարձատրության մասին վկայական՝ վնասը հայտնաբերելու օրվան նախորդող ամսում զինծառայողին վճարված վարձատրության, ինչպես նաև զինծառայողի դրամական պարտավորությունների վերաբերյալ փաստաթուղթ:

**(2-րդ հոդվածը փոփ. 12.12.13 ՀՕ-161-Ն)**

**Հոդված 3. Զինծառայողների նյութական պատասխանատվության պայմանները**

1. Զինծառայողները նյութական պատասխանատվություն են կրում միայն իրենց մեղքով պատճառված վնասի համար:

2. Եթե պատճառված վնասը կապված չէ ծառայողական պարտականությունների կատարման հետ, ապա զինծառայողները պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:

Վարժական հավաքների կանչված քաղաքացիները զորամասի գույքին պատճառած վնասի համար նյութական պատասխանատվություն են կրում իրենց գույքով:

3. Զինծառայողներն ազատվում են նյութական պատասխանատվությունից, եթե վնասը պատճառվել է հրամանատարների (պետերի) հրամանը կատարելու, օրինաչափ գործողության, անհրաժեշտ պաշտպանության, ծայրահեղ անհրաժեշտության, արդարացված ծառայողական ռիսկի կամ անհաղթահարելի ուժի հետևանքով:

4. Զինծառայողները, սույն օրենքի համաձայն, նյութական պատասխանատվության են ենթարկվում վնասը հայտնաբերվելու օրվանից երեք տարվա ընթացքում:

Մինևսույն վնասի համար կրկնակի նյութական պատասխանատվություն չի կարող սահմանվել:



## ԳԼՈՒԽ 2.

### *ԶԻՆՏԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ*

#### **Հոդված 4. Զինձառայողների սահմանափակ նյութական պատասխանատվությունը**

1. Զինձառայողները ծառայողական պարտականությունները կատարելիս անզգուշաբար հասցված վնասը հատուցում են դրա լրիվ չափով, բայց ոչ ավելի, քան պաշտոնային դրույքաչափի՝
  - 1) կրկնապատիկը, եթե նշված չափը գերազանցում է պաշտոնային դրույքաչափի կրկնապատիկը, սակայն չի գերազանցում եռապատիկը.
  - 2) եռապատիկը, եթե նշված չափը գերազանցում է պաշտոնային դրույքաչափի եռապատիկը, սակայն չի գերազանցում հնգապատիկը.
  - 3) հնգապատիկը, եթե նշված չափը գերազանցում է պաշտոնային դրույքաչափի հնգապատիկը:
2. Ձորամասի և այլ անձանց միջև քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում գորամասի վճարած տույժերի ու տուգանքների համար մեղավոր զինձառայողները նյութական պատասխանատվություն են կրում դրանց լրիվ չափով, բայց ոչ ավելի, քան պաշտոնային դրույքաչափի կրկնապատիկը:
3. Հրամանատարները (պետերը), որոնք իրենց հրամաններով ու կարգադրություններով խախտել են գույքի պահպանման, օգտագործման, ծախսման, տեղափոխման և հաշվապահական հաշվառման սահմանված կարգը կամ իրենց իրավասության սահմաններում համապատասխան միջոցներ չեն ձեռնարկել հափշտակումները, վատնումները, փչացումներն ու կորուստները կանխելու, ինչպես նաև պատճառված վնասները մեղավոր անձանցից վերականգնելու ուղղությամբ, ենթարկվում են նյութական պատասխանատվության՝ պատճառված վնասի լրիվ չափով, բայց ոչ ավելի, քան պաշտոնային դրույքաչափի հնգապատիկը:
4. Զինձառայողներին (աշխատողներին) ծառայությունից (աշխատանքից) անօրինական արձակելու (ազատելու), տեղափոխելու, հաստիքով չնախատեսված պաշտոնի նշանակելու կամ հաստիքով նախատեսվածից բարձր վարձատրվող պաշտոնի նշանակելու համար գորամասերի հրամանատարները (պետերը) նյութական պատասխանատվություն են կրում դրա հետևանքով պատճառված

վնասի լրիվ չափով, բայց ոչ ավելի, քան պաշտոնային դրույքաչափի եռապատիկը:

5. Սույն հոդվածով սահմանված պատճառված վնասի չափի և զինձառայողի պաշտոնային դրույքաչափից պահումների չափի տարբերությունը ծախսագրվում է համապատասխան պետական լիազոր մարմնին պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին՝ իրավասու հրամանատարի (պետի) հրամանով:

#### **6. (մասն ուժը կորցրել է 12.12.13 ՀՕ-161-Ն) (4-րդ հոդվածը փոփ. 12.12.13 ՀՕ-161-Ն)**

#### **Հոդված 5. Զինձառայողների լրիվ նյութական պատասխանատվությունը**

Զինձառայողները պատճառած վնասի լրիվ չափով նյութական պատասխանատվություն են կրում, եթե դա պատճառվել է՝

- 1) այն զինձառայողի կողմից, որին գույքը տրվել է պահպանելու, տեղափոխելու, օգտագործելու համար կամ այլ նպատակներով.
- 2) զինձառայողի դիտավորյալ գործողությունների հետևանքով, որը հանգեցրել է գույքի կորստի կամ վնասվածքի, ինչպես նաև ռազմաբժշկական կամ առողջապահական հաստատություններում նշված գործողություններից տուժած զինձառայողների բուժման ծախսերի.
- 3) թմրամիջոցներով, թունամիջոցներով արբած կամ ակոհոլային հարբած վիճակում գտնվող զինձառայողի կողմից:

#### **Հոդված 6. Պատճառված վնասը հայտնաբերելու դեպքում ծառայողական քննություն անցկացնելը**

1. Ձորամասի հրամանատարը (պետը) վնասը հայտնաբերելու դեպքում պարտավոր է նշանակել ծառայողական քննություն՝ վնասի պատճառները, չափերը և մեղավորներին պարզելու նպատակով: Ծառայողական քննությունը պետք է ավարտվի վնասը հայտնաբերելու օրվանից ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում: Նշված ժամկետն անհրաժեշտության դեպքում կարող է մեկ ամսից ոչ ավելի երկարաձգել համապատասխան վերադաս հրամանատարը (պետը): Ծառայողական քննության նյութերի հիման վրա վերադաս հրամանատարը (պետը), ծառայողական քննության ավարտից ոչ ուշ, քան 10-օրյա ժամկետում, պատճառված վնասը հատուցելու հայցով

դիմում է դատարան, բացառությամբ սույն օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի:

2. Ծառայողական քննություն կարող է չնշանակվել, եթե վնաս պատճառելը, դրա չափերն ու մեղավոր անձինք պարզվել են դատարանի կողմից, ստուգման, վերստուգիչ-վերահսկիչ գործունեության, հետաքննության և նախաքննության արդյունքում:

### **ԳԼՈՒԽ 3.**

#### ***ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ԶԱՓԸ ՈՐՈՇԵԼԸ ԵՎ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԸ ՀԱՏՈՒՑԵԼՈՒ ԿԱՐԳԸ***

#### **Հոդված 7. Պատճառված վնասի չափը որոշելը**

1. Պատճառված վնասի չափը որոշվում է փաստացի կորուստներով՝ գորամասի հաշվապահական հաշվառման տվյալների և կորած կամ վնասված գույքը վերականգնելու (ձեռք բերելու) համար կատարված կամ կատարվելիք ծախսերի հանրագումարի հիման վրա:

2. Պատճառված վնասի չափը որոշելիս հաշվի են առնվում գույքի մաշվածության աստիճանը և բնական կորուստները՝ վնասը հայտնաբերելու օրվա դրությամբ սահմանված նորմաների համաձայն: Բոլոր դեպքերում վերականգնման ենթակա վնասի չափը չի կարող պակաս լինել այդ գույքի սկզբնական արժեքի 25 տոկոսից, բայց ոչ պակաս նրա ջարդոնի արժեքից:

3. Զինծառայողին (աշխատողին) հաստիքով չնախատեսված պաշտոնի անօրինական նշանակելու հետևանքով պատճառված վնասի չափը որոշվում է վճարված պաշտոնային դրույքաչափի չափով, իսկ նրան փաստորեն զբաղեցրածից ավելի բարձր պաշտոնի անօրինական նշանակելու դեպքում՝ վճարված և փաստացի զբաղեցրած պաշտոնների պաշտոնային դրույքաչափերի տարբերության չափով:

4. Սույն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքում պատճառված վնասի չափը որոշվում է ռազմաթշկական և առողջապահական հաստատություններում զինծառայողների բուժման փաստացի ծախսերով:

5. Համատեղ պատճառված վնասի չափը որոշվում է՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի մեղքի աստիճանն ու նյութական պատասխանատվության տեսակը:

#### **(7-րդ հոդվածը փոփ. 12.12.13 ՀՕ-161-Ն)**

#### **Հոդված 8. Զինծառայողների պատճառած վնասը հատուցելը**

1. Զինծառայողի պատճառած վնասը հատուցվում է դատարանի վճռի հիման վրա՝ սույն օրենքի 12-րդ հոդվածով սահմանված կարգով՝ զինծառայողի պաշտոնային դրույքաչափից պահումներ կատարելու միջոցով:

Եթե պատճառված վնասի չափը գերազանցում է նվազագույն ամսական աշխատավարձի 500-ապատիկը, ապա վնասի հատուցումը կատարվում է զինծառայողի դրամական այլ միջոցների և գույքի հաշվին՝ օրենքով սահմանված կատարողական վարույթի կանոններով:

2. Զինծառայողի պաշտոնային դրույքաչափից պահումներ կատարվում են կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարման մարմնի կայացրած որոշման հիման վրա գորամասի հրամանատարի (պետի) տված հրամանով:

Զինծառայողի պաշտոնային դրույքաչափից պահումներ կատարելու մասին գորամասի հրամանատարի (պետի) հրամանը պետք է արձակվի հարկադիր կատարման մարմնի կայացրած որոշման պատճենն օրենքով սահմանված կարգով ստանալու օրվանից երկշաբաթյա ժամկետում և ներկայացվի կատարման 7 օրվա ընթացքում:

Զորամասի հրամանատարի (պետի)՝ սահմանված կարգի խախտմամբ տված պաշտոնային դրույքաչափից պահումներ կատարելու մասին հրամանը զինծառայողը կարող է բողոքարկել վերադաս հրամանատարին (պետին) կամ որոշում կայացրած հարկադիր կատարման մարմնին:

3. Պատճառված վնասը զինծառայողը կարող է կամավոր հատուցել նաև մինչև գորամասի հրամանատարի (պետի)՝ վնասը հատուցելու հայցով դատարան դիմելը, եթե նա համաձայն է իրեն ներկայացվող նյութական պատասխանատվության պայմաններին և վնասի հատուցման չափերին:

4. Դատարանը կարող է զինծառայողի համաձայնության դեպքում պարտավորեցնել նրան պատճառված վնասը հատուցել բնեղենով կամ դրամական արտահայտությամբ՝ ամբողջությամբ կամ մաս-մաս,

առանց պաշտոնային դրույքաչափից պահումներ կատարելու՝ օրենքով սահմանված կատարողական վարույթի կանոններով:

5. Պատճառված վնասը հատուցվում է անկախ զինծառայողին կարգապահական, վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկելու հանգամանքից:

**(8-րդ հոդվածը փոփ. 12.12.13 ՀՕ-161-Ն)**

**Հոդված 9. Պատճառված վնասը հատուցելը զինծառայողին գորացրելու կամ ծառայության նոր վայր տեղափոխելու դեպքում**

1. Եթե վնաս պատճառած զինծառայողը գորացրվել է (մեկնել է վարժական հավաքի ավարտից հետո) և չի ենթարկվել նյութական պատասխանատվության, ապա վնասի բռնագանձումը կատարում է դատարանը՝ գորամասի հրամանատարի (պետի) հայցի հիման վրա և օրենքով սահմանված կատարողական վարույթի կանոնների համաձայն:

2. Եթե վնաս պատճառած զինծառայողը գորացրվել է (մեկնել է վարժական հավաքի ավարտից հետո) և գորացրման (վարժական հավաքների ավարտի) օրվա դրությամբ չի հատուցել պատճառած վնասը կամ հատուցել է մասամբ, վնասի կամ դրա չհատուցված մասի բռնագանձումը կատարվում է նրա դրամական այլ միջոցների և գույքի հաշվին՝ օրենքով սահմանված կատարողական վարույթի կանոնների համաձայն:

3. Պատճառված վնասը չհատուցած (մասամբ հատուցած) զինծառայողին ծառայության նոր վայր տեղափոխելու դեպքում զինծառայողի պաշտոնային դրույքաչափից պահումներ կատարվում են ծառայության նոր վայրում՝ վարձատրության մասին վկայականի գրառումների հիման վրա:

Եթե մինչև տեղափոխվելը զինծառայողի պաշտոնային դրույքաչափից պահումներ կատարելու մասին հրաման չի տրվել, ապա գորամասի հրամանատարը (պետը) պարտավոր է հարկադիր կատարման մարմնի կայացրած որոշման պատճենը եռօրյա ժամկետում ուղարկել ծառայության նոր վայր՝ սույն օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված ժամկետներում հրաման արձակելու և կատարման ներկայացնելու համար:

**(9-րդ հոդվածը փոփ. 12.12.13 ՀՕ-161-Ն)**

**Հոդված 10. Երրորդ անձանց պատճառված վնասի հատուցումը**

Զինծառայողների ապօրինի գործողություններով (անգործությամբ) քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց պատճառված վնասը հատուցում է Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս ֆինանսների պետական լիազոր մարմնի: Նշված դեպքում վնասը պատճառած զինծառայողների նկատմամբ ֆինանսների պետական լիազոր մարմինը ձեռք է բերում հետադարձ պահանջի իրավունք՝ վճարած հատուցման լրիվ չափով:

**Հոդված 11. Հատուցման ենթակա վնասի չափը նվազեցնելու պայմանները**

Զինծառայողի նյութական վիճակը, մեղքի աստիճանը և դեպքի հանգամանքները հաշվի առնելով՝ դատարանը կարող է նվազեցնել հատուցման ենթակա վնասի չափը:

**Հոդված 12. Դրամական պահումների իրականացման կարգը**

1. Պատճառված վնասի դիմաց զինծառայողի պաշտոնային դրույքաչափից ամենամսյա պահումները կատարվում են պաշտոնային դրույքաչափի 20 տոկոսի չափով:

2. Եթե զինծառայողի պաշտոնային դրույքաչափից կատարվում են օրենքով սահմանված այլ պահումներ, ապա դրանց ընդհանուր չափը չի կարող գերազանցել զինծառայողի պաշտոնային դրույքաչափի 50 տոկոսը:

**(12-րդ հոդվածը փոփ. 12.12.13 ՀՕ-161-Ն)**

**ԳԼՈՒԽ 4.**

**ԵԶՐԱՓՄԱԿԻՉ ՂՐՈՒՅԹՆԵՐ**

**Հոդված 13. Պատասխանատվությունն օրենքը խախտելու համար**

Սույն օրենքը խախտող պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:

**Հոդված 14. Օրենքի ուժի մեջ մտնելը**

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

Հայաստանի Հանրապետության

Նախագահ

Ռ. Քոչարյան

2004 թ. հունվարի 13

Երևան

ՀՕ-7-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
Օ Ր Ե Ն Ք Ը**

Ընդունված է 2008 թվականի նոյեմբերի 27-ին

**ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

**ԳԼՈՒԽ 1**

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

**Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան**

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության հիմքերը, կազմակերպումը, Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կառուցվածքը, կազմակերպման ու գործունեության սկզբունքները, գործառույթները, դրանց ղեկավարման, կառավարման, տեղակայման և օգտագործման հետ կապված հարաբերությունները, այլ գորքերի խնդիրները, ինչպես նաև պաշտպանության բնագավառում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները, կազմակերպությունների գործառույթները, պաշտոնատար անձանց ու քաղաքացիների իրավունքները և պարտականությունները:

**Հոդված 2. Պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը**

1. Պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերից, սույն օրենքից և այլ իրավական ակտերից:

**Հոդված 3. Օրենքի հիմնական հասկացությունները**

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

- 1) պաշտպանություն՝ ռազմական անվտանգության համակարգը, Հայաստանի Հանրապետության տարածքը, հասարակությունն ու տնտեսությունը պաշտպանության նախապատրաստելու և Հայաստանի Հանրապետության անկախությունը, տարածքային ամբողջականությունը, պետական սահմանի անձեռնմխելիությունն ու անվտանգությունը պաշտպանելու՝ ռազմական, քաղաքական, տնտեսական, տեղեկատվական, սոցիալական, իրավական և այլ միջոցների ու միջոցառումների, ինչպես նաև ռազմական անվտանգության միջազգային երաշխիքների ապահովման մեխանիզմների կիրառման համալիր գործունեության համակարգ.
- 2) ազգային անվտանգության ռազմավարություն՝ պետության, հասարակության և անհատի անվտանգության և կայուն զարգացման ապահովման պետական քաղաքականություն.
- 3) ռազմական դոկտրին՝ Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովման ռազմաքաղաքական, ռազմական-ռազմավարական, ռազմատնտեսական և ռազմատեխնիկական հիմքերը որոշող պաշտոնական հայեցակետերի համախումբ.
- 4) ռազմական անվտանգության համակարգ՝ Հայաստանի Հանրապետության պետական լիազոր մարմինների ու պաշտոնատար անձանց, զինված ուժերի, այլ գորքերի և ռազմաարդյունաբերական համալիրի, ինչպես նաև ռազմական անվտանգության խնդիրների լուծման գործառույթներ իրականացնող կազմակերպությունների ամբողջություն.
- 5) զինված ուժեր՝ Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության համակարգի հիմքը կազմող պետական ռազմական կառույց, որն ապահովում է Հայաստանի Հանրապետության անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության զինված պաշտպանությունը.
- 6) այլ գորքեր՝ ոստիկանության գորքեր, սահմանապահ գորքեր և ազգային անվտանգության հատուկ ստորաբաժանումներ.
- 7) միացյալ զինված ուժեր՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի մասնակցությամբ ստեղծվող կազմավորումներ.
- 8) ազգային անվտանգության հիմնարար արժեքներ՝ Հայաստանի Հանրապետության անկախություն, պետության և ժողովրդի պաշտպանվածություն, խաղաղություն.
- 9) տեղեկատվական անվտանգություն՝ ի շահ պետության՝ քաղաքացիների և կազմակերպությունների տեղեկատվական

միջավայրի ձևավորումը, օգտագործումը և զարգացումն ապահովող տեղեկատվական միջավայրի պաշտպանվածություն.

10) ռազմաարդյունաբերական համալիր՝ գիտական և արտադրական կազմակերպությունների համակարգ, որն իրականացնում է ռազմական տեխնիկայի, սպառազինության, ռազմամթերքի և ռազմատեխնիկական միջոցների մշակման, արտադրության և նորոգման պետական պատվերներ:

#### **Հոդված 4. Հայաստանի Հանրապետության պաշտպանության կազմակերպումը**

1. Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը կազմակերպվում և իրականացվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակության և քաղաքացիների ընդգրկվածության, օրինականության, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգման, զինված ուժերի գործունեության նկատմամբ քաղաքացիական վերահսկողության սկզբունքների հիման վրա:

2. Պաշտպանության նպատակով ստեղծվում են զինված ուժեր, ինչպես նաև սահմանվում է քաղաքացիների զինապարտություն:

3. Պաշտպանությանը ներգրավվում են այլ զորքերը պատերազմի կամ ռազմական դրության ժամանակ զինված ուժերի հրամանատարության օպերատիվ ենթակայության ներքո անցնելու միջոցով: Պատերազմի կամ ռազմական դրության ժամանակ զինված ուժերի հրամանատարության օպերատիվ ենթակայության ներքո օրենքով սահմանված կարգով կարող են ներգրավվել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության հատուկ ստորաբաժանումները:

4. Պաշտպանությանը ներգրավվում է հանրապետության կապի և տեղեկատվության ամբողջ համակարգը՝ իր ենթակառուցվածքներով, ներառյալ՝ ռադիոհաճախականության ռեսուրսը, և պատերազմի կամ ռազմական դրության ժամանակ անցնում է զինված ուժերի ենթակայությանը:

5. Մույն հոդվածում նշված զինված ուժերից և այլ զորքերից բացի Հայաստանի Հանրապետությունում զինվորական այլ կազմավորումների ստեղծումն արգելվում է:

6. Պաշտպանության խնդիրներ լուծելու նպատակով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված

կարգով, Հայաստանի Հանրապետության տարածքում կարող են տեղակայվել օտարերկրյա պետությունների զինվորական կազմավորումներ և ստորաբաժանումներ:

7. Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման նպատակով զինված ուժերի ստորաբաժանումները կարող են Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մասնակցել խաղաղապահ կամ ռազմական գործողությունների:

8. Հայաստանի Հանրապետության պաշտպանության կազմակերպումը խաղաղ ժամանակ ներառում է՝

1) ռազմական քաղաքականության հիմնական ուղղությունների մշակումը, այդ թվում՝ ազգային անվտանգության ռազմավարության և ռազմական դոկտրինի ընդունումն ու կատարելագործումը:

2) ռազմական սպառնալիքի կանխատեսումն ու գնահատումը:

3) պաշտպանության բնագավառի իրավական կարգավորումը:

4) անհրաժեշտ կառուցվածքով, թվակազմով, ժամանակակից սպառազինությամբ և ռազմական տեխնիկայով հագեցած, բարձր մարտունակություն ունեցող զինված ուժերի ստեղծումը, զարգացումը, ինչպես նաև դրանց ծավալման և օգտագործման պլանավորումը:

5) պարտադիր զինվորական ծառայության գորակոչի անցկացումը և քաղաքացիներին պայմանագրային հիմունքներով զինվորական ծառայության ներգրավումը:

6) միջազգային համագործակցությունը:

7) տնտեսության, կապի և տրանսպորտի բնագավառների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, տարածքի և բնակչության գորահավաքային նախապատրաստությունը:

8) քաղաքացիական պաշտպանության միջոցառումների պլանավորումն ու իրականացումը:

9) ռազմաարդյունաբերական համալիրի զարգացումը:

10) ռազմական գիտության զարգացումը և ռազմական ուսուցումը:

11) զինված ուժերում մարդկային ռեսուրսների պլանավորումը և օգտագործումը:

12) պետական և ծառայողական գաղտնիքի պահպանման ապահովումը:

13) զինված ուժերի պահեստագործի, ինչպես նաև անհրաժեշտ քանակությամբ զենքի և ռազմամթերքի, ռազմական տեխնիկայի, պարենի ու այլ նյութերի պաշարների նախապատրաստումը:

14) պաշտպանական ծախսերի ֆինանսավորումը և դրանց օգտագործման նկատմամբ վերահսկողությունը.

15) բնակչության և զինված ուժերի տեղեկատվական անվտանգության ապահովումը.

16) ուսումնական հաստատություններում ռազմահայրենասիրական ուսուցումը.

17) պաշտպանության բնագավառի այլ միջոցառումներ:

9. Ռազմական դրության իրավական ռեժիմը, զորահավաքային նախապատրաստությունը և զորահավաքի անցկացումը, ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության կազմակերպումը սահմանվում են օրենքով:

## ԳԼՈՒԽ 2

### *ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ, ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

#### **Հոդված 5. Պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության Նախագահի լիազորությունները**

1. Հայաստանի Հանրապետության Նախագահը զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարն է:

2. Հայաստանի Հանրապետության Նախագահը՝

1) համակարգում է պետական մարմինների գործունեությունը պաշտպանության բնագավառում.

2) հաստատում է՝

ա. ռազմական քաղաքականության հիմնական ուղղությունները, այդ թվում՝ ազգային անվտանգության ռազմավարությունը և ռազմական դոկտրինը,

բ. զինված ուժերի կառուցվածքը,

գ. զինված ուժերի զարգացման, այլ զորքերի զարգացման, զինված ուժերի կիրառման, զինված ուժերի ծավալման, զինված ուժերի զորահավաքային պլանները, քաղաքացիական պաշտպանության հանրապետական պլանը,

դ. Հայաստանի Հանրապետության տարածքի պաշտպանության օպերատիվ սարքավորման պլանը, ռազմաարդյունաբերական

համալիրի, սպառազինության և ռազմական տեխնիկայի զարգացման պետական ծրագրերը,

ե. զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմի պաշտոնների, բարձրագույն սպայական կազմի պաշտոնների և դրանց համապատասխանող բարձրագույն սպայական զինվորական կոչումների ցանկերը.

3) նշանակում և ազատում է զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմը, շնորհում է բարձրագույն զինվորական կոչումներ.

4) պաշտպանության հարցերով Հայաստանի Հանրապետությունը ներկայացնում է միջազգային հարաբերություններում, կնքում, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վավերացմանն է ներկայացնում միջազգային պայմանագրեր, ստորագրում դրանց վավերագրերը, հաստատում, կասեցնում կամ չեղյալ է հայտարարում վավերացում չպահանջող միջազգային պայմանագրերը.

5) Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարվելու դեպքում հայտարարում է ռազմական դրություն, որոշում է ընդունում զինված ուժերի օգտագործման մասին և կարող է հայտարարել ընդհանուր կամ մասնակի զորահավաք.

6) պատերազմի ժամանակ կարող է նշանակել և ազատել զինված ուժերի գլխավոր հրամանատարին.

7) լուծում է պատերազմ հայտարարվելու հարցը՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նիստ գումարելու անհնարինության դեպքում.

8) հրամանագիր է հրապարակում պարտադիր զինվորական ծառայության զորակոչ անցկացնելու և զորացրում կատարելու մասին.

9) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան՝ որոշում է ընդունում Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս զինված ուժերի ստորաբաժանումների կողմից խաղաղապահ կամ ռազմական գործողությունների մասնակցության մասին.

10) իրականացնում է պաշտպանության բնագավառում օրենքով սահմանված այլ լիազորություններ:

**Հոդված 6. Պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի լիազորությունները**

1. Պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի լիազորությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ:

**Հոդված 7. Պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորությունները**

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝
- 1) ապահովում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության քաղաքականության իրականացումը.
  - 2) հաստատում է՝
    - ա. զինված ուժերի զինծառայողների ու աշխատողների հաստիքային թվաքանակները, այլ զորքերի թվաքանակը,
    - բ. պաշտպանական պետական պատվերը և դրա ձևավորման կարգը,
    - գ. պարտադիր զինվորական ծառայության գորակոչի ենթակա պահեստագործի սպայական կազմի թվաքանակը,
    - դ. զինվորական հաշվառման, նախագորակոչային պատրաստության կարգերը, ինչպես նաև զինվորական հաշվառման մասնագիտությունների, ամրագրման ենթակա մասնագիտությունների և պաշտոնների ցանկերը,
    - ե. պաշտպանության բնագավառում պետական լիազոր մարմնի (այսուհետ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն) և Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի կանոնադրություններն ու կառուցվածքները.
  - 3) մշակում և հաստատում է պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների աշխատանքը ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրելու պլանը, կարգն ու պայմանները, պետական և զորահավաքային պահուստի նյութական արժեքների կուտակման, ապամարագրման, թարմացման և փոխարինման ծրագրերը.
  - 4) մասնակցում է՝
    - ա. ռազմական քաղաքականության հիմնական ուղղությունների, ներառյալ՝ ազգային անվտանգության ռազմավարության և ռազմական դոկտրինի մշակման աշխատանքներին,

- բ. քաղաքացիական պաշտպանության հանրապետական պլանի մշակման աշխատանքներին, ինչպես նաև ապահովում է դրա կատարումը,
- գ. պաշտպանության նպատակով Հայաստանի Հանրապետության տարածքի օպերատիվ սարքավորման պլանի, ռազմաարդյունաբերական համալիրի, սպառազինության և ռազմական տեխնիկայի զարգացման պետական ծրագրերի մշակման աշխատանքներին, ինչպես նաև ապահովում է դրանց կատարումը.
- 5) որոշում է ընդունում պարտադիր զինվորական ծառայության գորակոչ կազմակերպելու, ընդհանուր կամ մասնակի գորահավաք անցկացնելու մասին.
- 6) կազմակերպում և համակարգում է պետական մարմինների գործունեությունը՝
  - ա. զինված ուժերի և այլ զորքերի ֆինանսավորման, սպառազինման, բնակավորման, էներգետիկ և այլ ապահովման ոլորտներում,
  - բ. զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների, ինչպես նաև զինծառայողներին հավասարեցված անձանց սոցիալական պաշտպանության ապահովման ոլորտում.
- 7) ծրագրում և ապահովում է ռազմական գիտության զարգացումը.
- 8) ստեղծում, վերակազմակերպում և լուծարում է պաշտպանության բնագավառի կազմակերպությունները, հանրակրթական (ռազմական բնույթի), ռազմաուսումնական և ռազմագիտական հաստատությունները, բարձրագույն ուսումնական հաստատությունների ռազմական ֆակուլտետները և ամբիոնները.
- 9) կնքում է պաշտպանության բնագավառի միջկառավարական պայմանագրեր, որոշում է ռազմական սպառնալիքների նվազեցման և Հայաստանի Հանրապետության ու օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների միջև վստահության ամրապնդման ուղղությունները.
- 10) կազմակերպում է զենքի և ռազմական տեխնիկայի, ռազմավարական նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների արտահանումն ու ներմուծումը.
- 11) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

**Հոդված 8. Պաշտպանության բնագավառում մարզպետների և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները**

1. Մարզպետները իրենց իրավասության սահմաններում՝

- 1) իրագործում են Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտպանության բնագավառի տարածքային քաղաքականությունը.
  - 2) ապահովում են մարզերում պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների կատարումը, զինծառայողների, պահեստազոր արձակված անձանց, նրանց ընտանիքների անդամների սոցիալական, իրավական պաշտպանվածությունը, աջակցում են զինված ուժերի զորահավաքային ծավալմանն ու պարտադիր զինվորական ծառայության զորակոչի իրականացմանը.
  - 3) պաշտպանության նպատակով իրականացնում են մարզի վարչական տարածքի և հաղորդակցության ուղիների նախապատրաստման միջոցառումները, զորահավաքային պլանների ու խնդիրների կատարումը.
  - 4) մասնակցում են մարզի վարչական տարածքի օպերատիվ սարքավորման պլանավորմանն ու օժանդակում դրանց իրագործմանը.
  - 5) օրենքով սահմանված կարգով մարզի վարչական տարածքում ապահովում և կազմակերպում են քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումը.
  - 6) օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով զինված ուժերին ապահովում են նյութական, տեխնիկական միջոցներով, բնական ռեսուրսներով և գործունեության համար անհրաժեշտ այլ արտադրանքով.
  - 7) իրականացնում են օրենքով և Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով սահմանված այլ լիազորություններ:
2. Պաշտպանության բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով:

**Գ Լ ՈՒ Խ 3**

***ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ, ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ***

**Հոդված 9. Պաշտպանության բնագավառում կազմակերպությունների գործառնությունները և պաշտոնատար անձանց պարտականությունները**

1. Կազմակերպությունները, դրանց պաշտոնատար անձինք պետական պատվերով սահմանված կարգով մատուցում են ռազմական

նշանակության արտադրանքի թողարկման, վերանորոգման, մատակարարման և այլ բնույթի ծառայություններ, իրականացնում են զորահավաքային նախապատրաստության պլաններով նախատեսված միջոցառումներ, անհրաժեշտ պայմաններ են ստեղծում իրենց աշխատողների զինվորական հաշվառման, զինվորական ծառայության նախապատրաստության, պարտադիր զինվորական ծառայության զորակոչի և զորահավաքային պարտականությունների կատարման ապահովելու համար, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով մասնակցում են քաղաքացիական պաշտպանության խնդիրների իրագործմանը:

2. Կազմակերպությունները պաշտպանության կարիքների համար տրամադրում են սեփականության իրավունքով իրենց պատկանող շարժական և անշարժ գույք, ներառյալ՝ տրանսպորտային միջոցներ՝ օրենքով սահմանված կարգով համարժեք փոխհատուցմամբ:

3. Խաղաղ ժամանակ հանրապետության կապի և տեղեկատվության ամբողջ համակարգի (իր ենթակառուցվածքներով), ներառյալ՝ ռադիոհաճախականության ռեսուրսի գործունեությունն իրականացվում է՝ պաշտպանության շահերից բխող խնդիրների առաջնայնությունը հաշվի առնելով, և համակարգի զարգացումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի պետական լիազոր մարմնի միջոցով, համաձայնեցվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ:

**Հոդված 10. Պաշտպանության բնագավառում քաղաքացիների իրավունքները և պարտականությունները**

1. Պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն ունեն պետության երաշխավորած իրավունքներ և կրում են պարտականություններ, որոնց իրագործումը կարգավորվում է սույն օրենքով և այլ օրենքներով:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն օրենքով սահմանված կարգով մասնակցում են Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը՝

1) խաղաղ ժամանակ պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու, վարժական հավաքների և զորավարժությունների կանչվելու միջոցով.



2) պատերազմի ժամանակ պարտադիր զինվորական ծառայության և գորահավաքի գորակոչվելու միջոցով:

3) քաղաքացիական պաշտպանության միջոցառումներին ներգրավվելու միջոցով:

3. Պաշտպանության կարիքների համար ռազմական դրության ժամանակ քաղաքացիները տրամադրում են սեփականության իրավունքով իրենց պատկանող շարժական և անշարժ գույք, ներառյալ՝ տրանսպորտային միջոցներ՝ օրենքով սահմանված կարգով համարժեք փոխհատուցմամբ:

4. Օտարերկրյա պետությունների զինված ուժերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և Հայաստանի Հանրապետության զինված ուժերում օտարերկրյա պետությունների քաղաքացիների զինվորական ծառայությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

#### **ԳԼՈՒԽ 4**

#### ***ԶԻՆՎԱՄ ՈՒԺԵՐԸ ԵՎ ԱՅԼ ԶՈՐՔԵՐԸ***

#### **Հոդված 11. Զինված ուժերի կառուցվածքը և գործառույթները**

1. Զինված ուժերը կազմված են զինվորական կառավարման կենտրոնական մարմնից, գորամիավորումներից, միավորումներից, գորատեսակներից և գորամասերից: Պատերազմի կամ ռազմական դրության ժամանակ զինված ուժերի կազմում ընդգրկվում են նաև այլ զորքերը:

2. Զինված ուժերի հիմնական գործառույթներն են՝

1) Հայաստանի Հանրապետության անվտանգության, պաշտպանության, տարածքային ամբողջականության և սահմանների անձեռնմխելիության ապահովումը:

2) ազգային անվտանգության հիմնարար արժեքների պաշտպանությունը:

3) Հայաստանի Հանրապետության վրա հնարավոր զինված հարձակման կանխումը, կասեցումը, լարվածության օջախի չեզոքացումը, պատերազմական գործողությունների իրականացումը, հրադադարի կամ հաշտության պարտադրումը՝ զինված ուժերի մասնակի կամ լրիվ ծավալմամբ:

4) մասնակցությունը արտակարգ իրավիճակների կանխման, հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման աշխատանքներին ու քաղաքացիական պաշտպանության, տարհանման, որոնողափրկարարական, փրկարարական, վթարավերականգնողական և մարդասիրական միջոցառումներին:

5) ռազմական սպառնալիքների բացահայտումը և դրանց դիմակայումը:

6) սպառազինության, ռազմական տեխնիկայի և նյութական ռեսուրսների անհրաժեշտ մարտական և գորահավաքային հնարավորությունների ապահովումը:

7) ռազմավարական (օպերատիվ) կիրառման և գորահավաքային ծավալման պլանների կատարումը:

8) միջազգային պայմանագրերով սահմանված պարտավորությունների կատարումը, ներառյալ՝ միացյալ զինված ուժերի կազմում մասնակցությունը միջազգային մարդասիրական և փրկարարական, խաղաղասպահ և կայունացման գործողություններին:

9) մասնակցությունը դիվերսիոն-հետախուզական և ահաբեկչական գործողությունների կանխմանը և չեզոքացմանը:

10) պաշտպանության բնագավառում տեղեկատվական անվտանգության ապահովումը:

3. Զինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և գտնվում են քաղաքացիական վերահսկողության ներքո:

#### **Հոդված 12. Զինված ուժերի ղեկավարումը և կառավարումը**

1. Զինված ուժերի ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Նախագահը՝ որպես զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատար:

2. Զինված ուժերի անմիջական ղեկավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարը, որը կազմակերպում և վերահսկում է զինված ուժերի ու Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի մեջ մտնող այլ մարմինների և կազմակերպությունների գործունեությունը:

3. Զինված ուժերի կառավարումն իրականացնում է գլխավոր շտաբի պետը, որը հանդիսանում է զինված ուժերի զինվորական ամենաբարձր պաշտոնատար անձը:

**Հոդված 13. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության լիազորությունները**

1. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը՝

1) մասնակցում է՝

ա. ռազմական քաղաքականության հիմնական ուղղությունների, ներառյալ՝ ազգային անվտանգության ռազմավարության և ռազմական դոկտրինի մշակմանն ու կատարելագործմանը,

բ. պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների աշխատանքը ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրելու պլանի, պետական և զորահավաքային պահուստի նյութական արժեքների կուտակման, ապամրագրման, թարմացման և փոխարինման ծրագրերի մշակմանը, գ. ռազմաարդյունաբերական համալիրի, սպառազինության և ռազմական տեխնիկայի զարգացման պետական ծրագրերի մշակմանը.

2) իր լիազորությունների սահմաններում ուսումնասիրում և գնահատում է ռազմաքաղաքական իրադրությունը, ռազմական սպառնալիքների և Հայաստանի Հանրապետության պաշտպանվածության աստիճանը.

3) Հայաստանի Հանրապետության կառավարություն առաջարկություններ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում պաշտպանության ծախսերի, պաշտպանության նախարարությանը հատկացված միջոցների ծախսման կարգի, ինչպես նաև կրթության զարգացման պետական ծրագրում ընդգրկելու համար բնակչության հայրենասիրական դաստիարակության չափորոշիչների վերաբերյալ.

4) հսկողություն է իրականացնում պարտադիր զինվորական ծառայության գորակոչի և վարժական հավաքների անցկացման նկատմամբ.

5) ղեկավարում է նախագորակոչային պատրաստությունը և ռազմահայրենասիրական դաստիարակությունը.

6) ապահովում և վերահսկողություն է իրականացնում զինված ուժերի մարտական պատրաստության, մարտական և զորահավաքային պատրաստականության, զորահավաքային ռեսուրսների հաշվառման և հավաքագրման վրա.

7) վերահսկողություն է իրականացնում զորահավաքային առաջադրանք ունեցող կազմակերպությունների և

ստորաբաժանումների՝ սպառազինության և ռազմական տեխնիկայի պաշարների կուտակմանն ու բաշխմանն ուղղված գործունեության նկատմամբ.

8) պատվիրում և ֆինանսավորում է զինված ուժերի համար սպառազինության և ռազմական տեխնիկայի, պարենային, իրային և այլ ունեցվածքի, ինչպես նաև նյութական պաշարների արտադրությունն ու գնումները, հսկողություն է իրականացնում ֆինանսական միջոցների ծախսման և նյութատեխնիկական միջոցների և ունեցվածքի օգտագործման նկատմամբ.

9) ապահովում է զինված ուժերում պաշտպանության բնագավառի օրենքների, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերի, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանների կատարումը.

10) իրականացնում է ընդհանուր կամ մասնակի զորահավաքների անցկացումը.

11) մասնակցում է քաղաքացիական պաշտպանությանը.

12) մշակում և իրականացնում է զինված ուժերի անձնակազմի ծառայողական առաջխաղացումն ապահովող կադրային քաղաքականությունը, իր իրավասության սահմաններում ապահովում է զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների, ինչպես նաև զինծառայողներին հավասարեցված անձանց սոցիալական պաշտպանությունը.

13) ապահովում է պաշտպանության ոլորտի զարգացմանն ու կատարելագործմանն ուղղված իրավական ակտերի նախագծերի մշակման և գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի ընդունման գործընթացը.

14) կազմակերպում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների ու միջազգային կազմակերպությունների միջև համագործակցությունը ռազմական, ռազմաքաղաքական և ռազմատեխնիկական բնագավառում.

15) կազմակերպում և իրականացնում է ռազմական ուսուցման ու ռազմական գիտության զարգացման գործընթացները.

16) իրականացնում է այլ իրավական ակտերով նախատեսված լիազորություններ:

2. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարը՝

1) հաստատում է պարտադիր զինվորական ծառայության գորակոչվող քաղաքացիների թվաքանակը.

2) հաստատում է զինվորական հաշվառումը վարելու հրահանգը, պարտադիր զինվորական ծառայության զորակոչի և վարժական հավաքների անցկացման, զինապարտների բժշկական և զինծառայողների ռազմաբժշկական փորձաքննության կարգերը.

3) հաստատման է ներկայացնում`

ա. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի կանոնադրություններն ու կառուցվածքը,

բ. զինված ուժերի զարգացման, ծավալման, զորահավաքային, կիրառման պլանները, զինված ուժերի կառուցվածքը, հաստիքային թվաքանակը,

գ. զինվորական հաշվառման, նախագորակոչային պատրաստության կարգերը, ինչպես նաև զինվորական հաշվառման մասնագիտությունների, ամրագրման ենթակա մասնագիտությունների և պաշտոնների ցանկերը,

դ. պաշտպանության նպատակով Հայաստանի Հանրապետության տարածքի օպերատիվ սարքավորման, ռազմաարդյունաբերական համալիրի, սպառազինության և ռազմական տեխնիկայի զարգացման պետական ծրագրերը:

#### **Հոդված 14. Զինված ուժերի գլխավոր շտաբը**

1. Զինված ուժերի գլխավոր շտաբը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմին է:

2. Զինված ուժերի գլխավոր շտաբը`

1) մշակում և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին է ներկայացնում`

ա. առաջարկություններ` ռազմական քաղաքականության հիմնական ուղղությունների, ներառյալ` ազգային անվտանգության ռազմավարության և ռազմական դոկտրինի վերաբերյալ,

բ. զինված ուժերի զարգացման, ծավալման, զորահավաքային, կիրառման, տարածքի օպերատիվ սարքավորման պլանները, ռազմաարդյունաբերական համալիրի, սպառազինության և ռազմական տեխնիկայի զարգացման պետական ծրագրերը, զինված ուժերի կառուցվածքը, հաստիքային թվաքանակը,

գ. զինվորական հաշվառման, նախագորակոչային պատրաստության կարգերի, զինվորական հաշվառումը վարելու հրահանգի, ինչպես նաև

զինվորական հաշվառման մասնագիտությունների, ամրագրման ենթակա մասնագիտությունների և պաշտոնների ցանկերի վերաբերյալ առաջարկություններ,

դ. քաղաքացիական պաշտպանության պլանների վերաբերյալ առաջարկություններ.

2) կազմակերպում է զինված ուժերի և այլ զորքերի զորահավաքային ու ռազմավարական ծավալումը.

3) պատասխանատու է զինված ուժերի մարտական և զորահավաքային պատրաստականության, մարտական պատրաստության համար.

4) իրականացնում է զինված ուժերը զորահավաքային ծավալման ռազմական տեխնիկայով, սպառազինությամբ և նյութական այլ միջոցներով ընթացիկ ու հեռանկարային պլանավորման, ինչպես նաև խաղաղ ժամանակ այդ միջոցների կուտակման, պահպանման և տեղաբաշխման ապահովումը.

5) ղեկավարում է պաշտպանական ոլորտի կազմակերպություններում գիտական, գյուտարարական և նորարարական աշխատանքների իրականացումը.

6) ապահովում է զինված ուժերի անձնակազմի զինվորական կարգապահությունը, բարոյահոգեբանական բարձր մակարդակը և հայրենասիրական դաստիարակությունը.

7) իրականացնում է պարտադիր զինվորական ծառայության զորակոչի և վարժական հավաքների անցկացումը, ինչպես նաև զորահավաքային ռեսուրսների հաշվառումը և հավաքագրումը.

8) իրականացնում է քաղաքացիների զինվորական ծառայության նախապատրաստությունը և զինվորական հաշվառումը.

9) իրականացնում է հետախուզական գործունեություն` պաշտպանության և անվտանգության նպատակով.

10) խաղաղ ժամանակ կազմակերպում է զինված ուժերի կապի և տեղեկատվության համակարգի գործունեությունը, պլանավորում է դրա կիրառումը ռազմական դրության կամ պատերազմի ժամանակ, իրականացնում է կապի և տեղեկատվության ամբողջ համակարգի ղեկավարումը ռազմական դրության կամ պատերազմի ժամանակ.

11) կազմակերպում է զինված ուժերի թիկունքային, բժշկական ու տեխնիկական ապահովումը.

12) համակարգում է այլ զորքերի և ռազմական դրության ժամանակ ստեղծվող հատուկ ստորաբաժանումների օպերատիվ ու զորահավաքային պատրաստությունը, վերահսկում է դրանց զորահավաքային պատրաստականությունը.

**ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՂՐՈՒՅԹՆԵՐ**

- 13) մասնակցում է՝  
ա. զինված ուժերի կադրային քաղաքականության մշակմանը և իր լիազորությունների շրջանակներում դրա իրականացմանը,  
բ. ռազմագիտական և ռազմակրթական ծրագրերի մշակմանը.
- 14) իր իրավասության շրջանակներում իրականացնում է զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական պաշտպանության ապահովումը.
- 15) իրականացնում է պաշտպանության և անվտանգության ամրապնդման, քաղաքացիական պաշտպանության կազմակերպման, ապահովման, ինչպես նաև սույն օրենքով, զինված ուժերի կանոնադրքերով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններ:

**Հոդված 15. Այլ գորքերը**

- 1. Այլ գորքերի ղեկավարման և կառավարման գործառույթները խաղաղ ժամանակ օրենքով սահմանված կարգով իրականացնում են համապատասխան պետական լիազոր մարմինները:
- 2. Այլ գորքերն իրենց իրավասությունների շրջանակներում՝  
1) մասնակցում են զինված ուժերի՝ իրենց մասով կիրառման պլանների մշակմանը և ապահովում դրանց կիրառումը.  
2) զինված ուժերի կազմում մասնակցում են Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակմանը դիմակայելուն.  
3) պաշտպանության բնագավառում իրականացնում են սույն օրենքով նախատեսված այլ լիազորություններ:
- 3. Այլ գորքերի համալրումն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:
- 4. Այլ գորքերի ստեղծումը, կառավարումը և գործունեությունն իրականացվում են Հայաստանի Հանրապետության օրենքների հիման վրա:
- 5. Այլ գորքերի նյութական միջոցների գորային պաշարների կուտակման պլանավորումը, շարանումը, տեղավորումը և պահպանումը խաղաղ ժամանակ իրականացնում են համապատասխան պետական լիազոր մարմինները, իսկ պատերազմի ժամանակ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը:

**Հոդված 16. Զինված ուժերում և այլ գորքերում կուսակցությունների, միավորումների և արհեստակցական միությունների ստեղծման արգելումը**

1. Զինված ուժերում և այլ գորքերում կուսակցությունների, միավորումների ու արհեստակցական միությունների ստեղծումը, ինչպես նաև գորամասերի, զինվորական կազմակերպությունների, ռազմաուսումնական հաստատությունների տարածքում կուսակցական քարոզչությունն արգելվում են:

**Հոդված 17. Օրենքի ուժի մեջ մտնելը**

- 1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:
- 2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի մայիսի 29-ի ՀՕ-120 օրենքը:

**Հայաստանի Հանրապետության Նախագահ**

**Ս. Սարգսյան**

2008 թ. դեկտեմբերի 18  
Երևան  
ՀՕ-198-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
Օ Ր Ե Ն Ք Ը**

Ընդունված է 2012 թվականի մարտի 21-ին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ  
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ**

**ԳԼՈՒԽ 1**

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

**Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան և գործողության ոլորտը**

1. Սույն օրենքը սահմանում է զինվորական կարգապահության հասկացությունը, սկզբունքները, զինվորական կարգապահության պահպանման հետ կապված զինծառայողների պարտականությունները, զինծառայողներին տրվող խրախուսանքի և կարգապահական տույժերի տեսակները, դրանք կիրառելու կարգն ու պայմանները, հրամանատարների (պետերի) և այլ պաշտոնատար անձանց իրավունքները դրանց կիրառման գործում, ինչպես նաև կարգավորում է զինվորական կարգապահության ամրապնդման հետ կապված այլ հարաբերություններ:

2. Սույն օրենքի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերում, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության համակարգերում (այսուհետ՝ զինված ուժեր և այլ զորքեր) զինվորական ծառայություն անցնող անձանց վրա:

**Հոդված 2. Զինվորական կարգապահության հասկացությունը և զինվորական կարգապահության ապահովման սկզբունքները**

1. Զինվորական կարգապահությունը յուրաքանչյուր զինծառայողի կողմից Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով, այլ օրենքներով ու զինված ուժերում գործող այլ կանոնադրություններով, ինչպես նաև հրամանատարների (պետերի)՝ իրենց

լիազորությունների շրջանակներում տված հրամաններով սահմանված պարտականությունների և կարգուկանոնի խստիվ ու ճշգրիտ պահպանումն է:

2. Զինվորական կարգապահությունը հիմնվում է օրինականության, մարդու իրավունքների և ազատությունների հարգման, հրապարակայնության, խրախուսման ու կարգապահական պատասխանատվության անխուսափելիության և անհատականացման, զինծառայողների զինվորական, իրավական ու բարոյական դաստիարակության սկզբունքների վրա:

3. Զինվորական կարգապահությունն ապահովվում է յուրաքանչյուր զինծառայողի կողմից Հայաստանի Հանրապետության պաշտպանության, զինվորական պարտքի և իր պարտականությունների կատարման համար անձնական պատասխանատվության գիտակցմամբ, ինչպես նաև հրամանատարների (պետերի) կողմից իրենց լիազորությունների շրջանակներում տրված հրամանների ճշգրիտ ու ժամանակին կատարմամբ:

**Հոդված 3. Զինծառայողների պարտականությունները զինվորական կարգապահության պահպանման գործում**

1. Զինվորական կարգապահությունը պարտավորեցնում է յուրաքանչյուր զինծառայողի՝

1) հավատարիմ լինել զինվորական երդմանը, խստորեն պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և օրենքների պահանջները:

2) իր զինվորական պարտքը և գործառնական պարտականությունները, օրվա կարգացուցակով նախատեսված միջոցառումները կատարել լիարժեք, բարեխղճորեն և արիաբար, պատշաճ ձևով ուսումնասիրել ռազմական գործը, պահպանել ռազմական և պետական գույքը:

3) աննկուն կրել զինվորական ծառայության դժվարությունները, անմնացորդ նվիրվել զինվորական պարտքի կատարմանը:

4) լինել զգոն, խստորեն պահպանել պետական և ծառայողական գաղտնիքը:

5) պահպանել զինծառայողների միջև կանոնադրային փոխհարաբերությունները, ամրապնդել զորային ընկերակցականությունը:

6) հարգել հրամանատարներին (պետերին) ու միմյանց, պահպանել զինվորական բարեկրթության և ողջույնի կանոնները:

- 7) թույլ չտալ զինծառայողի պատիվն արատավորող արարք:
2. Զինվորական բարձր կարգապահության ապահովման միջոցներն են՝
- 1) զինծառայողների մեջ բարոյակամային ու մարտական հատկանիշներ դաստիարակելը, հրամանատարներին (պետերին) գիտակցաբար ենթարկվելը.
  - 2) իր պարտականությունների և զինվորական կանոնադրքերի պահանջների կատարման համար յուրաքանչյուր զինծառայողի անձնական պատասխանատվության գիտակցումը.
  - 3) զորամասում (ստորաբաժանումում) ներքին կարգուկանոնի պահպանումը.
  - 4) մարտական պատրաստության հստակ կազմակերպումը և այդ գործում ամբողջ անձնակազմի ընդգրկումը.
  - 5) ենթակաների նկատմամբ հրամանատարների (պետերի) ամենօրյա պահանջկոտությունը, նրանց արժանապատվության հարգումը, նրանց հանդեպ մշտական հոգատարությունը, համոզման, հարկադրանքի և զինվորական կոլեկտիվի հասարակական ներգործության միջոցների հմուտ գուգորդումն ու ճիշտ կիրառումը.
  - 6) զորամասում (ստորաբաժանումում) անհրաժեշտ նյութական-կենցաղային պայմանների ստեղծումը:

**Հոդված 4. Հրամանատարի (պետի) դերը զինվորական կարգապահության ապահովման և ամրապնդման գործում**

1. Զինվորական կարգապահության և կանոնադրական կարգի ամրապնդման համար պատասխանատու են բոլոր խմբերի հրամանատարները (պետերը), մյուս սպայական ու ենթասպայական անձնակազմը:
2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, սույն օրենքի, զինված ուժերի ներքին, կայազորային ու պահակային ծառայությունների կանոնադրքերի, շարային և մարտական կանոնադրությունների, Հայաստանի Հանրապետության այլ օրենքների պահանջների կատարումն ապահովելիս հրամանատարը (պետը) պետք է մշտապես դրական օրինակ ծառայի ենթակա անձնակազմին, բարձրացնի վերջիններիս մեջ պատվի և զինվորական պարտքի գիտակցումը, խրախուսի արժանիներին ու պատասխանատվության ենթարկի զինվորական կարգապահությունը խախտողներին:

3. Հրամանատարը (պետը) պարտավոր է՝
- 1) հատուկ ուշադրություն դարձնել ենթակաների անհատական հատկանիշների ուսումնասիրմանը, զինվորական կանոնադրքերով սահմանված փոխհարաբերությունների պահպանմանը, զինվորական կոլեկտիվի համախմբմանը, ժամանակին հայտնաբերել կատարված կարգապահական խախտումների պատճառները, ձեռնարկել կանխարգելիչ միջոցառումներ՝ նպատակ ունենալով ապահովել զորամասի (ստորաբաժանման) մարտունակությունը և առաջադրված խնդիրների կատարումը.
  - 2) իմանալ զինվորական կարգապահության և անձնակազմի բարոյահոգեբանական վիճակը, հասնել ենթակա հրամանատարների (պետերի) կողմից զինվորական կարգապահության ամրապնդման պահանջների, խնդիրների ու եղանակների միասնական ըմբռնման.
  - 3) հետևողականորեն վերլուծել ենթակա անձնակազմի զինվորական կարգապահության ու բարոյահոգեբանական վիճակը, այդ մասին ժամանակին և օբյեկտիվորեն զեկուցել վերադաս հրամանատարներին (պետերին), իսկ հանցագործությունների ու պատահարների մասին զեկուցել անհապաղ.
  - 4) անհապաղ վերացնել ծառայության կատարման կանոնների բացահայտված խախտումները և վճռականորեն կանխել զորամասի (ստորաբաժանման) մարտունակությանը վնաս հասցնող յուրաքանչյուր գործողություն, կազմակերպել իրավական քարոզչություն ու հետևողական աշխատանք տանել հանցագործությունների, պատահարների և կարգապահական խախտումների կանխման ուղղությամբ.
  - 5) ենթակա անձնակազմին դաստիարակել զինվորական կարգապահության պահանջների անշեղ կատարման ոգով, նրանց մեջ զարգացնել և պահպանել անձնական արժանապատվության և զորային ընկերակցության զգացում, զինվորական պարտքի ու պատվի գիտակցում, զորամասում (ստորաբաժանումում) անհանդուրժողականության մթնոլորտ ստեղծել զինվորական կարգապահության, հատկապես զինվորական կանոնադրքերով սահմանված փոխհարաբերությունների պահպանման պահանջների խախտումների, սոցիալական անարդարության դրսևորումների նկատմամբ.
  - 6) հարգել ենթակաների պատիվն ու արժանապատվությունը, բացառել նրանց հետապնդումներն անձնական բնույթի շարժառիթներով:

4. Զինվորական կարգապահությունն ամրապնդելու և կարգազանց զինծառայողին կարգապահական տույժի ենթարկելու ուղղությամբ համապատասխան միջոցառումներ չձեռնարկելու դեպքում հրամանատարը (պետը) ենթակա է սույն օրենքով սահմանված պատասխանատվության: Զինվորական կարգապահության պահպանման ուղղությամբ հրամանատարի (պետի) գործունեությունը հիմնվում է օրենքների և զինվորական կանոնագրքերի պահանջների ճշգրիտ պահպանման, իր կարգապահական իրավունքների լիակատար օգտագործման, կարգուկանոն հաստատելու նպատակով իր պարտականությունների կատարման ու զինվորական կարգապահության խախտումները ժամանակին կանխելու վրա: Հրամանատարը (պետը) պատասխանատվություն չի կրում ենթակա զինծառայողի այն իրավախախտումների համար, որոնք հրամանատարի (պետի) ոչ իրավաչափ գործողության կամ անգործության կամ իրավախախտումները կանխելու միջոցներ չձեռնարկելու անմիջական հետևանք չեն:

5. Միմյանց ենթակայության տակ չգտնվող զինծառայողների ծառայողական պարտականությունները համատեղ կատարելիս ծառայողական փոխհարաբերությունները, ինչպես նաև ավագությունը որոշվում են համաձայն նրանց պաշտոնների, իսկ հավասար պաշտոնների դեպքում՝ ըստ կոչումների:

6. Հրամանատարական ուղղահայացի և միանձնյա ղեկավարման ապահովման պայմաններն են հրամանատարի (պետի) հրաման արձակելու իրավունքը և ենթակա զինծառայողի անառարկելիորեն ենթարկվելու պարտականությունը:

7. Ենթակա զինծառայողի բացահայտ անհնազանդության, անհարկի հակաճառության կամ դիմադրության դեպքում հրամանատարը (պետը) պարտավոր է կարգուկանոնն ու կարգապահությունը վերականգնելու նպատակով իր լիազորությունների շրջանակում ձեռնարկել օրենքներով ու զինվորական կանոնագրքերով սահմանված հարկադրանքի բոլոր միջոցները:

### **Հոդված 5. Կարգապահական իրավունքը**

1. Կարգապահական իրավունքը հրամանատարների (պետերի), ինչպես նաև այլ զինծառայողների իրավասությունն է՝ ենթակա կամ ստորադաս զինծառայողի նկատմամբ կիրառելու խրախուսանքի կամ կարգապահական տույժի տեսակներ:

2. Հրամանատարները (պետերը), ինչպես նաև այլ պաշտոնատար անձինք, ովքեր նշված չեն սույն օրենքի 12-րդ և 29-րդ հոդվածներում, իրենց ունեցած զինվորական կոչմանը համապատասխան, օգտվում են հետևյալ կարգապահական իրավունքներից.

- 1) կրտսեր սերժանտ, սերժանտ՝ ջոկի (հաշվարկի) հրամանատարի.
- 2) ավագ սերժանտ, ավագ՝ դասակի հրամանատարի տեղակալի.
- 3) ենթասպա, ավագ ենթասպա՝ վաշտի, մարտկոցի, դիվիզիոնի (խմբի) ավագի.
- 4) լեյտենանտ, ավագ լեյտենանտ՝ դասակի (խմբի) հրամանատարի.
- 5) կապիտան՝ վաշտի, մարտկոցի, ավիաօդակի, առանձին դասակի հրամանատարի.
- 6) մայոր՝ առանձին վաշտի (մարտկոցի) հրամանատարի.
- 7) փոխգնդապետ՝ գումարտակի, դիվիզիոնի, ավիաեսկադրիլիայի հրամանատարի.
- 8) գնդապետ՝ գնդի, բրիգադի հրամանատարի.
- 9) գեներալ-մայոր՝ դիվիզիայի, կորպուսի հրամանատարի.
- 10) գեներալ-լեյտենանտ՝ բանակի հրամանատարի.
- 11) գեներալ-գնդապետ, բանակի գեներալ՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետի:

3. Օրենքով սահմանված կարգով պաշտոնի ժամանակավոր կատարման դեպքում հրամանատարը (պետը) օգտվում է տվյալ պաշտոնի համար սահմանված կարգապահական իրավունքից:

4. Զինծառայողների միջև ենթակայական հարաբերությունների բացակայության դեպքում, երբ նրանց ծառայողական փոխհարաբերությունները որոշված չեն հրամանատարի (պետի) կողմից նշանակված համատեղ ծառայություն կատարելիս, պաշտոնով բարձրը, իսկ դրա հավասարության դեպքում զինվորական կոչումով ավագը համարվում է պետ և օգտվում է զբաղեցրած պաշտոնին համապատասխան կարգապահական իրավունքից:

5. Զորամիավորումների, զորամասերի և ստորաբաժանումների հրամանատարների տեղակալները ենթակաների նկատմամբ օգտվում են իրենց անմիջական պետերին տրված իրավունքներից մեկ աստիճանով ցածր կարգապահական իրավունքից:

6. Գնդի հրամանատարի տեղակալը և ավելի ցածր պաշտոնի սպաները ստորաբաժանումների կամ անձնախմբերի հետ՝ որպես դրանց պետեր, գործողման ժամանակ, ինչպես նաև զորամասի հրամանատարի հրամանով զորամասի տեղաբաշխման վայրից դուրս ինքնուրույն առաջադրանք կատարելիս օգտվում են զբաղեցրած պաշտոնով

նախատեսված իրավունքներից մեկ աստիճանով բարձր կարգապահական իրավունքից:

7. Անձնախմբերի պետեր նշանակված ենթասպայական կազմի զինձառայողները սույն մասի առաջին պարբերությունում նշված դեպքերում օգտվում են հետևյալ կարգապահական իրավունքներից՝

1) կրտսեր սերժանտ, սերժանտ, ավագ սերժանտ և ավագ զինվորական կոչում ունեցողները՝ վաշտի (անձնախմբի) ավագի.

2) ենթասպա և ավագ ենթասպա զինվորական կոչում ունեցողները՝ դասակի (խմբի) հրամանատարի.

3) դասակի (խմբի) հրամանատարի պաշտոն զբաղեցնող ենթասպան և ավագ ենթասպան՝ վաշտի հրամանատարի:

8. Ռազմաուսումնական հաստատությունների կուրսանտներից կազմված ստորաբաժանումների սպա հրամանատարներն իրենց ենթակաների նկատմամբ օգտվում են զբաղեցրած պաշտոնով նախատեսված իրավունքներից մեկ աստիճանով բարձր կարգապահական իրավունքից:

9. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների զինձառայող ղեկավարներն իրենց ենթակա զինձառայողների նկատմամբ օգտվում են բրիգադի, գնդի, դիվիզիայի հրամանատարին տրված կարգապահական իրավունքից:

10. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարը սույն օրենքով նախատեսված կարգապահական իրավունքը կիրառում է ամբողջ ծավալով:

11. Սույն օրենքով Հայաստանի Հանրապետության զինված ուժերի զինձառայողների նկատմամբ կարգապահական իրավունքի կիրառման և կարգավորիչ ակտեր ընդունելու մասով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին վերապահված լիազորություններից օգտվում են «Զինվորական ծառայություն անցնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված համապատասխան պետական լիազոր մարմինների ղեկավարները՝ այլ զորքերի մասով:

## **Հոդված 6. Հայեցողական լիազորությունների սահմանները և կամայականության արգելքը**

1. Հայեցողական լիազորությունն օրենքով հրամանատարին (պետին) վերապահված իրավունք է՝ կարգապահական իրավունքը իրացնելիս ընտրելու մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից որևէ մեկը:

2. Հայեցողական լիազորություն իրականացնելիս հրամանատարը (պետը) պարտավոր է առաջնորդվել մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Մահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, արդարացիության, կարգապահական իրավունքի իրականացման համաչափության և կամայականության արգելքի սկզբունքներով, ինչպես նաև հետապնդել օրենքով կանխորոշված այլ նպատակներ:

3. Հրամանատարին (պետին) արգելվում է անհավասար մոտեցում ցուցաբերել միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ, եթե առկա չէ դրանց տարբերակման որևէ հիմք:

4. Հրամանատարները (պետերը) պարտավոր են անհատական մոտեցում ցուցաբերել էապես տարբեր փաստական հանգամանքների նկատմամբ:

5. Եթե հրամանատարը (պետը) որևէ հայեցողական լիազորություն իրականացրել է որոշակի ձևով, ապա միանման դեպքերում հետագայում ևս պարտավոր է իր այդ հայեցողական լիազորությունն իրականացնել նույն ձևով: Հրամանատարը (պետը) այդ սահմանափակումից կարող է հրաժարվել, եթե գերակա շահի առկայության պատճառով նա հետագայում մտադիր է մշտապես ընդունել մեկ այլ հայեցողական որոշում:

### **ԳԼՈՒԽ 2**

*ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ԽՐԱԽՈՒՄԱՆՔԻ ՏԵՄԱԿՆԵՐԸ,  
ԽՐԱԽՈՒՄԱՆՔԻ ՏՐՄԱՆ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ*

## **Հոդված 7. Զինձառայողներին տրվող խրախուսանքները**

1. Խրախուսանքը զինվորական կարգապահության ամրապնդման և զինձառայողների դաստիարակման միջոց է: Յուրաքանչյուր հրամանատար (պետ) սույն օրենքով, այլ օրենքներով ու իրավական



ակտերով վերապահված իրավունքների սահմաններում պարտավոր է խրախուսել ենթակա զինծառայողներին՝ ծառայության մեջ աչքի ընկնելու և ծառայողական պարտականությունները ջանասիրաբար կատարելու, անձնական հատուկ վաստակի և դրական նախաձեռնություն ցուցաբերելու համար:

2. Զինծառայողներին կարող են տրվել հետևյալ խրախուսանքները.

- 1) տրված կարգապահական տույժի հանում.
- 2) շնորհակալության հայտարարում.
- 3) զինվորական պարտականությունների օրինակելի կատարման և ստացած խրախուսանքների մասին զինծառայողի ընտանիքին տեղեկացում.
- 4) գերատեսչական պատվոգրով պարգևատրում.
- 5) արժեքավոր նվերով կամ միանվագ գումարով պարգևատրում.
- 6) գորամասի բացված մարտական դրոշի մոտ զինծառայողի լուսանկարում.
- 7) լրացուցիչ արձակուրդի տրամադրում.
- 8) գորամասի տեղաբաշխման վայրից արտահերթ արձակում.
- 9) գերատեսչական կրծքանշաններով պարգևատրում.
- 10) գերատեսչական մեդալներով պարգևատրում.
- 11) գորամասի պատվո գրքում զինծառայողի լուսանկարի զետեղում և անվան, հայրանվան ու ազգանվան գրառում.
- 12) վաղաժամկետ հերթական զինվորական կոչման շնորհում.
- 13) հաստիքով նախատեսվածից մեկ աստիճանով բարձր հերթական զինվորական կոչման շնորհում.
- 14) անվանական զենքով պարգևատրում:

3. Զինվորական պարտքը կատարելիս ցուցաբերած արիության ու խիզախության, գորքերի օրինակելի ղեկավարման և Հայաստանի Հանրապետությանը, զինված ուժերին ու այլ գորքերին մատուցած ակնառու այլ ծառայությունների, մարտական պատրաստականության գործում դրսևորած բարձր ցուցանիշների համար զինծառայողները կարող են օրենքով սահմանված կարգով ներկայացվել պետական պարգևներով պարգևատրման:

4. Ուսումնառության ընթացքում ցուցաբերած բարձր առաջադիմության, ծառայողական պարտականությունները գերազանց կատարելու համար Հայաստանի Հանրապետության ռազմաուսումնական հաստատությունների կուրսանտների նկատմամբ, բացի սույն հոդվածի 2-րդ մասի 1-13-րդ կետերով նախատեսված խրախուսանքներից, կիրառվում են նաև

պարգևավճարի նշանակման, պարգևավճարի չափի բարձրացման և ռազմաուսումնական հաստատությունում գործող այլ խրախուսանքներ:

5. Սույն հոդվածի 2-րդ մասի 2-14-րդ կետերով նախատեսված խրախուսանքների հերթականությունը չի ընդգծում դրանց առաջնահերթությունը: Կարգապահական տույժ ունեցող զինծառայողը խրախուսվում է տրված տույժի հանումով:

### **Հոդված 8. Շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի զինծառայողներին տրվող խրախուսանքները**

1. Շարքային կազմի և կրտսեր ենթասպայական կազմի պարտադիր զինծառայողներին կարող են տրվել սույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 1-13-րդ կետերով նախատեսված խրախուսանքները:

2. Շարքային կազմի և կրտսեր ենթասպայական կազմի պայմանագրային զինծառայողներին կարող են տրվել սույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 4-6-րդ և 9-13-րդ կետերով նախատեսված խրախուսանքները:

### **Հոդված 9. Ավագ ենթասպայական կազմի զինծառայողներին տրվող խրախուսանքները**

1. Ավագ ենթասպայական կազմի զինծառայողներին կարող են տրվել սույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ և 10-13-րդ կետերով նախատեսված խրախուսանքները: Այլ գորքերի ենթասպայական կազմի զինծառայողներին կարող է տրվել նաև սույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով նախատեսված խրախուսանքը:

### **Հոդված 10. Սպայական կազմի զինծառայողներին տրվող խրախուսանքները**

1. Սպայական կազմի զինծառայողներին կարող են տրվել սույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ և 10-14-րդ կետերով նախատեսված խրախուսանքները: Այլ գորքերի սպայական կազմի զինծառայողներին կարող է տրվել նաև սույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով նախատեսված խրախուսանքը:

## Հոդված 11. Խրախուսանքների կիրառման կարգը

1. Խրախուսանքները կարող են կիրառվել ինչպես առանձին զինծառայողի, այնպես էլ զինվորական անձնակազմի (ստորաբաժանման) նկատմամբ:
2. Խրախուսանքի տեսակը կիրառելիս հաշվի են առնվում զինծառայողի կողմից խրախուսման արժանի արարք կատարելու բնույթը, նրա վերաբերմունքը զինվորական ծառայության նկատմամբ, ծառայողական պարտականությունների կատարման գործում նրա հաջողությունները:
3. Զինծառայողին նույն արժանիքի համար կրկնակի խրախուսանք կարող է տալ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարը կամ Հայաստանի Հանրապետության գլխավոր շտաբի պետը՝ իրավասու հրամանատարի (պետի) միջնորդությամբ:
4. Խրախուսանքները տրվում են գրավոր, բացառությամբ «շնորհակալության հայտարարում» խրախուսանքի, որը շարքային կազմի զինծառայողներին կարող է տրվել նաև բանավոր: Տրված խրախուսանքները կարող են հայտարարվել նաև հանդիսավոր պայմաններում: Այն հրամանատարները, ովքեր գրավոր հրամաններ տալու իրավասություն չունեն, ենթակա զինծառայողի նկատմամբ խրախուսանք կիրառելու դեպքում ոչ ուշ, քան մեկօրյա ժամկետում կիրառված խրախուսանքի, խրախուսման արժանի արարքի բնույթի, տվյալ խրախուսանքը կիրառելու հիմնավորվածության վերաբերյալ տեղեկատվությամբ գրառում են կատարում զինծառայողի հաշվառման (ծառայողական) քարտում:
5. Զինծառայողներին տրվող խրախուսանքներից՝
  - 1) «տրված կարգապահական տույժի հանում» խրախուսանքը կիրառվում է կարգապահական տույժ ունեցող զինծառայողի նկատմամբ՝ սույն օրենքի 30-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով և ժամկետներում.
  - 2) «շնորհակալության հայտարարում» խրախուսանքը կիրառվում է հրամանով կամ բանավոր շնորհակալություն հայտնելով և պարտադիր հայտարարվում է անձնակազմի առջև.
  - 3) «զինվորական պարտականությունների օրինակելի կատարման և ստացած խրախուսանքների մասին զինծառայողի ընտանիքին տեղեկացում» խրախուսանքը կիրառվում է հրամանով, և խրախուսանքը տված հրամանատարի (պետի) կողմից հրամանի քաղվածքը, ինչպես նաև նախկինում ստացած խրախուսանքների

վերաբերյալ փաստաթղթերը պատվիրված փոստով ուղարկվում են զինծառայողի հաշվառման (փաստացի բնակության) հասցեով: Հրամանի տեքստը պարտադիր կարդացվում է ողջ անձնակազմին.

- 4) «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության պատվոգրով պարգևատրում» խրախուսանքը կիրառվում է հրամանով, և զինծառայողին առձեռն հանձնվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի կողմից հաստատված նմուշի պատվոգիր.
- 5) «արժեքավոր նվերով կամ միանվագ գումարով պարգևատրում» խրախուսանքը կիրառվում է հրամանով, և զինծառայողին առձեռն հանձնվում է արժեքավոր նվեր կամ միանվագ գումար: Արժեքավոր նվերի արժեքի կամ միանվագ գումարի առավելագույն չափը և դրանց տրման կարգը սահմանվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով.
- 6) «գորամասի բացված մարտական դրոշի մոտ զինծառայողի լուսանկարում» խրախուսանքը կիրառվում է հրամանով, և լուսանկարը 2 օրինակից առձեռն հանձնվում է զինծառայողին: Լուսանկարումը կատարվում է նախապես, որտեղ զինծառայողն իրեն ամրացված զենքով է, իսկ գորամասի մարտական դրոշը՝ բացված վիճակում.
- 7) «լրացուցիչ արձակուրդի տրամադրում» խրախուսանքը կիրառվում է հրամանով և «Զինվորական ծառայություն անցնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում և ժամկետով՝ հրամանում նշված օրերի քանակով.
- 8) «գորամասի տեղաբաշխման վայրից արտահերթ արձակում» խրախուսանքը կիրառվում է հրամանով և Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքով սահմանված կարգով՝ հրամանում նշված ժամկետով.
- 9) «գերատեսչական կրծքանշանով պարգևատրում» խրախուսանքը կիրառվում է հրամանով, և զինծառայողին առձեռն հանձնվում է կրծքանշան: Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կրծքանշանների ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարը.
- 10) «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության մեդալներով պարգևատրում» խրախուսանքը կիրառվում է հրամանով, և զինծառայողին առձեռն հանձնվում է գերատեսչական մեդալ: Մեդալների ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարը.

11) «գորամասի պատվո գրքում զինծառայողի լուսանկարի զետեղում և անվան, հայրանվան ու ազգանվան գրառում» խրախուսանքը կիրառվում է հրամանով, զինծառայողի լուսանկարը փակցվում է գորամասի պատվո գրքում, գրառվում են նրա անունը, հայրանունն ու ազգանունը, իսկ զինծառայողին առձեռն հանձնվում է համապատասխան հավաստագիր: Ջորամասի պատվո գրքի վարման կարգը և հավաստագրի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարը.

12) «վաղաժամկետ հերթական զինվորական կոչման շնորհում» խրախուսանքը կիրառվում է հրամանով և զինծառայողի ունեցած զինվորական կոչման կրման ժամկետի ոչ պակաս, քան կեսը լրացած լինելու դեպքում՝ օրենքով սահմանված կարգով.

13) «հաստիքով նախատեսվածից մեկ աստիճանով բարձր հերթական զինվորական կոչման շնորհում» խրախուսանքը կիրառվում է հրամանով և զինծառայողի ունեցած զինվորական կոչման կրման ժամկետն ու դրա ոչ պակաս, քան կեսը լրացած լինելու դեպքում՝ օրենքով սահմանված կարգով.

14) «անվանական զենքով պարգևատրում» խրախուսանքը կիրառվում է հրամանով, և զինծառայողին առձեռն տրվում է սառը զենք՝ սուսեր, թուր կամ դաշույն, կամ հրազեն՝ ատրճանակ կամ որսորդական հրացան: Անվանական զենքի վրա մակագրություն է արվում պարգևատրման մասին, ինչպես նաև նշվում են պարգևատրվողի զինվորական կոչումը, անվան, հայրանվան առաջին տառերը և ազգանունը:

6. Խրախուսանքների հաշվառման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով:

## **Հոդված 12. Հրամանատարի իրավունքը ենթակա զինծառայողների նկատմամբ խրախուսանքի միջոցներ կիրառելիս**

1. Ջոկի հրամանատարը, դասակի հրամանատարի տեղակալը, վաշտի ավագը և դասակի (խմբի) հրամանատարը ենթակա զինծառայողների նկատմամբ իրավունք ունեն կիրառելու՝

1) իրենց կողմից տրված կարգապահական տույժի հանում.

2) շնորհակալության հայտարարում:

2. Վաշտի (մարտկոցի) հրամանատարը և գումարտակի (դիվիզիոնի, ավիաէսկադրիլիայի) հրամանատարը ենթակա զինծառայողների նկատմամբ իրավունք ունեն կիրառելու՝

1) իրենց և ենթակա հրամանատարի կողմից տրված կարգապահական տույժի հանում.

2) շնորհակալության հայտարարում.

3) զինվորական պարտականությունների օրինակելի կատարման և ստացած խրախուսանքների մասին զինծառայողի ընտանիքին տեղեկացում.

4) գորամասի տեղաբաշխման վայրից արտահերթ արձակում:

3. Առանձին գորամասի հրամանատարից սկսած մինչև բանակի հրամանատարը ներառյալ ենթակա զինծառայողների նկատմամբ իրավունք ունեն կիրառելու՝

1) իրենց և ենթակա հրամանատարի կողմից տրված կարգապահական տույժի հանում.

2) շնորհակալության հայտարարում.

3) զինվորական պարտականությունների օրինակելի կատարման և ստացած խրախուսանքների մասին զինծառայողի ընտանիքին տեղեկացում.

4) գերատեսչական պատվոգրով պարգևատրում.

5) արժեքավոր նվերով կամ միանվագ գումարով պարգևատրում.

6) գորամասի բացված մարտական դրոշի մոտ զինծառայողի լուսանկարում.

7) լրացուցիչ արձակուրդի տրամադրում.

8) գորամասի տեղաբաշխման վայրից արտահերթ արձակում.

9) գերատեսչական կրծքանշաններով պարգևատրում.

10) գորամասի պատվո գրքում զինծառայողի լուսանկարի զետեղում և անվան, հայրանվան ու ազգանվան գրառում.

11) վաղաժամկետ հերթական զինվորական կոչման շնորհում՝ մինչև «ավագ» զինվորական կոչումը ներառյալ.

12) հաստիքով նախատեսվածից մեկ աստիճանով բարձր հերթական զինվորական կոչման շնորհում՝ մինչև «ավագ» զինվորական կոչումը ներառյալ:

4. Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետը ենթակա զինծառայողների նկատմամբ իրավունք ունի կիրառելու՝

1) իր և ենթակա հրամանատարի կողմից տրված կարգապահական տույժի հանում.

2) շնորհակալության հայտարարում.

- 3) զինվորական պարտականությունների օրինակելի կատարման և ստացած խրախուսանքների մասին զինծառայողի ընտանիքին տեղեկացում.
- 4) գերատեսչական պատվոգրով պարգևատրում.
- 5) արժեքավոր նվերով կամ միանվագ գումարով պարգևատրում.
- 6) զորամասի բացված մարտական դրոշի մոտ զինծառայողի լուսանկարում.
- 7) լրացուցիչ արձակուրդի տրամադրում.
- 8) զորամասի տեղաբաշխման վայրից արտահերթ արձակում.
- 9) գերատեսչական կրծքանշաններով պարգևատրում.
- 10) զորամասի պատվո գրքում զինծառայողի լուսանկարի զետեղում և անվան, հայրանվան ու ազգանվան գրառում.
- 11) վաղաժամկետ հերթական զինվորական կոչման շնորհում՝ մինչև «ավագ ենթասպա» զինվորական կոչումը ներառյալ.
- 12) հաստիքով նախատեսվածից մեկ աստիճանով բարձր հերթական զինվորական կոչման շնորհում՝ մինչև «ավագ ենթասպա» զինվորական կոչումը ներառյալ:

### ԳԼՈՒԽ 3

#### *ԿԱՐԳԱՊԱՀԱՄԱՆ ԽԱՆՏՈՒՄԸ ԵՎ ԿԱՐԳԱՊԱՀԱՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ*

#### ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

#### **Հոդված 13. Կարգապահական խախտման հասկացությունը**

1. Կարգապահական խախտում (զանցանք) է համարվում զինվորական ծառայության կարգի դեմ ոտնձգող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար սույն օրենքով նախատեսված է կարգապահական պատասխանատվություն: Կարգապահական խախտում է համարվում նաև սպայական կազմի զինծառայողի կողմից հաշվետու կամ ուսումնական տարվա արդյունքներով ծառայողական գործառնությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը կամ սպայի պատվի կանոնների խախտումը: Սպայի պատվի կանոնները սահմանվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի նորմատիվ հրամանով:

2. Սույն օրենքով նախատեսված իրավախախտումների համար կարգապահական պատասխանատվություն առաջանում է անկախ այն հանգամանքից, որ այդ խախտումները իրենց բնույթով առաջացնում են քրեական պատասխանատվություն:

3. Վարչական իրավախախտում թույլ տված զինծառայողները պատասխանատվության են ենթարկվում Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով սահմանված կարգով:

#### **Հոդված 14. Կարգապահական իրավախախտումը դիտավորությամբ կատարելը**

1. Կարգապահական իրավախախտումը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե այն կատարող անձը գիտակցել է իր գործողության կամ անգործության հակաիրավական բնույթը, կանխատեսել է դրա վնասակար հետևանքները և ցանկացել դրանք կամ զիտակցաբար թույլ է տվել այդ հետևանքների առաջացումը:

#### **Հոդված 15. Կարգապահական իրավախախտումը անզգույշությամբ կատարելը**

1. Կարգապահական իրավախախտումը համարվում է անզգույշությամբ կատարված, եթե այն կատարած անձը կանխատեսել է իր գործողության կամ անգործության վնասակար հետևանքների առաջացման հնարավորությունը, բայց թեթևամտորեն հույս է ունեցել կանխելու դրանք կամ չի կանխատեսել այդպիսի հետևանքներ առաջանալու հնարավորությունները, թեև պարտավոր էր և կարող էր կանխատեսել դրանք:

#### **Հոդված 16. Օայրահեղ անհրաժեշտությունը**

1. Կարգապահական պատասխանատվության ենթակա չէ այն անձը, որը թեև սույն օրենքով նախատեսված գործողություն է կատարել, սակայն գործել է ծայրահեղ անհրաժեշտության վիճակում, այսինքն՝ մի այնպիսի վտանգ վերացնելու համար, որը սպառնացել է զինվորական ծառայության կարգին, իր անձին կամ այլ զինծառայողների կամ քաղաքացիների իրավունքներին ու ազատություններին, եթե այդ

վտանգը տվյալ հանգամանքներում չէր կարելի վերացնել այլ միջոցներով, և եթե հասցված վնասը կանխված վնասի համեմատությամբ ավելի նվազ կարևորություն ունի:

### **Հոդված 17. Անհրաժեշտ պաշտպանությունը**

1. Կարգապահական պատասխանատվության ենթակա չէ այն անձը, որը թեև սույն օրենքով նախատեսված գործողություն է կատարել, սակայն գործել է անհրաժեշտ պաշտպանության վիճակում, այսինքն՝ հակաիրավական ոտնձգությունից պաշտպանելիս է եղել պետական կամ հասարակական կարգը, գույքը, իր անձը կամ այլ զինձառայողների կամ քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները, զինվորական ծառայության սահմանված կարգը, ընդ որում, եթե թույլ չի տրվել անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցում:

### **Հոդված 18. Կարգապահական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները**

1. Կարգապահական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներ են համարվում՝

- 1) մեղավորի անկեղծ գոջումը.
- 2) իրավախախտման վնասակար հետևանքները մեղավորի կողմից կանխելը, պատճառած վնասը կամավոր հատուցելը կամ վերացնելը.
- 3) իրավախախտում կատարելը հոգեկան խիստ հուզմունքի ազդեցության տակ կամ էլ անձնական կամ ընտանեկան ծանր հանգամանքների գուզադիպությամբ.
- 4) իրավախախտում կատարելը այլ անձի հակաօրինական կամ հակաբարոյական գործողությունների հետևանքով կամ դրանք կանխելու նպատակով:

2. Խախտման բնույթը, խախտումը կատարող անձը բնութագրող հատկանիշը նկատի ունենալով՝ հրամանատարը տույժ նշանակելիս կարող է մեղմացուցիչ համարել նաև այնպիսի հանգամանքներ, որոնք չեն նշված օրենսդրության մեջ:

3. Կարգապահական խախտում թույլ տված զինձառայողի կողմից ծառայողական քննությանն օժանդակելու, կարգապահական խախտման հանգամանքների և հետևանքների պարզմանը, դրա

կատարմանը նպաստող պատճառների ու պայմանների բացահայտմանը աջակցելու դեպքում կարգապահական խախտում թույլ տված զինձառայողի նկատմամբ կարող է կիրառվել ավելի մեղմ կարգապահական տույժ:

### **Հոդված 19. Կարգապահական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքները**

1. Կարգապահական պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքներ են համարվում՝

- 1) հակաիրավական վարքագիծը շարունակելը, չնայած այն դադարեցնելու մասին դրա համար լիազորված անձանց պահանջին.
- 2) մեկ տարվա ընթացքում կրկին կարգապահական իրավախախտում կատարելը, որի համար անձն արդեն ենթարկվել է կարգապահական տույժի.
- 3) իրավախախտում կատարելը նախկինում հանցագործություն կատարած անձի կողմից.
- 4) իրավախախտումը մի խումբ անձանց կողմից կատարելը.
- 5) իրավախախտումը մարտական խնդիր իրականացնելիս կամ ռազմական դրության կամ պատերազմի պայմաններում կամ այլ արտակարգ հանգամանքներում կատարելը.
- 6) իրավախախտումը ալկոհոլ կամ թմրանյութ կամ այլ հոգեմետ նյութեր օգտագործած վիճակում կատարելը:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հանգամանքներում կատարված կարգապահական իրավախախտումները համարվում են կոպիտ կարգապահական խախտումներ:

### **Հոդված 20. Կարգապահական խախտման կանխարգելումը**

1. Զինձառայողի կողմից ակնհայտ կոպիտ կարգապահական կամ այլ իրավախախտում կատարելու դեպքում նրա հետագա հակաիրավական վարքագիծը կանխելու կամ խափանելու նպատակով մինչև վերջինիս արարքին իրավական գնահատական տալը գորամասի հրամանատարը վերջինիս կարող է փոխադրել այլ գորանոցային վիճակի՝ մինչև երեք օր տևողությամբ, կասեցնելով զինձառայողի պաշտոնով նախատեսված զինվորական պարտականությունների կատարումը:

2. Քրեական գործով նախաքննության իրականացման նկատառումներից ելնելով՝ զինծառայողները կարող են նախաքննության մարմնի գրավոր պահանջով տեղափոխվել իրենց մշտական տեղակայման գորամասից այլ գորամաս՝ կասեցնելով մշտական տեղակայման գորամասում զինծառայողի պաշտոնով նախատեսված զինվորական պարտականությունների կատարումը:

#### **ԳԼՈՒԽ 4**

### ***ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԵՐԸ ՏԱԼՈՒ, ԿԻՐԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ***

#### **Հոդված 21. Օրինականության սկզբունքը կարգապահական իրավախախտումների համար ներգործության միջոցներ կիրառելիս**

1. Զինծառայողը չի կարող ենթարկվել կարգապահական պատասխանատվության այլ կերպ, քան սույն օրենքով սահմանված հիմքերով և կարգով:
2. Հրամանատարները կարգապահական տույժի միջոցներ կիրառում են իրենց իրավասության շրջանակներում՝ սույն օրենքով սահմանված հիմքերով և կարգով:
3. Կարգապահական իրավախախտումների համար ներգործության միջոցներ կիրառելիս օրենսդրության պահանջների կատարումն ապահովվում է վերադաս մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից անընդմեջ վերահսկողությամբ, գանգատարկման իրավունքով, օրենսդրությամբ սահմանված այլ միջոցներով:

#### **Հոդված 22. Կարգապահական տույժի նպատակները**

1. Կարգապահական տույժը համարվում է պատասխանատվության միջոց և կիրառվում է՝ նպատակ ունենալով իրավախախտում կատարած անձին դաստիարակել զինվորական ծառայության կանոնադրքերի ու այլ օրենքների պահանջները պահպանելու, համակեցության կանոնները հարգելու ոգով, ինչպես նաև կանխել ինչպես իր իսկ՝ իրավախախտի, այնպես էլ այլ անձի կողմից նոր իրավախախտումների կատարումը:

2. Զինծառայողի կողմից կարգապահական խախտում թույլ տալու դեպքում հրամանատարը (պետը) պարտավոր է հիշեցնել զինծառայողի պարտականություններն ու զինվորական պարտքը և կիրառել կարգապահական տույժ: Ընդ որում, կարգապահական տույժը, որպես կարգապահության ամրապնդման ու դաստիարակման միջոց, պետք է համապատասխանի կարգապահական խախտման ծանրությանը և զինծառայողի մեղքի աստիճանին:
3. Զինծառայողին նույն կարգապահական խախտման համար մեկից ավելի կարգապահական տույժ չի կարող տրվել:

#### **Հոդված 23. Զինծառայողներին տրվող կարգապահական տույժերը**

1. Զինծառայողներին կարող են տրվել հետևյալ կարգապահական տույժերը.
  - 1) նկատողություն.
  - 2) խիստ նկատողություն.
  - 3) գորամասի տեղաբաշխման վայրից հերթական արձակուրդից զրկում՝ մինչև 1 ամիս ժամկետով.
  - 4) աշխատանքի արտահերթ վերակարգի նշանակում՝ մինչև 5 վերակարգ.
  - 5) հիմնական արձակուրդի տրման հետաձգում՝ մեկ ամսից մինչև երեք ամիս ժամկետով.
  - 6) կարգապահական վաշտ ուղարկելը՝ տասն օրից մինչև մեկ ամիս ժամկետով.
  - 7) գերատեսչական կրծքանշանից զրկում.
  - 8) նախազուգում՝ պաշտոնին ոչ լրիվ համապատասխանության մասին.
  - 9) պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով.
  - 10) զինվորական կոչման իջեցում՝ մեկ աստիճանով.
  - 11) հերթական զինվորական կոչում ստանալու ժամկետի կասեցում՝ մեկ ամսից մինչև վեց ամիս ժամկետով.
  - 12) ռազմաուսումնական հաստատությունից հեռացում.
  - 13) զինվորական ծառայությունից արձակում:
2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգապահական տույժերի հերթականությունը չի ընդգծում դրանց առաջնահերթությունը:

3. Կին զինծառայողների նկատմամբ չեն կիրառվում սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ և 6-րդ կետերով նախատեսված կարգապահական տույժերը:

**Հոդված 24. Շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի զինծառայողներին տրվող կարգապահական տույժերը**

1. Շարքային կազմի և կրտսեր ենթասպայական կազմի պարտադիր զինծառայողներին կարող են տրվել սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ, 4-րդ (միայն շարքային կազմին), 5-7-րդ, 9-11-րդ կետերով, իսկ ռազմաուսումնական հաստատությունների կուրսանտներին՝ նաև 12-րդ կետով նախատեսված կարգապահական տույժերը:

2. Շարքային կազմի և կրտսեր ենթասպայական կազմի պայմանագրային զինծառայողներին կարող են տրվել սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 4-րդ (միայն շարքային կազմին), 6-րդ, 7-րդ, 9-13-րդ կետերով նախատեսված կարգապահական տույժերը:

**Հոդված 25. Ավագ ենթասպայական կազմի զինծառայողներին տրվող կարգապահական տույժերը**

1. Ավագ ենթասպայական կազմի զինծառայողներին կարող են տրվել սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 8-13-րդ կետերով նախատեսված կարգապահական տույժերը: Այլ զորքերի ենթասպայական կազմի զինծառայողներին կարող է տրվել նաև սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով նախատեսված կարգապահական տույժը:

**Հոդված 26. Սպայական կազմի զինծառայողներին տրվող կարգապահական տույժերը**

1. Սպայական կազմի զինծառայողներին կարող են տրվել սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 8-13-րդ կետերով նախատեսված կարգապահական տույժերը: Այլ զորքերի սպայական կազմի զինծառայողներին կարող է տրվել նաև սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով նախատեսված կարգապահական տույժը:

**Հոդված 27. Կարգապահական տույժեր տալու կարգը**

1. Կարգապահական տույժը կիրառվում է անհատական կարգով՝ կարգապահական իրավախախտում թույլ տված զինծառայողի նկատմամբ: Տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, իրավախախտի անձը, նրա մեղքի աստիճանը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

2. Ձինծառայողին կարգապահական իրավախախտման համար կարգապահական տույժ չի կարող տրվել, եթե կարգապահական իրավախախտում կատարելու օրվանից անցել է 6 ամիս: Նշված ժամկետի ընթացքում կարգապահական տույժ տրվում է կարգապահական իրավախախտման մասին հրամանատարին (պետին) հայտնի դառնալու օրվանից ոչ ուշ, քան 30 օրվա ընթացքում: Կարգապահական տույժն ի կատար է ածվում կարգապահական տույժի ենթարկելու մասին հրամանում նշված ժամկետում:

3. Կարգապահական տույժը տրվում է գրավոր հրամանով: Կարգապահական տույժ տալու մասին հրամանում պարտադիր նշվում են կարգապահական խախտման էությունը, տվյալ կարգապահական տույժը կիրառելու հիմնավորվածությունը, զինծառայողի մեղքի աստիճանը: Այն հրամանատարները, ովքեր գրավոր հրամաններ տալու իրավասություն չունեն, ենթակա զինծառայողի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու դեպքում ոչ ուշ, քան 1-օրյա ժամկետում, կիրառված տույժի, կարգապահական խախտման բնույթի, տվյալ կարգապահական տույժը կիրառելու հիմնավորվածության և զինծառայողի մեղքի աստիճանի վերաբերյալ տեղեկատվությամբ գրառում են կատարում զինծառայողի հաշվառման (ծառայողական) քարտում:

4. Ձինծառայողի կողմից կարգապահական կոպիտ խախտում թույլ տալու դեպքում, իսկ սպաների կատարած կարգապահական խախտման պարագայում՝ պարտադիր կարգով, ինչպես նաև հրամանատարի (պետի) կողմից որոշված այլ դեպքերում իրավասու հրամանատարի (պետի) հրամանով նշանակվում է ծառայողական քննություն՝ կարգապահական խախտման բնույթը, դրա կատարման հանգամանքները և հետևանքները պարզելու, կատարմանը նպաստող պատճառներն ու պայմանները բացահայտելու, զինծառայողի մեղքի աստիճանը և կարգապահական տույժի տեսակը որոշելու համար: Ծառայողական քննություն նշանակելու իրավունք ունեցող

հրամանատարների (պետերի) անվանացանկը և ծառայողական քննության անցկացման կարգը սահմանվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի նորմատիվ հրամանով:

5. Զինծառայողը, որի նկատմամբ նշանակված է ծառայողական քննություն, իրավունք ունի ծառայողական քննության անցկացման ժամանակ ծանոթանալու իր մասնակցությամբ կատարված գործողությունների ընթացքի, բովանդակության, արդյունքների վերաբերյալ կազմված փաստաթղթերին և դրանց կապակցությամբ ներկայացնելու առաջարկություններ, բացատրություններ կամ առարկություններ, ինչպես նաև մինչև ծառայողական քննության ավարտը ծանոթանալու ծառայողական քննության նյութերին, ներառյալ՝ ծառայողական քննության արդյունքներով կազմված եզրակացությանը, սույն օրենքով սահմանված կարգով այն բողոքարկելու:

6. Տրված կարգապահական տույժերը, ինչպես նաև թույլ տրված կարգապահական խախտումներն իրավասու հրամանատարի (պետի) որոշմամբ կարող են քննարկվել համապատասխանաբար շարքային կազմի և կրտսեր ենթասպայական կազմի զինծառայողների նկատմամբ՝ անձնակազմի և սերժանտական ժողովներում, ավագ ենթասպայական կազմի զինծառայողների նկատմամբ՝ ենթասպայական ժողովներում, սպայական կազմի զինծառայողների նկատմամբ՝ սպայական ժողովներում կամ սպայի պատվի դատարաններում: Սույն մասում նշված ժողովների և սպայի պատվի դատարանների կազմակերպման ու դրանցում հարցերի քննարկման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի նորմատիվ հրամանով:

7. Եթե ենթակա զինծառայողի կողմից թույլ տրված կարգապահական խախտման ծանրության համեմատ հրամանատարը (պետը) իր իրավասությանը վերապահված կարգապահական տույժ տալու իրավունքը համարում է ոչ բավարար, ապա կարող է միջնորդել ավելի բարձր հրամանատարին (պետին)՝ կարգապահական խախտում թույլ տված զինծառայողի նկատմամբ կիրառել ավելի խիստ կարգապահական տույժ: Իրեն վերապահված կարգապահական տույժ տալու իրավունքը գերազանցելու համար հրամանատարը (պետը) ենթակա է կարգապահական պատասխանատվության:

8. Ավագ հրամանատարը (պետը) իրավունք չունի նվազեցնելու կրտսեր հրամանատարի (պետի) տված կարգապահական տույժը, եթե վերջինս

չի գերազանցել իրեն վերապահված կարգապահական տույժ տալու իրավունքը: Ավագ հրամանատարը (պետը) իրավունք ունի փոխելու կրտսեր հրամանատարի (պետի) տված կարգապահական տույժը և կարգապահական խախտում թույլ տված զինծառայողի նկատմամբ կիրառելու ավելի խիստ կարգապահական տույժ, եթե գտնում է, որ կրտսեր հրամանատարի (պետի) տված կարգապահական տույժը չի համապատասխանում կարգապահական խախտման ծանրությանը:

9. Զինծառայողն իրավունք ունի իրեն տրված կարգապահական տույժը բողոքարկելու ըստ վերադասության՝ սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված կարգով:

10. Զինծառայողներին տրված կարգապահական տույժերի հաշվառման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի նորմատիվ հրամանով:

### **Հոդված 28. Կարգապահական տույժերը կիրառելու կարգը**

1. «Նկատողություն» և «խիստ նկատողություն» կարգապահական տույժերը կիրառվում են հրամանով և կարող են հայտարարվել անհատապես կամ շարքի առաջ:

2. «Զորամասի տեղաբաշխման վայրից հերթական արձակումից զրկում» և «աշխատանքի արտահերթ վերակարգի նշանակում» կարգապահական տույժերը կիրառվում են հրամանով և կարող են հայտարարվել անհատապես կամ համապատասխան շարքի առաջ՝ «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: «Զորամասի տեղաբաշխման վայրից հերթական արձակումից զրկում» կարգապահական տույժի ենթարկված զինծառայողը ոչ պակաս, քան մեկ շաբաթով զրկվում է զորամասի տեղաբաշխման վայրից հերթական արձակման իրավունքից, իսկ «աշխատանքի արտահերթ վերակարգի նշանակում» կարգապահական տույժի ենթարկված զինծառայողին տրվում է ոչ պակաս, քան 1 արտահերթ աշխատանքի վերակարգ, որի տևողությունը չի կարող գերազանցել 4 ժամը և օրվա կարգացուցակով նախատեսված երեկոյան անվանական չի հայտարարումը:

3. «Հիմնական արձակուրդի տրման հետաձգում» կարգապահական տույժը կիրառվում է հրամանով և կարող է հայտարարվել անհատապես կամ համապատասխան շարքի առաջ: Նշված կարգապահական տույժը կրելու ընթացքում զինծառայողին չի տրվում



արձակուրդ: Ընդ որում, նման կարգապահական տույժ չի կարող տրվել պարտադիր զինծառայողի ծառայության վերջին երեք ամիսների ընթացքում:

4. «Կարգապահական վաշտ ուղարկելը» տույժը տրվում է մեկից ավելի անգամ դիտարկությանը կարգապահական խախտումներ թույլ տալու համար կարգապահական տույժերի ենթարկված կամ մեկ կոպիտ խախտում թույլ տված զինծառայողին, կիրառվում է հրամանով և կարող է հայտարարվել անհատապես կամ համապատասխան շարքի առաջ: «Կարգապահական վաշտ ուղարկելը» տույժ տրվում է զորամասի հրամանատարից ոչ ցածր պաշտոն զբաղեցնող հրամանատարների (պետերի) հրամանով: «Կարգապահական վաշտ ուղարկելը» տույժի ենթարկված զինծառայողներն ուղարկվում են համապատասխան կարգապահական վաշտեր, որոնք ստեղծվում են կայազորային սկզբունքով: Կարգապահական վաշտերում իրականացվում է օրվա խստացված կարգացուցակով ծառայություն: Կարգապահական վաշտերի ցանկը և օրվա խստացված կարգացուցակը սահմանվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի նորմատիվ հրամանով:

5. «Գերատեսչական կրճքանշանից զրկում» կարգապահական տույժը կիրառվում է հրամանով և կարող է հայտարարվել անհատապես կամ համապատասխան շարքի առաջ: Նշված կարգապահական տույժ տալու դեպքում զինծառայողից վերցվում է ստացած համապատասխան գերատեսչական կրճքանշանը:

6. «Նախագգուշացում պաշտոնին ոչ լրիվ համապատասխանության մասին» կարգապահական տույժը կիրառվում է հրամանով և կարող է հայտարարվել անհատապես կամ համապատասխան շարքի առաջ: Նշված կարգապահական տույժը կրելու ընթացքում նոր կարգապահական խախտում թույլ տալու համար կարգապահական տույժի ենթարկված զինծառայողն իրավասու հրամանատարի (պետի) հրամանով ազատվում է զբաղեցրած պաշտոնից և կարող է նշանակվել ցածր պաշտոնի կամ համապատասխան թափուր պաշտոն չլինելու դեպքում օրենքով սահմանված կարգով արձակվել զինվորական ծառայությունից:

7. «Ուշտոնի իջեցում մեկ աստիճանով» կարգապահական տույժը կիրառվում է հրամանով և կարող է հայտարարվել անհատապես կամ համապատասխան շարքի առաջ: Նշված կարգապահական տույժի ենթարկված զինծառայողն իրավասու հրամանատարի (պետի)

հրամանով ազատվում է զբաղեցրած պաշտոնից և նշանակվում է զբաղեցրած պաշտոնից մեկ աստիճանով ցածր պաշտոնի:

8. «Ձինվորական կոչման իջեցում մեկ աստիճանով» կարգապահական տույժը կիրառվում է հրամանով և կարող է հայտարարվել անհատապես կամ համապատասխան շարքի առաջ: Նշված կարգապահական տույժի ենթարկելու մասին իրավասու հրամանատարի (պետի) հրամանով զինծառայողը համարվում է շնորհիված զինվորական կոչումից մեկ աստիճան ցածր զինվորական կոչում ունեցող:

9. «Չերթական զինվորական կոչում ստանալու ժամկետը կասեցնելը» կարգապահական տույժը կիրառվում է հրամանով և կարող է հայտարարվել անհատապես կամ համապատասխան շարքի առաջ: Նշված կարգապահական տույժի կրման ժամանակահատվածը չի հաշվարկվում զինծառայողի ունեցած զինվորական կոչման կրման ժամկետում:

10. «Ռազմաուսումնական հաստատությունից հեռացում» կարգապահական տույժը կիրառվում է հրամանով և կարող է հայտարարվել անհատապես կամ համապատասխան շարքի առաջ: Նշված կարգապահական տույժի ենթարկված զինծառայողն իրավասու հրամանատարի (պետի) հրամանով ուղարկվում է օրենքով սահմանված կարգով հետագա զինվորական ծառայությունը շարունակելու կամ արձակվում է զինվորական ծառայությունից:

11. «Ձինվորական ծառայությունից արձակում» կարգապահական տույժը կիրառվում է հրամանով և կարող է հայտարարվել անհատապես կամ համապատասխան շարքի առաջ: Նշված կարգապահական տույժի ենթարկված զինծառայողն իրավասու հրամանատարի (պետի) հրամանով արձակվում է զինվորական ծառայությունից՝ օրենքով սահմանված կարգով:

### **Չոդված 29. Հրամանատարի իրավունքը՝ ենթակա զինծառայողների նկատմամբ կարգապահական տույժեր կիրառելիս**

1. Ջոկի հրամանատարը ենթակա զինծառայողների նկատմամբ իրավունք ունի կիրառելու՝

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) զորամասի տեղաբաշխման վայրից հերթական արձակումից զրկում՝ 1 շաբաթ ժամկետով:

2. Դասակի հրամանատարի տեղակալը ենթակա զինծառայողների նկատմամբ իրավունք ունի կիրառելու՝

- 1) նկատողություն.
  - 2) խիստ նկատողություն.
  - 3) զորամասի տեղաբաշխման վայրից հերթական արձակումից զրկում՝ 1 շաբաթ ժամկետով.
  - 4) աշխատանքի արտահերթ վերակարգի նշանակում՝ 1 վերակարգ:
3. Վաշտի, մարտկոցի, ավիաէսկադրիլիայի, դիվիզիոնի (խմբի) ավագները ենթակա զինծառայողների նկատմամբ իրավունք ունեն կիրառելու՝

- 1) նկատողություն.
  - 2) խիստ նկատողություն.
  - 3) զորամասի տեղաբաշխման վայրից հերթական արձակումից զրկում՝ մինչև 2 շաբաթ ժամկետով.
  - 4) աշխատանքի արտահերթ վերակարգի նշանակում՝ մինչև 2 վերակարգ:
4. Դասակի (խմբի) հրամանատարը ենթակա զինծառայողների նկատմամբ իրավունք ունի կիրառելու՝

- 1) նկատողություն.
  - 2) խիստ նկատողություն.
  - 3) զորամասի տեղաբաշխման վայրից հերթական արձակումից զրկում՝ մինչև 2 շաբաթ ժամկետով.
  - 4) աշխատանքի արտահերթ վերակարգի նշանակում՝ մինչև 3 վերակարգ:
5. Վաշտի, մարտկոցի, ավիաօդակի, առանձին դասակի (խմբի) հրամանատարները ենթակա զինծառայողների նկատմամբ իրավունք ունեն կիրառելու՝

- 1) նկատողություն.
  - 2) խիստ նկատողություն.
  - 3) զորամասի տեղաբաշխման վայրից հերթական արձակումից զրկում՝ մինչև 3 շաբաթ ժամկետով.
  - 4) աշխատանքի արտահերթ վերակարգի նշանակում՝ մինչև 4 վերակարգ.
  - 5) հիմնական արձակուրդի տրման հետաձգում՝ 1 ամիս ժամկետով:
6. Գումարտակի, դիվիզիոնի, ավիաէսկադրիլիայի, առանձին վաշտի հրամանատարները ենթակա զինծառայողների նկատմամբ իրավունք ունեն կիրառելու՝
- 1) նկատողություն.

- 2) խիստ նկատողություն.
  - 3) զորամասի տեղաբաշխման վայրից հերթական արձակումից զրկում՝ մինչև 1 ամիս ժամկետով.
  - 4) աշխատանքի արտահերթ վերակարգի նշանակում՝ մինչև 5 վերակարգ.
  - 5) հիմնական արձակուրդի տրման հետաձգում՝ 2 ամիս ժամկետով:
7. Առանձին գումարտակի, դիվիզիոնի հրամանատարները ենթակա զինծառայողների նկատմամբ իրավունք ունեն կիրառելու՝

- 1) նկատողություն.
- 2) խիստ նկատողություն.
- 3) զորամասի տեղաբաշխման վայրից հերթական արձակումից զրկում՝ մինչև 1 ամիս ժամկետով.
- 4) աշխատանքի արտահերթ վերակարգի նշանակում՝ մինչև 5 վերակարգ.
- 5) հիմնական արձակուրդի տրման հետաձգում՝ մինչև 3 ամիս ժամկետով.
- 6) կարգապահական վաշտ ուղարկելը՝ տասն օրից մինչև մեկ ամիս ժամկետով.
- 7) գերատեսչական կրճքանշանից զրկում.
- 8) պաշտոնի իջեցում մեկ աստիճանով՝ մինչև «սերժանտ» զինվորական կոչումը ներառյալ.
- 9) զինվորական կոչման իջեցում մեկ աստիճանով՝ մինչև «սերժանտ» զինվորական կոչումը ներառյալ.
- 10) հերթական զինվորական կոչում ստանալու ժամկետը կասեցնելը՝ մինչև «սերժանտ» զինվորական կոչումը ներառյալ.
- 11) նախազգուշացում՝ պաշտոնին ոչ լրիվ համապատասխանության մասին՝ մինչև «կապիտան» զինվորական կոչումը ներառյալ:

8. Գնդի և բրիգադի հրամանատարները ենթակա զինծառայողների նկատմամբ իրավունք ունեն կիրառելու՝
- 1) նկատողություն.
  - 2) խիստ նկատողություն.
  - 3) զորամասի տեղաբաշխման վայրից հերթական արձակումից զրկում՝ մինչև 1 ամիս ժամկետով.
  - 4) աշխատանքի արտահերթ վերակարգի նշանակում՝ մինչև 5 վերակարգ.
  - 5) հիմնական արձակուրդի տրման հետաձգում՝ մինչև 3 ամիս ժամկետով.

6) կարգապահական վաշտ ուղարկելը՝ տասն օրից մինչև մեկ ամիս ժամկետով.

7) գերատեսչական կրծքանշանից զրկում.

8) պաշտոնի իջեցում մեկ աստիճանով՝ մինչև «ավագ» զինվորական կոչումը ներառյալ.

9) զինվորական կոչման իջեցում մեկ աստիճանով՝ մինչև «ավագ» զինվորական կոչումը ներառյալ.

10) հերթական զինվորական կոչում ստանալու ժամկետը կասեցնելը՝ մինչև «ավագ» զինվորական կոչումը ներառյալ.

11) նախագգուշացում՝ պաշտոնին ոչ լրիվ համապատասխանության մասին՝ մինչև «մայր» զինվորական կոչումը ներառյալ:

9. Կորպուսի և դիվիզիայի հրամանատարները ենթակա զինծառայողների նկատմամբ իրավունք ունեն կիրառելու՝

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) զորամասի տեղաբաշխման վայրից հերթական արձակումից զրկում՝ մինչև 1 ամիս ժամկետով.

4) աշխատանքի արտահերթ վերակարգի նշանակում՝ մինչև 5 վերակարգ.

5) հիմնական արձակուրդի տրման հետաձգում՝ մինչև 3 ամիս ժամկետով.

6) կարգապահական վաշտ ուղարկելը՝ տասն օրից մինչև մեկ ամիս ժամկետով.

7) գերատեսչական կրծքանշանից զրկում.

8) պաշտոնի իջեցում մեկ աստիճանով՝ մինչև «ավագ» զինվորական կոչումը ներառյալ.

9) զինվորական կոչման իջեցում մեկ աստիճանով՝ մինչև «ավագ» զինվորական կոչումը ներառյալ.

10) հերթական զինվորական կոչում ստանալու ժամկետը կասեցնելը՝ մինչև «ավագ ենթասպա» զինվորական կոչումը ներառյալ.

11) զինվորական ծառայությունից արձակում՝ մինչև «ավագ» զինվորական կոչումը ներառյալ.

12) նախագգուշացում՝ պաշտոնին ոչ լրիվ համապատասխանության մասին՝ մինչև «փոխգնդապետ» զինվորական կոչումը ներառյալ:

10. Բանակի հրամանատարը ենթակա զինծառայողների նկատմամբ իրավունք ունի կիրառելու՝

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) զորամասի տեղաբաշխման վայրից հերթական արձակումից զրկում՝ մինչև 1 ամիս ժամկետով.

4) աշխատանքի արտահերթ վերակարգի նշանակում՝ մինչև 5 վերակարգ.

5) հիմնական արձակուրդի տրման հետաձգում՝ մինչև 3 ամիս ժամկետով.

6) կարգապահական վաշտ ուղարկելը՝ տասն օրից մինչև մեկ ամիս ժամկետով.

7) գերատեսչական կրծքանշանից զրկում.

8) պաշտոնի իջեցում մեկ աստիճանով՝ մինչև «ավագ» զինվորական կոչումը ներառյալ.

9) զինվորական կոչման իջեցում մեկ աստիճանով՝ մինչև «ավագ» զինվորական կոչումը ներառյալ.

10) հերթական զինվորական կոչում ստանալու ժամկետը կասեցնելը՝ մինչև «ավագ ենթասպա» զինվորական կոչումը ներառյալ.

11) զինվորական ծառայությունից արձակում՝ մինչև «ավագ» զինվորական կոչումը ներառյալ.

12) նախագգուշացում՝ պաշտոնին ոչ լրիվ համապատասխանության մասին՝ մինչև «գնդապետ» զինվորական կոչումը ներառյալ:

11. Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետը ենթակա զինծառայողների նկատմամբ իրավունք ունի կիրառելու՝

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) զորամասի տեղաբաշխման վայրից հերթական արձակումից զրկում՝ մինչև 1 ամիս ժամկետով.

4) աշխատանքի արտահերթ վերակարգի նշանակում՝ մինչև 5 վերակարգ.

5) հիմնական արձակուրդի տրման հետաձգում՝ մինչև 3 ամիս ժամկետով.

6) կարգապահական վաշտ ուղարկելը՝ տասն օրից մինչև մեկ ամիս ժամկետով.

7) գերատեսչական կրծքանշանից զրկում.

8) պաշտոնի իջեցում մեկ աստիճանով՝ մինչև «կապիտան» զինվորական կոչումը ներառյալ.

9) զինվորական կոչման իջեցում մեկ աստիճանով՝ մինչև «կապիտան» զինվորական կոչումը ներառյալ.

10) հերթական զինվորական կոչում ստանալու ժամկետը կասեցնելը՝ մինչև «կապիտան» զինվորական կոչումը ներառյալ:

11) զինվորական ծառայությունից արձակում՝ մինչև «ավագ ենթասպա» զինվորական կոչումը ներառյալ:

12) նախագգուշացում՝ պաշտոնին ոչ լրիվ համապատասխանության մասին՝ մինչև «գնդապետ» զինվորական կոչումը ներառյալ:

### **Հոդված 30. Կարգապահական տույժերը հանելու կարգը**

1. Զինծառայողները համարվում են կարգապահական տույժ չունեցող՝ կարգապահական տույժը կրելու ժամկետը լրանալու կամ որպես խրախուսանք կարգապահական տույժը հանվելու դեպքում:

2. Կարգապահական տույժը կրելու ժամկետը համարվում է լրացած՝

1) «նկատողություն» կարգապահական տույժի տրման օրվանից 3 ամիս հետո:

2) «խիստ նկատողություն» կարգապահական տույժի տրման օրվանից 4 ամիս հետո:

3) «գորամասի տեղաբաշխման վայրից հերթական արձակումից զրկում» կարգապահական տույժով սահմանված ժամկետը լրանալուց հետո:

4) «աշխատանքի արտահերթ վերակարգի նշանակում» կարգապահական տույժի տրման օրվանից 2 ամիս հետո:

5) «հիմնական արձակուրդի տրման հետաձգում» կարգապահական տույժով սահմանված ժամկետը լրանալուց հետո:

6) «կարգապահական վաշտ ուղարկելը» կարգապահական տույժի տրման օրվանից 6 ամիս հետո:

7) «գերատեսչական կրծքանշանից զրկում» կարգապահական տույժի տրման օրվանից 6 ամիս հետո:

8) «նախագգուշացում՝ պաշտոնին ոչ լրիվ համապատասխանության մասին» կարգապահական տույժի տրման օրվանից 1 տարի հետո:

9) «պաշտոնի իջեցում մեկ աստիճանով» կարգապահական տույժի տրման օրվանից 1 տարի հետո:

10) «զինվորական կոչման իջեցում մեկ աստիճանով» կարգապահական տույժի տրման օրվանից 1 տարի հետո:

11) «հերթական զինվորական կոչում ստանալու ժամկետը կասեցնելը» կարգապահական տույժով սահմանված ժամկետը լրանալուց հետո:

3. Մույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված համապատասխան կարգապահական տույժը կրելու ժամկետի ընթացքում նոր

կարգապահական խախտում թույլ տալու համար զինծառայողին կարգապահական տույժ տալու դեպքում նախորդ կարգապահական տույժի կրման ժամկետը կասեցվում է, և ժամկետի հաշվարկը սկսվում է նորկարգապահական տույժի կրման համար նախատեսված ժամկետով, եթե նոր կարգապահական տույժի կրման ժամկետը պակաս չէ նախորդ կարգապահական տույժի կրման համար մնացած ժամկետից:

4. «Տրված կարգապահական տույժի հանում» խրախուսանքը զինծառայողին կարող է տրվել միայն սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված յուրաքանչյուր կարգապահական տույժը կրելու ժամկետի ոչ պակաս, քան կեսը լրացած լինելու դեպքում: Միաժամանակ մեկից ավելի կարգապահական տույժ չի կարող հանվել, և մեկից ավելի կարգապահական տույժ ունենալու դեպքում հանվում է ստացած վերջին կարգապահական տույժը:

5. «Տրված կարգապահական տույժի հանում» խրախուսանքը չի կարող տրվել «ռազմաուսումնական հաստատությունից հեռացում» կարգապահական տույժի դեպքում:

6. «Պաշտոնի իջեցում մեկ աստիճանով» կարգապահական տույժը կրելու ժամկետը լրանալու կամ որպես խրախուսանք կարգապահական տույժը հանվելու դեպքում զինծառայողը ոչ ուշ, քան 30-օրյա ժամկետում նշանակվում է մինչև կարգապահական տույժը ստանալը զբաղեցրած կամ դրան հավասարագոր պաշտոնում՝ համապատասխան թափուր հաստիքի առկայության դեպքում և ատեստավորման կարգով:

7. «Զինվորական կոչման իջեցում մեկ աստիճանով» կարգապահական տույժը կրելու ժամկետը լրանալու կամ որպես խրախուսանք կարգապահական տույժը հանվելու դեպքում զինծառայողին ոչ ուշ, քան 30-օրյա ժամկետում շնորհվում է մինչև կարգապահական տույժը ստանալն ունեցած զինվորական կոչումը՝ անկախ զբաղեցրած պաշտոնից: Այս դեպքում մինչև զինվորական կոչման իջեցումն ունեցած զինվորական կոչման կրման ժամանակահատվածը հաշվարկվում է տվյալ զինվորական կոչման կրման համար օրենքով սահմանված ժամկետում:

8. «Հերթական զինվորական կոչում ստանալու ժամկետը կասեցնելը» կարգապահական տույժը կրելու ժամկետը լրանալու կամ որպես խրախուսանք կարգապահական տույժը հանվելու դեպքում զինծառայողի հերթական զինվորական կոչման կրման հաշվարկի ընթացքը վերսկսվում է:

**ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ**

**ՀԱՏՈՒԿ ՄԱՍ**

**Հոդված 31. Հրամանը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը**

1. Հրամանատարի (պետի) օրինական և սահմանված կարգով տրված հրամանը ստորադասի (ենթակայի) կողմից չկատարելն առաջացնում է կարգապահական պատասխանատվություն՝

արտահերթ վերակարգի նշանակմամբ կամ գորամասի տեղաբաշխման վայրից հերթական արձակուրդից զրկելով կամ կարգապահական վաշտ ուղարկելով՝ մինչև քսան օր տևողությամբ, իսկ ենթասպաների կամ սպաների նկատմամբ՝ խիստ նկատողությամբ կամ կոչումը մեկ աստիճանով իջեցնելով կամ հերթական կոչում ստանալու ժամկետը կասեցնելով՝ վեց ամիս ժամկետով, կամ զինվորական ծառայությունից արձակմամբ:

2. Հրամանատարի (պետի) օրինական և սահմանված կարգով տրված հրամանը ստորադասի (ենթակայի) կողմից ժամանակին չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելն առաջացնում է կարգապահական պատասխանատվություն՝

խիստ նկատողությամբ կամ արտահերթ վերակարգի նշանակմամբ կամ գորամասի տեղաբաշխման վայրից հերթական արձակուրդից զրկելով, իսկ ենթասպաների կամ սպաների նկատմամբ՝ խիստ նկատողությամբ կամ նախազգուշացմամբ՝ զբաղեցրած պաշտոնին անհամապատասխանության մասին:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից, առաջացնում է կարգապահական պատասխանատվություն՝

արտահերթ վերակարգի նշանակմամբ կամ հիմնական արձակուրդի տրման հետաձգմամբ կամ կարգապահական վաշտ ուղարկելով՝ մինչև մեկ ամիս ժամկետով, իսկ ենթասպաների և սպաների նկատմամբ՝ զինվորական կոչման մեկ աստիճանով իջեցմամբ կամ նախազգուշացմամբ՝ զբաղեցրած պաշտոնին անհամապատասխանության մասին:

4. Հրամանը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը ծառայության նկատմամբ անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով առաջացնում է կարգապահական պատասխանատվություն՝

խիստ նկատողությամբ կամ արտահերթ վերակարգի նշանակմամբ կամ գորամասի տեղաբաշխման վայրից հերթական արձակուրդից զրկելով, իսկ ենթասպաների և սպաների նկատմամբ՝ խիստ նկատողությամբ կամ հերթական կոչում ստանալու ժամկետը կասեցնելով՝ երեք ամիս ժամկետով:

5. Սույն հոդվածով նախատեսված կարգապահական խախտման համար ռազմաուսումնական հաստատությունում սովորող զինծառայողների նկատմամբ կարող է կիրառվել նաև «ռազմաուսումնական հաստատությունից հեռացում» կարգապահական տույժի տեսակը:

6. Սույն գլխի իմաստով հրամանատար (պետ) է ի պաշտոնե կամ կոչումով ավագ համարվող այն անձը, որը տվյալ իրավահարաբերությունների շրջանակներում տվյալ զինծառայողի նկատմամբ ունեցել է վերադասություն՝ իր լիազորություններից բխող հրամաններ, հանձնարարականներ տալու և դրանց կատարումը ապահովելու իրավասությամբ:

**Հոդված 32. Զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը**

1. Զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը, բայց ոչ ավելի, քան երեք օրից ավելի տևողությամբ, կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը կամ առանց հարգելի պատճառների ժամանակին ծառայության չներկայանալը, եթե դա չի առաջացնում քրեական պատասխանատվություն, առաջացնում է կարգապահական պատասխանատվություն՝

արտահերթ վերակարգի նշանակմամբ կամ հիմնական արձակուրդի տրման հետաձգմամբ կամ կարգապահական վաշտ ուղարկելով՝ մինչև տասնհինգ օր ժամկետով:

2. Նույն արարքները, որոնք կատարվել են մի խումբ անձանց կողմից, առաջացնում են կարգապահական պատասխանատվություն՝ արտահերթ վերակարգի նշանակմամբ կամ գորամասի տեղաբաշխման վայրից հերթական արձակուրդից զրկելով կամ հիմնական արձակուրդի տրման հետաձգմամբ:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքները, որոնք կատարել է սպան կամ ենթասպան, առաջացնում են կարգապահական պատասխանատվություն՝

խիստ նկատողությամբ կամ նախազգուշացմամբ՝ զբաղեցրած պաշտոնին անհամապատասխանության մասին կամ հերթական զինվորական կոչում ստանալու ժամկետի կասեցմամբ՝ երեք ամիս ժամկետով:

4. Սույն հոդվածով նախատեսված արարքները, որոնք կատարվել են ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում, առաջացնում են կարգապահական պատասխանատվություն՝

կարգապահական վաշտ ուղարկելով՝ մինչև մեկ ամիս ժամկետով, կամ հերթական կոչում ստանալու ժամկետի կասեցմամբ՝ վեց ամիս ժամկետով, կամ զինվորական կոչման մեկ աստիճանով իջեցմամբ:

5. Սույն հոդվածով, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքի, նախատեսված արարքներն առաջին անգամ կատարած զինծառայողը ազատվում է կարգապահական պատասխանատվությունից, եթե դրանք կատարել է ծանր հանցամասնների գուգորդման հետևանքով:

### **Հոդված 33. Մարտական հերթապահության կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը**

1. Հայաստանի Հանրապետության վրա անակնկալ հարձակումը ժամանակին հայտնաբերելու և դրան դիմակայելու կամ Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովմանն ուղղված մարտական հերթապահության կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելն առաջացնում է կարգապահական պատասխանատվություն՝

խիստ նկատողությամբ կամ արտահերթ վերակարգի նշանակմամբ կամ կարգապահական վաշտ ուղարկելով՝ մինչև մեկ ամիս ժամկետով, իսկ ենթասպանների և սպանների նկատմամբ՝ խիստ նկատողությամբ կամ զինվորական կոչման մեկ աստիճանով իջեցմամբ կամ նախազգուշացմամբ՝ զբաղեցրած պաշտոնին անհամապատասխանության մասին, կամ զինվորական հերթական կոչում ստանալու ժամկետի կասեցմամբ՝ վեց ամիս ժամկետով, կամ պաշտոնի իջեցմամբ՝ մեկ աստիճանով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է մարտական հերթապահության կամ մարտական ծառայություն կրելու կանոնների նկատմամբ անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով, առաջացնում է կարգապահական պատասխանատվություն՝

նկատողությամբ կամ արտահերթ վերակարգի նշանակմամբ կամ կարգապահական վաշտ ուղարկելով՝ մինչև մեկ ամիս ժամկետով, իսկ ենթասպանների և սպանների նկատմամբ՝ նկատողությամբ կամ զերատեսչական կրծքանշանից զրկմամբ կամ զինվորական կոչման մեկ աստիճանով իջեցմամբ կամ նախազգուշացմամբ՝ զբաղեցրած պաշտոնին անհամապատասխանության մասին:

### **Հոդված 34. Սահմանապահ ծառայություն կրելու կանոնները խախտելը**

1. Սահմանապահ ծառայություն կրելու կանոնները խախտելը սահմանապահ վերակարգի մեջ մտնող կամ սահմանապահ ծառայության այլ պարտականություններ կատարող անձի կողմից առաջացնում է կարգապահական պատասխանատվություն՝

խիստ նկատողությամբ կամ արտահերթ վերակարգի նշանակմամբ կամ կարգապահական վաշտ ուղարկելով՝ մինչև մեկ ամիս ժամկետով, իսկ ենթասպանների և սպանների նկատմամբ՝ խիստ նկատողությամբ կամ զինվորական կոչման մեկ աստիճանով իջեցմամբ կամ նախազգուշացմամբ՝ զբաղեցրած պաշտոնին անհամապատասխանության մասին, կամ զինվորական հերթական կոչում ստանալու ժամկետի կասեցմամբ՝ վեց ամիս ժամկետով, կամ պաշտոնի իջեցմամբ՝ մեկ աստիճանով:

2. Նույն արարքը, որը կատարվել է սահմանապահ ծառայություն կրելու կանոնների նկատմամբ անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով, առաջացնում է կարգապահական պատասխանատվություն՝

նկատողությամբ կամ արտահերթ վերակարգի նշանակմամբ կամ կարգապահական վաշտ ուղարկելով՝ մինչև մեկ ամիս ժամկետով, իսկ ենթասպանների և սպանների նկատմամբ՝ նկատողությամբ կամ զերատեսչական կրծքանշանից զրկմամբ կամ զինվորական կոչման մեկ աստիճանով իջեցմամբ կամ նախազգուշացմամբ՝ զբաղեցրած պաշտոնին անհամապատասխանության մասին:

**Հոդված 35. Պահակային կամ կայագորային ծառայության կանոնագրքային կանոնները խախտելը**

1. Պահակային կամ կայագորային ծառայության կանոնագրքային կանոնները խախտելը պահակախմբի կամ պարեկախմբի կազմի մեջ մտնող անձի կողմից առաջացնում է կարգապահական պատասխանատվություն՝

արտահերթ վերակարգի նշանակմամբ կամ գորամասի տեղաբաշխման վայրից հերթական արձակուրդից զրկելով կամ կարգապահական վաշտ ուղարկելով՝ մինչև մեկ ամիս ժամկետով, իսկ ենթասպաների և սպաների նկատմամբ՝ խիստ նկատողությամբ կամ զինվորական կոչման մեկ աստիճանով իջեցմամբ կամ նախազգուշացմամբ՝ զբաղեցրած պաշտոնին անհամապատասխանության մասին, կամ զինվորական հերթական կոչում ստանալու ժամկետի կասեցմամբ՝ վեց ամիս ժամկետով, կամ պաշտոնի իջեցմամբ՝ մեկ աստիճանով:

2. Նույն արարքը, որը կատարվել է պահակային կամ կայագորային ծառայության կանոնագրքային կանոնները կրելու կանոնների նկատմամբ անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով, առաջացնում է կարգապահական պատասխանատվություն՝

նկատողությամբ կամ արտահերթ վերակարգի նշանակմամբ կամ կարգապահական վաշտ ուղարկելով՝ մինչև մեկ ամիս ժամկետով, իսկ ենթասպաների և սպաների նկատմամբ՝ նկատողությամբ կամ գերատեսչական կրծքանշանից զրկմամբ կամ զինվորական կոչման մեկ աստիճանով իջեցմամբ կամ նախազգուշացմամբ՝ զբաղեցրած պաշտոնին անհամապատասխանության մասին:

**Հոդված 36. Ներքին ծառայության կանոնագրքային կանոնները խախտելը**

1. Ջինճառայողի կողմից ներքին ծառայության կանոնագրքային կանոնները խախտելն առաջացնում է կարգապահական պատասխանատվություն՝

խիստ նկատողությամբ կամ արտահերթ վերակարգի նշանակմամբ կամ կարգապահական վաշտ ուղարկելով՝ մինչև մեկ ամիս ժամկետով, իսկ ենթասպաների և սպաների նկատմամբ՝ խիստ նկատողությամբ կամ զինվորական կոչման մեկ աստիճանով իջեցմամբ կամ նախազգուշացմամբ՝ զբաղեցրած պաշտոնին անհամապատասխանության մասին, կամ զինվորական հերթական

կոչում ստանալու ժամկետի կասեցմամբ՝ վեց ամիս ժամկետով, կամ պաշտոնի իջեցմամբ՝ մեկ աստիճանով:

2. Նույն արարքը, որը կատարվել է ներքին ծառայության կանոնագրքային կանոնների նկատմամբ անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով, առաջացնում է կարգապահական պատասխանատվություն՝

նկատողությամբ կամ արտահերթ վերակարգի նշանակմամբ կամ կարգապահական վաշտ ուղարկելով՝ մինչև քսան օր ժամկետով, իսկ ենթասպաների և սպաների նկատմամբ՝ նկատողությամբ կամ գերատեսչական կրծքանշանից զրկմամբ կամ զինվորական կոչման մեկ աստիճանով իջեցմամբ կամ նախազգուշացմամբ՝ զբաղեցրած պաշտոնին անհամապատասխանության մասին:

**Հոդված 37. Հասարակական կարգը պահպանելու և հասարակական անվտանգություն ապահովելու ժամանակ ծառայություն կրելու կանոնները խախտելը**

1. Հասարակական կարգը պահպանելու ժամանակ ծառայություն կրելու կանոնները խախտելը հասարակական անվտանգության ապահովման և հասարակական կարգի պահպանման վերակարգի մեջ մտնող անձի կողմից առաջացնում է կարգապահական պատասխանատվություն՝

խիստ նկատողությամբ կամ արտահերթ վերակարգի նշանակմամբ կամ կարգապահական վաշտ ուղարկելով՝ մինչև մեկ ամիս ժամկետով, իսկ ենթասպաների և սպաների նկատմամբ՝ խիստ նկատողությամբ կամ գերատեսչական կրծքանշանից զրկմամբ կամ զինվորական կոչման մեկ աստիճանով իջեցմամբ կամ նախազգուշացմամբ՝ զբաղեցրած պաշտոնին անհամապատասխանության մասին:

**Հոդված 38. Ռազմական գույքն անզգուշությամբ ոչնչացնելը կամ վնասելը**

1. Չենքը, ռազմամթերքը, ռազմական տեխնիկան կամ ռազմական այլ գույքն ինքնավստահությամբ կամ անփութությամբ ոչնչացնելը կամ վնասելն առաջացնում է կարգապահական պատասխանատվություն՝ խիստ նկատողությամբ կամ արտահերթ վերակարգի նշանակմամբ կամ գորամասի տեղաբաշխման վայրից հերթական արձակուրդից զրկելով կամ կարգապահական վաշտ ուղարկելով՝ մինչև մեկ ամիս

ժամկետով, իսկ ենթասպաների և սպաների նկատմամբ՝ խիստ նկատողությամբ կամ գերատեսչական կրծքանշանից զրկմամբ կամ զինվորական կոչման մեկ աստիճանով իջեցմամբ կամ նախազգուշացմամբ՝ զբաղեցրած պաշտոնին անհամապատասխանության մասին:

**Հոդված 39. Ձենքի, ռազմամթերքի և շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների, նյութերի հետ վարվելու կանոնները խախտելը**

1. Ձենքի, ռազմամթերքի, ինչպես նաև ռադիոակտիվ նյութերի, պայթուցիկ կամ շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող այլ սարքերի, առարկաների կամ նյութերի հետ վարվելու կանոնները խախտելն առաջացնում է կարգապահական պատասխանատվություն՝ խիստ նկատողությամբ կամ արտահերթ վերակարգի նշանակմամբ կամ հիմնական արձակուրդի տրման հետաձգմամբ կամ կարգապահական վաշտ ուղարկելով մինչև մեկ ամիս ժամկետով, իսկ ենթասպաների և սպաների նկատմամբ՝ խիստ նկատողությամբ կամ գերատեսչական կրծքանշանից զրկմամբ կամ զինվորական կոչման մեկ աստիճանով իջեցմամբ կամ նախազգուշացմամբ՝ զբաղեցրած պաշտոնին անհամապատասխանության մասին:

**Հոդված 40. Ձենքը, ռազմամթերքը, ռազմական այլ զույքը, ինչպես նաև շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող նյութերը կամ առարկաները մեկ ուրիշին հանձնելը**

1. Զինձառայողին վստահված զենքը, ռազմամթերքը, ռազմական այլ զույքը, ինչպես նաև ռադիոակտիվ նյութերը, պայթուցիկ կամ շրջապատի համար առավել մեծ վտանգ ներկայացնող այլ սարքերը և առարկաները սահմանված կարգի խախտմամբ մեկ ուրիշին հանձնելն առաջացնում է կարգապահական պատասխանատվություն՝ խիստ նկատողությամբ կամ արտահերթ վերակարգի նշանակմամբ կամ կարգապահական վաշտ ուղարկելով՝ մինչև մեկ ամիս ժամկետով, իսկ ենթասպաների և սպաների նկատմամբ՝ խիստ նկատողությամբ կամ գերատեսչական կրծքանշանից զրկմամբ կամ զինվորական կոչման մեկ աստիճանով իջեցմամբ կամ նախազգուշացմամբ՝ զբաղեցրած պաշտոնին անհամապատասխանության մասին:

**Հոդված 41. Իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը**

1. Հրամանատարի (պետի) կամ այլ պաշտոնատար անձի կողմից իշխանությունը կամ պաշտոնեական դիրքը չարաշահելը, իշխանազանցությունը կամ պաշտոնեական լիազորությունների սահմանն անցնելն առաջացնում է կարգապահական պատասխանատվություն՝ արտահերթ վերակարգի նշանակմամբ կամ հիմնական արձակուրդի տրման հետաձգմամբ կամ կարգապահական վաշտ ուղարկելով՝ մինչև մեկ ամիս ժամկետով, իսկ ենթասպաների և սպաների նկատմամբ՝ խիստ նկատողությամբ կամ զինվորական կոչման մեկ աստիճանով իջեցմամբ կամ նախազգուշացմամբ՝ զբաղեցրած պաշտոնին անհամապատասխանության մասին, կամ զինվորական հերթական կոչում ստանալու ժամկետի կասեցմամբ՝ վեց ամիս ժամկետով, կամ պաշտոնի իջեցմամբ՝ մեկ աստիճանով:

**Հոդված 42. Անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ**

1. Ծառայության նկատմամբ հրամանատարի (պետի) կամ այլ պաշտոնատար անձի անփույթ վերաբերմունքն առաջացնում է կարգապահական պատասխանատվություն՝ խիստ նկատողությամբ կամ արտահերթ վերակարգի նշանակմամբ կամ կարգապահական վաշտ ուղարկելով՝ մինչև տասնհինգ օր ժամկետով, իսկ ենթասպաների և սպաների նկատմամբ՝ նկատողությամբ կամ խիստ նկատողությամբ կամ նախազգուշացմամբ՝ զբաղեցրած պաշտոնին անհամապատասխանության մասին, կամ զինվորական հերթական կոչում ստանալու ժամկետի կասեցմամբ՝ երեք ամիս ժամկետով:

**Հոդված 43. Մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը**

1. Մարտական, հատուկ կամ տրանսպորտային մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելն առաջացնում է կարգապահական պատասխանատվություն՝ խիստ նկատողությամբ կամ արտահերթ վերակարգի նշանակմամբ կամ հիմնական արձակուրդի տրման հետաձգմամբ կամ



**ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻՆ ՀՐԱՄԱՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՀՄԱՆՆԵՐԸ,  
ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԶԵԿՈՒՑԱԳԻՐ ՆԵՐԿԱՅԱՅՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ**

**Հոդված 46. Զինծառայողին հրամաններ տալու սահմանները**

1. Զինծառայողին տրվող բանավոր կամ գրավոր հրամանները կամ ցուցումները պետք է համապատասխանեն հրամաններ կամ ցուցումներ տվողի կամ դրանք կատարողի լիազորությունների սահմաններին:

**Հոդված 47. Զինծառայողի կողմից զեկուցագիր ներկայացնելու կարգը**

1. Զինվորական ծառայության անցման հետ կապված հարցերով զինծառայողն իրավունք ունի իր անմիջական հրամանատարին (պետին), իսկ սույն օրենքի 46-րդ հոդվածում նշված սահմանների վերազանցման դեպքերում, ինչպես նաև իր նկատմամբ կիրառված կարգապահական տույժը բողոքարկելու կամ այլ զինծառայողների կողմից անօրինական ու անարդար գործողություններ կատարելու մասին վերադաս հրամանատարներին (պետերին) ներկայացնելու զեկուցագիր: Զեկուցագրում պարտադիր նշվում են առաջարկվող կամ բողոքարկվող հարցի էությունը, այն հրամանատարի (պետի) կամ այլ զինծառայողի տվյալները, որոնց գործողությունները կամ անգործությունը բողոքարկվում են, ինչպես նաև զեկուցագիր ներկայացնող զինծառայողի անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը, զինվորական կոչումը, բնակության (ուսման) վայրը:

2. Զինծառայողն իրավունք չունի զեկուցագիր ներկայացնելու մարտական հերթապահության մեջ, շարքում, պահակախմբում, օրվա վերակարգում կամ ուսումնական պարապմունքներում գտնվելու ժամանակ, բացառությամբ նշված ժամանակ զինծառայողին տրվող նպատակային հարցման դեպքի: Իր նկատմամբ կիրառված կարգապահական տույժը զինծառայողը կարող է բողոքարկել տույժի մասին իրեն հայտարարվելու օրվանից ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում:

3. Այն հրամանատարը (պետը), որի իրավասությունների մեջ չի մտնում զեկուցագրում նշված հարցերի լուծումը, 3-օրյա ժամկետում

կարգապահական վաշտ ուղարկելով՝ մինչև քսան օր ժամկետով, իսկ ենթասպաների և սպաների նկատմամբ՝ խիստ նկատողությամբ կամ նախազգուշացմամբ՝ զբաղեցրած պաշտոնին անհամապատասխանության մասին, կամ զինվորական հերթական կոչում ստանալու ժամկետի կասեցմամբ՝ երեք ամիս ժամկետով, կամ պաշտոնի իջեցմամբ՝ մեկ աստիճանով:

**Հոդված 44. Թոփքների կամ դրանց նախապատրաստման կանոնները խախտելը**

1. Ռազմական թռչող սարքերի թոփքների, դրանց նախապատրաստման կամ շահագործման այլ կանոնները խախտելն առաջացնում է կարգապահական պատասխանատվություն՝ արտահերթ վերակարգի նշանակմամբ կամ հիմնական արձակուրդի տրման հետաձգմամբ կամ կարգապահական վաշտ ուղարկելով՝ մինչև մեկ ամիս ժամկետով, իսկ ենթասպաների և սպաների նկատմամբ՝ խիստ նկատողությամբ կամ զինվորական կոչման մեկ աստիճանով իջեցմամբ կամ նախազգուշացմամբ՝ զբաղեցրած պաշտոնին անհամապատասխանության մասին, կամ զինվորական հերթական կոչում ստանալու ժամկետի կասեցմամբ՝ վեց ամիս ժամկետով, կամ պաշտոնի իջեցմամբ՝ մեկ աստիճանով:

**Հոդված 45. Հրամանատարի (պետի) կողմից զինծառայողի նկատմամբ անհավասար մոտեցում ցուցաբերելը**

1. Հրամանատարի (պետի) կողմից զինծառայողի նկատմամբ անհավասար մոտեցում ցուցաբերելը՝ վերջինիս նկատմամբ խրախուսանքի կամ կարգապահական պատասխանատվության ենթարկելու լիազորությունները իրականացնելիս, առաջացնում է կարգապահական պատասխանատվություն՝ խիստ նկատողությամբ կամ զինվորական կոչման մեկ աստիճանով իջեցմամբ կամ նախազգուշացմամբ՝ զբաղեցրած պաշտոնին անհամապատասխանության մասին, կամ զինվորական հերթական կոչում ստանալու ժամկետի կասեցմամբ՝ վեց ամիս ժամկետով:

**ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՂՐՈՒՅԹՆԵՐ**

**Հոդված 48. Օրենքի ուժի մեջ մտնելը**

- 1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:
- 2. Սույն օրենքից բխող իրավական ակտերը ենթակա են ընդունման սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ 6-ամսյա ժամկետում:

**Հայաստանի Հանրապետության  
Նախագահ Ս. Մարգարյան**

2012 թ. ապրիլի 10  
Երևան  
ՀՕ-91-Ն

գեկուցագիրն ուղարկում է վերադաս կամ դրանք լուծելու իրավասություն ունեցող հրամանատարին (պետին)՝ այդ մասին տեղյակ պահելով գեկուցողին: Ձեկուցագիրը չի կարող ուղարկվել այն հրամանատարի (պետի) քննարկմանն ու կարծիքին, որի գործողությունները կամ անգործությունը բողոքարկվում են գեկուցագրում:

4. Ձեկուցագիր ներկայացրած զինծառայողի նկատմամբ անօրինական կամ անարդար գործողություններ կատարած կամ անգործություն թույլ տված հրամանատարը (պետը) ենթակա է սույն օրենքով նախատեսված պատասխանատվության, եթե նրա գործողությունները կամ անգործությունը չեն առաջացնում քրեական պատասխանատվություն: Արգելվում է խոչընդոտել զինծառայողին ներկայացնելու գեկուցագիր, դրա համար նրան պատժել, նսեմացնել նրա պատիվն ու արժանապատվությունը կամ դրսևորել այլ անարդարացի վերաբերմունք, ինչպես նաև ամբողջ ծավալով իրականացնելու իր խախտված իրավունքների դատական կարգով պաշտպանությունը:

5. Ձեկուցագրի մասին որոշումներն ընդունվում են անհապաղ, բայց ոչ ուշ, քան 15-օրյա ժամկետում, իսկ լրացուցիչ ուսումնասիրություն պահանջող գեկուցագրի մասին որոշումն ընդունվում է մինչև 30 օր ժամկետում՝ լրացուցիչ ուսումնասիրության անհրաժեշտության մասին տեղեկացնելով գեկուցագիր ներկայացնողին:

6. Ձեկուցագրում ներկայացված հարցերը համարվում են լուծված, եթե քննարկվել են ամբողջությամբ, ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցներ, և տրվել է Հայաստանի Հանրապետության օրենքների ու այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխանող սպառիչ գրավոր պատասխան:

7. Ձեկուցագրում ներկայացված հարցերի լուծումը մերժելու դեպքում այդ մասին գրավոր հայտնվում է գեկուցագիր ներկայացրած զինծառայողին՝ նշելով մերժման պատճառները, մերժման համար հիմք համարվող Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները, ինչպես նաև պարզաբանելով մերժումը բողոքարկելու կարգը:

8. Զորամասերում վարվում է զինծառայողների ներկայացրած գեկուցագրերի հաշվառման մատյան, որի վարման կարգը սահմանում է համապատասխան պետական լիազոր մարմնի ղեկավարը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Օ Ր Ե Ն Ք Ը**

Ընդունված է Ազգային ժողովի կողմից  
3 դեկտեմբերի 1996 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՆԵՐՔԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Հաստատել Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը (կցվում է):

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Հայաստանի Հանրապետության  
Նախագահ

Լ. Տեր-Պետրոսյան

7 հունվարի 1997 թ.

Երևան  
ՀՕ-99

Հաստատված է  
Ազգային ժողովի  
1996 թվականի դեկտեմբերի 3-ի օրենքով

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՆԵՐՔԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ  
Կ Ա Ն Ո Ն Ա Գ Ի Ր Ք**

Սույն Կանոնագիրքը սահմանում է զինված ուժերի զինծառայողների ընդհանուր իրավունքներն ու պարտականությունները, նրանց փոխհարաբերությունները, գնդի և նրա ստորաբաժանումների

հիմնական պաշտոնատար անձանց պարտականությունները, ինչպես նաև ներքին կարգուկանոնը:

Ներքին ծառայության կանոնագրքով ղեկավարվում են ՀՀ ԶՈւ զորամասերի, շտաբների, վարչությունների, հիմնարկների և ռազմական ուսումնական հաստատությունների բոլոր զինծառայողները: Կանոնագրքի մեջ չնշված պաշտոնատար անձանց պարտականությունները սահմանվում են համապատասխան կանոնադրություններով, հրահանգներով և ուղեցույցներով\*:

Կանոնագրքի դրույթները տարածվում են Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և այլ զորքերի զինծառայողների վրա:

Պատերազմական ժամանակ դաշտային պայմաններում և խաղաղ ժամանակ զորավարությունների ու զինծառայողներին մարտական գործողությունների ուսուցման պարապմունքների ընթացքում ներքին ծառայությունը կարգավորվում է մարտական կանոնադրություններով, ռազմական գործողությունների սպահովման հրահանգներով, ինչպես նաև սույն Կանոնագրքով:

(նախաբանը փոփ. 14.12.04 ՀՕ-5-Ն, խմբ. 01.06.06 ՀՕ-127-Ն, փոփ. 19.03.13 ՀՕ-20-Ն)

\* Այսուհետև համառոտության համար անվանվելու են «զորամասեր»:

Հաստատված է  
Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդում  
27 դեկտեմբերի 1991 թ. քաղ. Երևան Հ.Ն.-0500-1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ  
ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ  
Ե Ր Դ ՈՒ Մ Ը

Ես՝ \_\_\_\_\_,

Ծառայության անցնելով Հայաստանի Հանրապետության զինված ուժերում, հանդիսավոր երդվում եմ՝

անձնվիրաբար ծառայել Հայրենիքիս՝ Հայաստանի  
Հանրապետությանը և հանուն նրա չինայել կյանքս,

ենթարկվել Հայաստանի Հանրապետության Մահմանադրությանը և  
օրենքներին,

անվերապահորեն կատարել հրամանատարներիս հրամանը,  
պահպանել ռազմական գաղտնիքը:

Ու թե դրժեմ երդումս, թող պատժվեմ օրենքի ամբողջ խստությամբ:

Ստորագրություն

(երդման տեքստը փոփ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

### **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

Հոդված 1. Ձորամասում զինծառայողների ամենօրյա կյանքն ու  
գործունեությունն իրականացվում է ներքին ծառայության  
պահանջներին համապատասխան:

Ներքին ծառայությունը նախատեսված է զորամասի ներքին  
կարգուկանոնի և զինվորական կարգապահության պահպանման  
համար, որոնք ապահովում են նրա մշտական մարտական  
պատրաստականությունը, անձնակազմի ուսուցումը, առօրյա կյանքում  
նրանց կողմից այլ խնդիրների կազմակերպված կատարումը և  
զինծառայողների առողջության պահպանումը: Այն կազմակերպվում է  
սույն Կանոնագրքի դրույթներին համապատասխան՝ Հայաստանի  
Հանրապետության օրենսդրության անշեղ պահպանումով:

Հոդված 2. Ներքին ծառայությունը պահանջում է խստորեն  
կազմակերպված գործողություններ՝ անկախ յուրաքանչյուր  
զինծառայողի անձնական ցանկություններից:

Ներքին ծառայության պահանջների կատարումը զինծառայողների  
մեջ զարգացնում է պատասխանատվության զգացում, դաստիարակում  
է ճշտապահություն, բարեխղճություն և ինքնուրույնություն:  
Փոխըմբռնումը, բարյացակամությունը և միմյանց օգնելու  
պատրաստականությունը նպաստում են զինվորական  
ընկերակցության ամրապնդմանը և զինվորական կոլեկտիվների  
համախմբմանը, հնարավորություն են ընձեռում ոչ միայն լուծել  
առօրյա գործունեության խնդիրները, այլև մարտական իրադրության  
մեջ դիմանալ ծանր փորձությունների:

Հոդված 3. Յուրաքանչյուր զինծառայող պարտավոր է իմանալ և  
բարեխղճորեն կատարել ներքին ծառայության պահանջները:

Զինվորական ծառայության կատարման սկզբում զինծառայողը  
կարիք ունի հատուկ ուշադրության: Հրամանատարների (պետերի)  
խիստ վերահսկողությունը և նրանց անձնական օրինակը օգնում են  
զինծառայողին արագորեն ընկալելու ներքին ծառայության կանոնները:

Հոդված 4. Ներքին ծառայության ղեկավարումը զորամասում  
իրականացնում է զորամասի հրամանատարը, իսկ ստորաբաժանման  
տարածքում՝ ստորաբաժանման հրամանատարը: Նույն շինության  
ներսում մի քանի ստորաբաժանում տեղաբաշխելու դեպքում, որոնց  
հրամանատարներն ընդհանուր անմիջական պետ չունեն, զորամասի  
հրամանատարի հրամանով ներքին ծառայությունը ղեկավարում է այդ  
ստորաբաժանումներից մեկի հրամանատարը: Ձորամասում ներքին  
ծառայության անմիջական կազմակերպիչը շտաբի պետն է, իսկ  
վաշտինը՝ վաշտի ավագը:

Ենթակա զորքերում ներքին ծառայության վիճակի համար  
պատասխանատվությունը դրվում է բոլոր անմիջական պետերի վրա:  
Նրանք պարտավոր են ենթակա զորամասերին և  
ստորաբաժանումներին օգնություն ցույց տալ ներքին ծառայության  
կազմակերպման, դրա պահանջների կատարման գործում և  
պարբերաբար ստուգել դրա վիճակը:

### **Ա Ռ Ա Ջ Ի Ն Մ Ա Ս**

#### **ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՓՈՒՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

#### **Գ Լ ՈՒ Խ 1**

#### **ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

Ընդհանուր դրույթներ

Հոդված 5. Հայրենիքի պաշտպանությունը Հայաստանի  
Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացու սրբազան պարտքն է:

Ձինվորական ծառայությունը Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և այլ զորքերում պետական ծառայության հատուկ տեսակ է:

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի զինծառայողներ են սպաները, ենթասպաները, ռազմական ուսումնական հաստատությունների ուսանողները, սերժանտները, ավագները և զինվորները, որոնք զինվորական ծառայություն են կատարում:

Առաջին անգամ զինվորական ծառայության գորակոչված կամ կամավոր կերպով ծառայության մտած քաղաքացիները սահմանված կարգով ընդունում են զինվորական երդումը (Հավելված 1):

Յուրաքանչյուր զինծառայողի շնորհվում է համապատասխան զինվորական կոչում (Հավելված 4):

(5-րդ հոդվածը խմբ. 01.06.06 ՀՕ-127-Ն)

Հոդված 6. Ձինծառայողները գտնվում են պետության պաշտպանության տակ: Նրանց կյանքը, առողջությունը, պատիվն ու արժանապատվությունը պահպանվում են օրենքով:

Ձինծառայողին անվանարկելը, սպառնալիքը, բռնությունը կամ ոտնձգությունը նրա կյանքի, առողջության, ունեցվածքի նկատմամբ և զինծառայողի վրա դրված պարտականությունների կատարմանը խոչընդոտող այլ գործողությունները, ինչպես նաև նրա իրավունքների ոտնահարումը առաջացնում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատասխանատվություն:

Հոդված 7. Ձինծառայողները Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են: Նրանք օգտվում են հանրապետության քաղաքացիների համար սահմանված իրավունքներից և ազատություններից, հաշվի առնելով գործող օրենսդրությամբ սահմանված զինվորական ծառայության պայմաններից բխող սահմանափակումները: Նրանց վրա դրվում են սահմանադրական, այլ համաքաղաքացիական պարտականություններ, ինչպես նաև ընդհանուր, ծառայության և հատուկ պարտականություններ՝ սահմանված զինվորական ծառայության պայմաններով:

Ձինծառայողների իրավունքները

Հոդված 8. Ձինծառայողների իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության

բովանդակությունն ու ծավալը կախված են այն բանից, թե արդյոք նրանք զինվորական ծառայության պարտականություններ են կատարում, թե ոչ:

Ձինծառայողների պարտականությունների կատարում ասելով հասկացվում է՝ մարտական գործողություններին մասնակցելը, պաշտոնեական պարտականությունների, մարտական հերթապահության կատարումը, գորավարժություններին մասնակցելը, աշխատակարգով սահմանված ծառայության ժամանակամիջոցում գորամասի տարածքում կամ, եթե դա թելադրված է ծառայության անհրաժեշտությամբ, ծառայողական գործուղման կամ բուժման մեջ գտնվելը, ծառայության վայր, բուժման մեկնելը կամ վերադառնալը, զինվորական հավաքներին մասնակցելը, գերության մեջ (բացառությամբ կամավոր գերի հանձնվելու դեպքերը), պատանդի կամ ներկալվածի վիճակում գտնվելը, անհայտ բացակայությունը՝ մինչև զինծառայողին օրենքով սահմանված կարգով անհայտ բացակայող ճանաչելը կամ մեռած հայտարարելը, անհատի կյանքի, առողջության, պատվի ու արժանապատվության պաշտպանությունը, օրինականության և իրավակարգի ապահովման գործում իրավապահ մարմիններին օգնություն ցույց տալը, զինծառայողների այլ գործողություններ, որոնք դատարանի կողմից ճանաչվել են որպես հասարակության ու պետության շահերից բխող:

Որպես զինվորական ծառայության պարտականությունները կատարող չեն ճանաչվում այն զինծառայողները, որոնք կատարում են քրեական օրենսդրությամբ նախատեսված հանրորեն վտանգավոր արարքներ:

Անհրաժեշտության դեպքում հրամանատարի (պետի) հրամանով զինծառայողը պարտավոր է զինվորական ծառայության պարտականությունների կատարմանն անցնել ցանկացած ժամանակ:

Ձինվորական ծառայության կատարման ժամանակ զինծառայողները համարվում են պետական իշխանության ներկայացուցիչներ և գտնվում են պետության պաշտպանության տակ:

Հոդված 9. Ձինծառայողների իրավունքներն ու դրանց իրականացման կարգը, զինծառայության առանձնահատկությունների հաշվառմամբ, սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն Կանոնագրքով:

Ոչ ոք իրավասու չէ սահմանափակել զինծառայողների իրավունքներն ու պարտականությունները, որ սահմանված են

Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ և օրենսդրությամբ:

Զինձառայողների կողմից իրենց իրավունքների օգտագործումը չպետք է վնաս հասցնի հասարակության, պետության իրավունքներին և օրինական շահերին, զինվորական ծառայությանը, ուրիշ զինձառայողների և այլ քաղաքացիների իրավունքներին:

Հոդված 10. Պետությունը երաշխավորում է զինձառայողների սոցիալական և իրավական պաշտպանությունը, միջոցներ է ձեռնարկում նրանց համար բավարար և արժանի կենսամակարդակ ապահովելու, ծառայության և կենցաղի պայմանների բարելավման ուղղությամբ:

Զինձառայողների իրավունքների ապահովումը և պահպանումը դրվում են տարածքային կառավարման մարմինների, զինվորական կառավարման մարմինների, հրամանատարների (պետերի) և իրավապահ մարմինների վրա:

Նախքան զինվորական երդում տալը զինձառայողը չի կարող նշանակվել զինվորական պաշտոնի, ընդգրկվել մարտական խնդիրների կատարման գործում (մարտական գործողությունների, մարտական հերթապահության, պահակային ծառայության կատարմանը): Զինվորականին չեն ամրակցվում սպառազինություն և ռազմական տեխնիկա, նրան չեն կարող տալ կալանքի կարգապահական տույժ:

Զինձառայողների օրինական շահերի և իրավունքների իրականացման ուղղությամբ իրենց պարտականությունները չկատարելու դեպքում մեղավոր հրամանատարները (պետերը) ենթակա են օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության:

Հոդված 11. Զինձառայողները, զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև ծառայությունից դուրս ժամանակ ունեն գենք պահելու, կրելու, գործադրելու և օգտագործելու իրավունք: Զինձառայողի կողմից գենքը պահելու, կրելու կանոնները և գործադրելու կարգը սահմանվում են սույն Կանոնագրքով:

Զինձառայողները, որպես ծայրահեղ միջոց, անհատապես կամ ստորաբաժանման կազմով գենք գործադրելու իրավունք ունեն՝

- պահպանվող ռազմական և պետական օբյեկտների, գործարանների և ստորաբաժանումների տեղաբաշխման, շենքերի ու շինությունների,

զինվորական էշերների, մեքենաների շարասյուների ու միայնակ տրանսպորտային միջոցների և պահակախմբերի վրա խմբային կամ զինված հարձակումը ետ մղելու համար, եթե հնարավոր չէ դրանք պաշտպանել այլ եղանակով ու միջոցներով:

- գենքին կամ ռազմական տեխնիկային բռնի տիրանալու փորձի կասեցման համար, եթե հնարավոր չէ դրանք պաշտպանել այլ եղանակով ու միջոցներով:

- զինձառայողներին և քաղաքացիական անձանց կյանքին կամ առողջությանը սպառնացող հարձակումից պաշտպանելու համար, եթե հնարավոր չէ նրանց պաշտպանել այլ եղանակով ու միջոցներով:

- հանցագործություն կատարած կամ ծանր հանցագործության կատարման պահին բռնված և զինված դիմադրություն ցույց տվող անձին, ինչպես նաև գենքը հանձնելու օրինական պահանջը կատարելուց հրաժարվող զինված անձին մեկուսացնելիս, եթե այլ եղանակով ու միջոցներով հնարավոր չէ ճնշել դիմադրությունը կամ առգրավել գենքը:

Պահակախմբի անձնակազմի մեջ մտնող զինձառայողներն իրավունք ունեն գենք գործադրել Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կայազորային ու պահակային ծառայությունների կանոնագրքով սահմանված դեպքերում ու կարգով:

Հրամանատարը (պետը) դրանից բացի իրավունք ունի անձամբ գենք գործադրել կամ հրամայել գենք գործադրելու կարգապահության և կարգուկանոնի վերականգնման համար ենթակայի բացահայտ անհնազանդության դեպքում, երբ չհնազանդվողի գործողությունները բացահայտորեն ուղղված են հայրենիքի դավաճանությանը կամ մարտական պայմաններում մարտական առաջադրանքի խափանմանը:

(11-րդ հոդվածը փոփ. 19.03.13 ՀՕ-20-Ն)

Հոդված 12. Զենքի գործադրմանը պետք է նախորդի նախազգուշացում այն գործադրելու մտադրության մասին: Առանց նախազգուշացման գենք կարող է գործադրվել հանկարծակի կամ զինված հարձակման դեպքում, մարտական տեխնիկայի, փոխադրամիջոցների, թռչող սարքերի օգտագործումով հարձակման դեպքում, մեկուսարանից զինված կամ փոխադրամիջոցների օգտագործումով փախուստի դեպքում, ինչպես նաև գիշերով կամ սահմանափակ տեսանելիության այլ պայմաններում փոխադրական

միջոցների շարժման պահին դրանցից փախուստի, ինչպես նաև այլ իրական սպառնալիքի դեպքում:

Ձենք գործադրելու և օգտագործելու դեպքում զինծառայողը պարտավոր է ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները շրջապատի քաղաքացիների անվտանգության ապահովման համար, իսկ անհրաժեշտության դեպքում՝ տուժածներին ցույց տալ անհետաձգելի բուժօգնություն:

Արգելվում է զենք գործադրել կանանց և անչափահասների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանք կատարում են զինված կամ խմբային հարձակում, ցույց են տալիս զինծառայողի և այլ քաղաքացիների կյանքին սպառնացող զինված դիմադրություն, եթե այլ եղանակով ու միջոցներով հնարավոր չէ կասեցնել այդ հարձակումը:

Ձենքի գործադրման կամ օգտագործման յուրաքանչյուր դեպքի մասին զինծառայողը պարտավոր է զեկուցել հրամանատարին (պետին):

#### Զինծառայողների ընդհանուր պարտականությունները

Հոդված 13. Հայաստանի Հանրապետության զինված ուժերի զինծառայողը ծառայության ժամանակ ղեկավարվում է օրենքների, զինվորական կանոնադրությունների պահանջներով և հրամանատարների հրամաններով:

Զինծառայողը պարտավոր է՝

- հավատարիմ լինել զինվորական երդմանը, անձնուրաց կերպով ծառայել իր ժողովրդին, արիաբար, հմտորեն, չինայելով սեփական արյունը և նույնիսկ կյանքը, պաշտպանել Հայրենիքը՝ Հայաստանի Հանրապետությունը, կատարել զինվորական պարտքը, անսասան տանել զինվորական ծառայության դժվարությունները:

- խստորեն պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն ու օրենքները, կատարել զինվորական կանոնադրությունների պահանջները:

- մշտապես տիրապետել ռազմական մասնագիտական գիտելիքներին, կատարելագործել սեփական իմացությունը և զինվորական վարպետությունը:

- իմանալ և գործադրման համար մշտապես պատրաստ պահել իրեն հանձնված սպառազինությունը և մարտական տեխնիկան, պահպանել պետական և ռազմական ունեցվածքը:

- լինել ազնիվ, կարգապահ և խիզախ զինվորական պարտքի կատարման ժամանակ, ցուցաբերել խելամիտ նախաձեռնություն:

- անվերապահորեն ենթարկվել հրամանատարներին (պետերին) և նրանց պաշտպանել մարտի ժամանակ, պաշտպանել զորամասի մարտական դրոշը:

- բարձր պահել զինվորական ընկերասիրությունը, չինայելով կյանքը՝ ընկերներին փրկել վտանգից, նրանց օգնել խոսքով ու գործով, հարգել նրանցից յուրաքանչյուրի պատիվն ու արժանապատվությունը, իր և ուրիշ զինծառայողների նկատմամբ թույլ չտալ կոպտություն և ծաղրուծանակ, նրանց հեռու պահել անարժան արարքներից:

- պահպանել զինվորական հարգանքի, վարքի և զինվորական ողջույնի կանոնները, մշտապես լինել համագգեստով՝ մաքուր և խնամքով հագնված:

- լինել աչալուրջ, խստորեն պահպանել պետական և ռազմական գաղտնիքը:

Հոդված 14. Զինծառայողը պետք է պատվով կրի Հայաստանի Հանրապետության պաշտպանի բարձր կոչումը, թանկ գնահատի զինված ուժերի, իր զորամասի պատիվն ու մարտական փառքը և իր զինվորական կոչման պատիվը:

Հոդված 15. Զինծառայողը պարտավոր է դրսևորել հայրենասիրություն, նպաստել ազգերի և ժողովուրդների միջև եղբայրության ամրապնդմանը:

Զինծառայողների ուսուցման և դաստիարակության ընթացքում պետք է հարգանք ցուցաբերվի նրանց ազգային զգացմունքների, սովորությունների և ավանդույթների նկատմամբ:

Հայաստանի Հանրապետության զինված ուժերում որպես պետական լեզու օգտագործվում է հայերենը: Հայոց լեզվին թույլ տիրապետող զինծառայողներին տրվում են ուսումնական ձեռնարկներ, ժամանակ է առանձնացվում և ստեղծվում են այլ պայմաններ լեզուն ուսումնասիրելու համար:

Հոդված 16. Զինծառայողները պարտավոր են հարգանք տածել միմյանց նկատմամբ, կարգուկանոնի և կարգապահության պահպանության հարցում օժանդակել հրամանատարներին (պետերին) և ավագ զինծառայողներին:

Զինձառայողի հետ պատահած ամեն ինչի մասին, որ ազդում է նրա պարտականությունների կատարման վրա, և իրեն արված դիտողությունների մասին նա պարտավոր է զեկուցել իր անմիջական պետին:

Զինձառայողների միջև զինվորական կանոնադրություններով սահմանված փոխհարաբերությունների խախտման դեպքում նա պարտավոր է անհապաղ միջոցներ ձեռնարկել կարգուկանոն հաստատելու համար, ինչպես նաև այդ մասին զեկուցել իր անմիջական պետին:

Հոդված 17. Զինձառայողը պետք է պահպանի զինվորական ծառայության անվտանգության պահանջները, հիվանդությունների և հաշմվելու կանխման միջոցները, ամեն օր բարձրացնի ֆիզիկական կոփվածությունն ու մարզվածությունը:

Հոդված 18. Ծառայության հարցերով զինձառայողը պարտավոր է դիմել իր անմիջական պետին և հետո միայն, նրա թույլտվությամբ՝ կոչումով հաջորդ ավագ պետին:

Անձնական հարցերով ևս զինձառայողը պետք է դիմի անմիջական պետին, իսկ հատուկ անհրաժեշտության դեպքում՝ ավագ պետին:

Առաջարկությունների, դիմումների և բողոքների (գանգատների) դեպքում զինձառայողը ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնադրքի դրույթներով:

(18-րդ հոդվածը փոփ. 19.03.13 ՀՕ-20-Ն)

Հոդված 19. Զինձառայողը պարտավոր է գիտենալ և անշեղորեն պահպանել ռազմական գործողություններ վարելու, վիրավորների, հիվանդների և ռազմական գործողությունների շրջանի ազգաբնակչության, ինչպես նաև ռազմագերիների հետ վարվեցողության միջազգային կանոնները:

Հոդված 20. Մարտական գործողությունների ընթացքում նույնիսկ իր գորամասից (ստորաբաժանումից) կտրված և լրիվ շրջապատման մեջ լինելիս զինձառայողը պարտավոր է վճռական դիմադրություն ցույց տալ հակառակորդին՝ խուսափելով գերեվարվելուց: Նա պարտավոր է մարտում մինչև վերջ կատարել իր զինվորական պարտքը:

Իսկ եթե զինձառայողը, հայտնվելով իր գորքերից կտրված վիճակում և սպառելով դիմադրության բոլոր միջոցներն ու հնարավորությունները կամ ծանր վիրավորվածության, ծանր կոնտուզիայի հետևանքով գտնվելով անօգնական վիճակում, գերի վերցվի, պարտավոր է փնտրել և օգտագործել ամեն մի հնարավորություն իրեն և իր ընկերներին գերությունից ազատելու, իր գորքեր վերադառնալու համար: Գերի վերցված զինձառայողը հարցաքննության ժամանակ իրավունք ունի հայտնելու միայն իր ազգանունը, անունը, հայրանունը, զինվորական կոչումը, ծննդյան թիվը և անձնական համարը: Նա պարտավոր է օգնել գերված ընկերներին, նրանց ետ պահել թշնամուն օժանդակելուց, մերժել Հայաստանի Հանրապետության զինված ուժերին վնաս հասցնելու ուղղությամբ զինձառայողին օգտագործելու թշնամու փորձերը:

Գերի վերցված, ինչպես նաև չեզոք երկրներում ներկայված զինձառայողների համար պահպանվում է զինձառայողների կարգավիճակը: Զինվորական հրամանատարությունը և նման լիազորություններ ունեցող պետական մարմինները պարտավոր են միջազգային իրավունքի նորմերին համապատասխան միջոցներ ձեռնարկել նշված զինձառայողների իրավունքների պաշտպանության և Հայրենիք վերադարձնելու համար:

Զինձառայողների պաշտոնական և հատուկ պարտականությունները

Հոդված 21. Յուրաքանչյուր զինձառայող ունի պաշտոնական պարտականություններ, որոնք որոշում են նրա զբաղեցրած պաշտոնին համապատասխան իրեն հանձնարարված դերի ու խնդիրների գործնական կատարման ծավալն ու սահմանները: Պաշտոնական պարտականություններն օգտագործվում են միայն ի շահ ծառայության:

Այդ պարտականությունները սահմանվում են զինվորական կանոնադրություններով, հրահանգներով, կանոնակարգերով, ինչպես նաև սույն Կանոնադրքի կիրարկման ուղղությամբ ուղղակի պետերի գրավոր հրամաններով:

Հոդված 22. Մարտական հերթապահության (մարտական ծառայության), օրվա և կայազորային վերակարգի մեջ գտնվող, ինչպես նաև տարերային աղետների հետևանքների վերացման համար ներգրավված կամ այլ արտակարգ վիճակներում գտնվող



զինծառայողները կատարում են հատուկ պարտականություններ: Այդ պարտականությունները և դրանց կատարման կարգը սահմանվում են օրենսդրական, համագորային ակտերով, զինվորական կանոնադրություններով ու դրանց հիման վրա մշակված իրավական այլ ակտերով և, որպես կանոն, կրում են ժամանակավոր բնույթ:

Հատուկ պարտականությունների կատարման ժամանակ զինծառայողներն օժտվում են նաև հատուկ իրավունքներով՝ կապված զինվորական կարգապահության և իրավակարգի պահպանման, անձնակազմի, մարտական դրոշների, սպառազինության, ռազմական տեխնիկայի ու նյութական այլ միջոցների և ուրիշ ռազմական ու պետական օբյեկտների պաշտպանության հետ, այդ թվում՝ զենքի գործադրմամբ:

#### Չինծառայողների պատասխանատվությունը

Հոդված 23. Բոլոր զինծառայողները, անկախ զինվորական կոչումից ու պաշտոնից, հավասար են օրենքի առնչությամբ և կրում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար սահմանված պատասխանատվություն՝ հաշվի առնելով նրանց իրավական վիճակի առանձնահատկությունները:

Հոդված 24. Հասարակական ներգործության միջոցներ կարող են գործադրվել զինվորական կարգապահության և հասարակական կարգի խախտման հետ կապված զանցանքների համար: Զանցանքների քննարկումը կատարվում է. ենթասպաներինը՝ ժողովներում, սպաներինը՝ սպայական ժողովներում: Բացի դրանից, սպաների զանցանքները կարող են քննարկվել պատվո դատարանների կողմից:

Հոդված 25. Կարգապահական պատասխանատվություն զինծառայողները կրում են Հայաստանի Հանրապետության զինված ուժերի Կարգապահական կանոնագրքով սահմանված կարգով՝ զինվորական կարգապահության խախտման համար:

(25-րդ հոդվածը փոփ. 19.03.13 ՀՕ-20-Ն)

Հոդված 26. Վարչական պատասխանատվություն զինծառայողները կրում են ընդհանուր հիմունքներով՝ վարչական իրավախախտումների մասին օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 27. Քաղաքացիաիրավական պատասխանատվություն զինծառայողները կրում են քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված պարտականությունները չկատարելու կամ անբարեխիղճ կատարելու, պետությանը, իրավաբանական անձանց, քաղաքացիներին վնաս հասցնելու և օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

Հոդված 28. Նյութական պատասխանատվություն զինծառայողները կրում են զինվորական ծառայության կատարման ժամանակ պետությանը հասցված նյութական վնասի համար՝ օրենքով սահմանված կարգով:

(28-րդ հոդվածը փոփ. 01.06.06 ՀՕ-127-Ն)

Հոդված 29. Քրեական պատասխանատվություն զինծառայողները կրում են հանցագործություն կատարելու համար՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 30. Թույլ տված իրավախախտումների համար զինծառայողները, որպես կանոն, ենթարկվում են մեկ տեսակի պատասխանատվության:

Իրավախախտում թույլ տալու կապակցությամբ կարգապահական տույժի ենթարկված զինծառայողները չեն ազատվում այդ իրավախախտման համար քրեական պատասխանատվությունից:

Նյութական վնաս պատճառելու հետ կապված իրավախախտում թույլ տալու դեպքում զինծառայողները հատուցում են վնասը, անկախ պատասխանատվության այլ ձևերի ենթարկվելուց կամ հասարակական ներգործության միջոցների գործադրումից:

Չինծառայողների նկատմամբ հասարակական ներգործության միջոցներ կարող են կիրառվել զինվորական կարգապահության և հասարակական կարգի խախտումների հետ կապված զանցանքների համար:

Պատասխանատվության ենթարկելիս չի թույլատրվում վիրավորել զինծառայողների պատիվն ու արժանապատվությունը:

**ԶԻՆՏԱՌԱՅՑՈՂՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Միանձնյա ղեկավարություն-հրամանատարներ (պետեր) և ենթականեր  
Ավագներ և կրտսերներ

Հոդված 31. Միանձնյա ղեկավարությունը Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կազմավորման, ղեկավարման և զինծառայողների փոխհարաբերության սկզբունքներից մեկն է: Դա հրամանատարին (պետին) իր ենթակաների նկատմամբ ողջ կարգադրողական իշխանությամբ օժտելն է և նրա վրա պետության հանդեպ անձնական պատասխանատվություն դնելը գործարմասի, ստորաբաժանման և ամեն մի զինծառայողի կյանքի ու գործունեության բոլոր կողմերի համար:

Միանձնյա ղեկավարությունը դրսևորվում է հրամանատարի (պետի)՝ իրադրության համակողմանի գնահատումից ելնելով՝ միանձնյա կերպով որոշումներ ընդունելու, օրենքներին ու զինվորական կանոնադրություններին խստիվ համապատասխան հրամաններ արձակելու և դրանց կատարումն ապահովելու իրավունքի մեջ:

Հրամանի քննարկումն անթույլատրելի է, իսկ չենթարկվելը կամ հրամանը չկատարելը համարվում է զինվորական հանցագործություն:

Հոդված 32. Իրենց ծառայողական դիրքով և զինվորական կոչումով զինծառայողներից ոմանք մյուսների նկատմամբ կարող են լինել պետեր կամ ենթականեր:

Պետն իրավունք ունի ենթակային հրամաններ տալ և պահանջել դրանց կատարումը: Պետը ենթակայի համար պիտի լինի պատվի և զսպվածության օրինակ և չպիտի թույլ տա ո՛չ տնավարություն, ո՛չ էլ կանխատրամադրվածություն: Ենթակայի մարդկային արժանապատվությունը ստորացնող գործողությունների համար պետը պատասխանատվություն է կրում:

Ենթական պարտավոր է անվերապահորեն կատարել պետի հրամանները: Հրամանը կատարելով՝ նա կարող է բողոքել, եթե կարծում է, թե իր նկատմամբ ճիշտ չեն վարվել:

Հոդված 33. Պետերը, որոնց զինծառայողները ենթարկվում են ծառայության բերումով, թեկուզ և ժամանակավորապես, ուղղակի պետեր են համարվում:

Ենթակային ամենամոտ ուղղակի պետը կոչվում է անմիջական պետ:

Հոդված 34. Իրենց զինվորական կոչման բերումով պետեր են զինվորական ծառայության մեջ գտնվող՝

- գեներալ-գնդապետները՝ ավագ և կրտսեր սպաների, ենթասպաների, սերժանտների, զինվորների համար.
- գեներալները, գնդապետները՝ կրտսեր սպաների, ենթասպաների, սերժանտների, զինվորների համար.
- փոխգնդապետի, մայորի կոչումով ավագ սպաները՝ ենթասպաների, սերժանտների, զինվորների համար.
- կրտսեր սպաները՝ սերժանտների, զինվորների համար.
- ենթասպաները՝ իրենց հետ նույն գործարմասի սերժանտների, զինվորների համար.
- սերժանտները՝ նույն գործարմասի զինվորների համար:

Հոդված 35. Այն զինծառայողները, ովքեր ըստ իրենց ծառայողական դիրքի և զինվորական կոչման (հոդված 33, 34) մյուս զինծառայողների նկատմամբ պետեր կամ ենթականեր չեն, կարող են լինել ավագներ կամ կրտսերներ:

Ավագությունը որոշվում է զինծառայողների զինվորական կոչումներով:

Զինվորական կոչումով ավագները կրտսերների կողմից զինվորական կարգապահության, հասարակական կարգի և վարքի կանոնների, զինվորական համազգեստ կրելու և զինվորական ողջույնի կատարման խախտումների դեպքում պետք է նրանցից պահանջեն վերացնել այդ խախտումները: Կոչումով կրտսերները պարտավոր են անատարկելիորեն կատարել ավագների այդ պահանջները:

Հոդված 36. Միմյանց ենթակայության տակ չգտնվող զինծառայողները ծառայողական պարտականությունները համատեղ կատարելիս, երբ նրանց ծառայողական փոխհարաբերությունները չի որոշել հրամանատարը (պետը), նրանցից պաշտոնով ավագը, իսկ հավասար պաշտոնների դեպքում՝ զինվորական կոչումով ավագը դառնում է պետ:

Հրաման (կարգադրություն), դրա արձակման և կատարման կարգը զինծառայողների նախաձեռնությունը

Հոդված 37. Հրամանը հրամանատարի (պետի) կարգադրություն է՝ ուղղված ենթականերին, որ պահանջում է որոշակի գործողություններ կատարել, այս կամ այն կանոնը պահպանել, սահմանում է ինչ-որ կարգ, դիրք:

Հրամանը կարող է տրվել գրավոր, բանավոր, կապի տեխնիկական միջոցներով՝ մեկ զինծառայողի, զինծառայողների խմբին կամ զորամասին (ստորաբաժանմանը):

Գրավոր հրամանը զինվորական կառավարման հիմնական կարգադրիչ, պաշտոնական փաստաթուղթ է (իրավական ակտ), որ միանձնյա ղեկավարման իրավունքով հրապարակում են զորամասերի հրամանատարները (հիմնարկների պետերը): Բանավոր հրամաններ տալիս են բոլոր հրամանատարները (պետերը):

Հոդված 38. Կարգադրությունը հրամանատարի (պետի) կողմից մասնավոր հարցերի վերաբերյալ առաջադրանքը ենթականերին հասցնելու ձև է: Կարգադրությունը տրվում է գրավոր կամ բանավոր: Գրավոր կարգադրությունը պաշտոնական պարտադրող փաստաթուղթ է, որ շտաբի պետը հրապարակում է զորամասի հրամանատարի անունից կամ կայագրի զինվորական պարետը՝ կայագրի պետի անունից:

Հրամանը (կարգադրությունը) պետք է համապատասխանի օրենքների և զինվորական կանոնադրությունների պահանջներին:

Հոդված 39. Հրամանատարը (պետը), նախքան հրաման տալը, պարտավոր է համակողմանիորեն գնահատել իրադրությունը և միջոցներ նախատեսել դրա կատարումն ապահովելու համար: Նա պատասխանատվություն է կրում տրված հրամանի և դրա հետևանքների համար, օրենսդրությանը հրամանի համապատասխանության համար, ինչպես նաև տրված հրամանում պաշտոնի չարաշահման կամ ծառայողական լիազորությունների գերազանցման դեպքում և հրամանի կատարման գործում միջոցներ չձեռնարկելու համար:

Հրամանը պետք է ձևակերպվի հստակ, թույլ չտա երկիմաստություն և չպետք է կասկածներ հարուցի ենթակայի մեջ:

Հոդված 40. Հրամանները տրվում են ենթակայության կարգով: Ծայրահեղ անհրաժեշտության դեպքում ավագ պետը կարող է հրաման տալ ենթականերին՝ շրջանցելով նրա անմիջական պետին: Նման դեպքում նա անմիջական պետին հաղորդում է այդ մասին կամ ենթակային հրամայում է, որ ինքը զեկուցի նրան:

Հոդված 41. Հրամանատարի (պետի) հրամանը պետք է կատարվի անվերապահորեն, ճշտորեն և նշված ժամկետում: Զինծառայողը, ստանալով հրամանը, պատասխանում է «Լսում եմ» և հետո կատարում այն:

Անհրաժեշտության դեպքում, տրված հրամանի ճիշտ ընկալումը ստուգելու նպատակով հրամանատարը (պետը) կարող է պահանջել նրա համառոտ կրկնությունը, իսկ զինծառայողը, ստանալով հրամանը, դիմել հրամանատարին (պետին) այն կրկնելու խնդրանքով:

Ստացված հրամանի կատարման մասին զինծառայողը պարտավոր է զեկուցել հրաման տված պետին և իր անմիջական պետին:

Զինծառայողին այնպիսի հրամաններ ու կարգադրություններ չեն կարող տրվել, որոնք առաջադրում են զինվորական ծառայության հետ առնչություն չունեցող խնդիրներ կամ օրենքի խախտման հակում ունեն:

Հոդված 42. Եթե հրաման կատարող զինծառայողը ծառայողական դիրքով կամ զինվորական կոչումով առավել բարձր ուրիշ պետից ստանում է նոր հրաման, որը խոչընդոտում է նախորդի կատարմանը, նա այդ մասին զեկուցում է երկրորդ հրաման տվողին և հրամանի կրկնության դեպքում կատարում վերջինը:

Նոր հրաման տվողն այդ մասին հաղորդում է առաջին հրամանը տվողին:

Հոդված 43. Զինծառայողն իր առջև դրված խնդրի հաջող կատարման նպատակով պիտի ցուցաբերի խելացի նախաձեռնություն: Դա առանձնապես անհրաժեշտ է, երբ տրված հրամանը չի համապատասխանում կտրուկ փոփոխված իրադրությանը, իսկ պայմաններն այնպիսին են, որ ժամանակին նոր հրաման ստանալն անհնար է:

Զինվորական ողջույն

Հոդված 44. Զինվորական ողջույնը զինծառայողների ընկերական համախմբվածության մարմնացումն է, նրանց փոխադարձ հարգանքի և ընդհանուր բարեկրթության վկայությունը:

Բոլոր զինծառայողները պարտավոր են հանդիպման կամ միմյանց կողքով անցնելիս ողջունել իրար՝ խստիվ պահպանելով Հայաստանի Հանրապետության զինված ուժերի շարային ծառայության կանոնադրությամբ սահմանված կանոնները:

Ենթակաները և զինվորական կոչմամբ կրտսերները առաջինն են ողջունում, իսկ հավասար դիրքում գտնվողներից՝ առավել քաղաքակիրթը:

Հոդված 45. Զինծառայողները, բացի դրանից, պարտավոր են ողջունել (հարգանք մատուցել)՝

- Մեծ եղեռնի զոհերի հուշահամալիրներին (հուշարձաններին).
  - անհայտ զինվորի գերեզմանին.
  - հայրենիքի ազատության և անկախության համար մարտերում զոհված զինվորների եղբայրական գերեզմաններին.
  - Հայաստանի Հանրապետության դրոշին՝ հանդիսությունների և պաշտոնական արարողությունների ժամանակ.
  - զորամասի մարտական դրոշին.
  - զինվորական ստորաբաժանումների կողմից ուղեկցվող հուղարկավորման թափոռներին:
- (45-րդ հոդվածը լրաց. 01.06.06 ՀՕ-127-Ն)

Հոդված 46. Զորամասերը և ստորաբաժանումները շարքում եղած ժամանակ, հրամանի համաձայն, ողջունում են՝

- Հայաստանի Հանրապետության Նախագահին, Ազգային ժողովի նախագահին, Վարչապետին և պետական կառավարման լիազորված մարմնի ղեկավարին (նախարարին).
- գեներալ-գնդապետներին և բոլոր ուղղակի պետերին, ինչպես նաև զորամասի (ստորաբաժանման) տեսչական ստուգման ղեկավարման համար նշանակված անձանց:

Շարքի մեջ, տեղում գտնվելիս, նշված անձանց ողջունելու համար ավագ հրամանատարը տալիս է «Զգա՛ստ: Հավասարությունը դեպի Աջ, (Զախ, Կենտրոն)» հրամանը, դիմավորում է նրանց, զեկույց տալիս: Օրինակ՝ «Պարոն գեներալ-մայոր, 110-րդ մոտոհրաձգային գունդը

ընդհանուր երեկոյան գնդային ստուգման համար շարված է: Գնդի հրամանատար՝ գնդապետ Հովհաննիսյան»:

Զորամասը մարտական դրոշով շարելիս (գորահանդեսի, շարային ստուգատեսի, զինվորական երդման ժամանակ և այլ դեպքերում) զեկույցի մեջ նշվում է զորամասի լրիվ անվանումը՝ թվարկելով նրան շնորհված բոլոր պատվավոր անվանումներն ու շքանշանները:

Շարքով շարժման պահին ողջունելիս՝ պետը միայն հրաման է տալիս:

Հոդված 47. Զորամասերն ու ստորաբաժանումները հրամանով ողջունում են (հարգանք են մատուցում) նաև՝

- Մեծ եղեռնի զոհերի հուշահամալիրներին (հուշարձաններին).
  - անհայտ զինվորի գերեզմանին.
  - հայրենիքի ազատության և անկախության համար մարտերում զոհված զինվորների եղբայրական գերեզմաններին.
  - Հայաստանի Հանրապետության դրոշին՝ հանդիսությունների և պաշտոնական արարողությունների ժամանակ.
  - զորամասի մարտական դրոշին.
  - զինվորական ստորաբաժանումների կողմից ուղեկցվող հուղարկավորման թափոռներին.
  - միմյանց հանդիպելիս:
- (47-րդ հոդվածը լրաց. 01.06.06 ՀՕ-127-Ն)

Հոդված 48. Հայաստանի Հանրապետության Նախագահին, Ազգային ժողովի նախագահին, Վարչապետին և պետական կառավարման լիազորված մարմնի ղեկավարին (նախարարին), շարքով տեղում կանգնած ժամանակ, զինվորական ողջույնն ուղեկցվում է նվագախմբերի կատարած քայլերգով և պետական օրհներգով:

Զորամասերի իրենց զորամասի հրամանատարին և ավելի բարձր ուղղակի պետերին, ինչպես նաև տեսչական ստուգման համար նշանակված անձանց ողջունելիս՝ նվագախումբը կատարում է միայն քայլերգը:

Հոդված 49. Շարքից դուրս գտնվելիս, ինչպես պարապմունքի պահին, այնպես էլ պարապմունքներից ազատ ժամերին, զորամասերի և ստորաբաժանումների զինծառայողները պետերին ողջունում են «Զգա՛ստ» կամ «Ոտքի՛: Զգա՛ստ» հրամաններով:

Շտաբներում և հիմնարկներում հրամանով ողջույն տրվում է միայն ուղղակի պետերին և տեսչական ստուգման ղեկավար նշանակված անձանց:

Շարքից դուրս պարապմունքների դեպքում, ինչպես նաև խորհրդակցությունների ժամանակ, ուր ներկա են միայն սպաներ, զինվորական ողջույնի համար տրվում է «Պարոնայք սպանե՛ր» հրամանը:

«Զգա՛ստ», «Ուտքի՛: Զգա՛ստ» կամ «Պարոնայք սպանե՛ր» հրամանը տալիս է ներկա գտնվող սպաներից (պետերից) ամենաավագը կամ եկած հրամանատարին (պետին) առաջինը տեսած զինծառայողը: Այս հրամանով բոլոր ներկա գտնվողները ոտքի են ելնում, դառնում են եկած հրամանատարի (պետի) կողմը և ընդունում շարային կեցվածք, իսկ սպաները, ենթասպաները, գլխարկ դրած դեպքում, դրանից բացի ձեռքը հպում են գլխարկին: Ներկա գտնվող հրամանատարներից (պետերից) ամենաավագը մոտենում է եկողին և զեկույց տալիս:

Եկած հրամանատարը (պետը), ընդունելով զեկույցը, տալիս է «Ազա՛տ» կամ «Պարոնայք սպանե՛ր» հրամանը, իսկ զեկույց տվողը կրկնում է այդ հրամանը, որից հետո բոլոր ներկաներն ընդունում են «ազատ» դիրքը կամ նստում են: Սպաները, ենթասպաները գլխարկ դրած դեպքում իջեցնում են ձեռքը և այնուհետև վարվում են եկած հրամանատարի (պետի) ցուցումով:

Հոդված 50. «Զգա՛ստ» կամ «Ուտքի՛: Զգա՛ստ» հրամանները և հրամանատարին (պետին).

զեկույցը տրվում է տվյալ օրը զորամաս կամ ստորաբաժանում կատարած նրա միայն առաջին այցելության դեպքում:

Ավագ հրամանատարի (պետի) ներկայությամբ կրտսերին զինվորական ողջույնի համար հրաման և զեկույց չի տրվում:

Լսարանային պարապմունքների ժամանակ «Զգա՛ստ», «Ուտքի՛: Զգա՛ստ» կամ «Պարոնայք սպանե՛ր» հրաման տրվում է յուրաքանչյուր պարապմունքի սկզբին և ավարտին:

«Զգա՛ստ», «Ուտքի՛: Զգա՛ստ», «Պարոնայք սպանե՛ր» հրամանը հրամանատարին (պետին) զեկուցելուց առաջ տրվում է այն ժամանակ, եթե այդ պահին ներկա են ուրիշ զինծառայողներ: Նրանց բացակայության ժամանակ հրամանատարին (պետին) միայն զեկույց է տրվում:

Հոդված 51. Պետական օրհներգի կատարման ժամանակ շարքում գտնվող զինծառայողները, շարային կեցվածք են ընդունում առանց հրամանի, իսկ ստորաբաժանումների հրամանատարները սկսած դասակից և ավելի բարձր, դրանից բացի ձեռքը հպում են գլխարկին:

Շարքից դուրս գտնվող զինծառայողները օրհներգի կատարման ժամանակ ընդունում են շարային կեցվածք, իսկ գլխարկ կրելու դեպքում՝ ձեռքը հպում դրան:

Հոդված 52. Զորամասերին կամ ստորաբաժանումներին զինվորական ողջույնի կատարման հրաման չի տրվում՝

- զորամասը կամ ստորաբաժանումը տազնապով վերկացի, երթի, ինչպես նաև տակտիկական պարապմունքների և զորավարժությունների ժամանակ.

- կառավարման կետերում, կապի հանգույցներում և մարտական հերթապահության վայրերում.

- կրակագծում և կրակային (ելման) դիրքերում՝ հրաձգության (հրթիռարձակման) ժամանակ.

- օդանավակայաններում թռիչքների ժամանակ.

- շինարարական, տնտեսական կամ ուսումնական բնույթի աշխատանքների ժամանակ, ինչպես նաև արհեստանոցներում, հավաքակայաններում, անգարներում, լաբորատորիաներում անցկացվող պարապմունքների ու աշխատանքների ժամանակ.

- մարզական մրցումների և խաղերի ժամանակ.

- սնվելու ժամանակ և «Ավարտ» ազդանշանից հետո մինչև «Ուտքի՛» ազդանշանը.

- հիվանդների համար նախատեսված շինություններում:

Թվարկված դեպքերում պետը կամ ավագը ժամանած հրամանատարին միայն զեկույց է տալիս: Օրինակ՝ «Պարոն մայր՛»: Երկրորդ մտոհրաձգային վաշտը կատարում է վարժական հրաձգության երկրորդ վարժությունը: Վաշտի հրամանատար՝ կապիտան Հովհաննիսյան»:

Հուղարկավորման թափորին մասնակցող ստորաբաժանումները զինվորական ողջույն չեն տալիս:

Հոդված 53. Զորամասում անցկացվող հանդիսավոր ժողովներում, կոնֆերանսներում, ինչպես նաև ներկայացումներում, համերգներում և կինոյում զինվորական ողջույնի համար հրաման չի տրվում և հրամանատարին (պետին) զեկույց չի տրվում:

Անձնակազմի ընդհանուր ժողովներում զինվորական ողջույնի համար տրվում է «Զգա՛ստ» կամ «Ուտքի՛: Զգա՛ստ» հրաման և հրամանատարին (պետին) զեկույց է տրվում:

Օրինակ՝ «Պարոն փոխգնդապե՛տ, գումարտակի անձնակազմը ընդհանուր ժողովի համար ներկայացավ: Գումարտակի շտաբի պետ՝ մայոր Հովհաննիսյան»:

Հոդված 54. Անհատ զինծառայողներին պետի կամ ավագի դիմելու դեպքում այդ զինծառայողները, բացառությամբ հիվանդների, շարային կեցվածք են ընդունում և նշում իրենց պաշտոնը, զինվորական կոչումը և ազգանունը: Ձեռքով բարևելիս՝ ավագն առաջինն է մեկնում ձեռքը: Եթե ավագը առանց ձեռնոցի է, կրտսերը ձեռքսեղմումից առաջ իր աջ ձեռքից հանում է ձեռնոցը: Առանց գլխարկի զինծառայողները ձեռքսեղմումն ուղեկցում են գլխի թեթև խոնարհումով:

Հոդված 55. Պետի կամ ավագի ողջույնին («Ողջույն ձեզ») շարքում կամ շարքից դուրս եղած բոլոր զինծառայողները պատասխանում են. «Ողջույն, պարոն կապիտան (գնդապետ)»: Եթե պետը կամ ավագը հրաժեշտ է տալիս («Ցտեսություն, պարոնա՛յք»), ապա զինծառայողները պատասխանում են «Ցտեսությո՛ւն», ավելացնելով «պարոն» և զինվորական կոչումը, առանց ծառայությունը կամ զորատեսակը նշելու:

Օրինակ՝ սերժանտներին, ենթասպաներին և սպաներին պատասխանելիս՝ «Ողջույն, պարո՛ն կրտսեր սերժանտ», «Ցտեսությո՛ւն, պարոն ավագ», «Ողջույն, պարո՛ն կապիտան», «Ցտեսությո՛ւն, պարոն լեյտենանտ» և այլն:

Հոդված 56. Եթե հրամանատարը (պետը) ծառայության կարգով շնորհավորում է զինծառայողին կամ շնորհակալություն հայտնում նրան, ապա զինծառայողը պատասխանում է հրամանատարին (պետին)՝ «Ծառայում եմ Հայաստանի Հանրապետությանը»:

Եթե հրամանատարը (պետը) շնորհավորում է զորամասին (ստորաբաժանմանը), ապա վերջինս պատասխանում է եռակի երկարաձիգ «Ուռա՛»-յով, իսկ եթե հրամանատարը (պետը) շնորհակալություն է հայտնում, ապա զորամասը (ստորաբաժանումը) պատասխանում է՝ «Ծառայում ենք Հայաստանի Հանրապետությանը»:

Հրամանատարներին (պետերին) և տեսչական ստուգման եկած անձանց ներկայանալու կարգը

Հոդված 57. Զորամաս եկած ավագ հրամանատարին (պետին) ներկայանում է միայն զորամասի հրամանատարը: Մյուս անձինք ներկայանում են միայն ավագ հրամանատարի (պետի) անմիջապես նրանց դիմելու դեպքում՝ նշելով իրենց պաշտոնը, զինվորական կոչումը և ազգանունը:

Հոդված 58. Զինծառայողները իրենց անմիջական պետերին են ներկայանում՝

- զինվորական պաշտոնի նշանակվելիս,
- զինվորական պաշտոնը հանձնելիս,
- զինվորական կոչումը շնորհելիս,
- շքանշանով կամ մեդալով պարգևատրվելիս,
- գործուղման, բուժման կամ արձակուրդ մեկնելիս և վերադառնալիս:

Անմիջական պետին ներկայանալով՝ զինծառայողը նշում է իր զինվորական պաշտոնը, զինվորական կոչումը, ազգանունը և ներկայանալու պատճառը:

Օրինակ՝ «Պարո՛ն մայոր: Առաջին մոտոհրաձգային վաշտի հրամանատար՝ կապիտան Հովհաննիսյան: Ներկայանում եմ ինձ կապիտանի զինվորական կոչում շնորհելու առիթով»:

Հոդված 59. Գնդում նոր նշանակում ստացած սպաներն ու ենթասպաները ներկայանում են գնդի հրամանատարին, ապա նրա տեղակալներին, իսկ վաշտում նշանակում ստանալիս՝ գումարտակի հրամանատարին, վաշտի հրամանատարին և նրանց տեղակալներին:

Գնդի հրամանատարը նոր ժամանած սպաներին գնդի սպայական կազմին է ներկայացնում սպաների մոտակա խորհրդակցությունում կամ գնդի շարքում:

Հոդված 60. Զորամասի տեսչական ստուգման ժամանակ նրա հրամանատարը ներկայանում է տեսչական ստուգման ղեկավար նշանակված անձին, եթե նա զինվորական կոչումով հավասար է զորամասի հրամանատարին կամ բարձր է նրանից: Իսկ եթե ստուգողը զինվորական կոչումով ցածր է զորամասի հրամանատարից, ապա նա ներկայանում է զորամասի հրամանատարին:

Նախքան տեսչական ստուգումը գործառնախի հրամանատարը տեսչին (ստուգողին) ներկայացնում է ստուգման ենթակա ստորաբաժանումների հրամանատարներին:

Հոդված 61. Ստուգողի (տեսչի)՝ ստորաբաժանումներ այցելելու դեպքում այդ ստորաբաժանումների հրամանատարները դիմավորում են նրան և զեկույց տալիս:

Եթե տեսուչը (ստուգողը) ստորաբաժանում է ժամանում գործառնախի հրամանատարի հետ, ապա ստորաբաժանման հրամանատարը տեսչին (ստուգողին) զեկույց է տալիս այն դեպքում, եթե նա կոչումով հավասար է գործառնախի հրամանատարին կամ բարձր է նրանից:

Եթե տեսչական ստուգման ժամանակ ժամանում է ավագ հրամանատար (պետ), ապա նրան զեկույց է տալիս գործառնախի (ստորաբաժանման) հրամանատարը, իսկ ստուգողը (տեսուչը) ներկայանում է:

Հոդված 62. Հայաստանի Հանրապետության Նախագահի, ՀՀ Ազգային ժողովի նախագահի, ՀՀ վարչապետի, Հայաստանի Հանրապետության պետական կառավարման լիազորված մարմնի ղեկավարի (նախարարի) ու նրա տեղակալների գործառնա ժամանման դեպքում գործառնախի հրամանատարը դիմավորում, զեկույց է տալիս և ուղեկցում է այդ անձանց, իսկ հրավերով ժամանած Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներին, Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս մարտական գործողությունների մասնակիցներին, զինված ուժերի վետերաններին, զիտության, մշակույթի և արվեստի վաստակավոր գործիչներին, Հայաստանի Հանրապետության հասարակական կազմակերպությունների, արտասահմանյան պետությունների ներկայացուցիչների և այլ պատվավոր անձանց գործառնախի հրամանատարը դիմավորում է և ներկայանում առանց զեկույց տալու:

Ձրամաս ժամանած պատվավոր այցելուներին որպես հիշատակ համապատասխան գրառումներ կատարելու համար տրվում է պատվավոր այցելուների գիրքը:

(62-րդ հոդվածը փոփ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 63. Ավագ հրամանատարների (պետերի) առանձին ծառայողական հանձնարարություններ կատարելու համար զինծառայողների՝ գործառնա (ստորաբաժանում) ժամանելու դեպքում

գործառնախի (ստորաբաժանման) հրամանատարը ներկայանում է միայն կոչումով իրենից ավագին: Մնացած դեպքում ժամանողներն իրենք են ներկայանում գործառնախի (ստորաբաժանման) հրամանատարին և զեկուցում իրենց գալու նպատակի մասին:

Հոդված 64. Տեսուչների (ստուգողների) կամ ավագ հրամանատարների ծառայողական հանձնարարությունները կատարող զինծառայողների բոլոր ցուցումները հաղորդվում են գործառնախի հրամանատարի միջոցով: Նշված անձինք պարտավոր են գործառնախի (ստորաբաժանման) հրամանատարին հաղորդել տեսչական ստուգման կամ իրենց վրա դրված ծառայողական հանձնարարությունների կատարման արդյունքների մասին:

Ձրամասի (ստորաբաժանման) զինծառայողներին հարցում կատարելիս ստուգողները ղեկավարվում են 8-րդ հավելվածի պահանջներով:

Ձինծառայողների զինվորական բարեկրթության մասին

Հոդված 65. Ձինծառայողները պարտավոր են մշտապես բարձր բարեկրթության, զսվածության, համեստության օրինակ ծառայել, սրբորեն պահպանել զինվորական պատիվը, պաշտպանել սեփական արժանապատվությունը և հարգել այլոց արժանապատվությունը: Նրանք պետք է հիշեն, որ իրենց վարքով դատում են ոչ միայն իրենց մասին, այլև զինված ուժերի պատվի մասին ընդհանրապես:

Ձինծառայողների փոխհարաբերությունները կառուցվում են փոխադարձ հարգանքի հիման վրա: Ծառայության հարցերով նրանք պարտավոր են միմյանց դիմել «Դուք»-ով: Անձնապես դիմելու դեպքում զինվորական կոչումներն անվանվում են առանց գորատեսակի կամ ծառայության նշման:

Պետերը և ավագները (մեծերը) ծառայության բերումով ենթականերին կամ կրտսերներին դիմելու դեպքում նրանց կոչում են զինվորական կոչումով և ազգանունով կամ միայն կոչումով՝ ավելացնելով «պարոն» բառը:

Օրինակ՝ «Շարքային Հովհաննիսյան», «Պարոն շարքային», «Մերժանտ Աբրահամյան», «Պարոն սերժանտ» և այլն:

Ռազմական ուսումնական հաստատությունների սովորողներին, որոնք չունեն սերժանտական կամ ավագային կազմի և ենթասպաների զինվորական կոչում, ինչպես նաև ուսումնական գործառնախի

(ստորաբաժանումների) սովորողներին դիմելու դեպքում անվանում են «Ուսանող Հովհաննիսյան», «Պարո՛ն ուսանող», «Կուրսա՛նտ Հովհաննիսյան», «Պարո՛ն կուրսանտ»:

Ենթականերն ու կրտսերներն իրենց պետերին ու ավագներին դիմում են կոչումով կամ ազգանունով՝ կոչումից (ազգանունից) առաջ ավելացնելով «պարոն» բառը:

Օրինակ՝ «Պարո՛ն կապիտան», «Պարո՛ն Հովհաննիսյան»:

Ծառայությունից դուրս եղած ժամանակ և շարքից դուրս, սպաները միմյանց կարող են դիմել ոչ միայն զինվորական կոչումով, այլև ազգանունով: Առօրյա կյանքում սպաներին թույլատրվում է օգտագործել «սպայի խոսք» հաստատական արտահայտությունը և միմյանց հրաժեշտ տալիս «Ցտեսություն»-ի փոխարեն թույլատրելի է ասել՝ «Պատիվ ունեմ»:

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի քաղաքացիական անձանց դիմելիս զինծառայողները նրանց անվանում են ազգանունով՝ դրանից առաջ ավելացնելով «պարոն» բառը:

Զինվորական կոչումների աղավաղումը, անպարկեշտ արտահայտությունների, մականունների և ծաղրանունների գործածությունը, կոպտությունն ու արհամարհական վերաբերմունքն անհամատեղելի են զինվորական պատվի հասկացողության և զինծառայողների արժանապատվության հետ:

Կին զինծառայողներին դիմելու դեպքում նրանց կոչում են զինվորական կոչումով և ազգանունով կամ միայն կոչումով կամ ազգանունով՝ ավելացնելով «տիկին» կամ «հարգելի» բառերը:

Օրինակ՝ «Ենթասպա՛ Մինասյան», «լեյտենա՛նտ Կարապետյան» կամ «Տիկի՛ն Մինասյան», «Տիկի՛ն Կարապետյան» կամ «Տիկի՛ն ենթասպա», «Տիկի՛ն կապիտան» և այլն:

(65-րդ հոդվածը լրաց., խմբ., փոփ. 01.06.06 ՀՕ-127-Ն, փոփ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 66. Շարքից դուրս հրաման տալիս կամ ստանալիս՝ զինծառայողները պարտավոր են ընդունել շարային կեցվածք, իսկ գլխարկ կրելիս՝ ձեռքը հպել նրան և թողնել:

Զեկուցելիս կամ զեկույց ընդունելիս զինծառայողը ձեռքը իջեցնում է զեկույցն ավարտելուց հետո: Եթե զեկույցից առաջ տրվել է «Ազա՛ստ» հրաման, ապա զեկուցողը պետի «Ազա՛տ» հրամանի դեպքում կրկնում է այն և ձեռքն իջեցնում գլխարկից:

Հոդված 67. Հրամանատարի (պետի) կամ ավագի (մեծի) ներկայությամբ այլ զինծառայողի դիմելու դեպքում պետք է ստանալ պետի թույլտվությունը:

Օրինակ՝ «Պարո՛ն գնդապետ, թույլ տվե՞ք դիմել կապիտան Հովհաննիսյանին»:

Հոդված 68. Հասարակական վայրերում, ինչպես նաև տրամվայում, տրոլեյբուսում, ավտոբուսում, մետրոյի վագոնում և մերձքաղաքային գնացքներում ազատ տեղերի բացակայության դեպքերում զինծառայողը պարտավոր է պետին (ավագին) զիջել իր տեղը:

Եթե պետին (ավագին) հանդիպելիս՝ հնարավոր չէ ազատ անցնել նեղ ճանապարհով, ապա ենթական (կրտսերը) պարտավոր է ճանապարհ տալ և ողջունելով թույլ տալ նրան անցնելու: Պետից (ավագից) առաջ անցնելու անհրաժեշտության դեպքում ստորադրյալը (ենթական) պետք է թույլտվություն խնդրի դրա համար:

Զինծառայողները պարտավոր են հարգանք տածել քաղաքացիական բնակչության նկատմամբ, հատուկ ուշադրություն ցուցաբերել ծերերի, կանանց և երեխաների նկատմամբ, նպաստել քաղաքացիների պատվի և արժանապատվության պաշտպանությանը, ինչպես նաև նրանց օգնություն ցույց տալ դժբախտ պատահարների դեպքում, հրդեհների և տարերային աղետների ժամանակ:

(68-րդ հոդվածը լրաց. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 69. Զինծառայողներին արգելվում է ձեռքերը պահել հագուստի գրպաններում, պետի (ավագի) ներկայությամբ նստել կամ ծխել առանց նրա թույլտվության, ինչպես նաև ծխել փողոցում քայլելիս կամ դրա համար չնախատեսված տեղերում:

Հոդված 70. Սթափ կենսաձևը պետք է լինի բոլոր զինծառայողների վարվեցողության ամենօրյա չափանիշ: Ոչ սթափ վիճակում ծառայության և հասարակական վայրերում հայտնվելը զինծառայողի պատիվն ու արժանապատվությունը վարկաբեկող կարգապահական կոպիտ զանցանք է:

Հոդված 71. Հայաստանի Հանրապետության զինված ուժերի զինծառայողների համար սահմանվում են համազգեստի անհրաժեշտ տեսակներ: Զինվորական համազգեստը և տարբերանշանները հաստատում է Հայաստանի Հանրապետության Նախագահը:



Զինվորական համազգեստ կրելու իրավունք ունեն բոլոր զինծառայողները, ինչպես նաև պահեստագործում կամ պաշտոնաթողության մեջ գտնվող քաղաքացիները, որոնք զինվորական ծառայությունից գորացրվել են զինվորական համազգեստ կրելու իրավունքով:

Զինվորական համազգեստ կրում են Հայաստանի Հանրապետության պետական կառավարման լիազորված մարմնի ղեկավարի (նախարարի) կողմից հաստատված կանոնների խիստ համապատասխանությամբ:

Ձորամասի տարածքից դուրս հանգստի, արձակման կամ արձակուրդի մեջ եղած ժամանակ զինծառայողներին թույլատրվում է զինվորական համազգեստ չկրել:

Հոդված 72. Զինվորական բարեկրթության, վարքի և զինվորական ողջույնի կանոնները պարտադիր են նաև պաշտոնաթող և պահեստագործում գտնվող քաղաքացիների համար՝ նրանց զինվորական համազգեստ կրելու դեպքում նրանք պարտավոր են խստորեն պահպանել զինվորական համազգեստ կրելու սահմանված կանոնները:

### **Գ Լ ՈՒ Խ 3**

#### **ՀՐԱՄԱՆԱՏԱՐՆԵՐԻ (ՊԵՏԵՐԻ) ԵՎ ԳՆԴԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հրամանատարների (պետերի) ընդհանուր պարտականությունները

Հոդված 73. Հրամանատարը միանձնյա ղեկավար է: Խաղաղ և պատերազմի ժամանակ պատասխանատու է:

Իրեն վստահված զորամասի (ստորաբաժանման) մշտական մարտական ու զորահավաքային պատրաստականության համար, զորամասի (ստորաբաժանման) մարտական խնդիրների հաջող կատարման համար, անձնակազմի մարտական պատրաստության, զինվորական կարգապահության, բարոյահոգեբանական վիճակի և զինվորական ծառայության անվտանգության համար, ներքին կարգուկանոնի համար, սպառազինության, ռազմական տեխնիկայի և նյութական այլ միջոցների վիճակի ու պահպանության համար,

տեխնիկական, նյութական, ընդգծված բժշկական, ֆինանսական, սոցիալ-իրավական ու կենցաղային ապահովման համար:

Հրամանատարը պարտավոր է կայուն և հետևողական կերպով կենսագործել պետական քաղաքականությունը պաշտպանության բնագավառում, մշտապես կատարելագործել անձնական մասնագիտական պատրաստությունը և զորամասի (ստորաբաժանման) ղեկավարման մեթոդները, հմտորեն աշխատանք տանել կադրերի հետ, ղեկավարել գիտական, գյուտարարական և նորարարական աշխատանքը:

Հոդված 74. Հրամանատարը (պետը) պարտավոր է՝

- մշտապես պահպանել իրեն վստահված զորամասի (ստորաբաժանման) մարտական և զորահավաքային պատրաստականությունը.

- միջոցառումներ պլանավորել մարտական և զորահավաքային մշտական պատրաստության ուղղությամբ և հասնել դրանց կատարմանը, պլաններում ժամանակին մտցնել անհրաժեշտ փոփոխություններ ու ճշտումներ.

- հասնել սպառազինությամբ, ռազմական տեխնիկայով և նյութական այլ միջոցներով լրիվ ապահովության, կազմակերպել դրանց ճիշտ շահագործումը.

- բարձրացնել դաշտային պատրաստությունը, պարապմունքներ, վարժանքներ անցկացնել ստորաբաժանումները տարբեր աստիճանների մարտական պատրաստականության հասցնելու ուղղությամբ, հասնել անձնակազմի իր պարտականությունների իմացության և կատարման.

- բազմակողմանիորեն տեղյակ լինել իրեն վստահված զորամասի (ստորաբաժանման) իրական վիճակին, մշտապես ճշգրիտ տեղեկություններ ունենալ նրա ցուցակային և առկա կազմի մասին, ինչպես նաև սպառազինության, ռազմական տեխնիկայի և նյութական այլ միջոցների առկայության մասին.

- միջոցներ ձեռնարկել պետական և ծառայողական գաղտնիքի պահպանությունն ապահովելու համար:

(74-րդ հոդվածը փոփ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 75. Հրամանատարը (պետը) պարտավոր է անմիջականորեն ղեկավարել ենթակաների մարտական պատրաստությունը՝

- պլանավորել և ժամանակին միջոցներ մշակել նրա կազմակերպման ուղղությամբ.

- մշտապես կատարելագործել ենթակա հրամանատարների մասնագիտական գիտելիքները, մեթոդական վարպետությունը և մանկավարժական կուլտուրան.

- անձամբ անցկացնել զորավարժություններ և պարապմունքներ, կազմակերպել և հսկել բարձրակարգ մասնագետների պատրաստումը.

- հսկողություն իրականացնել և ենթականերին անհրաժեշտ օգնություն ցույց տալ մարտական պատրաստության ընթացքում, մարտական ուսուցման մեջ մտցնել մրցության ոգի, ամեն նորը, առաջավորը, որ նպաստում է ենթակաների ուսուցման արդյունավետության բարձրացմանը, միջոցներ ձեռնարկել մարտական իրականությանն առավելագույնս մոտ ուսուցման պայմաններ ստեղծելու համար, կատարելագործել ուսումնանյութական բազան.

- պարբերաբար ամփոփել մարտական պատրաստության արդյունքները:

Հոդված 76. Հրամանատարը (պետը) պարտավոր է պետության մեջ և զինված ուժերում լուծվող խնդիրների հիման վրա մշտապես դաստիարակել ենթականերին՝

- նրանց մեջ ձևավորել և պահպանել հայրենիքի պաշտպանության համար բարոյական ու հոգեբանական պատրաստականություն, Հայաստանի Հանրապետության զինված ուժերին պատկանելու հպարտություն և պատասխանատվություն, զինծառայողների մեջ զարգացնել զինվորական պարտքի կատարման համար անհրաժեշտ հատկանիշներ, զինվորական երդման սրբության և անխախտելիության գիտակցություն, խիզախություն, զսպվածություն, հնարամտություն, զգոնություն, զինվորական ընկերականություն, փոխօգնության զգացողություն, այդ նպատակով օգտագործել դաստիարակվածության անձնական օրինակը, ծառայության նկատմամբ հավասար վերաբերմունքը, ինչպես նաև զինվորական արարողությունները (հավելվածներ 1, 3, 5-9).

- կատարելագործել ազգամիջյան շփման կուլտուրան, հոգ տանել զինվորական կոլեկտիվի համախմբվածության և տարբեր ազգությունների զինվորների բարեկամության ամրապնդման համար, հաշվի առնել և հարգել նրանց ազգային զգացմունքները, ավանդույթները և սովորույթները.

- նրբազգացություն և ուշադրություն ցուցաբերել ենթակաների նկատմամբ, փոխհարաբերությունների մեջ թույլ չտալ անտակտություն և կոպտություն, բարձր պահանջկոտությունն ու սկզբունքայնությունը համատեղել նրանց անձնական արժանապատվության հարգման հետ, միջոցներ ձեռնարկել զինծառայողների, զինծառայությունից զորացրված քաղաքացիների և նրանց ընտանիքի անդամների կենցաղային հարցերի լուծման, սոցիալական ու իրավական պաշտպանվածությունն ապահովելու համար, պայմաններ ստեղծել տեխնիկական և այլ բնույթի ստեղծագործության, կուլտուրայի բարձրացման և հանգստի զարգացման, առողջության ամրապնդման և ֆիզիկական աճի համար, անհրաժեշտության դեպքում նրանց համար միջնորդել ավագ հրամանատարներին:

Հոդված 77. Հրամանատարը (պետը) պարտավոր է մշտապես պահպանել զինվորական ամուր կարգապահություն և անձնակազմի բարոյահոգեբանական բարձր մակարդակ՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության զինված ուժերի Կարգապահական կանոնագրքի դրույթներով:

Հետաքննության անցկացման ժամանակ, երբ հետաքննող մարմինը զորամասի հրամանատարն է, նա ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության քրեական և քրեադատավարական օրենսդրությամբ:

(77-րդ հոդվածը փոփ. 19.03.13 ՀՕ-20-Ն)

Հոդված 78. Հրամանատարը (պետը) պարտավոր է միջոցներ ձեռնարկել անձնակազմին զոհվելուց, խեղվելուց զերծ պահելու համար, սահմանել անվտանգության ապահովման անհրաժեշտ պահանջներ, մարտական հերթապահության (մարտական ծառայության) ժամանակ սպառազինության և ռազմական տեխնիկայի հետ աշխատելիս, ռազմերթերի, զորավարժությունների անցկացման, մարտական հրաձգության (հրթիռարձակման), թռիչքների, հատուկ պարապմունքների և աշխատանքների անցկացման, պահակային և ներքին (հերթապահ) ծառայությունների ժամանակ անվտանգության այդ պահանջները վաղօրոք հասցնել ենթականերին և պահանջել դրանց խստագույն կատարումը:

Պարապմունքները, աշխատանքները և ծառայության այլ միջոցառումները սկսելուց առաջ հրամանատարը պարտավոր է անձամբ համոզվել, որ դրա համար ստեղծված և ապահովված են անվտանգ պայմաններ, ստորադրյալները յուրացրել են

անվտանգության պահանջները և տիրապետում են դրանց իրականացման անհրաժեշտ գործնական հմտություններին:

Անձնակազմի գոհվելը և խեղվելը կանխելու ուղղությամբ հրամանատարի (պետի) ձեռնարկած միջոցները չպետք է հանգեցնեն մարտական առաջադրանքի կատարման ձախողման:

Հոդված 79. Հրամանատարը (պետը) պարտավոր է իրեն ենթակա զորամասում (ստորաբաժանումում) ապահովել ներքին կայուն կարգուկանոն՝

- շտաբի և ենթակա հրամանատարների (պետերի) գործունեությունն ուղղել բոլոր զինծառայողների զինվորական կանոնադրությունների պահանջների ուսումնասիրման և կատարման կազմակերպմանը.

- կազմակերպել զինվորական ավանում՝ ստորաբաժանումների և շինություններում՝ զինծառայողների ճիշտ տեղաբաշխումը.

- նախատեսել ժամանակի նպատակահարմար բաշխում զորամասի ամենօրյա գործունեության ընթացքում.

- անձնակազմին բազմակողմանիորեն նախապատրաստել օրվա վերակարգի ծառայության կատարման, հսկողություն կազմակերպել ներքին ծառայության կատարման նկատմամբ, անձամբ մասնակցել պահակակետերի ստուգման, ինչպես նաև հանձնարարականներ մշակել օրվա վերակարգի ծառայության բարելավման համար.

- սահմանել զինծառայողներին այցելության, զորամասից նրանց արձակման կանոններ, անցագրային կարգ և պահանջել դրանց կատարումը.

- կազմակերպել և պահպանել ներքին կարգուկանոնը հավաքակայանում, հրաձգարանում (պոլիգոնում) և այլ վայրերում, ուր ժամանակավորապես գտնվում են ստորաբաժանումները:

Հոդված 80. Հրամանատարը (պետը) պարտավոր է սարքին վիճակում պահել սպառազինությունը, ռազմական տեխնիկական և նյութական այլ միջոցները, կազմակերպել տեխնիկական, նյութական, բժշկական, սոցիալ-իրավական, ֆինանսական և կենցաղային ապահովություն.

- կազմակերպել զորամաս (ստորաբաժանում) մուտք գործած սպառազինության և ռազմական տեխնիկայի ընդունումը և շարք մտցնելը, անձամբ ստուգել անձնակազմի պատրաստվածությունը դրանց ընդունմանը և շահագործմանը.

- պլանավորել սպառազինության և ռազմական տեխնիկայի շահագործումը.

- կազմակերպել և իրականացնել վերահսկողություն սպառազինության և ռազմական տեխնիկայի տեխնիկական վիճակի ու շահագործման նկատմամբ, միջոցառումներ անցկացնել վթարների և պատահարների կանխման ուղղությամբ.

- կազմակերպել սպառազինության և ռազմական տեխնիկայի հաշվառումը և պահպանությունը, ժամանակին պահանջել և կազմակերպել նյութական միջոցների ստացումը, պահպանությունը և հաշվառումը, դրանց ստացումը և ենթականերին հանձնումը, կանխել ռազմական ունեցվածքի կորուստները, պակասորդը, փչացումն ու հափշտակումը, մեղավորներին ենթարկել պատասխանատվության.

- ապահովել ամբողջ դրամական և բավարարման մյուս տեսակների հատկացումը, անձնակազմին հասնելը, խնայողաբար և նպատակային ծախսել նյութական ու դրամական միջոցները, պահպանել հաստիքային և ֆինանսական կարգապահությունը.

- միջոցներ ձեռնարկել զինծառայողների առողջության պահպանման և ամրապնդման, անձնակազմի բժշկական ապահովման կատարելագործման ուղղությամբ, հոգեկան խանգարում ունեցող զինծառայողներին ուղարկել հոգեբուժական զննման, իսկ անհրաժեշտության դեպքում, բժշկի եզրակացությամբ՝ բուժման.

- մշտապես հոգ տանել ենթակաների առևտրական-կենցաղային սպասարկման բարելավման մասին, այդ ընթացքում պահպանելով սոցիալական արդարության և հրապարակայնության սկզբունքները.

- կազմակերպել զորային տնտեսություն և ղեկավարել այն անձամբ, շտաբի միջոցով, իր տեղակալների, զորատեսակների և ծառայությունների պետերի միջոցով.

- միջոցներ ձեռք առնել զորամասի (ստորաբաժանման) գործունեության շրջանում շրջակա միջավայրի պահպանության, ամրագրված հողահատվածների նպատակային և արդյունավետ օգտագործման համար:

(80-րդ հոդվածը փոփ. 14.04.11 ՇՕ-124-Ն)

Հոդված 81. Հրամանատարը (պետը) պարտավոր է կատարելագործել անձնական մասնագիտական պատրաստությունը և զորամասի (ստորաբաժանման) ղեկավարման մեթոդները՝

- բարձրացնել իր ռազմական, մանկավարժական և իրավական գիտելիքները, գիտենալ սպառազինությունը, ռազմական տեխնիկան,

դրանց մարտական գործադրման (շահագործման), նորոգման և էվակուացման կարգը.

- հիմնավորապես գիտենալ իր ծառայությանն առնչվող օրենքները, զինվորական կանոնադրությունների դրույթները, խստորեն գործել դրանց համաձայն և ենթականերից պահանջել դրանց կատարումը.

- իր և ենթակաների մեջ մշակել գործնականություն, առաջադրված խնդիրների լուծում գիտական մոտեցումով, քննադատական վերաբերմունք սեփական աշխատանքների արդյունքների նկատմամբ, աշխատանքի ընթացքում հաշվի առնել ենթակաների կարծիքը.

- ենթակաների միջև հմտորեն բաշխել աշխատանքն ու պարտականությունները, իրականացնել հրամանների կատարման գործնական հսկողություն, մշակել նպատակալացություն, անձնական պատասխանատվություն, կանխագագցողություն, անխզելի կապ պահպանել անձնակազմի հետ.

- իրեն տրված իրավունքների սահմաններում գործել ինքնուրույնաբար, պետական իշխանության և կառավարման մարմինների, հասարակական միավորումների, ձեռնարկությունների կոլեկտիվների, պատերազմի և զինված ուժերի վետերանների հետ սերտ կապով՝ պահպանելով ու բազմապատկելով զորամասի (ստորաբաժանման) ավանդույթները: Այդ նպատակով անց են կացվում ժողովներ, զինվորական արարողություններ, մարզական տոներ և այլ միջոցառումներ՝ հրավիրելով աշխատավորությանը, հասարակության ներկայացուցիչներին և զինծառայողների ընտանիքների անդամներին.

- ամեն կերպ ամրապնդել միանձնյա ղեկավարությունը, հենվել սպայական ժողովի, զորամասի (ստորաբաժանման) հասարակական կազմակերպությունների վրա, նրանց հետ միասին անձնակազմի ջանքերն ուղղել առաջադրված խնդիրների ակտիվ ու ստեղծագործորեն լուծելուն.

- անձնակազմի և ենթակա ստորաբաժանումների միջև կազմակերպել մրցակցություն, ղեկավարել այն զորամասի (ստորաբաժանման) լուծելիք խնդիրների հաջող կատարման համար զինծառայողների մոբիլիզացման նպատակով.

- ենթակաների հետ հաճախակի ամփոփել մարտական պատրաստության արդյունքները, զինվորական կարգապահության վիճակը, ներքին կարգուկանոնի պահպանումը և միջոցներ նշել դրանք բարելավելու ուղղությամբ: Կյանքի ու կենցաղի այդ և այլ հարցեր պարբերաբար քննարկել զինծառայողների ընդհանուր ժողովներում, դրանցում մշակված առաջարկությունները հաշվի առնել զորամասում

(ստորաբաժանումում) համապատասխան խնդիրների լուծման դեպքում:

Հոդված 82. Հրամանատարը (պետը) պարտավոր է հմտորեն աշխատել կադրերի հետ՝

- բազմակողմանիորեն ուսումնասիրել անձնակազմը անձնական շփման միջոցով, իմանալ ենթակաների գործնական ու բարոյահոգեբանական հատկանիշները, ամեն օր զբաղվել նրանց դաստիարակությամբ.

- իրականացնել սպաների, ենթասպաների ընտրությունը, տեղաբաշխումը, ատեստավորումը՝ այդ գործում ներգրավելով իր տեղակալներին, զորատեսակների և ծառայությունների պետերին, հաշվի առնելով սպայական ժողովի և զորամասի (ստորաբաժանման) մյուս հասարակական կազմակերպությունների կարծիքը և մշտական գործող ատեստավորման հանձնաժողովի եզրակացությունները.

- ղեկավարվել պայմանագրով զինվորական ծառայության ընդունվելու և զինվորական ուսումնական հաստատություններ ընդունվելու թեկնածուների ընտրությունը.

- ապահովել զինծառայողների նախատեսվող տեղաշարժերի հրապարակայնությունը, ստեղծել կադրային ռեզերվ և պայմաններ ղեկավարման ժառանգորդության համար փորձառու և երիտասարդ մասնագետ կադրերի համատեղության ճանապարհով.

- անձամբ զրույցներ անցկացնել ենթակաների հետ.

- ենթականերին խրախուսել քաջագործությունների և ցուցաբերած խելացի նախաձեռնության, ջանասիրության ու ծառայության մեջ աչքի ընկնելու համար, խստորեն հանդիմանել անփութություններին:

Բացի դրանից, զորամասի հրամանատարը պարտավոր է ոչ պակաս, քան ամսական երկու անգամ օրվա կարգացուցակով սահմանված ժամկետներում անձնական հարցերով ընդունել զինծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին, իսկ ստորաբաժանման հրամանատարը՝ իր ենթականերին մարտական հերթապահությունից, օրվա վերակարգի պարտականությունների կատարումից և պարապմունքներից ազատ ժամերին:

(82-րդ հոդվածը փոփ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 83. Հրամանատարը (պետը) պարտավոր է ղեկավարել գիտական, գյուտարարական և նորարարական աշխատանքները՝

- որոշել խնդիրները, կազմակերպել և հսկել գիտական, գյուտարարական և նորարարական աշխատանքների պլանների կատարումը նյութատեխնիկական առումով.

- զինձառայողների ստեղծագործությունը ուղղել գորամասի (ստորաբաժանման) առջև դրված խնդիրների կատարման ժամանակ ծագող պրոբլեմների լուծմանը.

- անձամբ մասնակցել գիտական, գյուտարարական աշխատանքներին, ուսումնասիրել, ընդհանրացնել և տարածել առաջավոր փորձը, կազմակերպել կոնֆերանսների, խորհրդակցությունների, ստուգատեսների և ցուցահանդեսների անցկացումը և մասնակցել դրանց աշխատանքներին.

- խրախուսել ստեղծագործական լավագույն արդյունքների հասած զինձառայողներին:

Հոդված 84. Հրամանատարը (պետը) քաղաքացիական անձնակազմի աշխատանքային գործունեության հետ կապված հարցեր լուծելիս պարտավոր է խստորեն ղեկավարվել գործող օրենսդրությամբ, պետական կառավարման լիազորված մարմնի ղեկավարի (նախարարի) հրամաններով ու դիրեկտիվներով:

Նա պատասխանատու է քաղաքացիական անձնակազմի աշխատանքի ճիշտ կազմակերպման, աշխատանքի արտադրողականության աճի համար պայմանների ստեղծման, աշխատանքային և արտադրական կարգապահության ապահովման, աշխատանքի պաշտպանության կանոնների պահպանման, աշխատանքի ու կենցաղի պայմանների բարելավման համար:

Հոդված 85. Ժամանակավոր բացակայության դեպքում հրամանատարը (պետը) իր պարտականությունների կատարման համար թողնում է տեղակալին: Հաստիքային տեղակալի բացակայության դեպքում և եթե հրամանատարը չի նշել տեղակալի, հրամանատարությունն իր վրա է վերցնում պաշտոնով ավագ, իսկ հավասար պաշտոնների դեպքում՝ կոչումով բարձր անձը: Հրամանատարությունը վերցնողն այդ մասին զեկուցում է ավագ հրամանատարին (պետին):

Ձորամասի նոր նշանակված հրամանատարը հրամանատարությունն ստանձնում է ավագ հրամանատարի (պետի) կարգադրության կամ հրամանի հիման վրա: Հրամանատարությունը ստանձնելու մասին գորամասի հրամանատարն այդ մասին

հայտարարում է հրամանում և զեկուցում ավագ հրամանատարին (պետին):

Ձորամասի (ստորաբաժանման) նոր նշանակված հրամանատարը գորամասի (ստորաբաժանման) անձնակազմին ներկայացնում է ավագ հրամանատարը (պետը):

Հոդված 86. Ձորամասի, ստորաբաժանումների նոր նշանակված հրամանատարները՝ սկսած վաշտի հրամանատարից և բարձր, պաշտոնը ստանձնելիս անցկացնում են գորամասի, ստորաբաժանման զինձառայողների հարցում՝ նրանց դիմում-բողոքները պարզելու և հետազայում լուծելու նպատակով (հավելված 8):

Հոդված 87. Գնդի և առանձին գումարտակի հրամանատարների գործերի և պաշտոնների հանձնման-ընդունման ժամկետ է նշանակվում 10 օրից ոչ ավելի, գնդի հրամանատարի՝ սպառազինության և թիկունքի գծով տեղակալներինը՝ ոչ ավելի 20 օրից, գումարտակի և վաշտի հրամանատարներին՝ ոչ ավելի 5 օրից, ձառայությունների պետերինը՝ ոչ ավելի 15 օրից: Այդ պաշտոնատար անձանց գործերի հանձնման և ընդունման ժամկետները որոշում է ավագ հրամանատարը (պետը):

Գործերի և պաշտոնի հանձնման (ընդունման) ավարտ համարվում է այն պահը, երբ ավագ հրամանատարը (պետը) հաստատում է համապատասխան ակտը:

(87-րդ հոդվածը փոփ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 88. Ձորամասի հրամանատարը գործերի և պաշտոնի հանձնումն ու ընդունումը կատարում է անձամբ՝ ավագ հրամանատարի (պետի) ներկայացուցչի ներկայությամբ:

Բացի դրանից, գործերի և պաշտոնի հանձնման և ընդունման համար ավագ հրամանատարի (պետի) հրամանով նշանակվում է հանձնաժողով, որը ստուգում է գորամասի ընդհանուր վիճակը, սպառազինության, ռազմական տեխնիկայի զինամթերքի առկայությունն ու վիճակը, դրանց հաշվառումը, ինչպես նաև գորամասի զորային և ֆինանսական տնտեսությունը, և կազմում է ակտ:

Գործերի և պաշտոնի հանձնման (ընդունման) ակտերում նշվում է՝ գորամասի ցուցակային և առկա անձնակազմը, մարտական և զորահավաքային պատրաստականության, մարտական

պատրաստության, ուսումնանյութական բազայի վիճակը անձնակազմի բարոյահոգեբանական վիճակը և զինվորական կարգապահության վիճակը:

Սպառազինության, ռազմական տեխնիկայի և զինամթերքի հանձնման (ընդունման) ակտում նշվում է՝ փաստաթղթերով հաշվառված քանակը, փաստացի առկայությունը, սպառազինության, ռազմական տեխնիկայի և զինամթերքի որակական և տեխնիկական վիճակը, դրանց պահպանության պայմանները:

Ձորային և ֆինանսական տնտեսության հանձնման և ընդունման ակտում նշվում է՝ բնակարանակենցաղային պայմանները, շենքերի, շինությունների, գույքի և սարքավորման առկայությունն ու վիճակը, ինչպես ընթացիկ բավարարման, այնպես էլ անձեռնմխելի պաշարների՝ վառելանյութի, սննդամթերքի, իրեղենի, տեխնիկական ունեցվածքի և այլ նյութական ու դրամական միջոցների առկայությունը, վիճակը, ծախսման օրինականությունը, հաշվառումը և պահպանության կարգը:

Ակտերը ստորագրում են ընդունող և հանձնող հրամանատարները, ինչպես նաև հանձնաժողովի անդամները և ներկայացվում են ավագ հրամանատարի (պետի) հաստատմանը:

(88-րդ հոդվածը փոփ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 89. Ստորաբաժանման հրամանատարը պաշտոնի և գործերի հանձնումը և ընդունումը կատարում է անձամբ, զորամասի հրամանի հիման վրա:

Գործերի և պաշտոնի հանձնման ու ընդունման մասին ստորաբաժանման հրամանատարը գրավոր զեկուցում է ըստ ենթակայության զորամասի հրամանատարին:

Պաշտոն ստանձնողը զեկույցի հետ միասին ներկայացնում է ակտ ստորաբաժանման ընդունման մասին, որի մեջ նշվում է՝ ստորաբաժանման ցուցակային և առկա անձնակազմը, մարտական պատրաստության, մարտական պատրաստականության վիճակը, անձնակազմի բարոյահոգեբանական վիճակը, զինվորական կարգապահության վիճակը, սպառազինության, ռազմական տեխնիկայի և այլ նյութական միջոցների առկայությունն ու վիճակը, զինձառայողների բնակարանային և կենցաղային պայմանները:

Ակտը կազմում ու ստորագրում է պաշտոնն ընդունողը և հանձնողը:

Պաշտոնատար անձանց, զինվորների պարտականությունները

Գնդի հրամանատարը

Հոդված 90. Գնդի հրամանատարը, լինելով զինված ուժերի մարտական (տակտիկական) և վարչատնտեսական հիմնական միավորի հրամանատարը, խաղաղ պայմաններում և պատերազմի ժամանակ պատասխանատու է՝ գնդի մարտական և զորահավաքային պատրաստականության համար, գնդի մարտական խնդիրների հաջող կատարման համար, անձնակազմի մարտական պատրաստության, դաստիարակության, զինվորական կարգապահության և բարոյահոգեբանական վիճակի և զինվորական ծառայության անվտանգության համար, ներքին կարգուկանոնի համար, սպառազինության, ռազմական տեխնիկայի և գնդի նյութական այլ միջոցների պահպանության և վիճակի համար, գնդի տեխնիկական, նյութական, բժշկական, ֆինանսական, սոցիալ-իրավական ու կենցաղային ապահովության, պետական և ծառայողական գաղտնիքի պահպանության ապահովման համար: Գնդի հրամանատարը գնդի ողջ անձնակազմի ուղղակի պետն է:

(90-րդ հոդվածը լրաց. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 91. Գնդի հրամանատարը պարտավոր է՝

- ղեկավարել գնդի անձնակազմի մարտական պատրաստությունը և դաստիարակությունը, հմտորեն ղեկավարել գունդը.

- գումարտակների հետ զորավարժություններ անցկացնել, վարել գնդի շտաբի նախապատրաստությունը, գումարտակների մեջ չմտնող վաշտերի հրամանատարների, նրանց տեղակալների, զորատեսակների ու ծառայությունների պետերի, ինչպես նաև գնդի ստորաբաժանումների հետ անցկացնել պարապմունքներ.

- ղեկավարել գնդի մարտական և զորահավաքային պատրաստականության, մարտական պատրաստության պլանների մշակումը և կատարումը.

- կազմակերպել և իրականացնել միջոցներ անձնակազմը, սպառազինությունը, ռազմական տեխնիկան և այլ նյութական միջոցները զանգվածային ոչնչացման զենքից պաշտպանելու ուղղությամբ՝ հաշվի առնելով տեղական և քաղաքացիական պաշտպանության առանձնահատկությունները.

- իմանալ յուրաքանչյուր սպայի, ենթասպայի և ստորաբաժանման ավագի գործնական և բարոյահոգեբանական հատկանիշները, սպաների հետ մշտապես աշխատանք տանել զինվորական

դաստիարակության և մասնագիտական պատրաստության կատարելագործման գծով, կազմակերպել սպայական ժողովի գործունեությունը և ուղղել սպաների կոլեկտիվի համախմբմանը, քննարկել նրա առաջարկություններն ու հանձնարարականները և դրանց վերաբերյալ ընդունել որոշումներ.

- զինվորական կոլեկտիվներում հաստատել հրապարակայնություն, սոցիալական արդարություն, փոխադարձ վստահություն զինվորների միջև, ստորաբաժանումներում թերությունների, պասիվության և անտարբերության նկատմամբ ստեղծել անհանդուրժողական մթնոլորտ.

- ղեկավարել նոր ժամանած համալրման բաշխումն ըստ ստորաբաժանումների (անձնախմբերի, մարտական մասերի) և նրանց զինվորական երդման ներկայացնել թիվ 1 հավելվածում նշված կարգով.

- ղեկավարել կադրերի ընտրությունն ու տեղաբաշխումը, քաղաքացիներին զինվորական ծառայության ընդունելու աշխատանքը, որոշել զինվորական ուսումնական հաստատություններ ընդունվելու թեկնածուներին, այդ աշխատանքում հաշվի առնել սպայական ժողովի և որակավորման մշտական գործող հանձնաժողովի եզրակացությունները, առաջարկություններն ու հանձնարարականները.

- հաստատել զինծառայողների արձակուրդների ժամանակացույցը.

- սահմանել օրվա կարգուկանոնը և աշխատաժամանակի բաշխման կարգը, պահանջել ներքին կարգուկանոնի պահպանում, որոշել անձնակազմի հագուստի ձևը՝ կատարվելիք խնդիրների ու պարապմունքների կարգացուցակի հաշվառումով.

- կազմակերպել գնդի տեղաբաշխման վայրի պաշտպանություն, վերահսկողություն պահակային և ներքին ծառայությունների նկատմամբ, անձամբ ստուգել դրանց կատարումը.

- միջոցներ ձեռնարկել հանցագործությունների և պատահարների կանխման ուղղությամբ, իսկ եթե դրանք արդեն տեղի են ունեցել, ժամանակին զեկուցել վերադաս հրամանատարներին (պետերին) և անհապաղ հաղորդել համապատասխան իրավապահ մարմիններին, նշանակել ծառայողական քննություն, անձամբ մասնակցել մարդկային զոհեր կամ այլ ծանր հետևանքներ պատճառած դեպքերի հետաքննությանը՝ ապահովելով դեպքի վայրի, հանցագործության գործիքների և այլ իրեղեն ապացույցների պահպանությունը մինչև իրավապահ մարմինների ներկայանալը.

- վերլուծել մարտական պատրաստության, զինվորական կարգապահության և ներքին կարգուկանոնի վիճակը, ոչ ուշ, քան ամիսը մեկ անգամ ամփոփել արդյունքները և որոշել դրանց բարելավման միջոցներ.

- միջոցներ ձեռնարկել սահմանված պաշարների, սպառազինության, ռազմական տեխնիկայի և այլ նյութական միջոցների պահպանության, սարքին վիճակում պահելու և ճիշտ օգտագործելու համար, պարբերաբար ստուգել դրանց առկայությունը, վիճակը և մարտական պատրաստությունը, ոչ ուշ, քան տարեկան երկու անգամ անցկացնել սպառազինության և ռազմական տեխնիկայի ստուգատես, արդյունքները հրապարակել գնդի հրամանում.

- ղիմավորել, զեկուցել և գնդի տարածքում ուղեկցել Հայաստանի Հանրապետության Նախագահին, ՀՀ Ազգային ժողովի նախագահին, ՀՀ վարչապետին, պետական կառավարման լիազորված մարմնի ղեկավարի (նախարարի) ու նրա տեղակալներին, գեներալ-գնդապետներին, գնդի հրամանատարից բարձր ուղղակի պետերին և այն անձանց, որոնք նշանակված են տեսչական ստուգումը ղեկավարելու համար՝ սույն Կանոնագրքի 60 հոդվածում որոշված կարգով.

- հսկողություն իրականացնել սպառազինության, ռազմական տեխնիկայի և զինամթերքի հետ աշխատելու, պարապմունքներ, հրաձգություն, զորավարժություններ անցկացնելու և աշխատանքի ժամանակ անվտանգության պահանջների կատարման նկատմամբ.

- միջոցներ ձեռնարկել զինծառայողների կենցաղի բարելավման, նրանց առողջության պահպանման և ամրապնդման ուղղությամբ, քննարկել և հաստատել մթերքների շաբաթական բաշխումը, ամենօրյա հսկողություն կազմակերպել սննդի որակի և մատուցման ամբողջականության նկատմամբ, ամեն շաբաթ անձամբ ստուգել պատրաստված սննդի որակը.

- ղեկավարել գնդի ֆինանսական և տնտեսական գործունեությունը՝ ապահովելով նյութական և դրամական միջոցների օրինական ու խնայողական ծախսումը.

- հետևել զորանոցաբնակարանային ֆոնդի, այլ շենքերի ու շինությունների, գնդի տարածքի պահպանությանը, ճիշտ շահագործմանը, ինչպես նաև հակահրդեհային պաշտպանությանը գնդում.

- անձամբ մասնակցել գիտական, գյուտարարական աշխատանքներին, վարժություններին, մարտական պատրաստության և

առօրյա գործունեության այլ միջոցառումների անցկացման ժամանակ գնդի տեղաբաշխման շրջանում բնական պաշարների արդյունավետ օգտագործման համար.

- անձամբ և պաշտոնատար անձանց, ներքին ստուգող հանձնաժողովների ու հասարակայնության ներկայացուցիչների ներգրավմամբ անցկացնել ըստ ծառայությունների ռազմական ունեցվածքի, դրամական միջոցների և արժեքների առկայության պլանային ու արտապլանային ստուգումներ, պետությանը հասցված նյութական վնասի հայտնաբերման դեպքում նշանակել ծառայողական քննություն և ժամանակին որոշում կայացնել մեղավորներին պատասխանատվության ենթարկելու մասին:

(91-րդ հոդվածը խմբ., փոփ. 14.04.11 ՀՕ-124-Ն, փոփ. 19.03.13 ՀՕ-20-Ն)

Հոդված 92. Գնդի հրամանատարը ուսուցման յուրաքանչյուր փուլի սկսվելուց առաջ հրաման է տալիս՝ որոշելով սույն Կանոնագրքի և Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կայագորային ու պահակային ծառայությունների կանոնագրքի այն դրույթների կատարման կարգը, որոնց կարգավորման իրավունքն իրեն է տրված (Հավելված 11):

Բացի դրանից, գնդի հրամանատարն ամեն օր գրավոր հրաման է տալիս շարային մասի գծով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ մարտական պատրաստության և այլ հարցերի գծով: Հրամաններն ստորագրում են գնդի հրամանատարը և շտաբի պետը:

(92-րդ հոդվածը փոփ. 19.03.13 ՀՕ-20-Ն)

Գնդի հրամանատարի տեղակալը

Հոդված 93. Գնդի հրամանատարի տեղակալը խաղաղ ժամանակ և պատերազմական պայմաններում պատասխանատու է՝

մարտական պատրաստության համար, զինվորական կարգապահության և ներքին կարգի պահպանման համար, ուսումնանյութական բազայի ստեղծման, մշտական բարելավման և սարքին վիճակում պահելու համար, գնդում բարձրակարգ մասնագետներ պատրաստելու, մարզական, գյուտարարական և նորարարական աշխատանքի համար: Նա ենթարկվում է գնդի հրամանատարին, նրա առաջին տեղակալն է և գնդի ողջ անձնակազմի

ուղղակի պետը: Գնդի հրամանատարի բացակայության դեպքում վերջինս կատարում է նրա պարտականությունները:

Այն գորամասերում, որտեղ գնդի հրամանատարի տեղակալի պաշտոն նախատեսված չէ հաստիքով, նրա պարտականությունները կատարում է գնդի շտաբի պետը:

Հոդված 94. Գնդի հրամանատարի տեղակալը մարտական պատրաստության անմիջական կազմակերպիչն է: Նա պարտավոր է՝

- մասնակցել գնդի մարտական և զորահավաքային պատրաստականության, մարտական պատրաստության պլանների մշակմանը և կատարմանը.

- պարապմունքներ անցկացնել սպաների և ենթասպաների, ինչպես նաև գնդի ստորաբաժանումների հետ.

- գնդում ղեկավարել ֆիզիկական պատրաստության և մարզական աշխատանքները.

- կազմակերպել և անձամբ անցկացնել միջոցառումներ գնդում բարձրակարգ մասնագետներ պատրաստելու համար.

- ստուգել գնդի ստորաբաժանումներում մարտական պատրաստության կազմակերպումն ու վիճակը, ստորաբաժանումների հրամանատարներին օգնել պարապմունքների կազմակերպման և անցկացման գործում նկատված թերությունների վերացման համար.

- ղեկավարել առաջավոր փորձի ուսումնասիրման, ընդհանրացման և մարտական ուսուցման գործում ներդրման աշխատանքը.

- գիտենալ յուրաքանչյուր սպայի, ենթասպայի և ստորաբաժանման ավագի գործնական և բարոյահոգեբանական հատկանիշները, սպաների հետ մշտապես աշխատանք տանել զինվորական դաստիարակության և մասնագիտական պատրաստության բարելավման ուղղությամբ.

- թեկնածուների ընտրություն կատարել զինվորական ծառայության և ռազմական ուսումնական հաստատություններ ընդունելու համար.

- ղեկավարել ուսումնանյութական բազայի օբյեկտների կահավորման և կատարելագործման աշխատանքները, հետևել գնդի ստորաբաժանումները ժամանակին մարտական պատրաստության համար նախատեսված նյութական միջոցներով, ուսումնական և ցուցադրական ձեռնարկներով ապահովելու, դրանց հաշվառման և պահպանության գործին.



- ստուգել անվտանգության պահանջների, պարապմունքների, հրաձգության և գորավարժությունների ժամանակ շրջակա միջավայրի պաշտպանության կանոնների կատարումը.

- ղեկավարել գիտական, մեթոդական աշխատանքը, ինչպես նաև գնդի գյուտարարական և նորարարական աշխատանքի գծով հանձնաժողովը.

- ոչ պակաս, քան շաբաթական մեկ անգամ ստուգել օրվա վերակարգի նախապատրաստումը և նրա կողմից ծառայության կատարումը, ինչպես նաև գնդում և նրա ստորաբաժանումներում ներքին կարգուկանոնի պահպանումը:

Հոդված 941. Գնդի հրամանատարի՝ մարտական հերթապահության գծով տեղակալը

Գնդի հրամանատարի՝ մարտական հերթապահության գծով տեղակալը խաղաղ և պատերազմական ժամանակ պատասխանատու է՝ ուղեցույց փաստաթղթերի պահանջների համաձայն՝ մարտական հերթապահության կազմակերպման և իրականացման, մարտական հերթապահությունում ընդգրկված ուժերի և միջոցների մշտական մարտական կիրառման պատրաստականության և նրանց՝ մինչև գնդի պաշտպանությանն անցնելը ղեկավարման, մարտական հերթապահություն ստանձնող ուժերի և միջոցների սահմանված կարգով նախապատրաստման ու ժամանակին հերթափոխի կատարման, մարտական հերթապահության մշտապես կատարելագործման, ինժեներական սարքավորումների և ամրաշինական կառույցների անվնաս վիճակում պահպանման, ինչպես նաև այլ նյութական միջոցների ու սարքավորումների ըստ նշանակության կիրառման, մարտական հերթապահությունում անվտանգության կանոնների սահմանման և դրանց կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու համար:

Նա անմիջականորեն ենթարկվում է գնդի հրամանատարին, նրա տեղակալն է և գնդի ողջ անձնակազմի ուղղակի պետը: Գնդի հրամանատարի բացակայության դեպքում կատարում է նրա պարտականությունները՝ վերջինիս ցուցումով:

Գնդի հրամանատարի՝ մարտական հերթապահության գծով տեղակալի ծառայության առանձնահատկությունները դրսևորվում են հիմնականում խաղաղ ժամանակ, իսկ պատերազմի ժամանակ նա կատարում է իր պարտականությունները՝ համաձայն գնդի

հրամանատարի կայացրած որոշման, և գնդի պաշտպանության տեղամասի մեկուսացված (առանձին) ուղղություններից մեկում ղեկավարում է մարտական գործողությունները:

(941 հոդվածը լրաց. 01.06.06 ՀՕ-127-Ն)

Հոդված 942. Գնդի հրամանատարի՝ մարտական հերթապահության գծով տեղակալը մարտական հերթապահության անմիջական կազմակերպիչն է: Նա պարտավոր է՝

-իմանալ գնդի մարտական խնդիրն ինչպես պահպանության, այնպես էլ պաշտպանության ժամանակ,

-իմանալ մարտական հերթապահության կազմակերպման և իրականացման համար սահմանված ուղեցույց փաստաթղթերի պահանջներն ու ցուցումները, առօրյա ծառայության ընթացքում կիրառել դրանք,

-մասնակցել գնդի մարտական պատրաստության պլանի և ամենամյա մարտական պատրաստության ու գործերի ծառայության կազմակերպման մասին հրամանների մշակման գործընթացին,

-կազմակերպել և վերահսկել մարտական հերթապահություն ստանձնող ստորաբաժանումների նախապատրաստման գործընթացը, ստորաբաժանումների հրամանատարներին ցուցաբերել անհրաժեշտ օգնություն,

-կազմակերպել մարտական հերթապահություն իրականացնող ուժերի ու միջոցների հերթափոխը և անձամբ մասնակցել դրան,

-իմանալ հակառակորդի կազմը, դիրքը և գործողությունների հավանական բնույթը, մշտապես ուսումնասիրել ու վերլուծել հետախուզական տեղեկությունները և հակառակորդի դիտարկման արդյունքները,

-իմանալ գնդի պաշտպանության տեղամասում և հակառակորդի մոտ տիրող մարտավարական իրադրությունը, մշտապես իր մոտ ունենալ մարտական հերթապահություն իրականացնող ուժերի ու միջոցների մարտական և քանակական կազմի մասին ճշտված տվյալները,

-իմանալ մարտական հենակետերի (դիրքերի, բնագծերի) ինժեներական սարքավորումների և ամրաշինական կառույցների իրական վիճակը, պահանջվող աշխատանքների ծավալը, ականադաշտերի տեղերը, դրանց ուրվագծերը, յուրաքանչյուր մարտական հենակետի (դիրքի, բնագծի) առանձնահատկություններն ու ծառայության իրականացման պայմանները,

-ստորաբաժանումների հետ համատեղ վերահսկել հենակետերի հանձնման-ընդունման գործընթացը, ամիսը չորս անգամից ոչ պակաս ստուգել մարտական հերթապահության ընթացքը՝ կատարելով նշումներ համապատասխան մատյաններում,

-մշտապես իմանալ հենակետերում խմելու ջրի, պարենի, վառելիքայտի և այլ նյութական միջոցների սահմանված քանակության մասին տեղեկություններ, անհրաժեշտության դեպքում համապատասխան պաշտոնատար անձանցից պահանջել դրանց ժամանակին ապահովումը: Երեք ամիսը մեկ անցկացնել հենակետերի ունեցվածքի գույքագրում, արդյունքների մասին զեկուցել գնդի հրամանատարին,

-հոգատար վերաբերմունք ցուցաբերել անձնակազմի նկատմամբ, իմանալ յուրաքանչյուր մարտական հենակետի (դիրքի, բնագծի) ավագի բարոյահոգեբանական վիճակը, նրա կազմակերպչական ունակությունները և պատրաստվածության աստիճանը, ենթականերից պահանջել առաջադրանքների պատշաճ մակարդակով և ժամանակին կատարում,

-վերահսկել մարտական հերթապահությունում ընդգրկված սպառազինության և ռազմական տեխնիկայի ճիշտ շահագործումը, ինչպես նաև սպասարկումը, զինամթերքի անձեռնմխելի պաշարների առկայությունը՝ ըստ սահմանված նորմերի,

-անձնակազմի հետ պարբերաբար անցկացնել պարապմունքներ՝ մարտական հերթապահության կազմակերպման և իրականացման վերաբերյալ ուղեցույց փաստաթղթերի պահանջների իմացությունից,

-ղեկավարել առաջավոր փորձի ուսումնասիրման, ընդհանրացման ու մարտական հերթապահության գործում դրանց ներդրման աշխատանքները:

(942 հոդվածը լրաց. 01.06.06 ՀՕ-127-Ն)

Գնդի շտաբի պետը

Հոդված 95. Գնդի շտաբի պետը խաղաղ և պատերազմական ժամանակ պատասխանատու է՝ գնդի ստորաբաժանումների կառավարման կազմակերպման համար, գնդի մարտական և զորահավաքային պատրաստության և մարտական առաջադրանքների հաջող կատարման համար, մարտական պատրաստության պլանավորման համար, շտաբի և գնդի կառավարումն ապահովող ստորաբաժանումների նախապատրաստման համար, գնդի ներսում պահակային և ներքին ծառայությունների կազմակերպման համար,

շտաբի և անմիջականորեն նրա ենթակա ստորաբաժանումների անձնակազմի զինվորական կարգապահության և բարոյահոգեբանական վիճակի համար, նրանց սպառազինությամբ և ռազմական տեխնիկայով ապահովելու համար, գնդի անձնակազմի, սպառազինության, տեխնիկայի և զինամթերքի հաշվառման վիճակի, պետական և ծառայողական գաղտնիքի պահպանության ապահովման համար: Գնդի շտաբի պետը ենթարկվում է գնդի հրամանատարին, նրա առաջին տեղակալն է և գնդի ողջ անձնակազմի ուղղակի պետը:

Գնդի հրամանատարի որոշումների կենսագործման ժամանակ շտաբի պետն իրավունք ունի գնդի հրամանատարի ենթականերին հրամաններ կամ կարգադրություններ տալ նրա անունից: Բոլոր առավել կարևոր հրամանների կամ կարգադրությունների մասին շտաբի պետը զեկուցում է գնդի հրամանատարին:

(95-րդ հոդվածը փոփ. 01.06.06 ՀՕ-127-Ն, լրաց. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 96. Գնդի շտաբի պետը պարտավոր է՝

- կազմակերպել գնդի շտաբի աշխատանքը և ամեն օր ղեկավարել այն, համաձայնեցնել զորատեսակների և ծառայությունների պետերի աշխատանքը.

- մշտապես իմանալ գնդի ստորաբաժանումների իրական վիճակը և դրությունը, ինչպես նաև վերահսկել առաջադրված խնդիրների լուծման ընթացքը.

- պարապմունքներ անցկացնել գնդի շտաբի սպաների հետ, ղեկավարել գնդի կառավարումն ապահովող գումարտակների և ստորաբաժանումների շտաբների պատրաստությունը.

- մշակել և կենսագործել գնդի մարտական և զորահավաքային պատրաստականության պլան և գունդը զանգվածային ոչնչացման զենքից պաշտպանելու միջոցառումներ, գնդում ղեկավարել զորահավաքային աշխատանքները.

- մշակել գնդի մարտական պատրաստության պլան, անմիջականորեն գնդի հրամանատարին ենթարկվող պաշտոնատար անձանց և շտաբի սպաների կողմից ստորաբաժանումների և ծառայությունների վիճակի ստուգման պլան, գնդի զինծառայողների արձակուրդների գրաֆիկ, վերահսկել դրանց կատարումը

- գիտենալ յուրաքանչյուր սպայի և ենթասպայի, ինչպես նաև շտաբի և անմիջականորեն իրեն ենթակա ստորաբաժանումների բոլոր սերժանտների գործնական ու բարոյահոգեբանական հատկանիշները, մշտական աշխատանք տանել սպաների հետ զինվորական

դաստիարակության և մասնագիտական որակավորման բարձրացման ուղղությամբ.

- ըստ ստորաբաժանումների բաշխել գունդ ժամանած համալրումը.
- կազմակերպել կապը գնդում, ստուգել կապի միջոցների վիճակը և մարտական պատրաստականությունը, ներդնել ավտոմատ կառավարման միջոցներ և վերահսկողություն իրականացնել դրանց կատարման նկատմամբ.

- կազմակերպել գնդի հրամանատարի և ավագ հրամանատարների (պետերի) բոլոր հրամանները ժամանակին և ճիշտ կերպով հասցնելու ստորաբաժանումներին ու ծառայություններին, ինչպես նաև դրանց կատարումը, անձամբ հաղորդել կարևորագույն հրամանները, ստուգել դրանց կատարումը.

- կազմակերպել գնդի մարտական դրոշի և շքանշանների, ինչպես նաև պատվավոր դրոշների, նշանների, վիմպելների և դրանց փաստաթղթերի ճիշտ պահպանությունը և խնամքը.

- կազմակերպել և ոչ պակաս, քան շաբաթական մեկ անգամ ստուգել պահակային և ներքին ծառայությունների պատրաստությունը և կատարումը գնդում.

- վերակարգի անցնելուց առաջ հրահանգավորել գնդի հերթապահին, նրա օգնականին, հսկիչ-անցագրային կետի հերթապահին, պահակապետին և գնդի շտաբի հերթապահին, ինչպես նաև գործուղման մեկնող ստորաբաժանումների (անձնախմբերի) հրամանատարներին՝ ստուգելով նրանց ստորաբաժանումների (անձնախմբերի) ապահովվածությունն անհրաժեշտ իրերով.

- մշտապես գիտենալ մարդկանց առկայությունը, զինամթերքի, ռազմական տեխնիկայի և նյութական այլ միջոցների առկայությունը և վիճակը, ինչպես նաև ամենօրյա ղեկավարություն իրականացնել դրանց հաշվառման նկատմամբ.

- կատարել մարտական պատրաստության, ինչպես նաև հանցագործությունների, պատահարների և կարգապահական զանցանքների հաշվառում.

- վարել գնդի պատմական ծառայացուցակը (ֆորմուլյարը).

- կազմակերպել և տարեկան առնվազն երկու անգամ ստուգել սպառազինության, ռազմական տեխնիկայի և նյութական այլ միջոցների առկայությունն ու վիճակը, ինչպես նաև դրանց պահպանության կարգը իրեն անմիջականորեն ենթակա ստորաբաժանումներում, հսկել պարապմունքների և աշխատանքների

ընթացքում անվտանգության կանոնների պահպանության վերաբերյալ զինծառայողների հետ անցկացվող պարապմունքների որակը.

- ժամանակին վերադաս շտաբ ներկայացնել անհրաժեշտ զեկուցագրեր:

(96-րդ հոդվածը խմբ. 01.06.06 ՀՕ-127-Ն, փոփ. 19.03.13 ՀՕ-20-Ն)

Գնդի հրամանատարի տեղակալը անձնակազմի հետ տարվող աշխատանքի գծով

Հոդված 97. Անձնակազմի հետ տարվող աշխատանքի գծով գնդի հրամանատարի տեղակալը խաղաղ և պատերազմական ժամանակ պատասխանատու է մարտական առաջադրանքը հաջողությամբ կատարելու, անձնակազմի դաստիարակության, զինվորական կարգապահության և բարոյահոգեբանական վիճակի, գաղափարադաստիարակչական և հասարակական-պետական պատրաստության, ինչպես նաև սոցիալ-իրավական, տեղեկատվական, հոգեբանական և մշակութաժամանցային միջոցառումների ապահովման համար: Նա ենթարկվում է գնդի հրամանատարին և գնդի ողջ անձնակազմի ուղղակի պետն է:

(97-րդ հոդվածը խմբ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 98. Անձնակազմի հետ տարվող աշխատանքի գծով գնդի հրամանատարի տեղակալը պարտավոր է՝

- մասնակցել գնդի մարտական և զորահավաքային պատրաստականության, մարտական պատրաստության պլանների մշակման և դրանց կատարումն ապահովելու գործին.

- կազմակերպել և անձնակազմի հետ դաստիարակչական աշխատանք տանել, հաշվի առնելով յուրաքանչյուր զինծառայողի ազգային և հոգեբանական առանձնահատկությունները, կրթության մակարդակը և վերաբերմունքը կրոնի հանդեպ, նրանց մեջ ձևավորել հավատարմություն Հայրենիքի, զինվորական պարտքի և զինվորական երդման նկատմամբ, զինվոր-քաղաքացու մարտական և բարոյահոգեբանական բարձր հատկանիշներ.

- կոնկրետ միջոցառումներ անցկացնել զինվորական կարգապահության և իրավակարգի ամրապնդման, անձնակազմի շրջանում իրավախախտումների կանխարգելման, զորական կոլեկտիվների համախմբման, զինվորական ծառայության անվտանգության պայմանների ստեղծման ուղղությամբ.

- գիտենալ գնդի ստորաբաժանումների յուրաքանչյուր սպայի, ենթասպայի և ավագի գործնական, բարոյահոգեբանական հատկանիշները.

- մասնակցել զինվորական կադրերի ուսումնասիրման, նրանց ռազմական-մասնագիտական որակավորման բարձրացման գծով տարվող աշխատանքին.

- ուսումնասիրել զինծառայողների տրամադրությունը, հասարակական կարծիքը և հոգեվիճակը, կազմել գնդի անձնակազմի ընդհանուր բարոյահոգեբանական բնութագիրը, միջոցառումներ իրականացնել զորական կոլեկտիվներում առողջ բարոյական մթնոլորտ պահպանելու ուղղությամբ.

- կազմակերպել և աշխատանք տանել զինծառայողների, նրանց ընտանիքի անդամների, քաղաքացիական անձնակազմի նկատմամբ սոցիալական արդարության ապահովման ուղղությամբ գիտենալ նրանց կարիքները և պահանջումները, միջոցներ ձեռնարկել հիմնավորված բողոքների և դիմումների ժամանակին կատարման, ինչպես նաև խախտված իրավունքների վերականգնման համար.

- զինծառայողներին, քաղաքացիական անձնակազմին տալ տեղեկատվություն Հայաստանի Հանրապետության և միջազգային ռազմաքաղաքական իրավիճակի մասին, կազմակերպել անձնակազմի հասարակական-պետական պատրաստությունը, ստորաբաժանումների հրամանատարներին սովորեցնել դաստիարակչական աշխատանքի սկզբունքները և մեթոդները.

- կազմակերպել ուսումնական գործի, մարտական հերթապահության, պահակային և ներքին ծառայությունների բարոյահոգեբանական ապահովվածությունը.

- կազմակերպել սպայական ժողովի, հասարակական խորհուրդների, գնդում գործող այլ մարմինների համագործակցությունը և գործնական օգնություն ցույց տալ նրանց.

- կապ պահպանել պետական իշխանության և կառավարման տեղական մարմինների, քաղաքացիների հասարակական կազմակերպությունների հետ սոցիալական խնդիրների լուծման, անձնակազմի դաստիարակության, զինվորական ծառայության քարոզչության և երիտասարդության զինվորական մասնագիտական կողմնորոշումը կազմակերպելու նպատակով.

- պայմաններ ստեղծել զինծառայողների հոգևոր դաստիարակության և մշակութային զարգացման համար, կազմակերպել անձնակազմի հանգիստը,

- վերահսկել դաստիարակչական աշխատանքի ընթացքում տեխնիկական միջոցների և կուլտուր-լուսավորչական գույքի նպատակային օգտագործումը, անձնակազմին պարբերական մամուլով և փոստային առաքումներով ժամանակին ապահովումը.

- կազմակերպել գնդում կատարած հանցագործությունների, պատահարների ու կարգապահական զանցանքների հաշվառումը.

- գնդի հրամանատարին ժամանակին զեկուցել անձնակազմի զինվորական կարգապահության և բարոյահոգեբանական վիճակի մասին:

(98-րդ հոդվածը փոփ., խմբ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Գնդի հրամանատարի՝ սպառազինության (ինժեներավիագիոն ծառայության) գծով տեղակալը-տեխնիկական մասի պետը

Հոդված 99. Գնդի հրամանատարի՝ սպառազինության (ինժեներավիագիոն ծառայության) գծով տեղակալը-տեխնիկական մասի պետը, խաղաղ և պատերազմական ժամանակ պատասխանատու է՝ գնդի տեխնիկական ապահովության համար, ենթակա ծառայությունների սպառազինության և ռազմական տեխնիկայի տեխնիկական վիճակի, ճիշտ շահագործման, նորոգման և էվակուացիայի համար, զինամթերքի պահպանության և դրանցով ստորաբաժանումների (բացի ավիացիոն) ապահովման համար, պահեստներում զենքի և զինամթերքի պահպանության համար, ինչպես նաև տեխնիկական կետերի հատուկ տեխնիկական կառուցվածքների, ենթակա պահեստների, հավաքակայանների (ինքնաթիռների, ուղղաթիռների կայանատեղերի) վիճակի և նրանց ներքին ծառայության կազմակերպման համար, գնդի անձնակազմի տեխնիկական պատրաստվածության համար, անմիջականորեն իրեն ենթակա ստորաբաժանումների և ծառայությունների մարտական և զորահավաքային պատրաստականության համար, նրանց անձնակազմերի մարտական պատրաստության, դաստիարակության, զինվորական կարգապահության և բարոյահոգեբանական վիճակի համար: Նա ենթարկվում է գնդի հրամանատարին և գնդի ողջ անձնակազմի ուղղակի պետն է:

Հոդված 100. Գնդի հրամանատարի տեղակալը սպառազինության (ինժեներավիագիոն ծառայության) գծով-տեխնիկական մասի պետը պարտավոր է՝

- մասնակցել մարտական և զորահավաքային պատրաստականության, մարտական պատրաստության պլանների մշակմանը և կազմակերպել դրանց կատարումն իր մասնագիտության գծով.

- ղեկավարել իրեն ենթակա ստորաբաժանումների և ծառայությունների մարտական պատրաստությունը և գործունեությունը.

- իմանալ անմիջականորեն և իրեն ենթակա ստորաբաժանումների և ծառայությունների սպաների, ենթասպաների և սերժանտների բարոյահոգեբանական հատկանիշները, մշտապես աշխատանք տանել նրանց հետ զինվորական դաստիարակության և մասնագիտական պատրաստվածության կատարելագործման ուղղությամբ.

- ղեկավարել գնդի անձնակազմի տեխնիկական պատրաստությունը, գնդի սպաների և ենթասպաների հետ պարապմունքներ անցկացնել մեքենա վարելու, սպառազինության, տեխնիկայի և զինամթերքի ուսումնասիրման, տեխնիկական ապահովության կազմակերպման և իրականացման գծով, ինչպես նաև միջոցառումներ անցկացնել տեխնիկական մասնագիտությունների գծով բարձրակարգ մասնագետների պատրաստման համար.

- կազմակերպել սպառազինության և ռազմական տեխնիկայի շահագործումը, նորոգումը և էվակուացումը՝ ապահովելով դրանց մշտական սարքինությունը.

- մշտապես ստուգել անձնակազմի կողմից սպառազինության և ռազմական տեխնիկայի շահագործման, նորոգման և էվակուացման կանոնները.

- հետևել ստորաբաժանումներում վառելիքի, քսանյութերի և հատուկ հեղուկների ճիշտ կիրառմանը և խնայողական օգտագործմանը.

- ոչ պակաս, քան տարեկան երկու անգամ ստուգել սպառազինության, ռազմական տեխնիկայի և այլ նյութական միջոցների առկայությունն ու տեխնիկական վիճակը և տարեկան երկու անգամ կազմակերպել հրազենի ստուգում, ի լրումն, դրա ընթացիկ բավարարման հրազենի համար անց է կացվում պլանավորված ստուգում, ստուգման արդյունքները արտացոլել ակտերում և գնդի հրամաններում.

- ղեկավարել տեխնիկական կետերում, հավաքակայաններում, ենթակա պահեստներում հատուկ կառույցների սարքավորման և դրանք բնապահպանական սարքերով ու պահպանության

տեխնիկական միջոցներով ապահովելու աշխատանքները, հակահրդեհային միջոցառումների կատարումը.

- կազմակերպել և վերահսկել ներքին ծառայության կատարումը հավաքակայաններում, վերակարգի ստանձնումից առաջ հրահանգավորել հավաքակայանի հերթապահին.

- ժամանակին պահանջել պահեստամասեր, հավաքակայանային սարքավորում և այլ ռազմատեխնիկական ունեցվածք, կազմակերպել դրանց ստացումը, պահպանությունը, բաշխումը և ճիշտ օգտագործումը.

- մշակել և իրականացնել միջոցառումներ սպառազինության և ռազմական տեխնիկայի հետ պատահարների կանխման ուղղությամբ, վերլուծել դրանց պատճառները, միջոցառումներ անցկացնել սպառազինության և ռազմական տեխնիկայի նախապատրաստման ու շահագործման ժամանակ անվտանգության կանոնների պահպանման համար.

- գիտենալ գնդի սպառազինության և ռազմական տեխնիկայի կառուցվածքը և շահագործման կանոնները, դրանց առկայությունը և տեխնիկական վիճակը, կազմակերպել և վերահսկել սահմանված հաշվառման և հաշվետվության վարումը.

- ղեկավարել տանկակայանի (տանկադրոմի) և ավտոկայանի (ավտոդրոմի) կահավորման և կատարելագործման, ուսումնամարզական միջոցների նորոգման և շահագործման, ինչպես նաև տեխնիկական պատրաստության, ուսումնանյութական բազայի կատարելագործման և պահպանության աշխատանքները:

Այն զորամասերում, ուր հաստիքով սպառազինության գծով գնդի հրամանատարի տեղակալ նախատեսված չէ, նրա պարտականությունները կատարում է ավտոծառայության պետը կամ զորամասի տեխնիկական ծառայություններից մեկի պետը: Նա ենթարկվում է զորամասի հրամանատարին և իրեն անմիջականորեն ենթակա ստորաբաժանումների և ծառայությունների անձնակազմի ուղղակի պետն է:

(100-րդ հոդվածը լրաց., փոփ. 14.04.11 ՇՕ-124-Ն)

Գնդի հրամանատարի տեղակալը թիկունքի գծով

Շողված 101. Թիկունքի գծով գնդի հրամանատարի տեղակալը խաղաղ և պատերազմական ժամանակ պատասխանատու է՝ գնդի ստորաբաժանումների նյութական և տեխնիկական

ապահովվածության համար իրեն ենթակա ծառայությունների գծով բոլոր տեսակի նյութական միջոցների և ջրի տեղափոխման ու մատակարարման համար, ենթակա պահեստների վիճակի համար, գնդի անձնակազմի առևտրական և կենցաղային սպասարկման համար, զորանոցաբնակարանային ֆոնդի պահպանության համար, անմիջականորեն իրեն ենթակա ստորաբաժանումների և ծառայությունների մարտական ու զորահավաքային պատրաստականության և հակահրդեհային պաշտպանության համար, դրանց սպառազինությամբ և ռազմական տեխնիկայով համալրելու համար, դրանց անձնակազմերի մարտական պատրաստականության, դաստիարակության, զինվորական կարգապահության և բարոյահոգեբանական վիճակի համար, շրջակա միջավայրի պաշտպանության կանոնների պահպանման համար: Նա ենթարկվում է գնդի հրամանատարին և գնդի ռոջ անձնակազմի ուղղակի պետն է:

Հոդված 102. Թիկունքի գծով գնդի հրամանատարի տեղակալը պարտավոր է՝

- մասնակցել գնդի մարտական և զորահավաքային պատրաստականության, մարտական պատրաստության պլանների մշակմանը և դրանց կատարմանը իր մասնագիտության գծով.

- իմանալ անմիջականորեն իրեն ենթակա ստորաբաժանումների ու ծառայությունների յուրաքանչյուր սպայի, ենթասպայի և սերժանտի բարոյահոգեբանական հատկանիշները, նրանց հետ մշտապես աշխատանք տանել զինվորական դաստիարակության և մասնագիտական պատրաստության կատարելագործման ուղղությամբ.

- գնդի սպաների և ենթասպաների հետ պարապմունքներ անցկացնել թիկունքային ապահովվածության գծով, իսկ ստորաբաժանումների ավագների հետ՝ բանակային տնտեսության գծով.

- ըստ ենթակա ծառայությունների կազմակերպել նյութական միջոցների գնդի ստորաբաժանումների ժամանակին ապահովումը և անձնակազմի բարձրորակ սնունդը, վերահսկել նյութական միջոցների նախատեսված չափերը յուրաքանչյուր զինծառայողի հասցնելու գործը.

- ոչ պակաս, քան տարեկան երկու անգամ ստուգել գնդի պահեստներում և ստորաբաժանումներում նյութական միջոցների առկայությունը և վիճակը՝ ստուգման պարտադիր ակտավորումով, կազմակերպել ամբողջ ունեցվածքի և տեխնիկայի ամենամյա գույքագրումն ըստ ծառայությունների.

- հսկողություն իրականացնել վառելանյութի, քսանյութերի և հատուկ հեղուկների դրակի, օգտագործման ճշտության և խնայողական ծախսման, դրանց հետ վարվելու անվտանգության պահանջների կատարման նկատմամբ, ինչպես նաև ամեն ամիս գնդի հրամանատարին զեկուցել ծախսերի լիմիտների օգտագործման արդյունքների մասին.

- գիտենալ իրեն ենթակա ստորաբաժանումներում և ծառայություններում ռազմական տեխնիկայի առկայությունն ու վիճակը, ապահովել դրա ճիշտ շահագործումը, ժամանակին սպասարկումը, նորոգումը և եվակուացումը.

- վերակարգի անցնելուց առաջ հրահանգավորել ճաշարանի հերթապահին.

- կազմակերպել ստորաբաժանումների համար նախատեսված բոլոր տեսակի նյութական միջոցների տեղափոխումը, ջրամատակարարումը, ինչպես նաև բեռնման-բեռնաթափման աշխատանքների մեքենայացումը, պլանավորել ավտոտրանսպորտի աշխատանքը և վերահսկողություն իրականացնել դրա աշխատանքի ճշտության և արդյունավետության նկատմամբ.

- կազմակերպել երկաթուղով, օդային տրանսպորտով տեղ հասած նյութական միջոցների ժամանակին բեռնաթափումը և տեղափոխումը.

- ղեկավարել գնդի թիկունքի ուսումնանյութական բազայի կահավորման և կատարելագործման աշխատանքները, ենթակա պահեստների սարքավորումը պահպանության տեխնիկական միջոցներով.

- կազմակերպել բոլոր բնակելի և ոչ բնակելի շենքերի, ջրմուղ-կոյուղու ցանցերի ու կառույցների, զորանոցային գույքի և կահույքի ճիշտ շահագործումը և ժամանակին նորոգումը, զորանոցային-բնակարանային ֆոնդի ժամանակին նախապատրաստումը ձմռանը, գնդի տեղաբաշխման տարածքի, մերձակա ավտոճանապարհների կարգին վիճակում պահելը, ինչպես նաև թիկունքային օբյեկտների հակահրդեհային պաշտպանությունը (Հավելված 16), դրանք սարքավորել հրդեհային ազդանշանման միջոցներով, մշակել միջոցառումներ շրջակա միջավայրի պաշտպանության և բնական ռեսուրսների նպատակահարմար օգտագործման ուղղությամբ և վերահսկել այդ պլանների կատարումը.

(պարբերությունն ուժը կորցրել է 14.04.11 ՀՕ-124-Ն)

- մշտական հոգատարություն ցուցաբերել գնդի անձնակազմի արտաքին տեսքի նկատմամբ, կազմակերպել համազգեստի ժամանակին հանձնումը, դրա նախապատրաստումը և նորոգումը.

- կազմակերպել գնդի ստորաբաժանումների բաղնիքավացքային սպասարկումը.

- միջոցառումներ մշակել խնայողական աշխատանքի գծով և կազմակերպել դրանց իրականացումը.

- իրեն ենթակա ստորաբաժանումներում ապահովել անվտանգությունը նորոգման-շինարարական, տնտեսական աշխատանքների և տեխնիկայի շահագործման ժամանակ.

- կազմակերպել և վերահսկել սահմանված հաշվառման ու հաշվետվության վարման գործը:

(102-րդ հոդվածը փոփ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Գնդի հրամանատարի՝ սոցիալ-իրավական աշխատանքի գծով օգնական-սպա

Հոդված 103. Գնդի հրամանատարի՝ սոցիալ-իրավական աշխատանքի գծով օգնական-սպան պատասխանատու է՝ գնդում իրավական աշխատանքի կազմակերպման համար: Նա ենթարկվում է գնդի հրամանատարին:

Հոդված 104. Գնդի հրամանատարի սոցիալ-իրավական աշխատանքի գծով օգնական-սպան պարտավոր է՝

- զորամասի մյուս ծառայությունների հետ համատեղ մշակել և իրականացնել զորամասում օրինականության պահպանման ապահովմանը ուղղված միջոցառումներ, միջոցներ ձեռնարկել ՀՀ գործող օրենսդրության և այլ գերատեսչական նորմատիվ ակտերի խախտումների կանխման համար.

- նշագրելու (վիզա դնելու) միջոցով հսկողություն իրականացնել, որպեսզի հրամանատարի հրամանների, հրահանգների և իրավական բնույթի մյուս նյութերի նախագծերը համապատասխանեն գործող օրենսդրությանը, մյուս ծառայությունների հետ համատեղ նախատեսել առաջարկություններ զորամասում հրամանների և այլ նորմատիվ ակտերի մեջ փոփոխություններ կատարելու համար.

- խորհրդատվություններ, եզրակացություններ, տեղեկանքներ տալ այն իրավական հարցերի վերաբերյալ, որոնք ծագում են զորամասի գործունեության ընթացքում.

- մյուս ծառայությունների մասնակցությամբ նախապատրաստել համաշխարհային վատնումների, պակասորդների և այլ իրավախախտումների մասին նյութեր, դրանք համապատասխան մարմիններին, սպաների և ենթասպաների պատվի դատարաններին հանձնելու, ինչպես նաև միջոցներ ձեռնարկել զորամասին հասցրած վնասը հատուցելու համար.

- կազմակերպել զորամասում ստացվող և նրա հրապարակած նորմատիվ ակտերի համակարգված հաշվառումը և պահպանումը.

- անձնակազմին տեղեկատվություն տալ գործող օրենսդրության մասին, զինծառայողներին ուսուցանել ծառայության իրավական հիմունքները.

- միջոցառումներ անցկացնել անձնակազմի մեջ իրավական կուլտուրայի ձևավորման, նրանց կողմից օրենքների, զինվորական երդման, զինվորական կանոնադրությունների և ծառայությունը կարգավորող նորմատիվ-իրավական ակտերի պահպանման ուղղությամբ.

- մասնակցել զորամասի անձնակազմի իրավական դաստիարակման կազմակերպմանը.

- զորամասի հրամանատարի ցուցումով անցկացնել ծառայողական քննություն.

- հետաքննության անցկացման ընթացքում աջակցել հետաքննիչների աշխատանքը, նրան ցույց տալ համապատասխան օգնություն.

- համագործակցել զինվորական դատախազության, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության քննչական ծառայության, ռազմական ոստիկանության, ինչպես նաև այլ իրավապահ մարմինների հետ.

(պարբերությունն ուժը կորցրել է 14.04.11 ՀՕ-124-Ն)

- զորամասի սպաների և ենթասպաների պատվի դատարանների գործունեության ընթացքում ցույց տալ իրավական օգնություն.

- ստորաբաժանումներում ձևավորել իրավական ակտիվը, նրան սովորեցնել զինծառայողների հետ տարվող իրավական աշխատանքների ձևերն ու մեթոդները, ընդհանրացնել և տարածել այդ աշխատանքի փորձը.

- գորամասում ստեղծել և կատարելագործել իրավական աշխատանքի նյութական բազան.

- աշխատանք անցկացնել միջազգային մարդասիրական իրավունքի իրավական պրոպագանդման համար:

(104-րդ հոդվածը փոփ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Գնդի հրետանու պետը

Հոդված 105. Գնդի հրետանու պետը խաղաղ և պատերազմական ժամանակ պատասխանատու է՝

- գնդի բոլոր հրետանային ստորաբաժանումների մարտական կիրառման համար, իր մասնագիտության գծով գնդի անձնակազմի պատրաստության համար, հրետանային ստորաբաժանումների մարտական և զորահավաքային պատրաստականության համար, նրանց անձնակազմերի մարտական պատրաստության, դաստիարակության, զինվորական կարգապահության և բարոյահոգեբանական վիճակի համար, գնդի հրետանային ստորաբաժանումները սպառազինությամբ և ռազմական տեխնիկայով համալրելու, իրեն անմիջականորեն ենթակա ստորաբաժանումներում դրանց ճիշտ օգտագործման, ինչպես նաև իր մասնագիտության գծով ուսումնանյութական բազայի վիճակի համար: Նա ենթարկվում է գնդի հրամանատարին և գնդի հրետանային ստորաբաժանումների անձնակազմի ուղղակի պետն է:

Հոդված 106. Գնդի հրետանու պետը պարտավոր է՝

- մասնակցել գնդի մարտական և զորահավաքային պատրաստականության, մարտական պատրաստության պլանների մշակմանը և կազմակերպել դրանց կատարումն իր մասնագիտության գծով.

- ղեկավարել գնդի հրետանային ստորաբաժանումների մարտական պատրաստությունը, ինչպես նաև գումարտակային հրետանային ստորաբաժանումները իր մասնագիտության գծով.

- վարել գնդի սպաների և ենթասպաների նախապատրաստումը հրետանու մարտական կիրառման գծով, ինչպես նաև զորավարժություններ և պարապմունքներ անցկացնել գնդի հրետանային ստորաբաժանումների հետ իր մասնագիտության գծով.

- գիտենալ գնդի հրետանային ստորաբաժանումների յուրաքանչյուր սպայի, ենթասպայի և սերժանտի բարոյահոգեբանական

հատկանիշները, ընդհուպ մինչև հրանոթի (անձնակազմի, ջոկի) հրամանատարը ներառյալ, մշտապես նրանց հետ անհատական աշխատանք տանել զինվորական դաստիարակության գծով.

- ղեկավարել ուսումնանյութական բազայի սարքավորումը իր մասնագիտության գծով.

- հսկողություն իրականացնել գնդի հրետանային ստորաբաժանումներում սպառազինության և զինամթերքի պահպանության և սպասարկման ժամանակ հակահրդեհային պահանջների կատարման նկատմամբ.

- գնդի հրետանային ստորաբաժանումներում ոչ պակաս, քան տարին երկու անգամ ստուգել սպառազինության տեխնիկական վիճակը, լրակազմության, հաշվառման և պահպանության կարգը.

- ժամանակին ենթականերին հասցնել հրաձգության, զինավարժության պարապմունքների և տեխնիկայի, սարքերի և զինամթերքի հետ աշխատանքի անվտանգության կանոնները և պահանջել դրանց կատարումը:

Գնդի հակաօդային պաշտպանության պետ-դիվիզիոնի հրամանատար

Հոդված 107. Գնդի հակաօդային պաշտպանության պետ-դիվիզիոնի հրամանատարը խաղաղ և պատերազմական ժամանակ պատասխանատու է՝ գնդի հակաօդային պաշտպանության բոլոր միջոցների մարտական կիրառման համար, հակաօդային պաշտպանության ստորաբաժանումները սպառազինությամբ և ռազմական տեխնիկայով համալրելու համար, գնդի անձնակազմը իր մասնագիտության գծով նախապատրաստելու և ուսումնանյութական բազայի վիճակի համար: Նա ենթարկվում է գնդի հրամանատարին և գնդի հակաօդային պաշտպանության ստորաբաժանումների ուղղակի պետն է:

(107-րդ հոդվածը փոփ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 108. Գնդի հակաօդային պաշտպանության պետ-դիվիզիոնի հրամանատարը պարտավոր է՝

- մասնակցել գնդի մարտական և զորահավաքային պատրաստականության, մարտական պատրաստության պլանների մշակմանը և կազմակերպել դրանց կատարումն իր մասնագիտության գծով.



- ղեկավարել գնդի ստորաբաժանումների նախապատրաստումը իր մասնագիտության գծով.

- գնդի սպաներին և ենթասպաներին նախապատրաստել հակաօդային պաշտպանության հարցերով.

- ղեկավարել ուսումնանյութական բազայի կահավորումը իր մասնագիտության գծով:

Իրեն ենթակա դիվիզիոնի նկատմամբ նա կատարում է իր պարտականությունները սույն Կանոնադրքի 129 և 130 հոդվածներին համապատասխան:

(108-րդ հոդվածը փոփ. 19.03.13 ՀՕ-20-Ն)

#### Գնդի ծառայության պետը

Հոդված 109. Գնդի ծառայության պետը (109 - 110 հոդվածների դրույթներով ղեկավարվում են գնդի բոլոր ծառայությունների պետերը՝ հետախուզության պետը, կայի պետը, ֆիզիկական պատրաստության և սպորտի պետը) խաղաղ և պատերազմական ժամանակ պատասխանատու է՝ գնդի համապատասխան տիպի մարտական պատրաստության (տեխնիկական, թիկունքային) ապահովման համար, գնդի ստորաբաժանումներն իր մասնագիտությամբ նախապատրաստելու համար, գունդը իր ծառայության գծով սպառազինությամբ, ռազմական տեխնիկայով և այլ նյութական միջոցներով ապահովելու, դրանց ճիշտ օգտագործման, կարգին և սարքին վիճակում պահելու համար, մարտական և զորահավաքային պատրաստականության և ենթակա ստորաբաժանումների վիճակի համար, նրանց անձնակազմի մարտական պատրաստության, դաստիարակության, զինվորական կարգապահության և բարոյահոգեբանական վիճակի համար, ենթակա ստորաբաժանման կողմից ծառայության օբյեկտներում շրջակա միջավայրի պաշտպանության կանոնների պահպանման և դրանց սանիտարական վիճակի համար, իր մասնագիտության գծով ուսումնանյութական բազայի վիճակի համար:

Հոդված 110. Գնդի ծառայության պետը պարտավոր է՝

- մասնակցել մարտական և զորահավաքային պատրաստականության, մարտական պատրաստության պլանների մշակմանը և կազմակերպել դրանց կատարումը իր մասնագիտության գծով.

- ղեկավարել ծառայության գործունեությունը և իրեն ենթակա ստորաբաժանման ու ծառայության մարտական պատրաստությանը, դրանցում պահպանել ներքին կարգուկանոն.

- գիտենալ անմիջականորեն իրեն ենթակա ստորաբաժանման և ծառայության յուրաքանչյուր սպայի, ենթասպայի և սերժանտի գործնական և բարոյահոգեբանական հատկանիշները, նրանց հետ անհատական աշխատանք տանել զինվորական դաստիարակության գծով.

- գնդի սպաների, ենթասպաների և ստորաբաժանումների հետ պարապմունքներ անցկացնել իր մասնագիտության գծով, միջոցներ ձեռնարկել համապատասխան որակյալ մասնագետների պատրաստման համար.

- գիտենալ իր ծառայության գծով սպառազինության, ռազմական տեխնիկայի և այլ նյութական միջոցների առկայությունը, վիճակը, ինչպես նաև կառուցվածքը և շահագործման (օգտագործման) կանոնները, ժամանակին միջոցառումներ անցկացնել իրեն ենթակա ստորաբաժանման և ծառայության սպառազինության, ռազմական տեխնիկայի, սարքավորման և ունեցվածքի չափաբանական ապահովման ուղղությամբ, վերահսկողություն իրականացնել և միջոցներ ձեռնարկել ստորաբաժանման կայանատեղում ենթակա պահեստի, սպառազինության ու տեխնիկայի սարքավորման վստահելի պահպանության ու կազմակերպման ուղղությամբ.

- հետևել իր ծառայության գծով զինամթերքի, ռազմական տեխնիկայի և այլ նյութական միջոցների սարքին վիճակին ստորաբաժանումներում և գնդի պահեստում, կազմակերպել դրանց ճիշտ շահագործումը (օգտագործումը) և ապահովել այդ ընթացքում անվտանգության պահանջների կատարումը.

- հսկողություն իրականացնել ծառայության սպառազինության և ռազմական տեխնիկայի վրա, վառելանյութի և քսանյութերի խնայողաբար օգտագործման և ճիշտ գործադրման նկատմամբ.

- վարել սահմանված հաշվառում և հաշվետվություն, պարբերաբար կատարել հաշվառման տվյալների փոխստուգում ստորաբաժանումների և գնդի պահեստի հետ, ժամանակին հայտեր ներկայացնել իր ծառայության գծով զինամթերքի, ռազմական տեխնիկայի և այլ նյութական միջոցների ձեռքբերման համար, իրականացնել դրանց ստացումը, պահպանությունը, բաշխումը ստորաբաժանումներին և ժամանակին նորոգել (թարմացնել) անձեռնմխելի պաշարը.

- կազմակերպել գնդում իր ծառայության գծով սպառազինության և ռազմական տեխնիկայի (ունեցվածքի) նորոգման աշխատանքը, վերահսկել դրա անցկացման որակն ու ժամկետները, ժամանակին նորոգման հանձնել այն սպառազինությունը և ռազմական տեխնիկան (ունեցվածքը), որ հնարավոր չէ նորոգել սեփական ուժերով.

- հետազոտել գունդ ներմուծվող և գնդից դուրս բերվող սպառազինությունն ու ռազմական տեխնիկան իր ծառայության գծով.

- միջոցառումներ անցկացնել իր ծառայության գծով զինամթերքի, ռազմական տեխնիկայի և այլ նյութական միջոցների հետ կապված պատահարների կանխման համար, պարզել դրանց պատճառները և միջոցներ ձեռնարկել վերացման համար, իրեն ենթակա ստորաբաժանումում և ծառայությունում հսկողություն իրականացնել հակահրդեհային պահանջների կատարման նկատմամբ, ղեկավարել շրջակա միջավայրի պաշտպանության գծով անցկացվող միջոցառումներ.

- մասնակցել գյուտարարական և նորարարական աշխատանքներին, կազմակերպել դրանք ենթակա ծառայությունում և ստորաբաժանումում.

- ստուգել մարտական հերթապահության և օրվա վերակարգի ծառայության կատարումը գնդի հրամանատարի հաստատած կարգի համաձայն.

- ղեկավարել իր մասնագիտության գծով ուսումնանյութական բազայի կահավորման գործը:

Հոդված 111. Գնդի ծառայության պետը իր մասնագիտության գծով իրավունք ունի՝

- ստորաբաժանումների հրամանատարներին ցուցումներ և հանձնարարականներ տալ անձնակազմի մարտական պատրաստության և սպառազինության, մարտական տեխնիկայի և նյութական այլ միջոցների շահագործման (օգտագործման) վերաբերյալ.

- անցկացնել զինամթերքի, ռազմական տեխնիկայի և նյութական այլ միջոցների առկայության և վիճակի հանկարծակի ստուգումներ.

- դադարեցնել սպառազինության և տեխնիկայի շահագործում այնպիսի թերությունների հայտնաբերման դեպքում, որոնք կարող են հանգեցնել պատահարների կամ դրանց շարքից դուրս գալուն, ինչպես նաև անվտանգության կանոնները չպահպանելու դեպքում:

Հայտնաբերված բոլոր թերությունների և դրանց վերացման ուղղությամբ ձեռնարկված միջոցների մասին ծառայության պետը պարտավոր է անհապաղ զեկուցել իր անմիջական պետին:

Գնդի ինժեներական ծառայության պետը

Հոդված 112. Գնդի ինժեներական ծառայության պետը ենթարկվում է գնդի հրամանատարին և գնդի ինժեներասակրային ստորաբաժանման անձնակազմի ուղղակի պետն է: Ի լրումն 109-111 հոդվածներում շարադրվածի նա պարտավոր է՝

- մասնակցել գունդը հակառակորդի զանգվածային ոչնչացման զենքից պաշտպանելու միջոցառումների մշակմանը.

- ոչ պակաս, քան տարեկան երկու անգամ ստուգել գնդի ստորաբաժանումներում և պահեստում ինժեներական սպառազինության առկայությունն ու վիճակը, անցկացնել դրանց ամենամյա գույքագրում:

Գնդի ռադիացիոն, քիմիական և կենսաբանական պաշտպանության ծառայության պետ

(վերնագիրը փոփ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 113. Գնդի ռադիացիոն, քիմիական և կենսաբանական պաշտպանության ծառայության պետը ենթարկվում է գնդի հրամանատարին և գնդի քիմիական պաշտպանության ստորաբաժանման անձնակազմի ուղղակի պետն է: Նա պատասխանատու է գնդում ռադիացիոն, քիմիական և կենսաբանական պաշտպանության միջոցառումների իրականացման համար և պարտավոր է՝

- պատրաստել քիմիկ-հրահանգիչներ և արտահաստիքային քիմիկ-հետախույզներ.

- ապահովել գնդի ռադիացիոն, քիմիական և կենսաբանական պաշտպանության միջոցառումների կազմակերպումը, մշտապես բացահայտել ռադիացիոն, քիմիական իրավիճակը, գնդի տեղաբաշխման և մարտական գործողությունների շրջանում իմանալ օդի վերգետնյա շերտի օդերևութաբանական իրադրությունը.

- ոչ պակաս, քան տարին երկու անգամ ստուգել ստորաբաժանումներում և գնդի պահեստում ռադիացիոն, քիմիական և

կենսաբանական պաշտպանության սպառազինության, անհատական միջոցների առկայությունը և տեխնիկական վիճակը.

- յուրաքանչյուր ուսումնական փուլի սկզբում կազմակերպել և իրականացնել անձնակազմի հակազգերի տեխնիկական ստուգումը և հարմարեցումը:

(113-րդ հոդվածը խմբ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Գնդի բժշկական ծառայության պետը

Հոդված 114. Գնդի բժշկության ծառայության պետը ենթարկվում է գնդի հրամանատարին և բժշկական ծառայության անձնակազմի ուղղակի պետն է:

Ի լրումն 109-111 հոդվածներում շարադրվածի, նա պարտավոր է՝

- մասնակցել գունդը զանգվածային ոչնչացման զենքից պաշտպանելու, ինչպես նաև գնդի տեղաբաշխման շրջանում միջոցառումների մշակմանը.

- անցկացնել բուժական-կանխարգելիչ և բժշկական ծառայության վրա դրված հակահամաճարակային միջոցառումներ, ուսումնասիրել անձնակազմի ուսումնամարտական գործունեության համար անվտանգ պայմանների ապահովման վիճակը և հետևել դրա տեղավորման, սննդի, ջրամատակարարման, բաղնիք-վազքատնային սպասարկման սահմանված նորմերի պահպանմանը, վերահսկել գնդի տեղաբաշխման շրջանի սանիտարական վիճակը.

- կազմակերպել անձնակազմի բժշկական քննությունը, մասնակցել ամբուլատոր ընդունելությանը, հետազոտել գնդի բուժկետում գտնվող և բուժական հիմնարկներ ուղարկվող հիվանդներին, գիտենալ գնդի բուժկետում տեղավորված հիվանդների վիճակը և վերահսկել նրանց բուժումը, գիտենալ այլ բուժհիմնարկում տեղավորված հիվանդների վիճակը, պարբերաբար այցելել նրանց.

- կազմակերպել գնդի անձնակազմի բժշկական ապահովությունը մարտական պատրաստության պարապմունքների, ինչպես նաև մարզական միջոցառումների անցկացման ժամանակ.

- իրականացնել բժշկական վերահսկողություն գնդի անձնակազմի ֆիզիկական պատրաստության նկատմամբ և ֆիզիկական պատրաստության ու սպորտի պետի հետ միասին միջոցառումներ մշակել անձնակազմի առողջության ամրապնդման և ֆիզիկական զարգացման ուղղությամբ.

- կազմակերպել անձնակազմի զինվորական բժշկական պատրաստությունը, անձնակազմի հետ տարվող աշխատանքի գծով գնդի հրամանատարի տեղակալի համագործակցությամբ զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների շրջանում իրականացնել բժշկական գիտելիքների և առողջ կենցաղի քարոզչություն.

- մասնակցել սննդի շաբաթական ճաշացանկի մշակմանը, մշտական բժշկական հսկողություն սահմանել անձնակազմի սննդի տրման կարգի, սննդի և ջրի որակի նկատմամբ.

- մշտական բժշկական հսկողություն սահմանել խրոնիկական հիվանդություններ ունեցող անձանց նկատմամբ, նրանց առողջության ամրապնդման վերաբերյալ հանձնարարականները հաղորդել ստորաբաժանումների հրամանատարներին և վերահսկել դրանց կատարումը, գնդի հրամանատարին բժշկական եզրակացություն ներկայացնել դիետիկ և լրացուցիչ սննդի կարիք ունեցող զինվորների և սերժանտների մասին.

- ստորաբաժանումների հրամանատարների և անձնակազմի հետ տարվող աշխատանքի գծով նրանց տեղակալների, գնդի զինվորական հոգեբանի հետ համատեղ ի հայտ բերել ֆիզիկական ու հոգևոր զարգացման շեղումներ և ալկոհոլամոլության, թունամոլության ու թմրամոլության հակում ունեցող զինծառայողներին, միջոցներ ձեռնարկել նրանց բուժման համար.

- վերահսկել գնդի տեղաբաշխման շրջանի ճաշարանների, բնակելի շինությունների և տնտեսական ծառայությունների սանիտարական վիճակը, հսկողություն իրականացնել անձնակազմի լողանալու, անկողնային և ներքնազգեստային սպիտակեղենի, սրբիչների, գուլպաների և ոտնափաթաթանների ժամանակին փոխելու նկատմամբ.

- վերլուծել գնդի անձնակազմի հիվանդացումը, վերլուծության արդյունքները հիվանդությունների կանխարգելման և սանիտարական վիճակի բարելավման մասին առաջարկությունների հետ ամեն ամիս զեկուցել գնդի հրամանատարին, վարակիչ հիվանդությունների և գնդի համաճարակային վիճակի վրա անդրադարձող պատահարների ու վնասվածության հետևանքով զինծառայողների հոսպիտալացման յուրաքանչյուր դեպքի մասին անմիջապես զեկուցել գնդի հրամանատարին.

- կազմակերպել դեղամիջոցների և առաջին հերթին, թունավոր ու թմրեցնող դեղամիջոցների ու պատրաստուկների հաշվառումն ու

պահպանումը, բժշկական ունեցվածքն օգտագործել ըստ նշանակության:

(114-րդ հոդվածը փոփ., լրաց. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Գնդի ֆինանսական ծառայության պետը

Հոդված 115. Գնդի ֆինանսական ծառայության պետը ենթարկվում է գնդի հրամանատարին, ի լրումն 109-111 հոդվածներում շարադրվածի, նա պատասխանատու է գնդի ֆինանսական ապահովման, նրա ֆիզիկական տնտեսության վիճակի համար և պարտավոր է՝

- կազմակերպել և վարել գնդի ֆինանսական տնտեսությունը, ապահովել դրամական միջոցների պլանավորումը, պահանջը, ֆինանսական հաշվառման և հաշվետվության ճշտությունը, գնդի հրամանատարի տեղակալների և ծառայությունների պետերի հետ միասին կազմել և գնդի հրամանատարի հաստատմանը ներկայացնել առաջիկա ժամանակահատվածի դրամական միջոցների ծախսումների նախահաշիվը, ժամանակին ապահովել անձնակազմի դրամական բավարարումը.

- հսկողություն իրականացնել դրամական միջոցների ծախսման, գնդի պաշտոնատար անձանց կողմից ֆինանսական կարգապահության պահպանման նկատմամբ, կորուստների, պակասորդների, հափշտակումների, նյութական և դրամական միջոցների անօրինական ծախսումների հետևանքով պետությանը պատճառած վնասը ժամանակին և ամբողջությամբ փոխհատուցելու նկատմամբ, ստուգել գնդի հաշվետու անձանց.

- ապահովել դրամական փաստաթղթերի, վստահված դրամական միջոցների ու արժեքների անկորուստ պահպանությունը, ամեն օր համեմատել դրամական միջոցների և արժեքների առկայությունը հաշվառման տվյալների հետ:

Գնդի ֆիզիկական պատրաստության և սպորտի պետը

Հոդված 116. Գնդի ֆիզիկական պատրաստության և սպորտի պետը ենթարկվում է գնդի հրամանատարի տեղակալին: Ի լրումն 109-111 հոդվածներում շարադրվածի, նա պատասխանատու է ֆիզիկական պատրաստության և սպորտի կազմակերպման համար և պարտավոր է՝

- ամենօրյա հսկողություն իրականացնել ստորաբաժանումներում ֆիզիկական պատրաստության և մարզական միջոցառումների նկատմամբ և հետևել գնդի անձնակազմի ֆիզիկական զարգացմանը.

- գնդի ստորաբաժանումների հրամանատարներին օգնություն ցույց տալ ֆիզիկական պատրաստության և մարզական պարապմունքների կազմակերպման ու անցկացման մեթոդիկայի հարցում.

- պատրաստել ստորաբաժանումների արտահաստիքային մարզական կազմակերպիչներ, ղեկավարել և վերահսկել նրանց աշխատանքը.

- մշակել գնդի մարզական աշխատանքի պլանը, կազմակերպել և անցկացնել գնդի մարզական մրցումներ, մարզական տոներ և մարզական այլ միջոցառումներ, թեկնածուներ ընտրել գնդի մարզական թիմերի համար և ղեկավարել նրանց մարզումները.

- գնդի բժշկական ծառայության պետի հետ միասին միջոցառումներ մշակել գնդի անձնակազմի ֆիզիկական զարգացման և առողջության վիճակի բարելավման, պարապմունքների ընթացքում վնասվածքի կանխարգելման ուղղությամբ և մասնակցել դրանց անցկացմանը.

- գնդի զինծառայողներին մարզական կոչումներ, կարգեր, դատավորական կարգեր շնորհելու և նրանց մարզական կրծքանշաններով պարգևատրելու համար ձևակերպել փաստաթղթեր, վարել գնդում ֆիզիկական պատրաստության և մարզական աշխատանքի արդյունքների հաշվառում:

Գնդի հետախուզության պետը

Հոդված 117. Գնդի հետախուզության պետը ենթարկվում է գնդի շտաբի պետին և գնդի հետախուզական ստորաբաժանման անձնակազմի ուղղակի պետն է: Ի լրումն 109-111 հոդվածներում ասվածի, նա պարտավոր է՝

- գիտենալ գնդի գործողությունների հնարավոր ուղղությամբ դիմակայող զինված ուժերի խմբավորումը, դրա մարտական և թվական կազմը, զորամիավորումների, զորամասերի և ստորաբաժանումների կազմակերպական-հաստիքային կառուցվածքը, նրանց սպառազինությունն ու մարտական տեխնիկան, գործողության տակտիկան.

- հավաքել, վերլուծել և ընդհանրացնել տվյալներ հակառակորդի ու տեղանքի մասին և ժամանակին զեկուցել դրանք գնդի հրամանատարին.

- ոչ պակաս, քան տարեկան երկու անգամ գնդի ստորաբաժանումներում և պահեստներում ստուգել հետախուզական սպառազինության և ռազմական տեխնիկայի առկայությունն ու վիճակը:

#### Գնդի կապի պետը

Հոդված 118. Գնդի կապի պետը ենթարկվում է գնդի շտաբի պետին և գնդի կապի ստորաբաժանման անձնակազմի ուղղակի պետն է: Ի լրումն 109-111 հոդվածներում ասվածի, նա պատասխանատու է գնդում կապը ժամանակին կազմակերպելու, ապահովելու, նրա անվտանգության պահանջների ապահովման համար և պարտավոր է՝

- ապահովել գնդում անխափան կապի կազմակերպումը և պահպանումը.

- մշակել կապի վերաբերյալ փաստաթղթեր և միջոցառումներ նրա անվտանգության ապահովման համար, վերահսկել դրանց կատարումը գնդի անձնակազմի կողմից.

- իրականացնել փոստային առաքումների ուղարկումը գնդից և դրանց ստացումը գնդում և ստորաբաժանումներում.

- ոչ պակաս, քան տարեկան երկու անգամ ստուգել կապի միջոցների և կառավարման ավտոմատացված համակարգի առկայությունն ու տեխնիկական վիճակը գնդի ստորաբաժանումներում ու պահեստներում:

#### Գնդի չափագիտական ծառայության պետը

(վերնագիրը փոփ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 119. Գնդի չափագիտական ծառայության պետը ենթարկվում է գնդի շտաբի պետին և չափագիտական լաբորատորիայի (չափիչ տեխնիկական կետի) անձնակազմի ուղղակի պետն է: Սույն Կանոնագրքի 109-111 հոդվածներում, սահմանվածներից բացի, նա պարտավոր է՝

- կազմակերպել սպառազինության և ռազմական տեխնիկայի չափագիտական ապահովումը, իրականացնել բարդ և պատասխանատու չափումների անմիջական ղեկավարումը.

- ոչ պակաս, քան տարին երկու անգամ ստուգել չափիչ միջոցների վիճակը, կիրառման ու պահպանման ճշտությունը, սպառազինության և ռազմական տեխնիկայի չափագիտական ապահովման ծավալն ու ամբողջականությունը.

- վերլուծել սպառազինության և ռազմական տեխնիկայի չափագիտական ապահովման վիճակը, կազմակերպել սպառազինության և ռազմական տեխնիկայի շահագործման արդյունավետությունն իջեցնող պատճառների կանխարգելման միջոցառումները.

- ցուցաբերել օգնություն չափիչ միջոցները շահագործող անձնակազմին, նրանց հետ անցկացնել գործնական պարապմունքներ.

- վարել գնդի չափիչ միջոցների հաշվառում.

- մասնակցել նոր սպառազինության և ռազմական տեխնիկայի չափագիտական ապահովման մասով ընդունող ու շահագործման հանձնաժողովի աշխատանքներին:

(119-րդ հոդվածը խմբ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

#### Գնդի հրթիռահրետանային սպառազինության ծառայության պետը

Հոդված 120. Գնդի հրթիռահրետանային սպառազինության ծառայության պետը ենթարկվում է գնդի հրամանատարի՝ սպառազինության գծով տեղակալին և հրթիռահրետանային ծառայության անձնակազմի ուղղակի պետն է: Ի լրումն 109-111 հոդվածներում ասվածի, նա պատասխանատու է գնդի պահեստներում զենքի և զինամթերքի պահպանության համար և պարտավոր է՝

- կազմակերպել գնդի հրթիռահրետանային սպառազինության նորոգման և զինամթերքի տեխնիկական գործը, կատարող անձանց ապահովել նյութերով, հատուկ սարքավորումներով և գործիքներով.

- ստորաբաժանումներում մշտապես ստուգել զենքի և զինամթերքի նախապատրաստումը հրաձգության համար և անհրաժեշտության դեպքում օգնել հրամանատարին, վարել հրաձգության ժամանակ ծախսումների և հրթիռների խափանումների, զինամթերքի հաշվառում և հրաձգությունից հետո կազմակերպել ստորաբաժանումներից պարկուճների, անսարք զինամթերքի ընդունումը, ինչպես նաև չպայթած հրթիռների, արկերի, ականների և նոնակների պայթեցումը՝ համազործակցելով ինժեներական ծառայության պետի հետ.

- գնդի ստորաբաժանումներում թույլ չտալ չհաշվառված սպառազինության, զինամթերքի և ռազմատեխնիկական ունեցվածքի պահպանություն, հայտնաբերել սպառազինության վթարների և փչանալու պատճառները, միջոցներ ձեռք առնել դրանց կանխման համար.

- կազմակերպել սպառազինության, զինամթերքի և ռազմատեխնիկական ունեցվածքի ճիշտ պահպանությունը գնդի հրետանային պահեստում, վերահսկողություն իրականացնել գնդի ստորաբաժանումներում դրանց առկայության և պահպանության նկատմամբ, տարեկան ոչ պակաս, քան երկու անգամ ստուգել դրանց տեխնիկական վիճակը, կատարել հրազենի ստուգում, ընդ որում ընթացիկ օգտագործման հրազենի համար անցկացնել պլանային ստուգումներ, արդյունքները ձևակերպել ակտով.

- ապահովել անվտանգության պահանջների կատարումը սպառազինության և զինամթերքի օգտագործման ու նորոգման ժամանակ.

- ամեն ամիս գնդի հրամանատարի՝ սպառազինության գծով տեղակալին զեկուցել գնդի հրթիռահրետանային ամբողջ սպառազինության նորոգման ու տեխնիկական սպասարկման պլանների կատարման և զինամթերքի պաշարների ծախսի մասին:

(120-րդ հոդվածը փոփ., լրաց. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Գնդի զրահատանկային ծառայության պետը

Հոդված 121. Գնդի զրահատանկային ծառայության պետը ենթարկվում է գնդի հրամանատարի՝ սպառազինության գծով տեղակալին և գնդի զրահատանկային ծառայության անձնակազմի ուղղակի պետն է: Ի լրումն 109-111 հոդվածներում շարադրվածի, նա պարտավոր է՝

- մշակել և իրականացնել միջոցառումներ սահմանված ժամկետներում զրահատանկային սպառազինությունն ու ռազմական տեխնիկական մարտական պատրաստության բերելու և հավաքակայանից դրանք դուրս բերելու համար.

- պլանավորել զրահատանկային սպառազինության և ռազմական տեխնիկայի շահագործումը և տարեկան առնվազն երկու անգամ ստուգել դրանց տեխնիկական վիճակը.

- մասնակցել հավաքակայանի սարքավորման կատարելագործման աշխատանքների ղեկավարմանը, հավաքակայանում ստուգել ներքին ծառայությունը և ձգտել վերացնելու բացահայտված թերությունները.

- վարել գնդի զրահատանկային սպառազինության և ռազմական տեխնիկայի վնասվածքների հաշվառում.

- ապահովել անվտանգության պահանջների կատարումը զրահատանկային սպառազինության և ռազմական տեխնիկայի

սպասարկման, շահագործման, վերանորոգման և էվակուացման ժամանակ, ինչպես նաև հակահրդեհային միջոցառումների անցկացումը հավաքակայանում և մեքենաների վրա:

Գնդի ավտոմոբիլային ծառայության պետը

Հոդված 122. Գնդի ավտոմոբիլային ծառայության պետը ենթարկվում է գնդի հրամանատարի՝ սպառազինության գծով տեղակալին և գնդի ավտոմոբիլային ծառայության անձնակազմի ուղղակի պետն է: Ի լրումն 109-111 հոդվածներում շարադրվածի, նա պարտավոր է՝

- մշակել և իրականացնել միջոցառումներ սահմանված ժամկետներում ավտոմոբիլային տեխնիկական մարտական պատրաստության բերելու և հավաքակայանից դուրս բերելու համար.

- միջոցներ ձեռնարկել մոտոռեսուրսները ճիշտ և խնայողաբար օգտագործելու, ավտոմոբիլային տեխնիկայի ծառայության ժամկետները երկարացնելու համար, տարեկան առնվազն 2 անգամ ստուգել նրա տեխնիկական վիճակը.

- պլանավորել ավտոմոբիլային տեխնիկայի շահագործումը, դրա ամենօրյա օգտագործման համար վերակարգ սահմանել, իրականացնել մեքենաների՝ ժամանակին և սարքին վիճակում ուղերթ դուրս գալու և հավաքակայան վերադառնալու հսկողությունը.

- մասնակցել հավաքակայանի սարքավորման կատարելագործման աշխատանքների ղեկավարմանը, հավաքակայանում ստուգել ներքին ծառայությունը և ձգտել վերացնելու բացահայտված թերությունները.

- կատարել ավտոմոբիլային տեխնիկայի պատահարների վերլուծություն, բացահայտել դրանց ծագման պատճառները, միջոցառումներ մշակել և իրականացնել դրանց կանխարգելման համար.

- ապահովել անվտանգության պահանջների կատարումը ավտոմոբիլային տեխնիկայի շահագործման, սպասարկման, վերանորոգման և էվակուացման ժամանակ, ինչպես նաև հակահրդեհային միջոցառումների անցկացումը հավաքակայանում և մեքենաների վրա:

Գնդի վառելիքի և քսանյութերի ծառայության պետը

Հոդված 123. Գնդի վառելիքի և քսանյութերի ծառայության պետը ենթարկվում է գնդի հրամանատարի՝ թիկունքի գծով տեղակալին և

գնդի վառելիքի ծառայության անձնակազմի ուղղակի պետն է: Ի լրումն 109-111 հոդվածներում շարադրվածի, նա պատասխանատու է վառելիքի, քսանյութերի և հատուկ հեղուկների խնայողական օգտագործման, ինչպես նաև դրանց հետ վարվելիս՝ անվտանգության պահանջների կատարման համար և պարտավոր է՝

- վերահսկել վառելիքի և քսանյութերի ծախսը և միջոցառումներ անցկացնել գնդի ստորաբաժանումներում դրանց խնայողական օգտագործման համար.

- ամսական առնվազն մեկ անգամ գնդի պահեստում և ստորաբաժանումներում ստուգել վառելիքի, հատուկ հեղուկների առկայությունն ու որակը, ինչպես նաև ծառայության տեխնիկական միջոցների առկայությունն ու վիճակը.

- կազմակերպել ծառայության տեխնիկական միջոցների ճիշտ շահագործումը, վառելիքի, քսանյութերի, հատուկ հեղուկների և տեխնիկական միջոցների ընդունման, պահպանման և ստորաբաժանումների բացթողման աշխատանքը, ինչպես նաև լցակայանների աշխատանքը՝ ապահովելով հակահրդեհային միջոցառումների և անվտանգության պահանջների կատարումը.

- կազմակերպել բանեցված յուղերի հավաքումն ու հանձնումը:

#### Գնդի պարենային ծառայության պետը

Հոդված 124. Գնդի պարենային ծառայության պետը ենթարկվում է գնդի հրամանատարի՝ թիկունքի գծով տեղակալին և գնդի պարենային ծառայության անձնակազմի ուղղակի պետն է: Ի լրումն 109-111 հոդվածներում շարադրվածի, նա պատասխանատու է անձնակազմի համար ժամանակին լավորակ սնունդ կազմակերպելու, ծառայության օբյեկտների սանիտարական վիճակի համար և պարտավոր է՝

- ապահովել լավորակ սնունդ (այդ թվում՝ դիետիկ և բուժական), յուրաքանչյուր զինծառայողին հասցնել օրապարենի (մթերաբաժնի) սահմանված նորմերը, ամսական առնվազն մեկ անգամ խոհարարների հետ անցկացնել սննդի ստուգիչ-ցուցադրական պատրաստում.

- գնդի բժշկական ծառայության պետի, ճաշարանի պետի և հրահանգիչ-խոհարարի հետ կազմել մթերքների բաշխումը.

- գնդի ստորաբաժանումներում, պահեստում և այլ ծառայություններում ամսական առնվազն 1 անգամ ստուգել պարենամթերքի, ծառայության տեխնիկայի և գույքի առկայությունն ու որակական վիճակը.

- ղեկավարել ճաշարանի, մթերային պահեստի և օժանդակ տնտեսության աշխատանքը, գնդի հրամանատարի՝ թիկունքի գծով տեղակալի բացակայության ժամանակ հրահանգավորել ճաշարանի հերթապահին.

- իրականացնել կարտոֆիլի և բանջարեղենի սեզոնային մթերումներ, վերամշակել և տեղավորել պահելու համար, ինչպես նաև գնդի կարիքների համար սառույցի, խոտի և ծղոտի պաշար նախապատրաստել.

- ապահովել սանիտարահիգիենիկ պահանջների պահպանումը մթերքների մշակման և պահպանման, սննդի պատրաստման և ընդունման ժամանակ, մթերային պահեստի, ճաշարանի շինությունների և ճաշարանախոհանոցային ամանեղենի, ինչպես նաև տեխնոլոգիական, սառեցնող և ոչ մեխանիկական սարքավորումների պահպանման և սպասարկման ժամանակ, ապահովել անվտանգության պահանջների կատարումը, դրանց շահագործման ընթացքում.

- կազմակերպել սննդի մնացորդների հավաքման և օգտագործման համար կառույցների ստեղծման աշխատանքները, միջոցներ ձեռնարկել ճաշարանում մնացորդները ժամանակին հավաքելու և զորամասի օժանդակ տնտեսություն տանելու համար:

#### Գնդի իրային ծառայության պետը (վերնագիրը փոփ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 125. Գնդի իրային ծառայության պետը ենթարկվում է գնդի հրամանատարի՝ թիկունքի գծով տեղակալին և գնդի իրային ծառայության անձնակազմի ուղղակի պետն է: Ի լրումն 109-111 հոդվածներում շարադրվածի, նա պատասխանատու է գունդն իրեղենով և սանիտարատնտեսական գույքով ըստ մատակարարման նորմերի ապահովելու, գնդի բաղնիքավացքային սպասարկման, համազգեստի, կոշիկեղենի անհատական հարմարեցման համար և պարտավոր է՝

- ժամանակին պահանջել և կազմակերպել իրեղենի և սանիտարատնտեսական գույքի ստացումը, պահպանումն ու գնդի ստորաբաժանումներին բացթողումը, ինչպես նաև հաշվեցուցակային (տարբելային) մշակութաժամանցային գույքի պահպանումը և ստորաբաժանումներին դրա բացթողումը, ստորաբաժանումներում

համազգեստն ու կոշիկները բաժանելիս կազմակերպել դրանց անհատական հարմարեցումը.

- առնվազն 2 ամիսը մեկ անգամ գնդի ստորաբաժանումներում և պահեստներում հաշվառման տվյալների համաձայն ստուգել իրեղենի և տնտեսական ունեցվածքի առկայությունն ու վիճակը, ինչպես նաև պահպանման ու խնայողության պայմանները.

- ստորաբաժանումների ավագների հետ պարապմունքներ անցկացնել իրային ունեցվածքի պահպանման, խնայողության, նորոգման ու հաշվառման վերաբերյալ.

- ապահովել սպաների, ենթասպաների պայմանագրային ծառայության զինծառայողների և կին զինծառայողների համազգեստի ժամանակին բացթողումը, վերահսկել համազգեստի կարի որակը.

- ստորաբաժանումների կենցաղային սպասարկման սենյակներն ապահովել անհրաժեշտ գույքով և մազերը կտրելու, համազգեստի, կոշիկների ընթացիկ նորոգումն իրականացնելու համար անհրաժեշտ գործիքներով.

- ամեն շաբաթ կազմակերպել ստորաբաժանումների անձնակազմի՝ բաղնիքում լողանալը, այդ օրերին նրանց ապահովել լվացող միջոցներով, բաղնիքի սրբիչներով, ներքին և անկողնու սպիտակեղենի, սրբիչների, գուլպաների ու ոտքի փաթաթանների փոխնորդներով, հրահանգավորել բաղնիքի հերթապահին.

- ժամանակին կազմակերպել ներքին, անկողնու սպիտակեղենի և սրբիչների լվացումը.

- ապահովել անվտանգության պահանջների կատարումը տեխնիկական միջոցների շահագործման ժամանակ և սանիտարական պահանջների կատարումը իրային ծառայության օբյեկտներում:

(125-րդ հոդվածը փոփ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

#### Գնդի ակումբի պետը

Հոդված 126. Գնդի ակումբի պետը պատասխանատու է՝ ակումբի ու գրադարանի աշխատանքը կազմակերպելու, քարոզչության տեխնիկական միջոցները, մշակութաժամանցային ունեցվածքն ու գրքային ֆոնդը ճիշտ օգտագործելու և խնայելու, ակումբի և գրադարանի սարքավորումները անվնաս պահելու, շահագործման կանոններն ու հրդեհային անվտանգության պահանջները պահպանելու համար: Նա ենթարկվում է գնդի հրամանատարի՝

անձնակազմի հետ աշխատանքի գծով տեղակալին: Գնդի ակումբի պետը պարտավոր է՝

- ակումբի և գրադարանի մշակութաժամանցային աշխատանքը կազմակերպել գնդի մարտական պատրաստության խնդիրների և համապատասխան.

- մասնակցել ստորաբաժանումներում մշակութաժամանցային աշխատանքների անցկացմանը և անձնակազմի ժամանցի կազմակերպմանը.

- անհրաժեշտ պայմաններ ապահովել զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների գեղարվեստական ինքնագործունեության, նրանց մեջ գեղագիտական բարձր ճաշակի ձևավորման համար.

- ղեկավարել գրադարանի աշխատանքը, հետևել գրքային ֆոնդի ճիշտ համալրմանը և օգտագործմանը.

- իրացնել թերթերի և ամսագրերի կուլեկտիվ բաժանորդագրություն.

- մասնակցել գնդի տարածքում, ուսումնական բազայի՝ իրեն կցված օբյեկտներում, ինչպես նաև ստորաբաժանումներում տեսողական քարոզչության ձևավորմանը.

- եռամսյակի ընթացքում առնվազն մեկ անգամ ստուգել ստորաբաժանումների համար առանձնացված քարոզչության տեխնիկական միջոցների և մշակութաժամանցային ունեցվածքի վիճակը, ապահովել դրանց ժամանակին նորոգումը.

- ակումբում ապահովել գույքի տեխնիկական շահագործման կանոնների և հրդեհային անվտանգության պահանջների պահպանումը.

- ակումբում ապահովել գույքի տեխնիկական շահագործման կանոնների և հրդեհային անվտանգության պահանջների պահպանումը.

#### Գնդի սպա-հոգեբանը

Հոդված 126.1. Գնդի սպա-հոգեբանը խաղաղ և պատերազմական ժամանակ պատասխանատու է գնդում հոգեբանական աշխատանքի կազմակերպման, անձնակազմի հոգեբանական վիճակի, զինծառայողների հոգեկան կայունության պահպանմանն ուղղված աշխատանքների համար: Նա ենթարկվում է գնդի հրամանատարի՝ անձնակազմի հետ տարվող աշխատանքի գծով տեղակալին, ղեկավարում է զորամասի հոգեբանական օգնության և վերականգնողական կետի աշխատանքները:



(126.1-ին հոդվածը լրաց. 19.03.13 ՀՕ-20-Ն)

Հոդված 126.2. Գնդի սպա-հոգեբանը պարտավոր է՝

- իմանալ գնդի յուրաքանչյուր սպայի և ենթասպայի հոգեբանական նկարագիրը, առանձին ստորաբաժանումների բոլոր զինծառայողներին, ինչպես նաև այն զինծառայողներին, որոնց նկատմամբ պահանջվում է հոգեբանական և մանկավարժական հասուն ուշադրություն:

- կազմակերպել և անցկացնել գնդի զինծառայողների սոցիալ-հոգեբանական ու բարոյահոգեբանական գործընթացների և երևույթների ուսումնասիրություններ, դրանց արդյունքներով առաջարկություններ ներկայացնել զորամասի հրամանատարին և հրամանատարի՝ անձնակազմի հետ տարվող աշխատանքի գծով տեղակալին:

- առօրյա գործունեության, մարտական (ուսումնամարտական) առաջադրանքների կատարման, մարտական պատրաստականության, մարտական հերթապահության (մարտական ծառայության), պահակային և ներքին ծառայության կրման ժամանակ կազմակերպել և իրականացնել գնդի անձնակազմի հոգեբանական աշխատանքը:

- կազմել և գնդի հրամանատարի՝ սոցիալ-իրավական աշխատանքների գծով օգնական-սպայի հետ մշտապես ճշտել գնդի սոցիալ-հոգեբանական ու բարոյահոգեբանական բնութագիրը, դրա արդյունքներով համապատասխան աշխատանքների իրականացման ուղղությամբ համագործակցել զորամասի հրամանատարի՝ անձնակազմի հետ տարվող աշխատանքի գծով տեղակալի և զորամասի հոգևոր սպասավորի հետ:

- մասնակցել ըստ ստորաբաժանումների և զինվորական մասնագիտությունների անձնակազմի բաշխման աշխատանքներին:

- անցկացնել զինվորական ծառայությանը և մարտական հերթապահության պայմաններին զինծառայողների հոգեբանական հարմարվողականությանն ուղղված միջոցառումներ, իրականացնել այդ պայմաններում նրանց հոգեբանական ուղեկցությունը:

- պարբերաբար վերլուծել զինվորական կոլեկտիվների հոգեբանական իրավիճակը, իրականացնել հոգեբանական կորուստների կանխատեսում և հաշվարկ, ձեռնարկել աշխատանքներ ինքնավնասման երևույթների կանխարգելման, ինքնավնասման հակված անձանց բացահայտման համար, այդ ուղղությամբ

համագործակցել զորամասի հրամանատարի՝ անձնակազմի հետ տարվող աշխատանքի գծով տեղակալի և զորամասի հոգևոր սպասավորի հետ:

- ենթակա անձնակազմի մոտ հոգեբանական աշխատանքի ձևերին ու մեթոդներին տիրապետելու և դրանք ճիշտ կիրառելու նպատակով կազմակերպել սպաների, ենթասպաների, սերժանտների ուսուցանում:

- կազմակերպել մշտական տեղակայման վայրերից դուրս գեների և զինվորական տեխնիկայի հետ առնչվող անձնակազմի և առանձին զինծառայողների հետ հոգեբանական աշխատանքներ:

- իր գործունեության ընթացքում պահպանել մասնագիտական էթիկայի կանոնները:

- մշտապես համալրել հոգեբանական աշխատանքի համար նախատեսվող ուսումնանյութական բազան:

- զորամասի հրամանատարին և հրամանատարի՝ անձնակազմի հետ տարվող աշխատանքի գծով տեղակալին զեկուցել զինծառայողների, նրանց ընտանիքների անդամների ու գնդի քաղաքացիական անձնակազմի հոգեբանական վիճակի, առաջացած առանձին խնդիրների և իրականացվող միջոցառումների մասին, այդ ուղղությամբ ներկայացնել առաջարկություններ:

(126.2-րդ հոդվածը լրաց. 19.03.13 ՀՕ-20-Ն)

Առանձին գումարտակի հրամանատարը, նրա տեղակալները և ծառայությունների պետերը

Հոդված 127. Առանձին գումարտակի հրամանատարը խաղաղ և պատերազմական ժամանակ կատարում է 90-92 հոդվածներից բխող իր պարտականությունները:

Հոդված 128. Առանձին գումարտակի հրամանատարի տեղակալները և ծառայությունների պետերը իրենց գործնական աշխատանքում ղեկավարվում են գնդի համապատասխան պաշտոնատար անձանց համար նախատեսված պարտականություններով:

Գումարտակի հրամանատարը

Հոդված 129. Գումարտակի հրամանատարը խաղաղ և պատերազմական ժամանակ պատասխանատու է գումարտակի մարտական և զորահավաքային պատրաստության և նրա կողմից

մարտական առաջադրանքների հաջող կատարման, անձնակազմի մարտական պատրաստության դաստիարակության, զինվորական կարգապահության և բարոյահոգեբանական վիճակի, գումարտակում ներքին կանոնների պահպանման, սպառազինության, ռազմական տեխնիկայի և գումարտակի նյութական մյուս միջոցների վիճակի և անվթարության համար: Գումարտակի հրամանատարը ենթարկվում է գնդի հրամանատարին և գումարտակի ողջ անձնակազմի ուղղակի պետն է:

Հոդված 130. Գումարտակի հրամանատարը մարտական պատրաստության և գումարտակում զինվորական դաստիարակության հիմնական կազմակերպիչն է: Գումարտակի հրամանատարը պարտավոր է՝

- ղեկավարել գումարտակի անձնակազմի մարտական պատրաստությունն ու դաստիարակությունը, հմտորեն ղեկավարել գումարտակը.

- պարապմունքներ անցկացնել շտաբի և սպաների, ենթասպաների հետ, ինչպես նաև զորավարություններ ու պարապմունքներ՝ գումարտակի ստորաբաժանումների հետ.

- ղեկավարել գումարտակի մարտական պատրաստության պլանի մշակումն ու կատարումը.

- գիտենալ գումարտակի յուրաքանչյուր սպայի, ենթասպայի և սերժանտի (ավագի) գործնական և բարոյահոգեբանական հատկանիշները, նրանց հետ մշտապես անհատական աշխատանք անցկացնել զինվորական դաստիարակության և մասնագիտական պատրաստության ուղղությամբ.

- զինվորական կոլեկտիվներում հաստատել հրապարակայնություն, սոցիալական արդարություն, զինծառայողների փոխադարձ վստահություն, ստորաբաժանումներում ստեղծել թերությունների, անտարբերության և պասիվության նկատմամբ անհանդուրժողականության մթնոլորտ.

- իրականացնել զինվորական ծառայության, ինչպես նաև ռազմական ուսումնական հաստատություններ ընդունվելու համար թեկնածուների ընտրությունը.

- ստուգել զինվորների, սերժանտների (ավագների) և ենթասպաների ընտրության ճշտությունը պաշտոնների նշանակելիս.

- պահպանել ներքին կարգուկանոնը, կազմակերպել գումարտակի տեղաբաշխման պահպանությունը և ստուգել գումարտակի անձնակազմի պահակային և ներքին ծառայությունների կատարումը.

- ամեն ամիս ամփոփել մարտական պատրաստության, զինվորական կարգապահության և ներքին ու պահակային ծառայության վիճակը.

- գիտենալ գումարտակի ստորաբաժանումներում եղած սպառազինությունը, ռազմական տեխնիկան և ռազմամթերքը, կազմակերպել դրանց ճիշտ շահագործումը և առնվազն երեք ամիսը մեկ անգամ անձամբ ստուգել դրանց առկայությունը, վիճակն ու հաշվառումը.

- կանխել աղետները, վթարները, ռազմական տեխնիկայի վնասվածքները, միջոցառումներ անցկացնել, ինչպես նաև սպառազինության, ռազմական տեխնիկայի և ռազմամթերքի հետ աշխատելիս պարապմունքների, հրաձգության զորավարությունների և աշխատանքի անցկացման ժամանակ իրականացնել անվտանգության պահանջների կատարման հսկողությունը.

- հետևել գումարտակին հատկացված բոլոր շենքերի և շինությունների վիճակին և ճիշտ շահագործմանը, տարածքի՝ գումարտակին կցված հատվածը, այդ թվում նաև հավաքակայանի տարածքի համապատասխան հատվածը մաքուր վիճակում պահելուն.

- ղեկավարել գումարտակի տնտեսությունը:

Գումարտակի հրամանատարի տեղակալը

Հոդված 131. Գումարտակի հրամանատարի տեղակալը խաղաղ և պատերազմական ժամանակ պատասխանատու է գումարտակի մարտական պատրաստականության համար, զինվորական կարգապահության և ներքին կարգուկանոնի, ուսումնանյութական բազան սարքին վիճակում պահելու, այն կատարելագործելու և ուսուցման ժամանակ ճիշտ գործադրելու, գումարտակում բարձրակարգ մասնագետներ պատրաստելու, մարզական-զանգվածային աշխատանքների համար: Նա ենթարկվում է գումարտակի հրամանատարին և գումարտակի ողջ անձնակազմի ուղղակի պետն է: Գումարտակի հրամանատարի բացակայության ժամանակ կատարում է նրա պարտականությունները:

Հոդված 132. Գումարտակի հրամանատարի տեղակալը պարտավոր է՝

- մասնակցել գումարտակի մարտական պատրաստության պլանի մշակմանն ու կատարմանը.

- սպաների, ենթասպաների և սերժանտների հետ անցկացնել հրամանատարական պատրաստության պարապմունքներ, ինչպես նաև պարապմունքներ և զորավարժություններ անցկացնել գումարտակի ստորաբաժանումների հետ.

- ղեկավարել ֆիզպատրաստությունը և գումարտակում անցկացնել մարզական-զանգվածային միջոցառումներ.

- ստուգել գումարտակի ստորաբաժանումներում մարտական պատրաստության կազմակերպումն ու ընթացքը, վերացնել բացահայտված թերությունները և ստորաբաժանումներից հրամանատարներին օգնություն ցույց տալ պարապմունքների կազմակերպման և անցկացման ժամանակ.

- իմանալ գումարտակի յուրաքանչյուր սպայի, ենթասպայի և սերժանտի գործնական և բարոյահոգեբանական հատկանիշները, նրանց հետ մշտապես անհատական աշխատանք տանել զինվորական դաստիարակության և մասնագիտական պատրաստության կատարելագործման ուղղությամբ.

- կազմակերպել և անձամբ անցկացնել միջոցառումներ գումարտակում բարձրակարգ մասնագետների պատրաստման ուղղությամբ.

- սարքին վիճակում պահել գումարտակի ուսումնանյութական բազան և հետևել ուսուցման ժամանակ դրա ճիշտ օգտագործմանը.

- գումարտակի ստորաբաժանումներում վերահսկել սպառազինության, ռազմական տեխնիկայի և նյութական այլ միջոցների պահպանմանն ու խնայողությանը, մասնակցել դրանց ստուգմանը.

- գումարտակի ստորաբաժանումներում պահպանել ներքին կարգուկանոնը, զինվորական կարգապահությունը, վերահսկել օրվա վերակարգի նախապատրաստությունն ու ծառայության կատարումը.

- ղեկավարել գյուտարարական և նորարարական աշխատանքները գումարտակում:

Գումարտակի շտաբի պետը

Հոդված 133. Գումարտակի շտաբի պետը խաղաղ և պատերազմական ժամանակ պատասխանատու է գումարտակի ստորաբաժանումների կառավարումը կազմակերպելու և պահելու, գումարտակի մարտական և զորահավաքային պատրաստականության և մարտական առաջադրանքների հաջող կատարման, մարտական պատրաստության պլանավորման և հաշվառման համար, իրեն անմիջականորեն ենթակա անձնակազմի նախապատրաստման, դաստիարակության, զինվորական կարգապահության և բարոյահոգեբանական վիճակի, գումարտակի անձնակազմի, սպառազինության, ռազմական տեխնիկայի և ռազմամթերքի հաշվառման վիճակի համար: Նա ենթարկվում է գումարտակի հրամանատարին, նրա տեղակալը և գումարտակի ողջ անձնակազմի ուղղակի պետն է:

Գումարտակի հրամանատարի որոշումները կենսագործելիս՝ շտաբի պետն իրավունք ունի գումարտակի հրամանատարին ենթակա անձանց հրամաններ տալ նրա անունից: Տրված առավել կարևոր բոլոր հրամանների մասին շտաբի պետը զեկուցում է գումարտակի հրամանատարին:

Հոդված 134. Գումարտակի շտաբի պետը պարտավոր է՝

- գնդի պլանի և գումարտակի հրամանատարի ցուցումների հիման վրա մշակել գումարտակի մարտական պատրաստության պլանը և վերահսկել նրա կատարումը.

- մշտապես գիտենալ գումարտակի ստորաբաժանումների դրությունն ու վիճակը, ինչպես նաև նրանց առջև դրված խնդիրների կատարման ընթացքը.

- պարապմունքներ անցկացնել գումարտակի անձնակազմի հետ և ղեկավարել իրեն անմիջականորեն ենթակա ստորաբաժանումների պատրաստությունը.

- գիտենալ գումարտակի սպաների, ենթասպաների և սերժանտների գործնական ու բարոյահոգեբանական հատկանիշները, նրանց հետ մշտապես անհատական աշխատանք տանել զինվորական դաստիարակության և մասնագիտական պատրաստության կատարելագործման ուղղությամբ.

- ըստ ստորաբաժանումների բաշխել գումարտակ եկած համալրումը.

- գումարտակում կազմակերպել կապը, ստուգել կապի միջոցների վիճակը և մարտական պատրաստությունը, միջոցառումներ մշակել գաղտնի կառավարման համար և իրականացնել դրանց կատարման հսկողությունը.

- ապահովել գումարտակի հրամանատարի և ավագ պետերի հրամանները ժամանակին և ճիշտ տեղ հասցնելը և ստուգել դրանց կատարումը.

- կազմակերպել գումարտակում ներքին ծառայության կատարումը, ստուգել օրվա վերակարգ նշանակված անձանց պատրաստվածությունը և նրանց ծառայության կատարումը.

- անցկացնել մարտական պատրաստության ստուգումներ, իրականացնել իրավախախտումների հաշվառում.

- գիտենալ գումարտակի ստորաբաժանումներում մարդկանց առկայությունը.

- առնվազն երեք ամիսը մեկ անգամ ստորաբաժանումներում ստուգել սպառազինության, ռազմական տեխնիկայի, ռազմամթերքի հանդերձանքի, կանոնադրությունների, հանձնարարականների, ուսումնական ձեռնարկների և նյութական այլ միջոցների վիճակն ու հաշվառումը, իսկ անձնակազմի հաշվառումն անցկացնել ամեն ամիս: Վերահսկել անվտանգության պահանջների վերաբերյալ զինծառայողների հետ անցկացվող պարապմունքների որակը և դրանց պահպանումը.

- ժամանակին նախապատրաստել և գնդի շտաբ ուղարկել անհրաժեշտ հաղորդումները:

Գումարտակի հրամանատարի տեղակալը՝ անձնակազմի հետ տարվող աշխատանքի գծով

Հոդված 135. Գումարտակի հրամանատարի՝ անձնակազմի հետ տարվող աշխատանքի գծով տեղակալը խաղաղ և պատերազմական ժամանակ պատասխանատու է մարտական առաջադրանքը հաջողությամբ կատարելու, անձնակազմի դաստիարակության, զինվորական կարգապահության և բարոյահոգեբանական վիճակի համար: Նա ենթարկվում է գումարտակի հրամանատարին և ողջ անձնակազմի ուղղակի պետն է:

(135-րդ հոդվածը լրաց. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 136. Գումարտակի հրամանատարի՝ անձնակազմի հետ տարվող աշխատանքի գծով տեղակալը պարտավոր է՝

- մասնակցել գումարտակի մարտական ու գորահավաքային պատրաստականության և մարտական պատրաստության պլանների կատարման ապահովմանը.

- ստորաբաժանման անձնակազմի հետ կազմակերպել և անցկացնել դաստիարակչական աշխատանք յուրաքանչյուր զինծառայողի ազգային և հոգեկան հատկանիշների, կրթական մակարդակի, կրոնի նկատմամբ ունեցած վերաբերմունքի հաշվառումով, նրանց մեջ դաստիարակել Հայրենիքի, զինվորական պարտքի և զինվորական երդման նկատմամբ հավատարմություն, զինվոր-քաղաքացու բարձր մարտական և բարոյահոգեբանական հատկանիշներ.

- կազմակերպել և անցկացնել միջոցառումներ զինվորական կարգապահության ամրապնդման, իրավախախտումների կանխման, զինվորական կռիվների համախմբման, զինվորական ծառայության անվտանգության պայմանների ապահովման ուղղությամբ.

- գիտենալ գումարտակի ստորաբաժանումների յուրաքանչյուր սպայի, ենթասպայի, ավագի, սերժանտի գործնական և բարոյահոգեբանական հատկանիշները, անձնակազմի տրամադրությունը, հասարակական կարծիքը, գործնական միջոցներ ձեռնարկել անձանց միջև հարաբերությունները կարգավորելու, ստորաբաժանումներում բացասական երևույթները կանխելու համար.

- կազմակերպել և անցկացնել անձնական օբյեկտիվ և օպերատիվ տեղեկատվություն աշխարհում և Հայաստանի Հանրապետությունում եղած իրադարձությունների, բանակի և զինծառայողների կյանքի ու ուսումնամարտական գործունեության մասին, զինծառայողների հետ պարապմունքներ անցկացնել հասարակական-պետական պատրաստության պլանով.

- ստորաբաժանումների սպաներին, ենթասպաներին, ավագներին և սերժանտներին սովորեցնել և մեթոդական օգնություն ցույց տալ ենթակաների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպման հարցում.

- կազմակերպել հասարակական կազմակերպությունների հետ զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների փոխգործողությանը.

- ապահովել զինծառայողների նկատմամբ սոցիալական արդարության սկզբունքի պահպանումը, իմանալ զինծառայողների,

նրանց ընտանիքի անդամների, քաղաքացիական անձնակազմի կարիքներն ու պահանջումները, միջոցներ ձեռնարկել նրանց բողոքների ու դիմումների լուծման համար.

- հոգ տանել անձնակազմի հոգևոր պահանջումների բավարարման համար, կազմակերպել նրա կուլտուրական ժամանցը, միջոցներ ձեռնարկել անձնակազմին պարբերական հրատարակություններով և փոստային առաքումներով ապահովելու համար, կազմակերպել դաստիարակչական աշխատանքի անցկացման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների և գույքի ճիշտ օգտագործումն ու խնայողությունը.

- գումարտակի հրամանատարին ժամանակին գեկուցել անձնակազմի զինվորական կարգապահության և բարոյահոգեբանական վիճակի մասին:

(136-րդ հոդվածը լրաց. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Գումարտակի հրամանատարի տեղակալը սպառազինության (տեխնիկական մասի) գծով, (գումարտակի ավտոմոբիլային ծառայության պետը, գումարտակի տեխնիկը)

Հոդված 137. Գումարտակի հրամանատարի սպառազինության (տեխնիկական մասի) գծով տեղակալը (գումարտակի ավտոմոբիլային ծառայության պետը, գումարտակի տեխնիկը) խաղաղ և պատերազմական ժամանակ պատասխանատու է գումարտակի տեխնիկական ապահովման, սպառազինության, ռազմական տեխնիկայի և զինամթերքի տեխնիկական վիճակի, դրանց ճիշտ շահագործման, նորոգման և էվակուացման, գումարտակի անձնակազմի տեխնիկական պատրաստության, իրեն ենթակա ստորաբաժանման մարտական պատրաստության, դաստիարակության և բարոյահոգեբանական վիճակի համար: Նա ենթարկվում է գումարտակի հրամանատարին և հանդիսանում է գումարտակի ողջ անձնակազմի ուղղակի պետը:

Ավտոմոբիլային ծառայության պետը (գումարտակի տեխնիկը) իրեն անմիջականորեն ենթակա ստորաբաժանումների անձնակազմի ուղղակի պետն է:

Հոդված 138. Գումարտակի հրամանատարի՝ սպառազինության (տեխնիկական մասի) գծով տեղակալը (գումարտակի ավտոմոբիլային ծառայության պետը, գումարտակի տեխնիկը) պարտավոր է՝

- մասնակցել գումարտակի մարտական պատրաստության պլանի մշակմանը և կազմակերպել նրա կատարումն իր մասնագիտության գծով.

- ղեկավարել իրեն ենթակա ստորաբաժանման պատրաստությունն ու գործունեությունը.

- գիտենալ անմիջականորեն ենթակա ստորաբաժանման յուրաքանչյուր զինծառայողի գործնական և բարոյահոգեբանական հատկանիշները, նրանց հետ մշտապես անհատական աշխատանք տանել զինվորական դաստիարակության և մասնագիտական պատրաստության կատարելագործման ուղղությամբ.

- ղեկավարել գումարտակի անձնակազմի տեխնիկական պատրաստությունը.

- գումարտակի սպաների և ենթասպաների հետ անցկացնել սպառազինության ու ռազմական տեխնիկայի վարման և ուսումնասիրման, տեխնիկական ապահովման կազմակերպման և իրականացման պարապմունքներ, ինչպես նաև տեխնիկական մասնագիտությունների գծով բարձրակարգ մասնագետների պատրաստման միջոցառումներ.

- կազմակերպել գումարտակի սպառազինության և ռազմական տեխնիկայի, ինչպես նաև ուսումնամարզական միջոցների ճիշտ շահագործումը, նորոգումը, սպասարկումը և էվակուացումը, ղեկավարել դրանց տեխնիկական սպասարկման և նորոգման աշխատանքները, միջոցներ ձեռնարկել տեխնիկական պատրաստության գծով ուսումնանյութական բազայի կատարելագործման ուղղությամբ.

- հետևել ստորաբաժանումներում վառելիքի, քսանյութերի և հատուկ հեղուկների ճիշտ և խնայողական օգտագործմանը.

- գիտենալ գումարտակի սպառազինության և ռազմական տեխնիկայի շահագործման կարգն ու կանոնները, դրանց առկայությունը, տեխնիկական վիճակը և գտնվելու վայրը: Առնվազն 3 ամիսը մեկ անգամ ստուգել գումարտակի սպառազինության, ռազմական տեխնիկայի և նյութական այլ միջոցների տեխնիկական վիճակը և տարեկան առնվազն երկու անգամ ստորաբաժանումներում անցկացնել հրազենի պլանային ստուգում.

- աշխատանք կատարել հավաքակայանի տարածքի՝ գումարտակին կցված հատվածների և շինությունների բարեկարգման ու սարքավորման ուղղությամբ, ինչպես նաև ապահովել ներքին կարգուկանոնի պահպանումը.

- ղեկավարել սպառազինությունը և ռազմական տեխնիկան դաշտային պայմաններում օգտագործելու համար տարվող նախապատրաստական աշխատանքները, միջոցներ ձեռնարկել դրանք անցունակությունը բարձրացնող սարքերով ու միջոցներով ապահովելու համար.

- միջոցներ ձեռնարկել սպառազինության և ռազմական տեխնիկայի հետ կապված պատահարները կանխելու համար, վերլուծել դրանց պատճառները, դրանց և ձեռնարկված միջոցների մասին անմիջապես զեկուցել գումարտակի հրամանատարին.

- ապահովել անվտանգության պահանջների կատարումը սպառազինության և ռազմական տեխնիկայի շահագործման, նորոգման, սպասարկման և էվակուացման ժամանակ, ինչպես նաև հակահրդեհային միջոցառումների իրականացումը հավաքակայանում.

- սահմանված կարգով վարել հաշվառում և ներկայացնել հաշվետվություններ:

(138-րդ հոդվածը խմբ. 14.04.11 ՇՕ-124-Ն)

Գումարտակի հրամանատարի տեղակալը թիկունքի (մատակարարման) գծով

Հոդված 139. Գումարտակի հրամանատարի՝ թիկունքի (մատակարարման) գծով տեղակալը խաղաղ ժամանակ պատասխանատու է թիկունքի ծառայությունների գծով գումարտակի նյութական և տեխնիկական մատակարարման, գումարտակին կցված զորանոցաբնակարանային ֆոնդի պահպանման, իրեն անմիջականորեն ենթակա ստորաբաժանումների մարտական և զորահավաքային պատրաստության, անձնակազմի մարտական պատրաստության, դաստիարակության, զինվորական կարգապահության և բարոյահոգեբանական վիճակի համար: Նա ենթարկվում է գումարտակի հրամանատարին, գումարտակի ողջ անձնակազմի ուղղակի պետն է:

Հոդված 140. Գումարտակի հրամանատարի՝ թիկունքի (մատակարարման) գծով տեղակալը պարտավոր է՝

- մասնակցել գումարտակի մարտական պատրաստականության պլանի մշակմանը և կազմակերպել նրա կատարումը իր մասնագիտության գծով.

- ղեկավարել ենթակա ստորաբաժանումների գործունեությունն ու մարտական պատրաստությունը.

- գիտենալ իրեն անմիջականորեն ենթակա ստորաբաժանումների յուրաքանչյուր զինծառայողի գործնական և բարոյահոգեբանական հատկանիշները, նրանց հետ մշտապես աշխատանք տանել զինվորական դաստիարակության և մասնագիտական պատրաստության կատարելագործման ուղղությամբ.

- գումարտակի թիկունքի ծառայությունների անձնակազմի հետ անցկացնել պարապմունքներ թիկունքային մատակարարման, վաշտերի հրամանատարների ու ավագների հետ վաշտային տնտեսության վարման վերաբերյալ.

- կազմակերպել գումարտակի ստորաբաժանումների ժամանակին ապահովումը նյութական միջոցներով, իսկ անձնակազմին՝ լավորակ սննդով, վերահսկել նյութական միջոցների սահմանված չափաբաժինները յուրաքանչյուր զինծառայողի հասցնելը.

- առնվազն երեք ամիսը մեկ անգամ ստուգել ստորաբաժանումներում նյութական պաշարների առկայությունն ու վիճակը, մասնակցել գումարտակի ստորաբաժանումներում թիկունքի ծառայությունների ունեցվածքի գույքագրմանը.

- վերահսկել վառելիքի, քսանյութերի և հատուկ հեղուկների ճիշտ և խնայողական օգտագործումը, անվտանգության պահանջների կատարումը դրանց օգտագործման ժամանակ.

- գիտենալ գումարտակի ստորաբաժանումներում թիկունքի ծառայությունների տեխնիկայի առկայությունն ու վիճակը, ապահովել դրա ճիշտ շահագործումը, նորոգումը, սպասարկումը և էվակուացումը.

- մասնակցել գումարտակի ստորաբաժանումներում բոլոր տեսակի նյութական միջոցների, ջրի տեղափոխմանը, բեռնման-բեռնաթափման աշխատանքների մեքենայացմանը, ինչպես նաև փոխադրումը իրականացնող ավտոմոբիլային փոխադրամիջոցների աշխատանքների պլանավորմանը.

- կազմակերպել բոլոր բնակելի և ոչ բնակելի շենքերի ու շինությունների, զորանոցային գույքի և կահույքի ճիշտ օգտագործումն ու ժամանակին նորոգումը, գումարտակին կցված տարածքում հետևել կարգապահության պահպանմանը, գումարտակի թիկունքի ծառայությունների օբյեկտներում ստուգել հրդեհային անվտանգության պահանջների և շրջակա միջավայրի պահպանության ու բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման միջոցառումների կատարումը.

- մշտապես հոգ տանել գումարտակի անձնակազմի արտաքին տեսքի մասին, կազմակերպել հանդերձանքի ժամանակին ստացումը և դրա ճիշտ օգտագործումն ու նորոգումը.

- կազմակերպել գումարտակի ստորաբաժանումների անձնակազմի բաղնիքավազքային սպասարկումը.

- գումարտակի ստորաբաժանումներում տնտեսագիտական աշխատանքի գծով միջոցառումներ անցկացնել.

- նորոգման և տնտեսական աշխատանքների կատարման, ինչպես նաև թիկունքի տեխնիկայի սպասարկման և շահագործման ժամանակ ապահովել անվտանգության պահանջների կատարումը.

- գումարտակի ստորաբաժանումներում կազմակերպել և վերահսկել թիկունքի ծառայությունների գծով սահմանված հաշվառումն ու հաշվետվությունը:

Գումարտակի հրամանատարի՝ հրետանու գծով օգնականը

Հոդված 140.1. Գումարտակի հրամանատարի՝ հրետանու գծով օգնականը խաղաղ և պատերազմական ժամանակ պատասխանատու է գումարտակի հրետանային ստորաբաժանումների մարտական կիրառման, իր մասնագիտության գծով անձնակազմի մարտական պատրաստակաճանության, մարտական պատրաստության, զինվորական կարգապահության և բարոյահոգեբանական վիճակի, գումարտակի հրետանային ստորաբաժանումների սպառազինության և ռազմական տեխնիկայի սարքինության և ճիշտ շահագործման, ինչպես նաև իրեն վերաբերող մասով ուսումնանյութական բազայի վիճակի համար: Նա ենթարկվում է գումարտակի հրամանատարին և գումարտակի հրետանային ստորաբաժանումների անձնակազմի ուղղակի պետն է:

(140.1-ին հոդվածը լրաց. 19.03.13 ՀՕ-20-Ն)

Հոդված 140.2. Գումարտակի հրամանատարի՝ հրետանու գծով օգնականը պարտավոր է՝

- մասնակցել գումարտակի մարտական և զորահավաքային պատրաստակաճանության, մարտական պատրաստության պլանների մշակմանը, իրեն վերաբերող մասով կազմակերպել և ղեկավարել դրանց կատարումը.

- ապահովել գումարտակի սպաների և ենթասպաների պատրաստությունը հրետանու մարտական կիրառման ուղղությամբ,

իրեն վերաբերող մասով ուսումնական պարապմունքներ անցկացնել գումարտակի հրետանային ստորաբաժանումների հետ.

- ուսումնասիրել գումարտակի հրետանային ստորաբաժանումների յուրաքանչյուր սպայի, ենթասպայի և սերժանտի բարոյահոգեբանական հատկանիշները, նրանց հետ մշտապես տանել անհատական դաստիարակչական աշխատանքներ.

- գումարտակի հրետանային ստորաբաժանումներում առնվազն երեք ամիսը մեկ անձամբ ստուգել սպառազինության տեխնիկական վիճակը, լրակազմությունը, հաշվառման և պահպանության կարգը.

- հսկողություն իրականացնել գումարտակի հրետանային ստորաբաժանումներում սպառազինության և ռազմամթերքի պահպանության ու սպասարկման ժամանակ հակահրդեհային անվտանգության ապահովման պահանջների կատարման նկատմամբ.

- ապահովել ենթակա անձնակազմին հրաձգության, վարժանքների, տեխնիկայի, սարքավորումների և ռազմամթերքի հետ աշխատանքների անվտանգության կանոնների պահպանության հրահանգավորումը և վերահսկել դրանց պատշաճ իրականացումը.

- ղեկավարել ուսումնանյութական բազայի սարքավորման աշխատանքները:

(140.2-րդ հոդվածը լրաց. 19.03.13 ՀՕ-20-Ն)

Վաշտի հրամանատարը

Հոդված 141. Վաշտի հրամանատարը խաղաղ և պատերազմական ժամանակ պատասխանատու է վաշտի մարտական պատրաստակաճանության և մարտական առաջադրանքների հաջող կատարման, անձնակազմի մարտական պատրաստության, դաստիարակության, զինվորական կարգապահության և բարոյահոգեբանական վիճակի, վաշտում ներքին կարգուկանոնի պահպանման, վաշտի սպառազինության, ռազմական տեխնիկայի և այլ գույքի վիճակի ու անվթարության, վաշտային տնտեսության վարման համար: Վաշտի հրամանատարը ենթարկվում է գումարտակի հրամանատարին և վաշտի ողջ անձնակազմի ուղղակի պետն է:

Հոդված 142. Վաշտի հրամանատարը վաշտի անձնակազմի ուսուցման և ամենօրյա դաստիարակության անմիջական կազմակերպիչն է: Նա պարտավոր է՝

- վաշտում կազմակերպել մարտական պատրաստությունը, կազմել շաբաթական պարապմունքների դասացուցակը, պարապմունքներ անցկացնել սպաների, ենթասպաների և սերժանտների, ինչպես նաև վաշտի անձնակազմի հետ, մարտական առաջադրանքների կատարման ժամանակ հմտորեն դեկավարել վաշտը.

- ստուգել վաշտի զինվորների, սերժանտների, ենթասպաների և սպաների գիտելիքները և գործնական հմտությունները.

- գիտենալ վաշտի յուրաքանչյուր զինծառայողի զինվորական կոչումը, ազգանունը, ազգությունը, ծառայության ժամկետը, զբաղեցրած պաշտոնը կամ մասնագիտությունը, ընտանեկան դրությունը, գործնական և բարոյահոգեբանական հատկանիշները, մշտապես նրանց հետ անհատական աշխատանք տանել զինվորական դաստիարակության գծով.

- իրականացնել զինվորական ծառայության ընդունվելու կամ զինվորական ուսումնական հաստատություններ ընդունվելու համար թեկնածուների ընտրությունը.

- զինվորներին և սերժանտներին ներկայացնել հերթական զինվորական կոչմանը, արժանիներին առաջ քաշել զբաղեցնելու թափուր պաշտոնները.

- կազմակերպել անձնակազմի տեղավորումը, վաշտում պահպանել ներքին կարգուկանոնը և զինվորական կարգապահությունը, հետևել իրեն ենթակա զինծառայողների արտաքին տեսքին և կեցվածքին, զինվորական համազգեստ կրելու կանոնների պահպանմանը, հանդերձանքի, համազգեստի և կոշիկների ճիշտ հարմարեցմանը.

- կազմակերպել վաշտից նշանակվող օրվա վերակարգի անձնակազմի նախապատրաստումը, վերահսկել նրանց ծառայության կատարումը.

- ամեն շաբաթ ամփոփել մարտական պատրաստության, զինվորական կարգապահության և ներքին կարգուկանոնի վիճակը.

- պարբերաբար ներկա գտնվել վաշտի վերկացին և երեկոյան ստուգմանը (անվանականչին).

- իմանալ վաշտի սպառազինության և ռազմական տեխնիկայի նյութական մասը և շահագործման կանոնները.

- կազմակերպել վաշտի սպառազինության, ռազմական տեխնիկայի և այլ նյութական միջոցների ժամանակին ստացումը, ճիշտ շահագործումն ու նորոգումը, ամսական առնվազն մեկ անգամ ստուգել դրանց առկայությունը, վիճակը և հաշվառումը, սպառազինության, ռազմական տեխնիկայի և զինամթերքի զննման (ստուգման)

արդյունքները գրանցել սպառազինության, ռազմական տեխնիկայի և զինամթերքի զննման (ստուգման) գրքում (Հավելված 12).

- ամեն անգամ գորավարժությունների դուրս գալիս կամ պարապմունքներից առաջ ստուգել վաշտի սպառազինության և ռազմական տեխնիկայի նախապատրաստումը, ինչպես նաև դրանց առկայությունը գորավարժություններից կամ պարապմունքներից վերադառնալուց հետո, միջոցներ ձեռնարկել ադետները, վթարները, սպառազինության և ռազմական տեխնիկայի վնասվածքները կանխելու համար, ապահովել անձնակազմի կողմից անվտանգության պահանջների կատարումը պարապմունքների, հրաձգության, գորավարժությունների և աշխատանքների անցկացման ժամանակ.

- վաշտի ժամկետային ծառայության զինծառայողներին ժամանակին ապահովել հասանելիք պարենավորումով, հոգ տանել ենթակաների կենցաղի մասին և խորամուխ լինել նրանց կարիքների մեջ, հետևել նրանց անձնական հիգիենայի կանոնների պահպանմանը.

- հետևել վաշտին հատկացված բոլոր շինությունների վիճակին ու ճիշտ շահագործմանը, վաշտին կցված տարածքը մաքուր պահելուն, ինչպես նաև վաշտում հակահրդեհային միջոցառումների անցկացմանը.

- վարել վաշտի անձնակազմի հաշվառումը, միշտ ճշգրտորեն գիտենալ նրա քանակական կազմն ըստ ցուցակի, առկա և բացակա քանակները, սպառազինության, ռազմական տեխնիկայի և այլ նյութական միջոցների առկայությունն ու վիճակը, ամիսը մեկ անգամ համեմատել վաշտի անձնակազմի և նյութական միջոցների հաշվառման տվյալները գնդի հաշվառման տվյալների հետ.

- ղեկավարել վաշտի տնտեսությունը:

(142-րդ հոդվածը փոփ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Վաշտի հրամանատարի տեղակալը

Հոդված 143. Վաշտի հրամանատարի տեղակալը խաղաղ և պատերազմական ժամանակ պատասխանատու է վաշտի մարտական պատրաստականության, զինվորական կարգապահության և ներքին կարգուկանոնի պահպանման, ուսումնական նյութական բազայի, ուսումնական սարքերի ու սարքավորումների անվթար պահպանման, վաշտում բարձրակարգ մասնագետների պատրաստման, մարզագանգվածային աշխատանքի անցկացման համար: Նա



ենթարկվում է վաշտի հրամանատարին և վաշտի ողջ անձնակազմի ուղղակի պետն է:

Հոդված 144. Վաշտի հրամանատարի տեղակալը պարտավոր է՝

- մասնակցել շաբաթական պարապմունքների դասացուցակը կազմելուն և վարել վաշտի մարտական պատրաստության հաշվառումը.

- պարապմունքներ անցկացնել ենթասպաների, սերժանտների, ինչպես նաև վաշտի անձնակազմի հետ.

- դասակների հրամանատարներին օգնել մարտական պատրաստության պարապմունքների կազմակերպման և անցկացման գործում և վերացնել բացահայտված թերությունները.

- անցկացնել մարզագանգվածային աշխատանք, կազմակերպել գյուտարարական և ռազմաօդային գատորակային աշխատանքը վաշտում.

- համակողմանիորեն ճանաչել վաշտի անձնակազմը, մշտապես անհատական աշխատանք անցկացնել ենթակաների զինվորական դաստիարակության ուղղությամբ.

- իմանալ վաշտի սպառազինությունն ու ռազմական տեխնիկան (նյութական մասը, շահագործման կանոնները) և անձամբ ստուգել դրանց առկայությունն ու մարտական պատրաստությունը.

- մասնակցել սպառազինության և ռազմական տեխնիկայի նախապատրաստմանը, պարապմունքներին և գորավարժություններին, միջոցներ ձեռնարկել՝ կանխելու աղետները, վթարները և վնասվածքները.

- կազմակերպել և անձամբ միջոցառումներ անցկացնել վաշտում կարգային մասնագետների պատրաստման ուղղությամբ.

- կազմակերպել վաշտում եղած կամ նրան կցված ուսումնական նյութական բազայի օբյեկտների ուսումնական ձեռնարկների, սարքերի, սարքավորումների ճիշտ օգտագործումն ու պահպանումը.

- վաշտում պահպանել զինվորական կարգապահությունը և ներքին կարգուկանոնը, մասնակցել օրվա վերակարգի նախապատրաստմանը և ստուգել նրա կողմից ծառայության կատարումը.

- հետևել վաշտին կցված տարածքը մաքուր պահելուն, անձնակազմի կողմից հրդեհային անվտանգության պահանջների կատարմանը.

- վաշտի անձնակազմից պահանջել զինվորական համագգեստ կրելու կանոնների պահպանումը.

- պարբերաբար մասնակցել վաշտի վերկացին և երեկոյան ստուգմանը (անվանականչին):

Վաշտի հրամանատարի տեղակալը անձնակազմի հետ տարվող աշխատանքի գծով

Հոդված 145. Վաշտի հրամանատարի՝ անձնակազմի հետ տարվող աշխատանքի գծով տեղակալը խաղաղ և պատերազմական ժամանակ պատասխանատու է անձնակազմի դաստիարակության, զինվորական կարգապահության, բարոյահոգեբանական և հասարակական-պետական պատրաստության վիճակի համար: Նա ենթարկվում է վաշտի հրամանատարին և վաշտի ամբողջ անձնակազմի ուղղակի պետն է:

Հոդված 146. Վաշտի հրամանատարի՝ անձնակազմի հետ տարվող աշխատանքի գծով տեղակալը պարտավոր է՝

- մասնակցել պարապմունքների դասացուցակը կազմելուն, կազմակերպել և ստորաբաժանման անձնակազմի հետ անցկացնել դաստիարակչական աշխատանք՝ յուրաքանչյուր զինծառայողի ազգային և հոգեբանական առանձնահատկությունների, կրթական մակարդակի և կրոնի նկատմամբ վերաբերմունքի հաշվառումով, զինծառայողների մեջ ձևավորել հավատարմություն հայրենիքին, զինվորական պարտքին և զինվորական երդմանը, մարտական և բարոյահոգեբանական վսեմ հատկանիշներ.

- միջոցառումներ անցկացնել զինվորական կարգապահության ամրապնդման և իրավախախտումների կանխման, զինվորական ծառայության անվտանգության պայմանների ապահովման ուղղությամբ.

- գիտենալ զինծառայողների առանձնահատկությունները, նրանց գործնական և բարոյահոգեբանական հատկանիշները, նրանց հետ անհատական աշխատանք տանել, միջոցներ ձեռնարկել զինվորական կոլեկտիվի համախմբման համար.

- իրականացնել անձնակազմի օպերատիվ տեղեկատվություն աշխարհում և Հայաստանի Հանրապետությունում եղած իրադարձությունների, ստորաբաժանման կյանքի ու մարտական գործունեության մասին, կազմակերպել և զինծառայողների հետ անցկացնել հասարակական-պետական պատրաստության պլաններով նախատեսված պարապմունքներ.

- իրականացնել ուսումնական գործընթացի, մարտական հերթապահության, պահակային և ներքին ծառայությունների բարոյահոգեբանական ապահովումը.

- գիտենալ անձնակազմի կարիքներն ու պահանջումները, միջոցներ ձեռնարկել զինծառայողների դիմումներն ու բողոքները լուծելու համար, կապ պահպանել նրա հարազատների ու մերձավորների հետ.

- հոգ տանել անձնակազմի հոգևոր պահանջումների բավարարման համար, կազմակերպել նրա ժամանցը, վաշտի գեղարվեստական ինքնագործունեությունը, միջոցներ ձեռնարկել անձնակազմը պարբերական հրատարակություններով և փոստային առաքումներով ապահովելու համար, աշխատանք կազմակերպել հանգստի և տեղեկատվության սենյակում, կազմակերպել դաստիարակչական աշխատանքի անցկացման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների և գույքի ճիշտ օգտագործումն ու խնայողությունը.

- պարբերաբար ներկա լինել վաշտի վերկացին ու երեկոյան ստուգմանը.

- վաշտի հրամանատարին ժամանակին զեկուցել անձնակազմի զինվորական կարգապահության ու բարոյահոգեբանական վիճակի մասին:

Վաշտի հրամանատարի տեղակալը սպառազինության (տեխնիկական մասի) գծով (ավագ տեխնիկը, վաշտի տեխնիկը)

Հոդված 147. Վաշտի հրամանատարի՝ սպառազինության (տեխնիկական մասի) գծով տեղակալը (ավագ տեխնիկը, վաշտի տեխնիկը) խաղաղ և պատերազմական ժամանակ պատասխանատու է սպառազինության և ռազմական տեխնիկայի տեխնիկական սարքիչության, դրանց ճիշտ շահագործման և նորոգման, ինչպես նաև վաշտի անձնակազմի տեխնիկական պատրաստության համար: Նա ենթարկվում է վաշտի հրամանատարին և վաշտի ամբողջ անձնակազմի ուղղակի պետն է: Վաշտի ավագ տեխնիկը (տեխնիկը) վաշտի սերժանտների և զինվորների ուղղակի պետն է:

Հոդված 148. Վաշտի հրամանատարի՝ սպառազինության (տեխնիկական մասի) գծով տեղակալը (ավագ տեխնիկը, վաշտի տեխնիկը) պարտավոր է՝

- մասնակցել շաբաթական պարապմունքների դասացուցակը կազմելուն.

- կազմակերպել վաշտի սպառազինության և ռազմական տեխնիկայի տեխնիկայես ճիշտ շահագործումը, միջոցներ ձեռնարկել դրանք կարգին և սարքին վիճակում պահելու համար.

- գիտենալ վաշտի մարտական և այլ մեքենաների մեխանիկ-վարորդների (վարորդների) գործնական և բարոյահոգեբանական հատկանիշները և աշխատանք տանել նրանց որակավորման բարձրացման ուղղությամբ.

- վաշտի անձնակազմի հետ պարապմունքներ անցկացնել մեքենաների տեխնիկական նախապատրաստման, մեքենա վարելու հիմունքների և կանոնների մասին, իրականացնել տեխնիկական մասնագիտությունների գծով բարձրակարգ մասնագետների պատրաստում.

- իմանալ վաշտի սպառազինության և ռազմական տեխնիկայի կառուցվածքը, շահագործման և նորոգման կարգն ու կանոնները, նրանց առկայությունն ու տեխնիկական վիճակը, անձամբ ղեկավարել սպառազինության և ռազմական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և նորոգման աշխատանքները, որոնք կատարում են անձնակազմերի (վարորդների) ուժերով.

- ստուգել հավաքակայանից դուրս թողնվող մեքենաների վիճակը և շահագործման թույլտվություն տալ միայն տեխնիկայես սարքին մեքենաներին՝ այդ մասին հատուկ նշումներ անելով ուղեգրում.

- ամսական առնվազն մեկ անգամ ստուգել վաշտի սպառազինության և ռազմական տեխնիկայի տեխնիկական վիճակը և անցկացնել հրազենի պլանաչափ ստուգում.

- մեքենաները նախապատրաստել վաշտի յուրաքանչյուր զորավարժության կամ պարապմունքի դուրս բերելու համար և վերադառնալուց հետո ստուգել դրանց վիճակը.

- միջոցներ ձեռնարկել պատահարները, սպառազինության, ռազմական տեխնիկայի վնասվածքները կանխելու համար, դրանց պատճառների և ձեռնարկված միջոցների մասին անմիջապես զեկուցել վաշտի հրամանատարին, սպառազինության ռազմական տեխնիկայի գծով պարապմունքներ կամ աշխատանքներ կազմակերպելիս անձնակազմին հասցնել անվտանգության պահանջները և հասնել դրանց իրագործմանը, մեքենաների շահագործման, վերանորոգման, սպասարկման էվակուացման ժամանակ, հետևել անվտանգության կանոնների կատարմանը.

- հետևել վառելանյութի, քսանյութերի, պահեստամասերի և տեխնիկական այլ գույքի խնայողական օգտագործմանը.

- ժամանակին ներկայացնել տեխնիկական անհրաժեշտ գույքի հայտերը, կազմակերպել այդ գույքի խնայողական օգտագործումը և ճիշտ շահագործումը.

(պարբերությունն ուժը կորցրել է 14.04.11 ՀՕ-124-Ն)

- վաշտի հավաքակայանում և մեքենաների վրա իրականացնել հակահրդեհային միջոցառումներ.

- սահմանված կարգով վարել հաշվառում և ներկայացնել հաշվետվություններ:

(148-րդ հոդվածը փոփ., լրաց., խմբ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

#### Դասակի (խմբի) հրամանատարը

Հոդված 149. Դասակի (խմբի) հրամանատարը խաղաղ և պատերազմի ժամանակ պատասխանատու է դասակի (խմբի) մարտական պատրաստականության և մարտական առաջադրանքների հաջող կատարման համար, անձնակազմի մարտական պատրաստության, դաստիարակության, զինվորական կարգապահության և բարոյահոգեբանական վիճակի, դասակում (խմբում) ներքին կարգուկանոնի պահպանման, դասակի (խմբի) սպառազինության, ռազմական տեխնիկայի և այլ գույքի վիճակի ու անվթարության համար: Նա ենթարկվում է վաշտի հրամանատարին և դասակի (խմբի) ամբողջ անձնակազմի ուղղակի պետն է:

Հոդված 150. Դասակի (խմբի) հրամանատարը անձամբ ուսուցանում և դաստիարակում է իր ենթականերին: Նա պարտավոր է՝

- դասակի (խմբի) անձնակազմի հետ անձամբ անցկացնել մարտական պատրաստության պարապմունքներ և հետևել ջոկերի հրամանատարների (անձնախմբերի, ավագների) կողմից զինվորների ճիշտ ուսուցմանը, իսկ մարտական խնդիրների կատարման ժամանակ հմտորեն ղեկավարել դասակը (խումբը).

- գիտենալ յուրաքանչյուր զինծառայողի ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան տարեթիվը, ազգությունը, զբաղմունքը մինչև զինվորական ծառայությունը, ընտանեկան դրությունը, մարտական պատրաստության գործում ունեցած հաջողություններն ու թերությունները, նրանց գործնական ու բարոյահոգեբանական հատկանիշները, նրանց հետ մշտապես անհատական աշխատանք

անցկացնել զինվորական դաստիարակության ուղղությամբ, վարել դասակի (խմբի) անվանական ցուցակը.

- հոգ տանել ենթակաների կենցաղի մասին և խորամուխ լինել նրանց կարիքների մեջ, շաբաթական առնվազն մեկ անգամ դասակում (խմբում) ներկա լինել վերկացին և երեկոյան ստուգմանը (անվանականչին).

- պահանջել և խստագույնս հետևել դասակի (խմբի) անձնակազմի զինվորական կարգապահությանը, նրա արտաքին տեսքին, զինվորական համազգեստ կրելու կանոնների կատարմանը, հանդերձանքի, համազգեստի և կոշիկների ճիշտ հարմարեցմանը և անձնական հիգիենայի կանոնների պահպանմանը.

- մշտապես կատարելագործել անձնակազմի ֆիզիկական մարզվածությունը, նրանց հետ կանոնավոր կերպով անցկացնել ֆիզիկական պատրաստության պարապմունքներ.

- գիտենալ դասակում (խմբում) եղած սպառազինության և ռազմական տեխնիկայի նյութական մասը, շահագործման կանոնները և անձամբ ստուգել նրանց մարտական պատրաստությունը.

- հետևել սպառազինության, ռազմական տեխնիկայի և նյութական այլ միջոցների ճիշտ շահագործմանը և առնվազն երկու շաբաթը մեկ անգամ անձամբ անցկացնել դրանց զննումը և առկայության ստուգումը.

- ստուգել սպառազինության և ռազմական տեխնիկայի պատրաստ լինելը զորավարժության կամ պարապմունքին դուրս գալուն, ինչպես նաև դրանց առկայությունն ու վիճակը զորավարժություններից ու պարապմունքներից վերադառնալուց հետո.

- ապահովել անվտանգության պահանջների կատարումը պարապմունքների, հրաձգությունների, զորավարժությունների ժամանակ և սպառազինության ու ռազմական տեխնիկայի հետ աշխատանքի ընթացքում.

(պարբերությունն ուժը կորցրել է 14.04.11 ՀՕ-124-Ն)

- կատարել դասակի (խմբի) մարտական պատրաստության հաշվառում և վաշտի հրամանատարին զեկուցել ենթակաների կարիքների, ինչպես նաև խրախուսանքների և նրանց տրված կարգապահական տույժերի մասին:

(150-րդ հոդվածը փոփ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

## Վաշտի ավագը

Հոդված 151. Վաշտի ավագը խաղաղ և պատերազմի ժամանակ պատասխանատու է զինվորների և սերժանտների ծառայության կատարման կանոնների պահպանման, վաշտում զինվորական կարգապահության և ներքին կարգուկանոնի պահպանման, վաշտի սպառազինության, ռազմական տեխնիկայի և այլ գույքի, ինչպես նաև զինծառայողների՝ պահեստանոցում գտնվող անձնական իրերի անվնասության համար: Նա ենթարկվում է վաշտի հրամանատարին, վաշտի ներքին կարգուկանոնի անմիջական կազմակերպիչը և վաշտի սերժանտների ու զինվորների ուղղակի պետն է:

Վաշտի սպաների բացակայության ժամանակ վաշտի ավագը կատարում է վաշտի հրամանատարի պարտականությունները:

Հոդված 152. Վաշտի ավագը պարտավոր է՝

- վաշտի մարտական պատրաստության պարապմունքներն ապահովել անհրաժեշտ ամեն ինչով, ինչպես նաև վաշտի հրամանատարի ցուցումով անցկացնել պարապմունքներ.

- իմանալ վաշտի զինվորների և սերժանտների ազգանունը, անունը, հայրանունը, ազգությունը, ծառայության ժամկետը, զբաղեցրած պաշտոնը, անձնական հատկանիշները, ընտանեկան դրությունը և հոգ տանել նրանց մասին.

- հետևել վաշտի զինվորների և սերժանտների արտաքին տեսքին և կատարել նրանց համազգեստի և կոշիկեղենի անհատական հարմարեցում.

- վաշտի զինվորներից և սերժանտներից պահանջել զինվորական կարգապահության, օրվա կանոնակարգի պահպանում, վաշտի հրամանատարին անմիջապես զեկուցել զինվորական կարգապահության խախտումների, ինչպես նաև կիրառված խրախուսանքների ու վաշտի զինվորների ու սերժանտների վրա դրված կարգապահական տույժերի մասին.

- դասակների միջև բաժանել ծառայության և աշխատանքի վերակարգերը, անձամբ վարել սերժանտների վերակարգերի հերթականությունը և ստուգել դասակներում դրանց կատարման ճշտությունը.

- փոխարինումից առաջ ստուգել վաշտի օրվա վերակարգի (բացի պահակախմբից) արտաքին տեսքը և գննել հանդերձավորումը, հրահանգավորել և ժամանակին ուղարկել փոխարինման,

ծառայության ընթացքում հետևել վաշտի հերթապահի և օրապահի կողմից իրենց պարտականությունների ճիշտ կատարմանը.

- վաշտի հրամանատարի թույլտվությամբ զինամթերք բաց թողնել պահակախմբերին և ատրճանակներ՝ զինվորներին ու սերժանտներին, իսկ հերթապահ ստորաբաժանմանը՝ գնդի հերթապահի հրամանով, հանձնումից հետո անձամբ ընդունել դրանք և ստուգել.

- ղեկավարել առավոտյան ստուգումը ու երեկոյան անվանականչը.

- վաշտը ճաշարան տանել կամ ուղարկել դասակների հրամանատարների տեղակալներից մեկի հրամանատարությամբ.

- ստուգել և ուղարկել վաշտի նշանակած յուրաքանչյուր անձնախումբը, վաշտը անձամբ տանել բաղնիք և բուժքննության.

- վաշտի հերթապահի միջոցով գնդի հերթապահին տեղեկություններ ներկայացնել երեկոյան անվանականչից բացակայողների մասին, իսկ ինքնակամ բացակայությունների դեպքում հայտնել բացակայողների ազգանունը, անունը և հայրանունը.

- գնդի տեղաբաշխման վայրից արձակելու դեպքում ժամկետային ծառայության զինվորներին ու սերժանտներին տալ արձակման գրություններ և ստուգել՝ սահմանված ձևով են հագնված, արդյոք, և գիտե՞նք հասարակական վայրերում վարվեցողության կանոններ.

- ժամանակին ստանալ և ստուգել վաշտ մտնող զենքն ու այլ նյութական միջոցները, խստագույնս հետևել դրանց առկայությանը, ճիշտ շահագործմանը և ժամանակին ուղարկել նորոգման, հոգ տանել վաշտի անձնակազմի իրային նորոգման համար անհրաժեշտ նյութերի առկայության մասին.

- կազմակերպել ստացող զինվորական կանոնադրությունների, հրահանգների և ուսումնական ձեռնարկների պահպանումն ու հաշվառումը, ինչպես նաև դրանց հանձնումը ժամանակավոր օգտագործման, վերահսկել դրանց պահպանումը դասակներում.

- կազմակերպել մաքրության ու կարգուկանոնի պահպանումը վաշտի բոլոր շինություններում, ինչպես նաև վաշտին կցված տարածքում ձեռնարկել դրանց ընդհանուր մաքրման աշխատանքները.

- հետևել վառարանները վառելու կանոնների կատարմանը, կրակմարիչ միջոցների ճիշտ պահպանմանը և վաշտի զինվորների ու սերժանտների կողմից հրդեհային անվտանգության պահանջների կատարմանը.

- վաշտի հերթապահի միջոցով վերակարգում գտնվող կամ ծառայողական գործերով բացակայող անձանց համար սնունդ պահելու համար հայտ ներկայացնել ճաշարանի հերթապահին.

- կարգապահական վաշտ ուղարկվող զինծառայողներից ցուցակով ընդունել նրանց դրամը, այլ թանկարժեք իրերը և դրանք ներկայացնել վաշտի հրամանատարին.

- վաշտի ռազմական գույքի հաշվառման գրքերը ամեն ամիս համեմատել գնդի ծառայությունների հաշվառման գրքերի հետ և իրականացնել սահմանված հաշվառումն ու հաշվետվությունը.

- վաշտի տեղաբաշխման վայրից բացակայելիս՝ իր փոխարեն թողնել դասակների հրամանատարների տեղակալներից մեկին:

(152-րդ հոդվածը խմբ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

#### Դասակի հրամանատարի տեղակալը

Հոդված 153. Դասակի հրամանատարի տեղակալը խաղաղ և պատերազմի ժամանակ պատասխանատու է անձնակազմի ուսուցման, դաստիարակության և զինվորական կարգապահության, դասակում ներքին կարգուկանոնի պահպանման, անձնակազմի ծառայության կատարման, յուրաքանչյուր զինվորի ու սերժանտի արտաքին տեսքի համար: Նա ենթարկվում է դասակի հրամանատարին, իսկ ներքին կարգուկանոնի պահպանման հարցերով՝ նաև վաշտի ավագին և դասակի զինվորների ու սերժանտների ուղղակի պետն է:

Հոդված 154. Դասակի հրամանատարի տեղակալը պարտավոր է՝

- ուսուցանել, դաստիարակել դասակի զինվորներին ու սերժանտներին և դասակի հրամանատարի ցուցումով նրանց հետ անձամբ պարապմունքներ անցկացնել.

- գիտենալ յուրաքանչյուր ենթակայի ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան տարեթիվը, ազգությունը, անձնական հատկանիշները, զբաղմունքը մինչև զինծառայությունը, ընտանեկան դրությունը, մարտական պատրաստության մեջ ունեցած հաջողություններն ու թերությունները.

- հետևել ջոկերի հրամանատարների և դասակի ողջ անձնակազմի զինվորական կարգապահության պահպանմանը և ծառայության կատարմանը.

- սարքին վիճակում պահել դասակի սպառազինությունը, ռազմական տեխնիկան և նյութական այլ միջոցները, հետևել դրանց առկայությանը.

- հոգ տանել շինության մաքրության մասին, ջոկերի միջև սահմանել մաքրման հաջորդականությունը, ենթականերից պահանջել անկողնու,

սպիտակեղենի, համազգեստի և կոշիկեղենի անվնաս ու կոկիկ պահպանում, հետևել դասակի անձնակազմի կողմից իրեղենի ընթացիկ նորոգման ժամանակին կատարմանը.

- անցկացնել դասակի անձնակազմի առավոտյան ստուգում.

- հոգ տանել ենթակաների մասին և խորամուխ լինել նրանց կարիքների մեջ.

- զինվորներին ծառայության և աշխատանքի վերակարգ նշանակել, վարել վաշտի վերակարգերի թերթիկները (Հավելված 12), կատարել վաշտի անձնակազմի, սպառազինության և նյութական այլ միջոցների հաշվառում.

- մշտապես տեղյակ լինել, թե որտեղ են գտնվում և ինչ են անում ենթակաները.

- վաշտի հրամանատարին զեկուցել ենթակաների բոլոր խնդրանքների, խրախուսանքների, զանցանքների և կարգապահական տույժերի մասին.

- դասակի հրամանատարի կամ վաշտի ավագի փոխարեն մնալիս՝ կատարել նրանց պարտականությունները:

#### Ջոկի հրամանատարը

Հոդված 155. Ջոկի հրամանատարը խաղաղ և պատերազմի ժամանակ պատասխանատու է ջոկի մարտական առաջադրանքների հաջող կատարման, ենթակաների ուսուցման, դաստիարակության, զինվորական կարգապահության և բարոյահոգեբանական վիճակի, շարային կեցվածքի և արտաքին տեսքի, ինչպես նաև սպառազինության, ռազմական տեխնիկայի, սարքավորման, համազգեստի և կոշիկեղենի ճիշտ օգտագործման ու խնայողության, դրանք կարգին և անվնաս, սարքին վիճակում պահելու համար: Նա ենթարկվում է դասակի հրամանատարին և նրա տեղակալին (խմբի ավագին) և ջոկի անձնակազմի անմիջական պետն է:

Հոդված 156. Ջոկի հրամանատարը պարտավոր է՝

- ուսուցանել և դաստիարակել ջոկի զինվորներին, իսկ մարտական առաջադրանքների կատարման ժամանակ հմտորեն ղեկավարել ջոկը.

- գիտենալ յուրաքանչյուր ենթակայի ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան տարեթիվը, անձնական հատկանիշները, զբաղմունքը մինչև ծառայությունը, ընտանեկան դրությունը,

մարտական պատրաստության մեջ ունեցած հաջողություններն ու թերությունները.

- հետևել օրվա կանոնակարգի կատարմանը, ջոկում մաքրության և ներքին կարգուկանոնի պահպանմանը, ենթականերից պահանջել զինվորական կարգապահության պահպանում.

- գիտենալ ջոկի զենքի, ռազմական և այլ տեխնիկայի նյութական մասը, շահագործման և պահպանման կանոնները, հետևել դրանց առկայությանը, ամեն օր ստուգել և սարքին վիճակում պահել դրանք.

- ծառայության նկատմամբ սեր, զենքի և ռազմական տեխնիկայի նկատմամբ հոգատար վերաբերմունք պատվաստել ջոկի զինվորի մեջ.

- ջոկի զինվորի մեջ շարային կեցվածք և զինվորական տոկունություն մշակել.

- հոգ տանել ենթակաների մասին և խորամուխ լինել նրանց կարիքների մեջ, հետևել ենթակաների համազգեստի և կոշիկների սարքինությանն ու կոկիկությանը, հանդերձանքի ճիշտ հարմարեցմանը, նրանց անձնական հիգիենայի պահպանմանը և հագուստ կրելուն.

- ամեն օր հետևել կոշիկների, համազգեստի մաքրությանը, ոտքի փաթաթանների, գուլպաների չորացմանը, ինչպես նաև կոշիկների և համազգեստի ժամանակին նորոգմանը.

- հետևել, որպեսզի հրաձգությունից կամ պարապմունքներից հետո ենթակաները չունենան մարտական և ոչ մարտական փամփուշտներ, նռնակներ, բռնկիչներ և պայթուցիկ նյութեր.

- դասակի հրամանատարի տեղակալին (անձնախմբի ավագին) զեկուցել բոլոր հիվանդների, ենթակաների բողոքների ու դիմումների, նրանց զանցանքների և դրանց կանխման նպատակով ձեռնարկված միջոցների, խրախուսանքների և կարգապահական տույժերի, ինչպես նաև սպառազինության և այլ նյութական միջոցների կորստի կամ անսարքության դեպքերի մասին.

- մշտապես տեղյակ լինել, թե որտեղ են գտնվում և ինչ են անում ենթակաները:

(156-րդ հոդվածը խմբ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Զինվորի պարտականությունները

Հոդված 157. Զինվորը խաղաղ և պատերազմական ժամանակ պատասխանատու է իր վրա դրված պարտականությունների և իրեն տրված առաջադրանքների ժամանակին և ճիշտ կատարման, ինչպես

նաև իր զենքի, իրեն վստահված տեխնիկայի սարքին վիճակի և իրեն տրված գույքի պահպանման համար: Նա ենթարկվում է ջոկի հրամանատարին:

Հոդված 158. Զինվորը պարտավոր է՝

- խորապես գիտակցել զինված ուժերի մարտիկի պարտքը, օրինակելիորեն կատարել իր ծառայողական պարտականությունները, տիրապետել այն ամենին, ինչ ուսուցանում են հրամանատարները (պետերը).

- իմանալ իր անմիջական և ուղղակի պետերի պաշտոնները, զինվորական կոչումները և ազգանունները.

- հարգանք ցուցաբերել հրամանատարների (պետերի) և ավագների նկատմամբ, հարգել ընկերների պատիվն ու արժանապատվությունը, պահպանել զինվորական բարեկրթություն, վարքի և զինվորական ողջույնի կանոնները.

- ամեն օր կոփել իրեն, կատարելագործել իր ֆիզիկական պատրաստականությունը, պահպանել անձնական հիգիենայի կանոնները.

- մշտապես լինել սահմանված համազգեստով և կոկիկ հագնված.

- կատարելապես տիրապետել և ունենալ մշտապես սարքին, մաքրված և մարտի պատրաստ զենք և ռազմական տեխնիկա.

- հոգատար կրել հագուստն ու կոշիկները, ժամանակին և խնամքով նորոգել դրանք, ամեն օր մաքրել ու պահել սահմանված տեղերում.

- զենքն օգտագործելիս, տեխնիկայի հետ աշխատելիս և այլ դեպքերում խստագույնս կատարել անվտանգության, ինչպես նաև հրդեհային անվտանգության պահանջները.

- գնդի տեղաբաշխման սահմաններում իր դիրքից հեռանալու անհրաժեշտության դեպքում թույլտվություն ստանալ ջոկի հրամանատարից, իսկ վերադառնալիս զեկուցել նրան ժամանելու մասին.

- գնդի տեղաբաշխման սահմաններից դուրս գտնվելու դեպքում իրեն պահել պատվով ու արժանապատվությամբ, թույլ չտալ հասարակական կարգի խախտում և անվայել արարքներ քաղաքացիական բնակչության հանդեպ:

(158-րդ հոդվածը փոփ., լրաց. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 159. Զինվորական ծառայության պարտականությունների օրինակելի կատարման, մարտական պատրաստության

հաջողությունների, զինվորական օրինակելի կարգապահության համար զինվորին կարող է շնորհվել էֆրեյտորի զինվորական կոչում:

Եֆրեյտորը պարտավոր է ջոկի հրամանատարին օգնել զինվորների ուսուցման և դաստիարակության գործում:

Հոդված 159.1. Սույն Կանոնագրքի 141-րդ, 142-րդ, 143-րդ, 144-րդ, 145-րդ, 146-րդ, 147-րդ, 148-րդ, 149-րդ, 150-րդ, 151-րդ, 152-րդ, 153-րդ, 154-րդ, 155-րդ և 156-րդ հոդվածներով սահմանված պաշտոնատար անձանց իրավասությունները և պարտականությունները տարածվում են նաև կարգապահական վաշտերի համապատասխան պաշտոնատար անձանց վրա: Կարգապահական վաշտում կարգապահական տույժ կրող զինծառայողները պարտավոր են խստորեն պահպանել սույն Կանոնագրքի 157-րդ և 158-րդ հոդվածների պահանջները, կարգապահական վաշտում ծառայությունը տանել օրվա խստացված կարգացուցակին համապատասխան:

(159.1-ին հոդվածը լրաց. 19.03.13 ՀՕ-20-Ն)

## Ե Բ Կ Ը Ո Ր Դ Մ Ա Ս

### ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳՈՒԿԱՆՈՆ

Ընդհանուր դրույթներ

Հոդված 160. Ներքին կարգուկանոնը զորամասերում (ստորաբաժանումներում) զինծառայողների տեղավորման, ամենօրյա գործունեության, կենցաղի և օրվա վերակարգի ծառայության կատարման՝ զինվորական կանոնադրություններով սահմանված կանոնների խստիվ պահպանումն է: Ներքին կարգուկանոնի հասնում են՝

- բոլոր զինծառայողների կողմից այն պարտականությունների խոր ընկալումով և գիտակցված ու ճիշտ կատարումով, որոնք սահմանված են օրենքներով և զինվորական կանոնագրքերով ու կանոնադրություններով.

(պարբերությունն ուժը կորցրել է 14.04.11 ՀՕ-124-Ն)

- նպատակաուղղված դաստիարակչական աշխատանքով, հրամանատարների բարձր պահանջկոտության և ենթակաների ու նրանց առողջության պահպանման նկատմամբ մշտական հոգատարության զուգակցումով.

- մարտական պատրաստության հստակ կազմակերպումով.

- օրվա վերակարգի մարտական հերթապահության և ծառայության օրինակելի կատարումով.

- օրվա կանոնակարգի և աշխատաժամանակի բաշխման ճշգրիտ կատարումով.

- սպառազինության, ռազմական տեխնիկայի և նյութական այլ միջոցների շահագործման (օգտագործման) կանոնների կատարումով, զինծառայողների տեղավորման վայրերում նրանց ամենօրյա գործունեության, կյանքի ու կենցաղի՝ զինվորական կանոնադրության պահանջներին համապատասխանող պայմանների ստեղծումով.

- հակահրդեհային անվտանգության պահանջների պահպանումով, ինչպես նաև զորամասի գործունեության շրջանում շրջակա միջավայրի պահպանության միջոցների ձեռնարկումով:

(160-րդ հոդվածը խմբ., փոփ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

## Գ Լ ՈՒ Խ 4

### ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՏԵՂԱՎՈՐՈՒՄԸ

Ընդհանուր դրույթներ

Հոդված 161. Գնդի բոլոր շինություններն ու ամբողջ տարածքը ստորաբաժանումների միջև բաժանում է գնդի հրամանատարը: Զինվորական ավանում մի քանի զորամասերի տեղակայման ժամանակ շինություններն ու տարածքը նրանց միջև բաշխում է կայազորի պետը:

Հոդված 162. Ժամկետային ծառայության զինծառայողները տեղավորվում են զորանոցում:

Հոդված 163. Յուրաքանչյուր վաշտի տեղավորման համար պետք է նախատեսված լինեն հետևյալ շինությունները.

ննջարան,

տեղեկատվության և ժամանցի սենյակ,

վաշտի գրասենյակ,

զենքի պահասենյակ,

զենքի մաքրման սենյակ (տեղ),

մարզական պարապմունքների սենյակ (տեղ),

կենցաղային սպասարկման սենյակ,  
վաշտի գուլքի և զինծառայողների անձնական իրերի պահասենյակ,  
ծխելու և կոշիկները մաքրելու սենյակ (տեղ),  
համազգեստի և կոշիկների չորանոց,  
լվացվելու սենյակ,  
ցնցուղարան,  
զուգարան:

Յուրաքանչյուր գումարտակի տեղաբաշխման վայրում սենյակներ են առանձնացվում գումարտակի հրամանատարի, նրա տեղակալների, գումարտակի շտաբի, պարապմունքներին նախապատրաստվելու, սպաների խորհրդակցությունների ու հանգստի համար:

Պարապմունքների անցկացման համար գնդում կահավորվում են անհրաժեշտ դասարաններ:

Յուրաքանչյուր զորամասում կահավորվում է մարտական փառքի (պատմության) սենյակ և ստեղծվում զորամասի պատվո գիրք:

(163-րդ հոդվածը փոփ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 164. Պայմանագրով ծառայության ընդունված սպաները, ենթասպաները, կին զինծառայողները, ինչպես նաև զինվորները, սերժանտներն ու ավագները տեղավորվում են. ընտանիքավորները՝ գնդից դուրս, իսկ ընտանիք չունեցողները կարող են տեղավորվել գնդի տարածքում գտնվող հանրակացարաններում կամ զորանոցի առանձին շինություններում (սենյակներում):

Ընդ որում, կին զինծառայողների համար կահավորվում են առանձին հանրակացարաններ (ննջարաններ), պարապմունքներին նախապատրաստվելու, խորհրդակցությունների և ժամանցի սենյակներ, ցնցուղարան և կանանց զուգարաններ, ինչպես նաև կենցաղ-սպասարկման և լվացվելու առանձին սենյակներ:

Վաշտի ավագի պաշտոն զբաղեցնող ենթասպաները (ընտանիքներով կամ առանց դրանց) տեղավորվում են գնդի տարածքում կամ դրա մերձակայքում:

Վաշտի ավագի կամ այլ պաշտոններ զբաղեցնող ժամկետային ծառայության սերժանտները, որոնք ենթակա են որպես սպաներ կամ ենթասպաներ համալրելու, կարող են տեղավորվել զորանոցի առանձին շինությունում:

Հոդված 165. Ռազմական ուսումնական հաստատությունների 1-ին և 2-րդ կուրսերի ուսանողները տեղավորվում են զորանոցներում

ժամկետային ծառայության զինվորների ու սերժանտների համար սահմանված կարգով: 3-րդ և բարձր կուրսերի ուսանողներն ու ունկնդիրները, որոնք սպայական կոչում չունեն, տեղավորվում են հանրակացարաններում, ընտանիքավորներին տրամադրվում են ընտանեկան հանրակացարաններ: Ընտանեկան հանրակացարանների բացակայության դեպքում ռազմական ուսումնական հաստատության պետը 3-րդ և բարձր կուրսերի ընտանիքավոր ուսանողներին և ունկնդիրներին, որոնք սպայական կոչում չունեն, կարող է տալ ռազմաուսումնական հաստատության տեղաբաշխման սահմաններից դուրս բնակվելու իրավունք: Ժամկետային ծառայության զինծառայողների թվից ուսանողները և ունկնդիրները ժամկետային ծառայության մեջ գտնվելու համար սահմանված ժամկետը լրանալուց հետո տեղավորվում են հանրակացարանում: Ենթասպաներից և մինչև ռազմական ուսումնական հաստատություն ընդունվելը ժամկետային ծառայությունն ավարտած ուսանողները ուսուցման առաջին տարվանից ազատվում են զորանոցներում տեղավորվելուց:

Հոդված 166. Արգելվում է որևիցե մեկին բնակվել ճաշարաններում, հացի գործարաններում, բուժկետներում, կաթսայատներում, արտադրական և պահեստային շինություններում, ակումբներում, հավաքակայաններում և անգարներում, ինչպես նաև զորանոցի ուսումնական և ծառայողական շինություններում:

Հոդված 167. Ժամկետային ծառայության զինծառայողների տեղավորումը ննջարաններում կատարվում է մեկ անձին ոչ պակաս 12 մ3 օդի հաշվարկով:

Ննջարաններում մահճակալները դասավորվում են վաշտի հաստիքապաշտոնի ցուցակին համապատասխան հաջորդականությամբ և այնպես են տեղադրվում, որ յուրաքանչյուրի կողքին կամ իրար մոտեցված 2 մահճակալների կողքին տեղ մնա մահճակալամերձ պահարանիկի համար, իսկ մահճակալների շարքերի միջև մնա անձնակազմի շարքի համար անհրաժեշտ հեռավորություն, մահճակալները պետք է տեղադրվեն դրսի պատերից 50 սմ հեռու և հավասարության պահպանումով: Մահճակալները պետք է միատեսակ (ստանդարտ) լինեն:

Ննջարաններում մահճակալների տեղադրումը կարող է կատարվել մեկ կամ երկու հարկաշարքով:



Կին զինծառայողները տեղավորվում են մեկ հարկաշարքով մահճակալների դասավորություն ունեցող ննջարաններում:

Հոդված 168. Մխրագործության համար վաշտի ցուցակներում հավերժ կամ որպես պատվավոր զինվոր գրանցված զինծառայողների համար ննջարանի երևացող տեղում տեղավորվում է մահճակալ, որը մշտապես պահվում է օրինակելի վիճակում: Նրա սնարին շրջանակով կախում են հերոսի դիմանկարը և նրա գործած սխրանքի նկարագրությունը:

Հոդված 169. Մահճակալամերձ պահարանիկի մեջ պահվում են վերին դարակում՝ արդուզարդի և սափրվելու պարագաները, թաշկինակները, ենթօձիքները և անձնական օգտագործման այլ մանր առարկաներ, միջին բաժնում՝ գրքեր, կանոնադրություններ, լուսանկարչական ալբոմներ, տետրեր և այլ գրենական պիտույքներ, ստորինում՝ հագուստի և կոշիկների մաքրման պարագաներ:

Հոդված 170. Ջորանոցներում տեղավորված զինծառայողների անկողինները պետք է բաղկացած լինեն ծածկոցներից, սավաններից, բարձի երեսներով բարձերից, ներքնակներից և սփռոցներից: Անկողինները պետք է միակերպ հարդարված լինեն: Արգելվում է համազգեստով (բացի վաշտի հերթապահից՝ հանգստի ժամանակ) և կոշիկներով պառկել կամ նստել անկողնում:

Հոդված 171. Շինելները, դաշտային տաք բաձկոններն ու տաբատները, կիսամուշտակները, գլխարկները, համալրված իրապայուսակները պահվում են զորանոցի շինություններում տեղավորված հատուկ պահարաններում, իսկ պողպատյա սաղավարտները, անհատական պաշտպանության միջոցները, բացի հակազգազերից՝ նաև դարակաշարերում, տոնական հագուստը, մարզական համազգեստը և աշխատանքային հագուստը՝ վաշտի գույքի և զինծառայողների անձնական իրերի պահման համար նախատեսված պահեստանոցի պահարաններում: Հատուկ հագուստը պահվում է ննջարաններից դուրս գտնվող պահարաններում: Համապատասխան պայմանների առկայության դեպքում զինվորական և մարզական համազգեստներն ու զինծառայողների անձնական իրերը կարող են պահվել անհատական պահարաններում (պահախորշերում):

Բոլոր տեսակի համազգեստները պահելու համար նախատեսված տեղերը կցվում են զինծառայողներին և դրանց վրա ամրացվում է ցուցակ՝ զինծառայողի զինվորական կոչման, ազգանվան և անվան ու հայրանվան սկզբնատառերի նշումով:

Ամենօրյա հագուստն ու կաշեգոտին քնից առաջ կոկիկ և միակերպ դասավորում են աթոռակի վրա, կոշիկները դրվում են մահճակալի մոտ, ոտքերի կողմում: Հագուստը, սպիտակեղենը և կոշիկեղենը անհրաժեշտության դեպքում չորացնում են չորանոցներում:

Լուսանկարչական ապարատների, ձայնագրիչների, ռադիոընդունիչների և կենցաղային ռադիոէլեկտրոնային այլ տեխնիկայի պահպանման համար և օգտագործման կարգը զինծառայողների համար սահմանում է գնդի հրամանատարը:

Հոդված 172. Հրազենն ու զինամթերքը, այդ թվում նաև ուսումնականը, ստորաբաժանումներում պահվում են մետաղյա ճաղացանց ունեցող պատուհաններով առանձին սենյակներում, որոնք մշտապես գտնվում են օրվա վերակարգի հսկողության տակ: Սենյակի դուռը պետք է սարքավորված լինի դեպի գնդի հերթապահի սենյակը դուրս բերվող էլեկտրոնաձայնային ազդանշանիչով, ունենա դիտապատուհան և բացվի դեպի շինության ներսը (դեպի կողք տեղաշարժվի): Թույլատրվում է դռան կամ շարժական պատի վրա մետաղյա ճաղացանցի տեղադրում:

Գնդացիները, ավտոմատները, կարաբիները, հրացանները և ձեռքի նոնականետերը, ինչպես նաև գնդացիների պահեստային փողերը, սվին-դանակները (սվինները) պետք է պահվեն զինաբուրգում, իսկ ատրճանակներն ու զինամթերքը՝ կողպեքով փակվող մետաղյա պահարաններում կամ դարակներում: Զինաբուրգերում են պահվում նաև հետևակային բահերը և հակազգազերը:

Ուսումնական զենքը և ուսումնական զինամթերքը պետք է պահվի մարտականից անջատ: Առանձին զինաբուրգի բացակայության դեպքում թույլատրվում է ուսումնական զենքը պահել մարտականի հետ և այդ դեպքում նրա պահպանման տեղը նշվում է «Ուսումնական զենք» մակագրությամբ: Ուսումնական ատրճանակները պահվում են ստորաբաժանման զինվորների ու սերժանտների մարտական ատրճանակների հետ: Մարզական զենքը պահվում է մարտականի հետ: Դրա պահպանման տեղը նշվում է «Մարզական զենք» մակագրությամբ: Ուսումնական և մարզական զենքի և ուսումնական

փամփուշտների բացթողումը կատարվում է նույն կերպ, ինչպես և մարտական զենքինն ու զինամթերքինը:  
(172-րդ հոդվածը փոփ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 173. Զինաբուրգերը, ատրճանակների ու զինամթերքի պահարաններն ու դարակները, ինչպես նաև զենքի պահասենյակը պետք է փակվեն կողպեքով և կնքվեն մաստիկային կնիքով, զինաբուրգերն ու սենյակները՝ վաշտի հերթապահի կնիքով, ատրճանակների ու զինամթերքի պահարաններն ու դարակները՝ վաշտի ավագի կնիքով:

Պահասենյակի և զինաբուրգի բանալիները պետք է մշտապես գտնվեն վաշտի հերթապահի մոտ, իսկ ատրճանակների ու զինամթերքի պահարանների ու դարակների բանալիները՝ վաշտի ավագի մոտ:

Բանալիները ուրիշին տալն արգելվում է:

Պահեստային բանալիները պահվում են վաշտի հրամանատարի մոտ կնքված դարակում՝ կողպեքով փակվող մետաղյա պահարանում (արկղիկում):

Զենքի պահասենյակում փակցվում է գույքացուցակը, որի մեջ գրանցվում են այդ սենյակում պահվող զինամթերքի արկղերը, ծանր զենքի տեսակները, զինաբուրգերը, պահարանները, դարակները և այլ գույքը: Գույքացուցակում նշվում են պահարանների համարները, թե ինչ կնիքով են դրանք կնքված: Յուրաքանչյուր զինաբուրգի (պահարանի, դարակի) վրա ամրացվում են ցուցանակներ, որոնց վրա նշվում է ստորաբաժանումը, պատասխանատու անձի զինվորական կոչումը, ազգանունը, ինչպես նաև անվան ու հայրանվան սկզբնատառերը, զինաբուրգի (պահարանի, դարակի) համարը, կնիքի համարը:

Զինաբուրգում (պահարանում, դարակում) կախվում է գույքացուցակը, որի մեջ նշվում է պահվող զենքի և գույքի տեսակն ու քանակը: Զինաբուրգում (պահարանի) յուրաքանչյուր բնի վրա պետք է ամրացված լինի ցուցանակ, որի վրա նշվի զենքի տեսակն ու համարը, հակագազի համարը, ինչպես նաև այն անձի զինվորական կոչումը, ազգանունը, անվան և հայրանվան սկզբնատառերը, որին դրանք կցված են:

Զենքի պահասենյակներում և զինաբուրգերում, պահարաններում, արկղերում գտնվող բոլոր գույքացուցակները ստորագրում է վաշտի հրամանատարը:

Նույն պահասենյակում մի քանի ստորաբաժանումների զենքի ու զինամթերքի պահպանման դեպքում զենքի և զինամթերքի տեղավորման, պահպանման և անվնասության համար գնդի հրամանատարության հրամանով պատասխանատու անձ է նշանակվում, որը և ստորագրում է պահասենյակի գույքացուցակը:

(173-րդ հոդվածը փոփ. 01.06.06 ՀՕ-127-Ն, 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 174. Գումարտակի (գնդի շտաբի և ծառայությունների) սպաների և ենթասպաների անձնական զենքը, փամփուշտները, ռադիոակտիվ ճառագայթման դոզաչափիչները պահվում են կողպեքով փակվող մետաղյա պահարանում՝ վաշտերից մեկին (գնդի շտաբին) կից: Ընդ որում՝ փամփուշտները պետք է գտնվեն կողպեքով փակվող մետաղյա առանձին արկղում, որը կնքում է դրանց պահպանման համար պատասխանատու սպան (ենթասպան): Օրվա վերակարգում ծառայություններ անցկացնելու համար սպաներին ու ենթասպաներին տրվող փամփուշտները կարող են պահել արկղից դուրս: Պահարանը կնքվում է վաշտի ավագի (գնդի հերթապահի) կողմից: Սպաների ու ենթասպաների անձնական զենքի, փամփուշտների և ռադիոակտիվ ճառագայթման դոզաչափերի պահարանը, որը գտնվում է գնդի հերթապահի մոտ, դրանցից բացի պետք է ունենա պահակապետի մոտ ծածուկ դուրս բերվող էլեկտրաձայնային ազդանշանիչ:

Գումարտակի սպաների ու ենթասպաների անձնական զենքի պահարանների և փամփուշտների արկղերի բանալիները պահվում են վաշտի ավագի մոտ, իսկ գնդի շտաբի և ծառայությունների սպաներինն ու ենթասպաներինը՝ գնդի հերթապահի մոտ:

Ատրճանակների և դրանց փամփուշտների բացթողման և ընդունման կարգը սահմանում է գնդի հրամանատարը:

(174-րդ հոդվածը փոփ. 01.06.06 ՀՕ-127-Ն)

Հոդված 175. Պահակախմբերի ու հերթապահ ստորաբաժանումների փամփուշտները պետք է գտնվեն կողպեքով փակվող մետաղյա կնքված արկղերում, որոնց բանալիներն ու կնիքները պահվում են վաշտի ավագի մոտ: Յուրաքանչյուր արկղում պետք է լինի ռազմամթերքի առկայության ցուցակը: Փամփուշտների արկղերը տեղավորվում են զինաբուրգերի մոտակայքում:

Այն զորամասերում, որտեղ պահակները նշանակվում են մի քանի ստորաբաժանումներից, նրանց փամփուշտները թույլատրվում է պահել զորամասի հերթապահի սենյակում:

Այն ստորաբաժանումները, որոնք ծառայությունը կատարում են արտահաստիքային զենքով, զինամթերքը պահեստից ստանում են զենքի հետ միաժամանակ:

(175-րդ հոդվածը փոփ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 176. Վաշտում սարքավորվում է ցնցուղարան՝ տասնհինգ-քսան մարդուն մեկ ծորակ (ցնցուղ) հաշվարկով, տեղադրվում են լվացարաններ՝ հինգ-յոթ մարդուն մեկ ծորակ հաշվարկով և ոտքի առնվազն երկու լոգարան՝ հոսող ջրով, ինչպես նաև տեղ է սարքավորվում զինծառայողների կողմից իրենց համազգեստը լվանալու համար:

Արհեստանոցներին, հավաքակայաններին, հացի փոերին, հացի գործարաններին ու ճաշարաններին կից, դրանից բացի, պետք է սարքավորված լինի տաք ցնցուղարան, իսկ լվացարանների մոտ պետք է օձառ և սրբիչ լինի:

Ջրմուղի բացակայության դեպքում ջեռուցվող շինություններում տեղադրվում են լցովի ջրով լվացարաններ, դրանցում պետք է շուրջօրյա ջուր լինի:

Լվացարանների մեջ թարմ ջուր լցնելուց առաջ դրանցում մնացած ջուրը դատարկվում է, լվացարանները մաքրվում են, կեղտոտ ջուրը տարվում և դատարկվում դրա համար հատկացված տեղերը:

Համազգեստը և կոշիկները մաքրելու համար առանձնացվում են հատուկ սարքավորված շինություններ կամ տեղեր:

Ծխել թույլատրվում է հատուկ առանձնացված և սարքավորված սենյակներում կամ տեղերում (Հավելված 16):

Հոդված 177. Կենցաղային սպասարկման սենյակը կահավորվում է զինվորական համազգեստի արդուկման սեղաններով, համազգեստն ու հագուստը կրելու, զինծառայողների արտաքին տեսքի, ինչպես նաև հագուստի ու կոշիկների նորոգման կանոնները պատկերող պլակատներով, հայելիներով, այթոռներով (այթոռակներով), արդուկների անհրաժեշտ քանակով, ինչպես նաև մազերը կտրելու և համազգեստի ու կոշիկների ընթացիկ նորոգումը կատարելու համար անհրաժեշտ գործիքներով ու գույքով, օժանդակ և վերանորոգման նյութերով:

Հոդված 178. Համալրման եկած անձնակազմը մինչև զինվորական երդում տալը տեղավորվում է առանձին շինությունում: Այդ ընթացքում

կատարվում է խորացված բուժքննություն, պատվաստումներ են արվում, կատարվում է համազգեստի և կոշիկներին՝ սահմանված չափերով բացթողում և հարմարեցում, համալրման անձնակազմի հետ պարապմունքներ են անցկացվում նրանց նախնական ռազմական պատրաստության կատարելագործման ուղղությամբ:

(178-րդ հոդվածը փոփ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 179. Համալրման եկած անձնակազմից գնդի հրամանով կազմավորվում է առանձին ստորաբաժանում, նշանակվում են ստորաբաժանման հրամանատար, անձնակազմի հետ տարվող աշխատանքի գծով նրա տեղակալ, որպես հրամանատարներ ու հրահանգիչներ առանձնացվում են անհրաժեշտ թվով սպաներ, ենթասպաներ, սերժանտներ և զինվորներ:

Եկած համալրման բաշխումն ըստ գնդի ստորաբաժանումների կատարվում է 6-րդ հավելվածում նշված կարգով:

Հոդված 180. Ձորակոչվածների անձնական իրերը (սպիտակեղեն, կոշիկեղեն, հագուստ) կարգի են բերվում, փաթեթավորվում և զինվորական անվճար ծանրոցներով գորամասի կողմից ուղարկվում են նշված հասցեներով:

#### Շինություններ պահելը

Հոդված 181. Գնդի բոլոր շենքերն ու շինությունները, ինչպես նաև տարածքը պետք է միշտ պահվեն մաքուր և կարգին վիճակում: Յուրաքանչյուր պետ պատասխանատու է շենքի և շինության ճիշտ օգտագործման, կահույքի, գույքի և սարքավորման անվնասության համար:

Շենքերի ճակատամասերը և բոլոր շինությունները պետք է ներկված լինեն սահմանված գույնի ներկերով:

Հոդված 182. Բոլոր սենյակները պետք է համարակալված լինեն: Յուրաքանչյուր սենյակի մուտքի դռան արտաքին կողմից կախվում է փոքրիկ ցուցատախտակ, որի վրա նշվում է սենյակի համարը և դրա նշանակումը (Հավելված 13), իսկ յուրաքանչյուր սենյակի ներսում՝ հատակից 150 սմ բարձրության վրա, դրանում գտնվող գույքի (կահույք, գույք և սարքավորում) ցուցակը:

Շինության կահույքը, գույքն ու սարքավորումը համալրվում են հետևի կողմից և գրանցվում հաշվառման գրքում, որը պահվում է վաշտի գրասենյակում:

(182-րդ հոդվածը փոփ. 01.06.06 ՀՕ-127-Ն)

Հոդված 183. Կահույքը, գույքն ու սարքավորումը պատկանում են շինությանը և առանց գնդի հրամանատարի թույլտվության չեն կարող տեղափոխվել մի ստորաբաժանումից մյուսը: Արգելվում է կահույքը, գույքն ու սարքավորումը տեղափոխել զինվորական մի ավանից մյուսը:

Հոդված 184. Անձնակազմի ննջարաններում և այլ շինություններում՝ երևացող տեղերում, հատուկ վահանակների վրա պետք է փակցված լինեն օրվա կանոնակարգը, պարապմունքների դասացուցակը, վերակարգի թերթիկները, անձնակազմի տեղավորման սխեման, գույքացուցակը և անհրաժեշտ հրահանգները:

Հոդված 185. Սենյակներում (շինություններում) կախվող դիմանկարներն ու նկարները պետք է շրջանակների մեջ լինեն, իսկ պլակատներն ու մյուս դիզայնիկ նյութերը՝ փայտե ձողերի վրա: Թույլատրվում է բոլոր շինություններում ունենալ ծաղիկներ, իսկ պատուհաններին կախել միագույն կոկիկ վարագույրներ:

Ներքին հարկերի՝ քաղաքի փողոցներին հարող պատուհանների ապակիները անհրաժեշտ բարձրությամբ պետք է անթափանց լինեն կամ ներկված լինեն սպիտակ ներկով:

Անհրաժեշտության դեպքում գորանոցի մուտքի դռներին կարող են դիտանցքեր լինեն, դրանք կարող են սարքավորվել հուսալի ներքին փականքներով և ստորաբաժանման օրապահի մոտ դուրս եկող ձայնային ազդանշանիչներով: Այդ դեպքում ներքնի հարկերի պատուհաններին տեղադրվում են ճաղացանցեր:

(185-րդ հոդվածը փոփ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 186. Ջրմուղ ունեցող որոշ շինություններում սարքավորվում են ջուր խմելու ցայտաղբյուրներ, իսկ ջրմուղ չունեցող շինություններում տեղադրվում են խմելու ջրի՝ կողպեքով փակված ջուր պահելու ամաններ, որոնց վրա նույնպես դրվում են ծորակներ: Բաքերը վաշտի հերթապահի հսկողությամբ ամեն օր ողողվում և լցվում են խմելու թարմ ջրով, շաբաթը մեկ անգամ կատարվում է նրանց

ախտահանումը: Բաքի բանալիները պահվում են վաշտի հերթապահի մոտ:

Հոդված 187. Բոլոր շինություններն ապահովվում են անհրաժեշտ քանակությամբ աղբամաններով, իսկ ծխարանները՝ ջրով (վարակազերծիչ հեղուկներով) լցված աղբամաններով:

Շինության մուտքի դռների մոտ պետք է լինեն կոշիկները ցեխից մաքրելու հարմարանքներ և աղբամաններ:

Հոդված 188. Շինությունների ամենօրյա մաքրումը կատարում են հերթական հավաքարարները՝ վաշտի հերթապահի անմիջական ղեկավարությամբ: Հերթական հավաքարարները պարապմունքներից չեն ազատվում:

Հերթական հավաքարարները պարտավոր են մահճակալների և մահճակալամերձ պահարանիկների տակից դուրս հանել աղբը, ավելե մահճակալների շարքերի միջի անցումները, անհրաժեշտության դեպքում հատակը սրբել խոզանակով կամ խոնավ լաթով, աղբը դուրս բերել սահմանված տեղը, սրբել պատուհանների, դռների, պահարանների, արկղերի և այլ իրերի փոշին, դեռ երեկոյան ջուր լցնել լվացարանները, մաքրել աղբամանները, իսկ ծխարաններում, դրանից բացի, դրանց մեջ ջուր կամ վարակազերծիչ հեղուկ լցնել:

Պարապմունքների ժամանակ շինությունների մաքրության պահպանման պարտականությունը դրվում է օրապահների վրա:

Հոդված 189. Բացի ամենօրյա մաքրումից, շաբաթը մեկ անգամ կատարվում է բոլոր շինությունների ընդհանուր մաքրում՝ վաշտի ավագի ղեկավարությամբ: Ընդհանուր մաքրման ժամանակ անկողնային պարագաները (ներքնակներ, բարձեր, վերմակներ) կարող են բակ դուրս բերվել՝ օդափոխման: Հատակին մոմածեփ (մաստիկա) քսելուց առաջ այն պետք է մաքրվի կեղտից և սրբվի խոնավ լաթով:

Եթե հատակին մոմածեփ չի քսվում, ապա հատակը լվացվում է շաբաթական առնվազն մեկ անգամ: Ջուր լցնելով՝ հատակը լվանալն արգելվում է:

Հոդված 190. Ճաշարաններում, հացաթխման փոերում ու հացի գործարաններում ամբողջ սարքավորումն ու գույքը դրոշմադրվում է (պիտակավորվում), պահվում է մաքուր և կարգին վիճակում, սնունդ ընդունելուց հետո ամանեղենը պետք է մաքրվի, լվացվի, եռման ջրով

ողողվի, չորացվի և պահվի դարակաշարերի (ստելլաժների) վրա կամ հատուկ պահարաններում:

Հոդված 191. Ձմռանը շենքի ձեղնապատուհանները պետք է փակվեն, իսկ ամռանը բացվեն, բայց պահպանվեն հատուկ ճաղացանցերով:

Ձեղնահարկերում, ծխնելույզներից հեռու ընկած տեղերում կարող են պահվել միայն ձմեռային ապակեկալները:

Ձեղնահարկերը, չորանոցները, նկուղները կողպվում են, դրանց բանալիները պահվում են այն ստորաբաժանման հերթապահի մոտ, որի վրա դրված է այդ շինությունների պահպանության պատասխանատվությունը:

Հոդված 192. Ձուգարանները սարքավորվում են 10-12 մարդուն մեկ միգարանի և գուգարանակոնքով (անցքով) մեկ փակվող խցիկի հաշվարկով: Ձուգարանները պետք է պահվեն մաքուր վիճակում, ամեն օր ախտահանվեն և ունենան լավ օդափոխություն և լուսավորություն: Դրանց մաքրման համար անհրաժեշտ գույքը պահվում է հատկացված հատուկ տեղում (պահարանում): Ձուգարանների մաքրության հսկողությունը դրվում է ստորաբաժանումների ավագների, վաշտերի սանհրահանգիչների և հերթապահների վրա:

Դրսի գուգարանները սարքվում են բնակելի շինություններից, ճաշարաններից, հացի փոերից (հացի գործարաններից) 40-100 մ հեռավորության վրա՝ անջրանցիկ հորերով: Հյուսիսային շրջաններում այդ հեռավորությունն ավելի փոքր կարող է լինել: Դրսի գուգարան տանող արահետները գիշերային ժամերին լուսավորվում են: Անհրաժեշտության դեպքում (գիշերվա համար) տարվա ցուրտ եղանակներին հատուկ առանձնացված շինություններում սարքվում են միգարաններ:

Ձուգարանների հորերը ժամանակին մաքրվում և ախտահանվում են:

Հոդված 193. Առանց բնակչահագործման և հրշեջ մարմինների թույլտվության արգելվում է շինությունների վերապլանավորումը, գոյություն ունեցող կառույցների քանդումն ու տեղափոխումը և նորերի կառուցումը, ներքին էլեկտրացանցերի, կապի գծերի, ազդանշանների, հեռուստատեսային անտենաների անցկացումը, ինչպես նաև նոր վառարանների կառուցումն ու ժամանակավոր տեղադրումը:

Էլեկտրամատակարարման, գազամատակարարման, կենտրոնական ջեռուցման ցանցերի և սարքավորման նորոգումը իրականացնում է բնակչահագործման ծառայության կամ հատուկ պատրաստություն և այդ աշխատանքների կատարման թույլտվություն ունեցող անձինք:

Ձորանոցային շինություններում արգելվում է շարքով համաքայլ քայլել:

Հոդված 194. Գնդի տեղակայման շրջանը, զինվորական ավանի տարածքը և նրա հարակից փողոցները պետք է կանաչապատ լինեն և պահվեն մաքուր ու կարգին վիճակում, իսկ մութ ժամանակ՝ լուսավորվեն: Զինվորական ավանի տարածքը պարսպապատվում է:

Գնդի տեղակայման շրջանը մաքրելու համար այն հատվածներով բաժանվում է ստորաբաժանումների միջև: Ադրն ամեն օր հավաքվում է կափարիչներով փակվող աղբարկղերում (կոնտեյներում) և դուրս է բերվում: Աղբարկղերը տեղադրվում են կարծր ծածկով հարթակների վրա: Շաբաթական առնվազն մեկ անգամ աղբարկղերը մաքրվում և ախտահանվում են:

Զինվորական ավանի տարածքի մաքրումը կատարվում է օրվա վերակարգի և ճաշից հետո առանձնացված խմբերի ուժերով: Հավաքակայանային-տնտեսական օրը գնդի տեղավորման շրջանը մաքրելու համար առանձնացվում են խմբեր կամ ստորաբաժանումներ:

#### Շինությունների ջեռուցումը

Հոդված 195. Ջեռուցման շրջանի սկիզբն ու վերջը հայտարարվում է կայագործի պետի հրամանով: Վառարանային ջեռուցման դեպքում ջեռուցման կարգն ու ժամկետը, վառելիքի ընդունման ու բացթողման կարգը սահմանում է գնդի հրամանատարը:

Բոլոր կաթսայատները, կենտրոնական ջեռուցման համակարգերը, վառարաններն ու ծխնելույզները մինչև ջեռուցման շրջանի սկիզբը պետք է ստուգվեն, իսկ անսարքները՝ նորոգվեն: Ծխնելույզի մաքրումն իրականացվում է սահմանված ժամկետներում:

Հոդված 196. Ձմռանը բնակելի շինություններում պահվում են +18-ից, իսկ բժշկական հիմնարկներում՝ +20-ից ոչ ցածր ջերմաստիճան, մնացած շինություններում՝ ըստ սահմանված չափերի: Ջերմաչափերը

շինություններում ամրացվում են ներսի պատերին, վառարաններից և տաքացնող սարքերից հեռու, հատակից 1,5 մ բարձրության վրա:

Հոդված 197. Վառարանները վառելը պետք է ավարտվի ժամը 20-ից ոչ ուշ: Ուսումնական և ծառայողական շինություններում վառարանների վառելը կատարվում է առավոտյան և պետք է ավարտվի պարապմունքները (աշխատանքները) սկսվելուց մեկ ժամ առաջ: Այն շինություններում, որտեղ ջերմաստիճանը հոդված 196-ում սահմանված նորմերից ցածր է, գնդի հրամանատարի թույլտվությամբ կարելի է շարունակել վառարանները վառելը:

Հոդված 198. Ջեռուցման շրջանում վառարանները վառելու համար զինվորների թվից գնդի հրամանով նշանակվում են հնոցապաններ, որոնց նախապես պետք է սովորեցնել վառարանները վառելու կանոններն ու հրդեհային անվտանգության պահանջները: Հնոցապանները պարապմունքներից չեն ազատվում: Ջեռուցման շրջանում նրանք ազատվում են բոլոր վերակարգերից:

Ստորաբաժանումներում վառարանները վառելուն հետևելու պարտականությունը դրվում է վաշտի ավագի և վաշտի հերթապահի վրա, իսկ գնդի շտաբում՝ գնդի շտաբի հերթապահի վրա:

Օրվա վերակարգի անձանց հրահանգավորման ժամանակ նրանց ուշադրությունը հատկապես հրավիրվում է բնակելի և ծառայողական շինություններում վառարանները վառելու կանոնների պահպանումը վերահսկելու անհրաժեշտության վրա:

Հոդված 199. Մրգելվում է օգտվել անսարք վառարաններից, վառելու համար օգտագործել հեղուկ վառելանյութեր, առանց հսկողության թողնել վառվող վառարանները, վառելիքը չորացնել վառարաններում կամ նրանց կողքին և այն պահել բնակելի շինություններում, ինչպես նաև փայտ կտորել ու սղոցել շինություններում, միջանցքներում և սանդուղքների վրա:

Հոդված 200. Ջեռուցման շրջանի ավարտից հետո բոլոր վառարաններն ու ծխնելույզները պետք է մաքրված լինեն և գնդի բնակչահագործման ծառայության պետի հետ համատեղ ստուգված լինեն վաշտի ավագի կողմից, որից հետո վառարանների դռները կապարակնքվում (պլոմբվում) կամ կնքվում են:

## Շինությունների օդափոխությունը

Հոդված 201. Ձորանոցներում շինությունների օդափոխությունը կատարում է օրապահը՝ վաշտի հերթապահի հսկողության տակ, ննջասենյակներում՝ քնից առաջ և հետո, դասարաններում՝ պարապմունքներից առաջ և ընդմիջումների ժամանակ:

Հոդված 202. Յուրտ ժամանակ պատուհանների օդանցքերը (վերնափեղկերը), իսկ ամառ ժամանակ՝ պատուհանները բացվում են, երբ մարդիկ գտնվում են շինությունից դուրս: Եթե մարդիկ շինությունից դուրս չեն գալիս, օդանցքերը (վերնափեղկերը) կամ պատուհանները բացվում են շինության միայն մեկ կողմից: Բաց օդանցքերը և պատուհանների շրջանակներն ամրացվում են կեռիկներով:

Ամառ ժամանակ ճաշարանների, բուժկետերի, գուգարանների պատուհանները ծածկվում են մանրացանցերով՝ միջատներից պաշտպանվելու համար:

Գործող օդափոխիչ սարքերը պետք է գտնվեն սարքին վիճակում: Հոսքային-արտածող օդափոխիչները գործածվում են գնդի հրամանատարի սահմանած ժամանակ:

## Շինությունների լուսավորությունը

Հոդված 203. Լուսավորության կարգը որոշում է գնդի հրամանատարը:

Ձորանոցային լուսավորությունը լինում է լրիվ և հերթապահ (ոչ պայծառ, մուգ կապույտ գույնի):

Քնի ժամին ննջարաններում վառ է թողնվում հերթապահ լուսավորությունը: Նավթային լուսավորության դեպքում հերթապահ լամպերը վառվում են լրիվ լույսով: Ձորանոցի մուտքի մոտ, գենքի պահասենյակներում, միջանցքներում, սանդուղքներին ու գուգարաններում մութն ընկնելուն պես մինչև լուսաբաց պահպանվում է լրիվ լուսավորություն: Լուսավորության ռեժիմի հսկողության պատասխանատվությունը դրվում է հերթապահների և օրապահների վրա:

Հոդված 204. Վթարի կամ այլ պատճառներով էլեկտրական լուսավորության ժամանակավոր անջատման դեպքերի համար վաշտի և այլ ստորաբաժանումների հերթապահների մոտ պետք է լինեն

լուսավորության պահեստային աղբյուրներ, որոնց պահելու տեղերը որոշում է գնդի հրամանատարը:

Բնակավայրերում տեղաբաշխելը

Հոդված 205. Բնակավայրերում գնդի ստորաբաժանումների տեղաբաշխումն իրականացվում է պետական իշխանության և կառավարման տեղական մարմինների ներկայացուցիչների համաձայնությամբ՝ վարչական շենքերում, իսկ դրանց բացակայության դեպքում՝ բնակության համար պիտանի տներում ու շինություններում:

Տեղավորվելուց հետո տնից տուն ինքնակամ տեղափոխվելն արգելվում է:

Հոդված 206. Ժամանակավոր տեղաբաշխման համար նախատեսված բնակավայրերը գնդի հրամանատարի հրամանով նախօրոք ստուգվում են սանիտարահամաճարակային առումով: Սանիտարահիգիենիկ առումով անբարենպաստ բնակավայրերում տեղաբաշխվումն արգելվում է:

Հոդված 207. Շինությունները, ծածկերն ու հրապարակները զբաղեցնելուց առաջ ստորաբաժանման հրամանատարը գնում է դրանք, որից հետո տեղավորում է անձնակազմը, սպառազինությունն ու ռազմական տեխնիկան:

Դասակները տեղավորվում են հնարավորին չափ կենտրոնացված:

Սպաներն ու ենթասպաները տեղավորվում են առանձին շինություններում՝ իրենց ենթակա ստորաբաժանումների դիրքերի մոտակայքում:

Սպառազինությունն ու ռազմական տեխնիկան տեղավորվում են ըստ ստորաբաժանումների, շինություններից դուրս, ծածկված (քողարկված) հրապարակներում կամ ծածկերի տակ:

Հոդված 208. Յուրաքանչյուր վաշտի համար նշվում է նրա տեղաբաշխման սահմանը, որի շրջանակներում էլ նրան հատկացվում են շինություններ, հողակտորներ պարապմունքների անցկացման համար, ինչպես նաև նշանակվում է տազնապով հավաքի վայրը:

Հոդված 209. Պահեստների տեղավորման համար առանձնացվում են հրդեհային անվտանգության պահանջներին համապատասխանող առանձին շինություններ:

Խոհանոցները, հացի փոերն ու բաղնիքները, եթե դրանց համար առանձին շինություններ չեն հատկացված, սարքավորվում են բնակելի շինություններից և այլ կառույցներից այնպիսի հեռավորության վրա, որպեսզի բացառվի հրդեհի բռնկումը:

Հոդված 210. Ստորաբաժանումների բնակավայրերում ժամանակավորապես տեղավորվելիս անմիջապես սարքավորվում են զուգարաններ, դրանց ժամանակին կառուցման և կարգին վիճակում պահելու վրա պետք է հատուկ ուշադրություն դարձվի:

Հոդված 211. Խմելու և կերակրի պատրաստման համար ջուրը վերցվում է ջրամատակարարման միայն հատուկ առանձնացված կետերից (աղբյուրներից), միջոցներ են ձեռնարկվում դրանց աղտոտումը կանխելու համար, դրանց մոտ կարգվում է շուրջօրյա պահակություն:

Հոդված 212. Յուրաքանչյուր շինությունում նշանակվում է ավագ, որը պատասխանատու է զինծառայողների վարքի, ներքին կարգուկանոնի և շինությունում գտնվող գույքի անվտանգության պահանջների պահպանման համար:

Զինծառայողները շինությունում գտնվող գույքից օգտվում են շինության ավագի թույլտվությամբ:

(212-րդ հոդվածը խմբ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 213. Բնակավայրերում ժամանակավոր տեղավորման ժամանակ զենքն ու զինամթերքը պահվում են չոր, դռներից, վառարաններից, տաքացնող սարքերից հեռու տեղերում և մշտապես պահպանվում են վերակարգի կողմից, համազգեստներն ու հանդերձանքը պահվում են դրա համար հատուկ հարմարեցված տեղերում: Անձնական իրերը և սպիտակեղենը պահվում են իրապարկերում:

Հոդված 214. Բոլոր այլ դեպքերում, ինչ վերաբերում է ներքին կարգուկանոնին և գնդի տեղակայման վայրից ժամկետային

ծառայության զինծառայողներին արձակելուն, պետք է պահպանվեն զորանոցային տեղաբաշխման համար սահմանված կանոնները:

(214-րդ հոդվածը փոփ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հակահրդեհային պաշտպանություն

Հոդված 215. Բոլոր զինծառայողները պարտավոր են իմանալ և կատարել հրդեհային անվտանգության պահանջները (Հավելված 16) և պետք է կարողանան ճիշտ վարվել հրշեջ միջոցների հետ:

Հրդեհի բռնկման դեպքում յուրաքանչյուր զինծառայող պարտավոր է անհապաղ միջոցներ ձեռնարկել հակահրդեհային պաշտպանության և փրկարարական աշխատանքների զինվորական խումբ (հետագայում՝ հրշեջ խումբ) կամ արտահաստիքային հրշեջ խումբ կանչելու և ձեռքի տակ եղած բոլոր միջոցներով հրդեհը մարելու, ինչպես նաև մարդկանց, սպառազինությունը, ռազմական տեխնիկան և նյութական այլ միջոցները փրկելու համար:

Հոդված 216. Գնդում մշակվում է հակահրդեհային պաշտպանության պլանը, որը հաստատում է գնդի հրամանատարը և հայտնում ողջ անձնակազմին:

Գնդում հրդեհային անվտանգության պահանջները, հրդեհի մարմանը ներգրավվող ուժերի և միջոցների հաշվարկը, ինչպես նաև անձնակազմի, սպառազինության, ռազմական տեխնիկայի և նյութական այլ միջոցների էվակուացման կարգի մասին քաղվածքները պետք է գտնվեն գնդի հերթապահի մոտ:

Հոդված 217. Հակահրդեհային պաշտպանության կազմակերպման ու վիճակի համար գնդում պատասխանատու է թիկունքի գծով գնդի հրամանատարի տեղակալը:

Նա պարտավոր է՝

- կազմակերպել ողջ անձնակազմի հրդեհային անվտանգության պահանջների ուսումնասիրումը և հրդեհների մարման ժամանակ անհրաժեշտ գործողությունների ուսուցումը.

- ապահովել բոլոր օբյեկտներում ջրի նորմատիվային պաշարների, շանթարգելների և հրշեջ միջոցների առկայությունը.

- առնվազն 3 ամիսը մեկ անգամ ստուգել գնդի հակահրդեհային պաշտպանության կազմակերպումն ու վիճակը և անցկացնել ուսումնական հրդեհային տազնապներ.

- ապահովել հրդեհային անվտանգության պահանջների ժամանակին կատարումը.

- հեռախոսային կապ հաստատել մոտակա քաղաքային (կայազորային) հրշեջ խմբի հետ:

Հոդված 218. Գնդի հրամանատարը և հրաձգարանի պետը պատասխանատու են գնդին ու հրաձգարանին կցված անտառներում, ինչպես նաև պարապմունքների, հրաձգության, զորավարժությունների ու մարտական պատրաստության այլ միջոցների անցկացման ժամանակ բոլոր անտառներում հրդեհային անվտանգության պահանջների կատարման համար:

Հոդված 219. Ստորաբաժանումների հրամանատարները, ծառայությունների, արհեստանոցների, ակումբների, լաբորատորիաների և այլ օբյեկտների պետերը պատասխանատու են իրենց ենթակա ստորաբաժանումներում, օբյեկտներում հրդեհային անվտանգության պահանջների կատարման և հրդեհամարիչ միջոցները սարքին վիճակում պահելու համար:

Հոդված 220. Գնդում հակահրդեհային պաշտպանություն անմիջականորեն ղեկավարում է հակահրդեհային պաշտպանության և փրկարար աշխատանքների ծառայության պետը, իսկ այնտեղ, ուր նա հաստիքով նախատեսված չէ, նրա պարտականությունները համատեղության կարգով դրվում են սպաներից մեկի վրա:

Հոդված 221. Հաստիքային հրշեջ խումբ չունեցող գնդում ստեղծվում է 5 - 15 հոգուց բաղկացած արտահաստիքային հրշեջ խումբ:

Արտահաստիքային հրշեջ խմբի կազմում, որպես կանոն, նշանակվում են ստորաբաժանումներից մեկի զինվորներն ու սերժանտները:

Հրշեջ խմբից առանձնացվում է հրշեջ վերակարգը, որը շուրջօրյա կամ գնդի հրամանատարի հաստատած պահակակետերի ցուցակին համապատասխան որոշակի ժամանակահատվածում ծառայություն է կատարում հրշեջ պահակակետերում:

Հրշեջ խմբի անձնակազմը ազատվում է մյուս վերակարգերից:

Հոդված 222. Հակահրդեհային ծառայության և փրկարարական աշխատանքների պետը միաժամանակ հրշեջ խմբի պետն է և



ենթարկվում է թիկունքի գծով գնդի հրամանատարի տեղակալին: Նա պատասխանատու է հակահրդեհային պաշտպանության կազմակերպման, հրշեջ խմբի, հրդեհամարիչ միջոցների մշտական պատրաստության և անձնակազմի հրդեհային անվտանգության պահանջներն ուսուցանելու համար:

Հոդված 223. Հակահրդեհային պաշտպանության և փրկարարական աշխատանքների ծառայության պետը պարտավոր է՝

- գիտենալ գնդի օբյեկտների հրդեհային անվտանգության վիճակի առանձնահատկությունները, մասնակցել հակահրդեհային պաշտպանության պլանի և հրդեհային անվտանգության պահանջների մշակմանը.

- գնդի ստորաբաժանումների սպաների, ենթասպաների և ավագների հետ անձամբ պարապմունքներ անցկացնել հակահրդեհային պատրաստության, հրդեհամարիչ միջոցների շահագործման վերաբերյալ, անձնակազմի շրջանում բացատրական աշխատանք տանել հրդեհային անվտանգության պահանջների կատարման ուղղությամբ, ինչպես նաև անցկացնել հրշեջ խմբի հատուկ պատրաստություն և հրահանգավորել հրշեջ վերակարգը.

- անցկացնել բոլոր օբյեկտների հակահրդեհային վիճակի ստուգում և իրականացնել անձնակազմի կողմից հրդեհային անվտանգության սահմանված պահանջների կատարման ու հրշեջ վերակարգի ամենօրյա վերահսկողություն.

- հետևել հրդեհամարիչ բոլոր միջոցների, հրդեհային ազդանշանների, հրշեջ ջրամատակարարման աղբյուրների սարքինությանն ու ճիշտ շահագործմանը և միջոցներ ձեռնարկել դրանք մշտական պատրաստության վիճակում պահելու համար.

- կատարել կրակմարիչների տեխնիկական վիճակի հաշվառում.

- արգելել ջեռուցման, լուսավորության և այլ անսարք ու հրդեհավտանգ սարքավորումներից և սարքերից օգտվելը.

- գնդի հրամանատարին ժամանակին զեկուցել օբյեկտների հակահրդեհային վիճակի թերությունների մասին, իսկ բռնկումների, հրդեհների բոլոր դեպքերի և ձեռնարկված միջոցների մասին զեկուցել անհապաղ.

- ղեկավարել հրդեհի մարումը:

Շրջակա միջավայրի պահպանությունը

Հոդված 224. Յուրաքանչյուր զինծառայող իր ամենօրյա գործունեության ընթացքում պարտավոր է պահպանել բնությունն ու նրա հարստությունները: Դրա համար նա պետք է գիտենա գնդում (ստորաբաժանումում) եղած աղտոտման հիմնական աղբյուրները և խստագույնս իրականացնի ջրային ռեսուրսների, մթնոլորտի, հողի աղտոտվածության կանխման, կենդանական և բուսական աշխարհի պահպանության կանոններով և հրահանգներով նախատեսված միջոցառումները:

Այն զինծառայողները, որոնց գործողությունների կամ անգործության հետևանքով աղտոտվում է շրջակա միջավայրը, պատասխանատվության են ենթարկվում:

Շրջակա միջավայրի վրա գորքերի բացասական ազդեցությունը կանխելու համար գնդում ստեղծվում է մշտապես գործող հանձնաժողով և մշակվում է շրջակա միջավայրի պահպանության պլան, որը հասցվում է ողջ անձնակազմին:

Հոդված 225. Գնդի հրամանատարը պատասխանատու է շրջակա միջավայրի պահպանության կազմակերպման և նրա վիճակի համար: Նա պարտավոր է՝

- կազմակերպել անձնակազմի գնդի տեղակայման շրջանում շրջակա միջավայրի պահպանության կանոնների ուսումնասիրումը և դրա պահպանության կազմակերպումը.

- ապահովել շրջակա միջավայրի պահպանության միջոցառումների պլանի ժամանակին կատարումը:

Շրջակա միջավայրի պահպանության միջոցառումների կատարումը գնդում անմիջականորեն ղեկավարում է գնդի հրամանատարի՝ թիկունքի գծով տեղակալը:

Հոդված 226. Գնդի հրամանատարը և հրաձգարանի պետը պատասխանատու են հրաձգարանում զորավարժությունների և մարտական պատրաստության այլ միջոցառումների անցկացման ժամանակ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը կանխելուն անհրաժեշտ միջոցառումների իրականացման համար:

**ԺԱՄԱՆԱԿԻ ԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ԱՌՕՐՅԱ ԿԱՐԳՈՒԿԱՆՈՒՄ**

**Ընդհանուր դրույթներ**

Հոդված 227. Ձորամասում ժամանակի բաշխումն իրականացվում է այնպես, որ ապահովվի մշտական մարտական պատրաստությունը և պայմաններ ստեղծվեն կարգուկանոնի, զինվորական կարգապահության և անձնակազմի դաստիարակության, զինծառայողների մարտական կազմակերպված ուսուցման, նրանց կուլտուրական մակարդակի բարձրացման, կենցաղային համակողմանի սպասարկման, ժամանակին հանգստանալու և սնվելու համար:

Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ ծառայողական շաբաթվա տևողությունը սահմանվում է՝ ժամկետային ծառայության զինծառայողների, ուսանողների և զինվորական ուսումնական հաստատությունների, ուսումնական կենտրոնների (գործմասերի) ունկնդիրների և ուսանողների համար՝ վեցօրյա շաբաթ՝ հանգստյան մեկ օրով, սպաների, ենթասպաների, պայմանագրով զինվորական ծառայության անցած զինվորների, սերժանտների, ավագների, ինչպես նաև կին զինծառայողների համար՝ հնգօրյա շաբաթ՝ հանգստյան երկու օրով:

Սպաների, ենթասպաների, պայմանագրով զինվորական ծառայության անցած զինվորների, սերժանտների, ավագների, ինչպես նաև կին զինծառայողների շաբաթական ծառայողական ժամանակի ընդհանուր տևողությունը, որպես կանոն, չպետք է գերազանցի օրենսդրությամբ սահմանված աշխատաժամանակի տևողությունը:

Մարտական հերթապահությունը (մարտական ծառայությունը), գորավարժությունները և այլ միջոցառումներ, որոնց ցանկը որոշում է պետական կառավարման լիազորված մարմնի ղեկավարը (նախարարը), անցկացնում են առանց ծառայության ժամանակի ընդհանուր տևողության սահմանափակման:

Ձորամասի մարտական և զորահավաքային պատրաստության հետ անմիջականորեն կապված շտապ միջոցառումները կատարվում են գորամասի հրամանատարի հրամանով օրվա ցանկացած ժամին՝ զինծառայողներին հանգստի համար տրամադրելով առնվազն 4 ժամ:

Հանգստյան և տոնական օրերին ծառայողական պարտականությունների կատարմանը ներգրավված սպաներին ու ենթասպաներին գորամասի (ստորաբաժանման) հրամանատարի որոշումով հանգիստ է տրվում շաբաթվա մյուս օրերին՝ ծառայության շահերի հաշվառումով: Հանգստի տևողությունը չպետք է գերազանցի հանգստյան կամ տոնական օրը ծառայության մեջ անցկացրած ժամանակը:

Սպաներին, ենթասպաներին, պայմանագրով ծառայության անցած զինծառայողներին և կին զինծառայողներին շաբաթական ծառայության ժամանակի սահմանված տևողությունից դուրս ծառայողական պարտականությունների կատարմանը ներգրավելու և այն շաբաթվա մյուս օրերին հանգստով փոխհատուցելու անհնարինության դեպքում այդ ժամանակը գումարվում և զինծառայողին է տրվում հանգստի լրացուցիչ օրերի ձևով, որոնք կարող են միացվել հիմնական արձակուրդներին:

Հոդված 228. Ձորամասում ժամանակի բաշխումն օրվա ընթացքում, իսկ որոշ հարցերով նաև շաբաթվա ընթացքում, իրականացվում է օրվա և ծառայողական ժամանակի կանոնակարգով:

Ձորամասի օրվա կանոնակարգը նախատեսում է գորամասի շտաբի և ստորաբաժանումների անձնակազմի առօրյա գործունեության, ուսման և կենցաղի հիմնական միջոցառումների կատարումն ըստ ժամերի:

Ծառայության ժամանակի բաշխման կարգը, ի լրումն օրվա կանոնակարգի, սահմանում է սպաների, ենթասպաների, պայմանագրով ծառայության անցած զինծառայողների և կին զինծառայողների ծառայության ժամանակը:

Օրվա կանոնակարգը և ծառայության ժամանակի բաշխման կարգը սահմանում է գորամասի կամ միավորման հրամանատարը՝ զինված ուժերի տեսակի և զորատեսակի, գորամասի առջև դրված խնդիրների, տարվա եղանակի, տեղային և կլիմայական պայմանների հաշվառումով: Նրանք մշակվում են ուսուցման շրջանի համար և գորամասի (գորամիավորման) հրամանատարի կողմից կարող են ճշտվել մարտական հրաձգության, դաշտային ելքերի, զորավարժությունների և զորաշարժերի անցկացման, մարտական հերթապահության (մարտական ծառայության), օրվա վերակարգում և պահակությունում ծառայության կատարման և այլ միջոցառումների

անցկացման ժամանակ՝ նրանց կատարման առանձնահատկությունների հաշվառումով:

Ջորամասի օրվա կանոնակարգը գտնվում է օրվա վերակարգի փաստաթղթերում, իսկ սպաների, ենթասպաների պայմանագրային ծառայության զինծառայողների և կին զինծառայողների ծառայական ժամանակի բաշխման կարգը՝ գորամասի շտաբում և ստորաբաժանումների գրասենյակներում:

(228-րդ հոդվածը խմբ., փոփ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 229. Օրվա կանոնակարգում պետք է ժամանակ նախատեսված լինի առավոտյան մարմնամարզության, առավոտյան և երեկոյան արդուզարդի, առավոտյան ստուգման, ուսումնական պարապմունքների և նրանց նախապատրաստվելու, հատուկ (աշխատանքային) հագուստը փոխելու, կոշիկները մաքրելու և ուտելուց առաջ ձեռքերը լվանալու, ուտելու, սպառագինությունը և ռազմական տեխնիկան խնամելու, դաստիարակչական և մարզագանգվածային աշխատանք կատարելու, անձնակազմին տեղեկություն տալու, ռադիոհաղորդումներ ունկնդրելու և հեռուստահաղորդումներ դիտելու, բուժկետում հիվանդներ ընդունելու, զինծառայողների անձնական կարիքները հոգալու (2 ժամից ոչ քիչ, իսկ կարգապահական վաշտում՝ առնվազն 1 ժամ), երեկոյան զբոսանքի, անվանականչի և 8 ժամ քնի համար:

Մնվելու ժամանակամիջոցը 7 ժամը չպետք է գերազանցի:

Ճաշից հետո առնվազն 30 րոպեի ընթացքում պարապմունքներ կամ աշխատանքներ չպետք է անցկացվեն:

Ժողովները, նիստերը, ինչպես նաև բեմադրությունները, կինոդիտումները և այլ միջոցառումները պետք է ավարտվեն երեկոյան զբոսանքից առաջ:

(229-րդ հոդվածը լրաց. 19.03.13 ՀՕ-20-Ն)

Հոդված 230. Սպաների, ենթասպաների, պայմանագրով ծառայության անցած զինծառայողների և կին զինծառայողների ծառայության ժամանակաբաշխումը պետք է նախատեսի ծառայողական օրվա սկիզբը և ավարտը, ուտելու համար (ճաշի) ընդմիջման, ինքնուրույն նախապատրաստման (շաբաթական առնվազն 4 ժամ), ամենօրյա պարապմունքների նախապատրաստման և ֆիզիկական պատրաստության (շաբաթական առնվազն 3 ժամ ընդհանուր տևողությամբ) ժամանակը:

Ծառայության ժամանակատեղաբաշխման սահմանման ժամանակ հաշվի է առնվում զինծառայողների կողմից իրենց պաշտոնական պարտականությունների կատարման անհրաժեշտությունը՝ օրվա կանոնակարգին համապատասխան, ինչպես նաև գորամասը (ստորաբաժանումը) մշտական մարտական պատրաստության վիճակում պահելու համար միջոցառումների անցկացումը:

Մարտական հերթապահության և օրվա վերակարգում ծառայության ժամանակ ծառայողական ժամանակի չափը սահմանվում է զինվորական կանոնադրություններով և համապատասխան հրահանգներով:

Օրվա վերակարգի մեջ չմտնող սպաների, ենթասպաների շուրջօրյա հերթապահությունը գորամասում և ստորաբաժանումներում, ինչպես նաև սահմանված վերակարգում պատասխանատու անձանց նշանակումը կարող է կատարվել միայն բացառիկ դեպքերում և սահմանափակ ժամանակով՝ ռազմաճակատների և գորախմբերի հրամանատարների կողմից:

(230-րդ հոդվածը փոփ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 231. Յուրաքանչյուր շաբաթ գնդում անցկացվում է հավաքակայանային-տնտեսական օր՝ սպառագինության, ռազմական տեխնիկայի և այլ նյութական միջոցների սպասարկման հավաքակայանների և ուսումնանյութական բազայի օբյեկտների լրասարքավորման և բարեկարգման, զինվորական ավանները կարգի բերելու և այլ աշխատանքներ կատարելու նպատակով: Սովորաբար այդ նույն օրն անցկացվում է բոլոր շինությունների ընդհանուր մաքրումը, և անձնակազմը լողանում է բաղնիքում:

Բացի այդ, սպառագինությունն ու ռազմական տեխնիկան մշտապես մարտական պատրաստության մեջ պահելու նպատակով գնդում անցկացվում են հավաքակայանային օրեր՝ ամբողջ անձնակազմի ներգրավումով:

Հավաքակայանային-տնտեսական և հավաքակայանային օրերը անցկացվում են ըստ պլանների, որոնք մշակում է գնդի շտաբը գնդի հրամանատարի՝ սպառագինության և թիկունքի գծով տեղակալների հետ համատեղ և հաստատում է գնդի հրամանատարը: Պլանների քաղվածքները հասցվում են ստորաբաժանումներին:

Հավաքակայանային-տնտեսական օրերին կատարվող աշխատանքները և առաջին հերթին սպառագինության, ռազմական տեխնիկայի և զինամթերքի սպասարկման աշխատանքները

ղեկավարելու համար հերթականության կարգով նշանակվում են նվազագույն թվով սպաներ և ենթասպաներ: Շաբաթվա ընթացքում նրանց տրվում է հանգստյան օր:

Հոդված 232. Կիրակի և տոնական օրերը հանգստյան օրեր են ամբողջ անձնակազմի համար, բացառությամբ մարտական հերթապահության (մարտական ծառայության) և օրվա վերակարգում ծառայություն կատարողների: Այդ օրերին, ինչպես նաև պարավունքներից ազատ ժամանակ անձնակազմի հետ անցկացվում են մշակութաժամանցային աշխատանք, մարզական մրցումներ և խաղեր:

Հանգստյան օրերին առավոտյան մարմնամարզություն չի անցկացվում:

Վերկացր, առավոտյան ստուգումը և երեկոյան անվանականչը

Հոդված 233. Առավոտյան «Վերկաց» ազդանշանից 10 րոպե առաջ վաշտի հերթապահը իրականացնում է դասակների հրամանատարների տեղակալների և վաշտի ավագի վերկացը, իսկ սահմանված ժամին («Վերկաց» ազդանշանով)՝ վաշտի ամբողջական վերկացը:

Հոդված 234. Վերկացից հետո անցկացվում են առավոտյան մարմնամարզություն, շինությունների և տարածքի մաքրում, անկողինների հարդարում, առավոտյան արդուզարդ և առավոտյան ստուգում:

Հոդված 235. Առավոտյան ստուգման համար վաշտի հերթապահի «Վաշտ առավոտյան ստուգման շարվի՛ր» հրամանով դասակների հրամանատարների տեղակալները (ջոկերի հրամանատարները) նշանակված տեղում շարում են իրենց ստորաբաժանումները, գործուղվածները շարվում են ձախ թևում: Վաշտի հերթապահը, վաշտը շարելով, վաշտի ավագին զեկույց է տալիս առավոտյան ստուգմանը վաշտի պատրաստ լինելու մասին: Վաշտի ավագի հրամանով դասակների հրամանատարների տեղակալները և ջոկերի հրամանատարները կատարում են առավոտյան ստուգումը:

Հոդված 236. Առավոտյան ստուգումների ժամանակ ստուգվում է մարդկանց առկայությունը, նրանց արտաքին տեսքը և նրանց կողմից անձնական հիգիենայի կանոնների պահպանումը:

Բուժօգնության կարիք ունեցողներին վաշտի հերթապահը գրանցում է հիվանդների գրանցման գրքում (Հավելված 12)՝ նրանց գնդի բուժկետ ուղարկելու համար:

Առավոտյան ստուգման ընթացքում ջոկերի հրամանատարները կարգադրում են վերացնել բացահայտված թերությունները, ստուգում են դրանց վերացումը և ստուգման արդյունքների մասին զեկուցում դասակների հրամանատարների տեղակալներին, իսկ վերջիններս՝ վաշտի ավագին:

Ուտքերի, գուլպաների (ոտքի փաթաթանների) և ներքին սպիտակեղենի վիճակն ստուգվում է պարբերաբար, սովորաբար քնից առաջ:

Հոդված 237. Երեկոյան անվանականչից առաջ, օրվա կանոնակարգով սահմանված ժամին վաշտի ավագի կամ դասակների հրամանատարների տեղակալներից մեկի ղեկավարությամբ անցկացվում է երեկոյան զբոսանք: Երեկոյան զբոսանքի ժամանակ անձնակազմը ստորաբաժանման կազմում կատարում է շարային երգեր: Զբոսանքից հետո վաշտի հերթապահի «Վաշտ , երեկոյան անվանականչին շարվի՛ր» հրամանով դասակների հրամանատարների տեղակալները (ջոկերի հրամանատարները) շարում են իրենց ստորաբաժանումները անվանականչի: Վաշտի հերթապահը, վաշտը շարելով, ավագին կամ նրան փոխարինող անձին զեկուցում է երեկոյան անվանականչին վաշտի պատրաստ լինելու մասին:

Վաշտի ավագը կամ նրան փոխարինողը սկսում է անվանականչը: Անվանականչի սկզբում նա կարդում է այն զինծառայողների ազգանունները, որոնք իրենց գործած սխրանքների համար գրանցվել են վաշտի ցուցակներում հավերժ կամ որպես պատվավոր զինվորներ: Նշված զինծառայողների ազգանուններն արտասանելիս՝ առաջին դասակի հրամանատարի տեղակալը զեկուցում է. «Այսինչը (զինվորական կոչումը և ազգանունը) քաջի մահով ընկել է Հայրենիքի ազատության ու անկախության համար մղված մարտում» կամ «Վաշտի պատվավոր զինվոր (զինվորական կոչումը և ազգանունը) պահեստային է»:

Այսուհետև վաշտի ավագը անվանական ցուցակով ստուգում է անձնակազմը: Լսելով իր ազգանունը՝ յուրաքանչյուրը պատասխանում է՝ «Ես եմ»: Բացակաների փոխարեն պատասխանում են ջոկերի հրամանատարները, օրինակ՝ «Պահակախմբում է», «Արձակուրդում է»:

Անվանականի ավարտից հետո վաշտի ավագը հրապարակում է այն հրամաններն ու կարգադրությունները, որոնք պետք է հայտնի լինեն բոլոր զինծառայողներին, հաջորդ օրվա վերակարգը, ինչպես նաև ճշտում է տագնապի կամ հրդեհի դեպքում գործելու համար կազմված մարտական հաշվարկը: Սահմանված ժամին տրվում է «Քնել» ազդանշանը, միացվում է հերթապահ լուսավորությունը և հաստատվում է լիակատար անդորր:

(237-րդ հոդվածը փոփ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 238. Վաշտի հրամանատարի կամ վաշտի սպաներից մեկի՝ վաշտում գտնվելու դեպքում առավոտյան ստուգման և երեկոյան անվանականի ժամանակ վաշտի հերթապահը զեկուցում է ստուգման (անվանականի) արդյունքները:

Առավոտյան ստուգումից և երեկոյան անվանականից հետո վաշտերի հերթապահները կապի տեխնիկական միջոցներով գնդի հերթապահին զեկուցում են ստուգման արդյունքների, այդ թվում և բացակայողների մասին: Ինքնակամ բացակայողների առկայության դեպքում վաշտի հերթապահները, դրանից բացի, գնդի հերթապահին տեղեկություններ են տալիս այդ զինծառայողների մասին՝ նշելով նրանց ազգանունը, անունը, հայրանունը և գտնվելու ենթադրյալ վայրը:

Հոդված 239. Գնդի պլանով պարբերաբար անցկացվում են ընդհանուր գումարտակային կամ գնդային երեկոյան անվանականներ: Երեկոյան անվանականի համար նախատեսված տեղը պետք է լուսավորված լինի:

Ընդհանուր բրիգադային (գնդային) անվանականներին պարտավոր են ներկա լինել գումարտակի (գնդի) բոլոր սպաները, ենթասպաները, պայմանագրով ծառայության անցած զինծառայողները և կին զինծառայողները:

Ամբողջ անձնակազմի անվանականն ըստ անվանացուցակի կատարում են վաշտերի հրամանատարները և արդյունքների մասին զեկուցում են գումարտակի հրամանատարներին:

Ընդհանուր գնդային անվանականի ժամանակ գնդի գումարտակներին և առանձին ստորաբաժանումների

հրամանատարները անվանականի արդյունքների մասին զեկուցում են գնդի հրամանատարին:

Ընդհանուր գումարտակային (գնդային) անվանականի ավարտից հետո գումարտակի (գնդի) հրամանատարը տալիս է «Զգաստ» հրամանը և կարգադրում «Երեկոյահավաք» շեփոքել: Ընդհանուր գնդային երեկոյան անվանականի անցկացման ժամանակ «Երեկոյահավաքի» ավարտից հետո նվազախումբը կատարում է Հայաստանի Հանրապետության պետական օրհներգը: Այնուհետև ստորաբաժանումներն անցնում են նվազախմբի ուղեկցությամբ: «Երեկոյահավաքի» կատարման սկզբից ստորաբաժանումների հրամանատարները՝ դասակի հրամանատարը և ավելի բարձր, ձեռքը հպում են գլխարկին և իջեցնում «Ազատ» հրամանով, որը տալիս է գումարտակի (գնդի) հրամանատարը պետական օրհներգի կատարումից հետո:

(239-րդ հոդվածը փոփ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Ուսումնական պարապմունքներ

Հոդված 240. Խաղաղ ժամանակ զինծառայողների ամենօրյա գործունեության հիմնական բովանդակությունը մարտական պատրաստություն է: Մարտական պատրաստության պլանով և պարապմունքների դասացուցակով նախատեսված միջոցառումները կարող է հետաձգել միայն այդ փաստաթղթերը հաստատած հրամանատարը (պետը): Ժամանակակից մարտում կիրառվող գործողությունների եղանակները (ձևերը) զինծառայողներին սովորեցնելու նպատակով կազմակերպված պարապմունքներն ու զորավարժությունները պետք է անցկացվեն առանց զիջողության և պարզեցման:

Ուսումնական պարապմունքներին ու զորավարժություններին պարտավոր է մասնակցել գնդի ողջ անձնակազմը: Պարապմունքներից ազատվում են միայն օրվա վերակարգում և գնդի հրամանով նախատեսված աշխատանքների վերակարգում գտնվող անձինք, ինչպես նաև այն զինծառայողները, որոնց հանգստյան օր է հատկացված որպես փոխհատուցում տոնական կամ հանգստյան օրը կատարած ծառայության:

Հիվանդության պատճառով դաշտային պարապմունքներից ազատված զինծառայողների և սերժանտների հետ վաշտի

հրամանատարի հրամանով պարապմունքներ են կազմակերպվում դասարանում:

Անձնակազմին մարտական պատրաստության պարապմունքներից կտրած հրամանատարները (պետերը) ենթարկվում են պատասխանատվության:

Հոդված 241. Պարապմունքները սկսվում և ավարտվում են ազդանշանով՝ օրվա կանոնակարգով սահմանված ժամերին:

Պարապմունքների գնալուց առաջ ջոկերի հրամանատարները և դասակի հրամանատարների տեղակալները ստուգում են ենթակաների ներկայությունը և գնում՝ սահմանված ձևով են, արդյոք, նրանք հագնված, ճիշտ են, արդյոք, կրում ռազմական հանդերձանքը և լիցքավորված չէ՞, արդյոք, գենքը:

Պարապմունքների և գորավարժությունների ավարտից հետո ստորաբաժանումների հրամանատարները պետք է անձամբ ստուգեն ողջ սպառազինության, ռազմական տեխնիկայի և ուսումնամարզական միջոցների առկայությունն ու լրակազմությունը, ինչպես նաև հրագենի և զինամթերքի առկայությունը: Ձենքը և պահեստատուփերի պայուսակները ստուգում են ջոկերի հրամանատարները: Ստուգման արդյունքների մասին զեկույց է տրվում ըստ վերադասության: Չօգտագործված զինամթերքը և պարկուճները հանձնվում են սահմանված կարգով:

Պարապմունքների և գորավարժությունների ավարտից հետո իրականացվում է գենքի և սակրային գործիքի մաքրում, սպառազինության և ռազմական տեխնիկայի տեխնիկական սպասարկում, ինչպես նաև մաքրվում են պարապմունքների անցկացման վայրերը:

(241-րդ հոդվածը փոփ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Նախաճաշը, ճաշը և ընթրիքը

Հոդված 242. Օրվա կանոնակարգով սահմանված ժամին կերակրի պատրաստումը պետք է ավարտված լինի:

Նախքան կերակուր բաժանելը բժիշկը (բուժակը) գնդի հերթապահի հետ միասին պետք է ստուգի կերակրի որակը, անցկացնի բաժնեչափերի ստուգիչ կշռում, ինչպես նաև ստուգի ճաշարանի շինությունների ճաշարանախոհանոցային ամանեղենի և գույքի սանիտարական վիճակը: Բժշկի (բուժակի) եզրակացությունից հետո

կերակուրը պետք է համտեսի գնդի հրամանատարը կամ նրա ցուցումով՝ գնդի հրամանատարի տեղակալներից մեկը:

Ստուգման արդյունքները գրանցվում են կերակրի պատրաստման որակի ստուգման հաշվառման գրքում:

Սահմանված ժամին գնդի հրամանատարը կերակուրը բաժանելու թույլտվություն է տալիս:

Հոդված 243. Ջինվորներն ու սերժանտները ճաշարան պետք է գան մաքուր հագուստով և կոշիկներով, շարքով, վաշտի ավագի կամ նրա ցուցումով՝ դասակների հրամանատարների տեղակալներից մեկի հրամանատարությամբ:

Ուտելու ժամանակ ճաշարանում պետք է կարգուկանոն պահպանվի:

Ուտելիս արգելվում է ճաշարանում գտնվել գլխարկներով, շինելներով (տաք բաճկոններով) և հատուկ (բանվորական) հագուստով:

Հոդված 244. Օրվա վերակարգում գտնվող անձինք կերակուրը ստանում են գնդի հրամանատարի սահմանած ժամին:

Գնդի բուժկետում գտնվող հիվանդների համար կերակուրը պատրաստվում է հոսպիտալային օրապարենի (մթերաբաժնի) չափերով և մատուցվում առանձին:

Գնդի տեղաբաշխման վայրից արձակումը

Հոդված 245. Ջինձառայողները (բացառությամբ պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցնող զինձառայողների) կարող են ազատ տեղաշարժվել կայազորի սահմաններում, իսկ ժամկետային ծառայության զինձառայողները գնդի տեղաբաշխման վայրից արձակվում են միայն կայազորի սահմաններում:

Կայազորի սահմաններից զինձառայողի (բացառությամբ պայմանագրային ժամկետային զինձառայողի) դուրս գալը կատարվում է գորամասի հրամանատարի թույլտվությամբ:

(245-րդ հոդվածը փոփ., լրաց. 01.06.06 ՀՕ-127-Ն)

Հոդված 246. Ժամկետային ծառայության զինձառայողը, եթե նրան տրված չեն «գորամասի տեղաբաշխման վայրից հերթական արձակումից զրկում» կամ «կարգապահական վաշտ ուղարկելը»

կարգապահական տույժերը, շաբաթական մեկ անգամ գնդի տեղակայման վայրից արձակվելու իրավունք ունի: Զինձառայողների արձակուրդը պետք է կարգավորվի ստորաբաժանումների միջև այն հաշվով, որ չթուլանա մարտական պատրաստությունը և չընկնի մարտական հերթապահության որակը:

Ժամկետային ծառայության զինվորներին ու սերժանտներին վաշտի հրամանատարը արձակում է գնդի տեղակայման վայրից՝ գնդի հրամանատարի նշանակած օրը և ժամին՝ նրա սահմանած կարգով: Ստորաբաժանումից միաժամանակ կարող է արձակվել ժամկետային ծառայության զինձառայողների 30 տոկոսից ոչ ավելին: Առաջին տարվա ծառայության զինձառայողները գնդի տեղակայման վայրից արձակվում են միայն զինվորական երդում տալուց հետո: Շաբաթ և նախատոնական օրերին արձակուրդը թույլատրվում է մինչև 24.00-ը, իսկ կիրակի և տոնական օրերին՝ մինչև երեկոյան ստուգումը (անվանական):

Գումարտակի հրամանատարի թույլտվությամբ վաշտի հրամանատարը ժամկետային ծառայության զինձառայողներին հարգելի պատճառով կարող է արձակել նաև շաբաթվա մյուս օրերին՝ ուսումնական պարապմունքներից հետո մինչև քունը կամ մինչև հաջորդ օրվա առավոտը (բայց պարապմունքներն սկսվելուց առնվազն 2 ժամ առաջ):

Արձակուրդը կատարվում է ըստ հերթականության: Արձակման հերթականությունը կարգավորում են դասակների հրամանատարների տեղակալները:

Հանգստյան և տոնական օրերին մարտական հերթապահության և օրվա վերակարգում ծառայության կատարման համար զինձառայողներն ու սերժանտները չեն արձակվում:

Ժամկետային ծառայության զինվորների արձակումն իբրև խրախուսանք կատարվում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագրքի պահանջներին համապատասխան:

(246-րդ հոդվածը փոփ. 19.03.13 ՀՕ-20-Ն)

Հոդված 247. Արձակման թույլտվություն ստանալու համար զինձառայողները դիմում են իրենց անմիջական պետին:

Օրինակ՝ «Պարոն սերժանտ, խնդրում եմ ինձ արձակել մինչև ժամը 20-ը»:

Ժամկետային ծառայության զինվորների և սերժանտների արձակման ցուցակները դասակների հրամանատարների տեղակալները ներկայացնում են վաշտի ավագին՝ վաշտի հրամանատարին զեկուցելու համար:

Հոդված 248. (մասն ուժը կորցրել է 01.06.06 ՀՕ-127-Ն)

Վաշտի հերթապահը նշանակված ժամին շարում է արձակվողներին, նրանց անունները գրանցում է համապատասխան գրքում (հավելված 12), կազմում նրանց ցուցակը և ներկայացնում գնդի հերթապահին:

Գնդի տեղաբաշխման վայրից արձակվող ժամկետային ծառայության զինվորներն ու սերժանտները պետք է ունենան զինվորական գրքույկ:

Արձակման գրությունը ուժի մեջ է միայն իր կայազորի սահմաններում:

(248-րդ հոդվածը փոփ., խմբ. 01.06.06 ՀՕ-127-Ն)

Հոդված 249. Արձակումից վերադառնալուն պես զինձառայողները ներկայանում են գնդի հերթապահին և զեկույց են տալիս իրենց վերադարձի մասին: Գնդի հերթապահը արձակման գրության մեջ նշում է վերադարձի ժամը: Այնուհետև նրանք գնում են ստորաբաժանում, ներկայանում վաշտի հերթապահին, նրան հանձնում արձակման գրությունները և զեկույց տալիս իրենց անմիջական պետին:

Օրինակ՝ «Պարոն սերժանտ, շաբաթային Պողոսյանը արձակումից վերադարձել է: Արձակման մեջ եղած ժամանակ նկատողություն եմ ստացել (կամ այսինչից ստացել եմ այս-այս նկատողությունը)»:

Եթե զինձառայողը ստորաբաժանում է գալիս քնի ազդարարումից հետո, ապա անմիջականորեն պետին զեկույց է տալիս հաջորդ օրը, առավոտյան ստուգումից առաջ:

Վաշտի հերթապահը արձակվողների գրքում նշում է արձակումից վերադարձների ներկայանալու ժամը և արձակման գրությունները հանձնում վաշտի ավագին:

Հոդված 250. Ռազմական ուսումնական հաստատության տարածքից առաջին կուրսի կուրսասնների արձակումը կատարվում է նույն կարգով, ինչ ժամկետային ծառայության զինվորներինն ու սերժանտներինը: Երկրորդ կուրսի կուրսասնների արձակման կարգը սահմանվում է ռազմաուսումնական հաստատության պետի կողմից:

Երրորդ և բարձր կուրսերի կուրսաստները, ինչպես նաև հանրակացարաններում բնակվելու իրավունք ունեցող կուրսաստները կարող են զինվորական ուսումնական հաստատության տարածքից դուրս գտնվել օրվա կանոնակարգով սահմանված ուսումնական պարապմունքներից և ինքնուրույն աշխատանքի համար պարտադիր ժամերից հետո մինչև ժամը 24-ը, իսկ ընտանիքավոր կուրսաստները՝ մինչև հաջորդ օրվա ուսումնական պարապմունքների սկիզբը:

(250-րդ հոդվածը փոփ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 251. Բնակավայրերից հեռու գտնվող գորամասերում (առանձին ստորաբաժանումներում) և այլ դեպքերում, երբ նշված կարգով արձակումներն անպատակահարմար են, գորամասի (առանձին ստորաբաժանման) հրամանատարի որոշումով հանգստյան օրերին կազմակերպվում են խմբային ուղևորություններ դեպի մերձակա խոշոր բնակավայրերը (քաղաքները):

Ստորաբաժանումների (անձնախմբերի) մեկնումը և շարժը (ընթացքը)

Հոդված 252. Ծառայողական գործուղումների համար, որպես կանոն, առանձնացվում են ստորաբաժանումներ՝ իրենց հրամանատարների գլխավորությամբ: Տարբեր ստորաբաժանումներից գործուղման ուղարկվող զինվորներից ու սերժանտներից ստեղծվում է անձնախումբ և սերժանտներից, ենթասպաններից կամ սպաններից նշանակվում է անձնախմբի պետ: Ստորաբաժանման հրամանատարին (անձնախմբի պետին) գնդում տրվում են գործուղման վկայական և ստորաբաժանման (անձնախմբի) անձնակազմի ցուցակը, ուր նշվում է զենքի տեսակն ու հրամանը, զինամթերքի քանակը: Դրանք հաստատվում են գնդի շտաբի ստորագրությամբ և գորամասի՝ զինանշանով ու կնիքով: Ստորաբաժանման հրամանատարին (անձնախմբի պետին), դրանից բացի, ցուցումներ են տրվում ընթանալու և ճանապարհներին սնվելու կարգի մասին, երբ, ուր և ում ենթակայությանը պետք է ներկայանա ստորաբաժանումը (անձնախումբը), անվտանգության պահանջների, զենքի պահպանման և կիրառման պահանջների մասին, ինչպես նաև ստորաբաժանման (անձնախմբի) կողմից ծառայության կատարման հետ կապված այլ ցուցումներ:

(252-րդ հոդվածը փոփ. 01.06.06 ՀՕ-127-Ն)

Հոդված 253. Ծառայողական գործուղման համար առանձնացված ստորաբաժանման (անձնախմբի) մեկնման նախապատրաստական աշխատանքներն իրականացնում է այն հրամանատարը, որի ստորաբաժանումից առանձնացվել է գործուղման մեկնող անձնակազմը:

Սահմանված ժամին ստորաբաժանումը (անձնախումբը) ստորաբաժանման նշանակված հրամանատարի (անձնախմբի պետի) ղեկավարությամբ ներկայանում է գնդի հերթապահին: Գնդի հերթապահն ստուգում է ստորաբաժանման (անձնախմբի) կազմն ու ապահովվածությունը և նրա պատրաստ լինելու մասին զեկուցում շտաբի պետին կամ գնդի հրամանատարին:

Շտաբի պետը կամ գնդի հրամանատարը զննում են ստորաբաժանումը (անձնախումբը), ստուգում նրա պատրաստությունը, հրահանգավորում ստորաբաժանման հրամանատարին (անձնախմբի պետին), իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև ողջ անձնակազմին, ապահովում են ստորաբաժանման (անձնախմբի) ժամանակին մեկնումը՝ անհրաժեշտ դեպքում հատկացնելով փոխադրամիջոցներ:

(253-րդ հոդվածը խմբ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 254. Ստորաբաժանման հրամանատարը (անձնախմբի պետը) պատասխանատու է անձնակազմի զինվորական կարգապահության և կարգուկանոնի պահպանման, առաջադրանքի ժամանակին կատարման համար, ինչպես նաև զենքի, զինամթերքի և զինվորական այլ ունեցվածքի անվնասության համար:

Նշանակված վայրը ներկայանալուն պես ստորաբաժանման հրամանատարը (անձնախմբի պետը) զեկուցում է այն անձին, որի ենթակայությանը ներկայացել է ստորաբաժանումը (անձնախումբը), իսկ վերադառնալուն պես՝ գնդի շտաբի պետին:

(254-րդ հոդվածը փոփ. 01.06.06 ՀՕ-127-Ն)

Հոդված 255. Մեքենաներով ուղևորվելիս՝ ստորաբաժանումների հրամանատարները (անձնախմբերի պետերը) կատարում են շարայան պետի (մեքենայի ավագի) պարտականությունները՝ շարադրված 378 հոդվածում:

Արգելվում է անձնակազմի փոխադրումը չսարքավորված, իսկ ձմեռ ժամանակ՝ բաց մեքենաներով:



Երկաթուղային, ծովային, գետային և օդային տրանսպորտով ուղևորվելիս ղեկավարվել նույն Կանոնագրքի 12-րդ գլխում շարադրված ցուցումներով:

Հոդված 256. Վաշտի զինվորներն ու սերժանտները կայագործի սահմանները ծառայողական առաջադրանքների կատարման, ինչպես նաև կինո, թատրոն և հասարակական այլ հիմնարկներ են գնում խմբով՝ սպաներից, ենթասպաներից կամ սերժանտներից վաշտի հրամանատարի նշանակած ավագի գլխավորությամբ:

Սպաներից կամ ենթասպաներից նշանակված ավագը հավաքում է խմբի ողջ անձնակազմը, շարում և գնում է, կազմում է ցուցակը և անձնախմբի պատրաստ լինելու մասին զեկուցում վաշտի հրամանատարին կամ նրան փոխարինող անձին: Թույլտվություն ստանալով՝ նա անձնախումբը տանում է նշանակված վայրը:

Սերժանտներից նշանակված ավագը շարում է անձնախումբը և այն ներկայացնում վաշտի ավագի կամ նրան փոխարինող անձի գնմանը, նրանից ստանում իր արձակման գրությունը և խմբի ցուցակը՝ վաշտի հրամանատարի ստորագրությամբ: Ավագի հետ մեկնողների ընդհանուր թիվը նշվում է նաև նրա արձակման գրության մեջ: Այնուհետև ավագն անձնախումբը ներկայացնում է գնդի հերթապահին:

Հոդված 257. Ստորաբաժանումից երկու և ավելի զինծառայողների մեկնումի դեպքում նրանցից մեկը ավագ է նշանակվում: Երեք և ավելի մարդուց բաղկացած անձնախմբերը նշանակման վայր են ուղևորվում շարքով ավագի ղեկավարությամբ (բացի հանգստի համար հասարակական հիմնարկներ ուղևորվելու դեպքերից):

Դժբախտ դեպքերից խուսափելու նպատակով հետիոտն զորաշարքով ընթանալիս՝ անձնախմբերը շարքի առջևում և վերջում զիշերը պետք է ունենան ազդանշանային լապտերներ, իսկ ցերեկը՝ ազդանշանային դրոշակներ:

#### Զինծառայողներին այցելելը

Հոդված 258. Ժամկետային զինծառայողներին այցելելու թույլտվությունը տալիս է վաշտի հրամանատարը օրվա կանոնակարգով սահմանված ժամին և այդ նպատակով գնդում առանձնացված այցելուների սենյակում (տեղում):

Հոդված 259. Գնդի հրամանատարի հրամանով՝ զինծառայողներին այցելելու համար սահմանված ժամերին սերժանտներից նշանակվում է այցելուների սենյակի հերթապահ: Նրա իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են գնդի հրամանատարի հաստատած հրահանգում:

Զինծառայողներին այցելելու ցանկություն ունեցող այցելուներին սենյակ մտնելու թույլտվություն է տալիս գնդի հերթապահը:

Հոդված 260. Զինծառայողների ընտանիքների անդամները և այլ անձինք գնդի հրամանատարի թույլտվությամբ կարող են այցելել զորանոց, ճաշարան, զորամասի մարտական փառքի (պատմության) սենյակ և այլ շինություններ՝ գնդի անձնակազմի կյանքին և կենցաղին ծանոթանալու:

Նրանց ուղեկցելու և անհրաժեշտ բացատրություններ տալու համար նշանակվում են այդ նպատակով նախատեսված զինծառայողներ:

Հոդված 261. Ոգելից խմիչք ունեցող կամ ոչ սթափ վիճակում գտնվող այցելուները զինծառայողների մոտ չեն թույլատրվում: Կողմնակի անձանց չի թույլատրվում զիշերել զորանոցներում և ուրիշ շինություններում (հոդված 166):

## Գ Լ ՈՒ Խ 6

### ՕՐՎԱ ՎԵՐԱԿԱՐԳ

#### Ընդհանուր դրույթներ

Հոդված 262. Օրվա վերակարգը նշանակվում է զորամասի (ստորաբաժանման) ներքին կարգուկանոնի, անձնակազմի, սպառազինության, ռազմական տեխնիկայի և զինամթերքի, շինությունների և ունեցվածքի պահպանման, ստորաբաժանումում զործերի վիճակի վերահսկման և իրավախախտումները կանխող միջոցների ժամանակին ձեռնարկման համար, ինչպես նաև ներքին ծառայության գծով այլ պարտականությունների կատարման համար:

Հոդված 263. Օրվա վերակարգի կազմը հայտնվում է գնդի հրամանատարի հրամանով՝ ուսուցման փուլի համար. նախատեսվում է գնդի վերակարգի հետևյալ կազմը.

գնդի հերթապահ,  
գնդի հերթապահի օգնական,  
պահակախումբ,

հավաքակայանի հերթապահ և օրապահներ, ինչպես նաև  
հերթապահ քարշակների վարորդներ (վարորդներ),  
հերթապահ բժիշկ կամ բուժակ և բուժկետի օրապահներ,  
հսկիչ-անցագրային կետի հերթապահ և հերթապահի օգնականներ,  
ճաշարանի հերթապահ և ճաշարանում աշխատողներ,  
գնդի շտաբի հերթապահ,  
հերթապահ փողհար-թմբկահար,  
ցրիչներ (թղթատարներ),  
հրշեջ վերակարգ:

Ամեն օր գնդի հրամանատարի հրամանով նշանակվում են գնդի  
հերթապահը, գնդի հերթապահի օգնականը, պահակախմբի պետը,  
հսկիչ-անցագրային կետի հերթապահը, հերթապահ բժիշկը,  
հավաքակայանի հերթապահը, հերթապահ ստորաբաժանումը, ինչպես  
նաև այն ստորաբաժանումները, որոնցից առանձնացվում են գնդի  
օրվա վերակարգը և աշխատանքի վերակարգը: Անհրաժեշտության  
դեպքում գնդի հրամանատարն իրավունք ունի կրճատել օրվա  
վերակարգի կազմը:

Կապի հանգույցներում, բուժկետներում և զինվորական  
ավտոտեսչությունում ծառայության նշանակված սպաները,  
ենթասպաները և պայմանագրով ծառայության անցած  
զինծառայողները ուրիշ վերակարգի կազմում չեն նշանակվում:

(263-րդ հոդվածը փոփ., լրաց. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 264. Խաղաղ ժամանակ կին զինծառայողները օրվա  
վերակարգի կազմում չեն նշանակվում, բացառությամբ  
հանրակացարանի օրվա վերակարգի: Անհրաժեշտության դեպքում  
նրանք ըստ իրենց զինվորական կոչման և զբաղեցրած պաշտոնի,  
կարող են նշանակվել որպես հերթապահ բժիշկ (բուժակ), շտաբի  
հերթապահ և թղթատար (ցրիչ):

Կին զինծառայողները հերթապահության են նշանակվում նաև ըստ  
մասնագիտության:

(264-րդ հոդվածը փոփ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 265. Վաշտի օրվա վերակարգում նշանակվում են.  
վաշտի հերթապահ,

վաշտի օրապահներ:

Վաշտում օրապահների հերթափոխերի քանակը որոշում է գնդի  
հրամանատարը:

Կին զինծառայողների հանրակացարանի օրվա վերակարգի կազմը  
և նրա պարտականությունները որոշվում են՝ էլենելով վաշտի օրվա  
վերակարգից:

Հոդված 266. Որոշ գումարտակներում նրանց թվաքանակով և  
տեղակայման հանգամանքներով պայմանավորված՝ վաշտերի  
հերթապահների փոխարեն գնդի հրամանատարի որոշմամբ կարող է  
նշանակվել գումարտակի հերթապահ, իսկ գնդի ապահովման  
ստորաբաժանումներում, նրանց համատեղ տեղակայման դեպքում՝  
այդ ստորաբաժանումների հերթապահ:

Վերոհիշյալ դեպքերում օրապահների քանակը որոշվում է՝ էլենելով  
ստորաբաժանումների տեղակայման, պահպանության,  
մատակարարման և ներքին կարգուկանոնի պահպանման  
պայմաններից:

(266-րդ հոդվածը փոփ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 267. Բոլոր հերթապահները և նրանց օգնականները կրծքի  
ձախ կողմում (ձախ թևին) պետք է ունենան կրծքանշան (թևկապ)՝  
համապատասխան մակագրությամբ (Հավելված 14): Նախկին  
հերթապահը կրծքանշանը (թևկապը) նոր հերթապահին է փոխանցում  
հերթապահության հանձնման և ընդունման զեկույցից հետո:

Հոդված 268. Սպաներից և ենթասպաներից նշանակված գնդի  
հերթապահը, գնդի հերթապահի օգնականը, հավաքակայանի  
հերթապահը, հսկիչ-անցագրային կետի հերթապահը, գնդի շտաբի  
հերթապահը զինվում են երկու լիցքավորված պահեստատուփ ունեցող  
ատրճանակներով:

Սերժանտներից նշանակված հավաքակայանի հերթապահը, հսկիչ-  
անցագրային կետի հերթապահը, գնդի շտաբի հերթապահը, ինչպես  
նաև հսկիչ-անցագրային կետի հերթապահի օգնականները,  
ստորաբաժանումների հերթապահներն ու օրապահները, բացի  
հանրակացարանի օրվա վերակարգի կազմի մեջ մտնող կին  
զինծառայողներից, հավաքակայանի օրապահներն ու թղթատարները  
(ցրիչները) զինվում են սվին-դանակներով: Սվին-դանակը պետք է  
գտնվի կաշեգոտու ձախ կողմում՝ ճարմանդից ափաչափ հեռու:

Անհրաժեշտության դեպքում կայագործի պետի հրամանով որոշ գործամասերում հսկիչ-անցագրային կետի օրապահներն ու հերթապահները, վաշտի օրվա վերակարգը և հավաքակայանի օրապահները կարող են զինվել երկու լիցքավորված պահեստատուփ (պահունակով 30 փամփուշտ) ունեցող ավտոմատներով (կարաֆիններով): Ջենքի հետ վարվելու կարգը, ինչպես նաև նրա օգտագործումն իրականացվում է սույն Կանոնագրքի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կայագործային և պահակային ծառայությունների կանոնագրքի դրույթների պահանջներին համապատասխան:

(268-րդ հոդվածը փոփ. 19.03.13 ՀՕ-20-Ն)

### Աշխատանքի վերակարգը

Հոդված 269. Զինծառայողների աշխատանքի վերակարգի համար տրված հրամանում նշվում է, թե որ ստորաբաժանումներն են նշանակվում աշխատանքի, աշխատանքի տեսակը, նրա տևողությունը, ինչպես նաև երբ, ուր և ում տնօրինությունը պիտի ներկայանան ստորաբաժանումները: Աշխատանքի համար առանձնացված ստորաբաժանումները աշխատանքի են ներկայանում իրենց հրամանատարի կամ սպաներից, ենթասպաներից, սերժանտներից նշանակված հրամանատարի կամ ավագի գլխավորությամբ:

Չնախատեսված աշխատանքների կատարման համար վերակարգի նշանակումն իրականացնում է գնդի շտաբի պետը:

Հոդված 270. Աշխատանքների կազմակերպման և անվտանգության ապահովման համար պատասխանատու է այն պետը, որին ի տնօրինություն ժամանել է ստորաբաժանումը: Ստորաբաժանման հրամանատարը (անձնախմբի ավագը) պարտավոր է վերահսկել անձնակազմի կողմից անվտանգության պահանջների պահպանումը:

Արգելվում է կին զինծառայողներին նշանակել այնպիսի աշխատանքների, որոնք կապված են աշխատանքային օրենսդրությամբ նրանց համար սահմանված առավելագույն նորմերը գերազանցող ծանրությունների տեղափոխման և տեղաշարժման հետ:

### Հերթապահ ստորաբաժանումը

Հոդված 271. Հերթապահ ստորաբաժանումը նշանակվում է պահակախմբերի ուժեղացման կամ հրդեհների, տարերային աղետների և այլ պատահարների ժամանակ շտապ կանչերի համար:

Արգելվում է հերթապահ ստորաբաժանումներն օգտագործել գնդի տեղակայման վայրից դուրս տնտեսական աշխատանքներ կատարելու համար:

Հերթապահ ստորաբաժանումը ենթարկվում է գնդի հերթապահին:

Հոդված 272. Տագնապ հայտարարվելու (կանչի) դեպքում հերթապահ ստորաբաժանումը շարվում է իրեն հատկացված տեղում և գործում է գնդի հերթապահի ցուցումով:

Հերթապահ ստորաբաժանմանը փամփուշտներ տրվում են միայն գնդի հերթապահի հրամանով:

Հոդված 273. Հերթապահ ստորաբաժանման հետ պարապմունքներ անցկացվում են գնդի տեղակայման վայրի մերձակայքում: Հերթապահ ստորաբաժանման գտնվելու վայրը և նրան կանչելու կարգը պետք է հայտնի լինեն գնդի հերթապահին:

Ծառայության գծով վերակարգերի նշանակման կարգը և դրանց մասին հաշվետվությունը

Հոդված 274. Ստորաբաժանումները վերակարգ են նշանակվում իրենց հրամանատարների հետ միասին:

Ենթասպաների, սպաների և գնդի ստորաբաժանումների միջև վերակարգերի հերթականությունը սահմանում է գնդի շտաբի պետը:

Վաշտում դասակների միջև վերակարգի հերթականությունը սահմանում է վաշտի ավագը, իսկ դասակում՝ դասակի հրամանատարի տեղակալը:

Հերթական վերակարգերի թիվը զինվորների, սերժանտների, ենթասպաների և սպաների միջև պետք է բաշխվի հավասարաչափ և արդար:

Առանձին ժամանակահատվածներում տարբեր զինծառայողների ծառայողական խնդիրների ծավալի մեծ տարբերությունների դեպքում առավել զբաղված սպաների և ենթասպաների համար վերակարգերի

թիվը այդ ժամանակահատվածում կարող է պակասեցվել գնդի հրամանատարի որոշմամբ:

Հոդված 275. Վերակարգերի թերթիկները լրացնում են ամեն ամսվա համար առանձին (Հավելված 12)՝

զինծառայողների համար՝ դասակների հրամանատարների տեղակալները.

սերժանտների համար՝ վաշտի ավագը.

գնդի վարչության և առանձին ստորաբաժանումների ենթասպաների և սպաների, ինչպես նաև գումարտակների հրամանատարների և նրանց տեղակալների համար՝ գնդի շտաբում, մյուս ենթասպաների և սպաների համար՝ գումարտակների շտաբներում:

Վերակարգերի թերթիկները պահվում են մեկ տարի, որից հետո ոչնչացվում են:

Օրվա վերակարգի նախապատրաստումը

Հոդված 276. Ջորամասի շտաբը նոր ամսվա սկզբից 5-6 օր առաջ ստորաբաժանումների հրամանատարներին հայտնում է օրվա վերակարգի կազմը և այն ստանձնելու օրը:

Հոդված 277. Այն ստորաբաժանումների հրամանատարները, որոնցից նշանակվում է օրվա վերակարգը, պատասխանատու են վերակարգի անձնակազմի ընտրության, ծառայությանը նրա նախապատրաստման, գնդի համապատասխան պաշտոնատար անձանց մոտ ժամանակին պարապմունքների (հրահանգավորման), հերթափոխման ներկայացնելու համար:

Հոդված 278. Վերակարգի նախընթաց գիշերը օրվա վերակարգ նշանակված անձինք պետք է ազատվեն բոլոր պարապմունքներից և աշխատանքներից: Արտահաստիքային հրշեջ խմբից նշանակված հրշեջ վերակարգը գնդի տարածքում անցկացվող պարապմունքներից ու աշխատանքներից չի ազատվում:

Հոդված 279. Վերակարգը ստանձնելու օրը կանոնակարգով սահմանված ժամերին անձնակազմին պետք է տրվի առնվազն 3 ժամ, իսկ մեկօրյա ընդմիջումով պահակային ծառայություն ստանձնելու դեպքում՝ առնվազն 4 ժամ ծառայությանը նախապատրաստվելու, այդ

թվում՝ գործնական պարապմունքների անցկացման համար, և առնվազն մեկ ժամ՝ հանգստի (քնի) համար:

(279-րդ հոդվածը փոփ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 280. Օրվա վերակարգի անձնակազմի նախապատրաստումը, բացի վաշտից (մարտկոցից) նշանակված պահակախմբից, իրականացնում է ստորաբաժանման ավագը կամ նշանակված այլ պաշտոնատար անձ: Գումարտակից (դիվիզիոնից) կամ գորամասից նշանակված օրվա վերակարգի նախապատրաստումը կազմակերպում են համապատասխան հրամանատարները և անցկացնում նրանց տեղակալները:

Պահակախմբի նախապատրաստումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կայագորային և պահակային զինծառայողների կանոնադրքին համապատասխան:

(280-րդ հոդվածը փոփ. 19.03.13 ՀՕ-20-Ն)

Հոդված 281. Օրվա վերակարգի՝ գնդի հրամանով որոշված անձինք, իրենց ծառայողական նշանակությանը (դերին) համապատասխան, սահմանված ժամին պարապմունքների (հրահանգավորման) են ներկայանում գնդի հրամանատարի տեղակալի կամ գնդի հրամանատարի այլ նպատակով նշանակված պաշտանատար այլ անձանց:

Պարապմունքների (հրահանգավորման) ժամանակ ուսումնասիրվում են զինվորական կանոնադրությունների, հրահանգների և անվտանգության պահանջների դրույթները և ստուգվում է վերակարգի անձնակազմի՝ իր հատուկ պարտականությունների իմացությունը:

Գործնական պարապմունքներն անցկացվում են վերակարգը ստանձնելու օրը՝ օրվա կանոնակարգով սահմանված ժամերին, օրվա վերակարգի ծառայության կատարման համար կահավորված շինություններում (տեղերում), ստորաբաժանման տարածքում կամ ծառայության կատարման տեղում:

Հոդված 282. Օրվա վերակարգի որոշ անձանց ավտոմատներով (կարաբիններով) զինելիս՝ անհրաժեշտության դեպքում զենքի կիրառմամբ գործողությունների հետ կապված պարապմունքներ են անցկացվում:

(282-րդ հոդվածը փոփ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հողված 283. Հերթափոխի անցնելուց 15 րոպե առաջ օրվա վերակարգը պետք է պատրաստ լինի ծառայությանը և իր հերթապահների ու գնդի պահակապետի կողմից ընդունված լինի նրանց ենթակայության տակ:

Օրվա վերակարգի հերթափոխումը

Հողված 284. Օրվա վերակարգի հերթափոխումը կատարվում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կայագորային և պահակային ծառայությունների կանոնագրքի պահանջներին համապատասխան:

Հերթափոխումը անցկացնում է գնդի նոր հերթապահը գնդի հրամանատարի սահմանած ժամանակ:

(284-րդ հոդվածը փոփ. 19.03.13 ՀՕ-20-Ն)

Հողված 285. Հերթափոխումից 10 րոպե առաջ գնդի հերթապահի սպաների թվից նոր նշանակված օգնականը օրվա վերակարգի անձնակազմը, բացի հերթապահ ստորաբաժանումից, կին զինծառայողների հանրակացարանի վերակարգից, ճաշարանի և հրշեջ վերակարգերից, շարում է դրա համար սահմանված տեղում, ստուգում նրա առկայությունը և գնդի հերթապահի ներկայանալուն պես զեկուցում նրան:

Եթե գնդի հերթապահի օգնականը ենթասպա է, ապա օրվա վերակարգը շարում և գնդի հերթապահին զեկույց է տալիս օրվա վերակարգի անձնակազմի սպաներից մեկը:

Հողված 286. Հերթափոխի համար օրվա վերակարգը շարվում է. աջ թևում՝ պահակախմբերը, այնուհետև աջից ձախ՝ հավաքակայանի հերթապահը, հերթապահ բժիշկը (բուժակը), հսկիչ-անցագրային կետի հերթապահը, գնդի շտաբի հերթապահը, վաշտերի բոլոր հերթապահները՝ ստորաբաժանումների կարգով, թղթատարները (ցրիչները), ճաշարանի հերթապահը, հրշեջ վերակարգի պետը և հերթապահ փողհար-թմբկահարը: Հսկիչ-անցագրային կետի հերթապահի օգնականները, օրապահները և հերթապահ քարշակների մեխանիկ-վարորդները (վարորդները) շարվում են իրենց հերթապահների թիկունքում. գնդի հերթապահի օգնականը կանգնում է պահակախմբերի աջ թևում:

(286-րդ հոդվածը փոփ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Օրվա վերակարգի անձանց պարտականությունները

Ընդհանուր դրույթներ

Հողված 287. Օրվա վերակարգի բոլոր անձինք պետք է գիտենան, ճիշտ և բարեխղճորեն կատարեն իրենց պարտականությունները՝ համառորեն ձգտելով կանոնակարգի կատարմանը և ներքին կարգունկաննի այլ պայմանների պահպանմանը:

Օրվա վերակարգի անձինք իրավունք չունեն դադարեցնել կամ ուրիշին հանձնել իրենց պարտականությունների կատարումը առանց գնդի հերթապահի թույլտվության:

Հողված 288. Երբ ստորաբաժանում են գալիս պետերը, սկսած գնդի հրամանատարներից և ավելի բարձր, ստորաբաժանումների հերթապահները պարտավոր են այդ մասին անհապաղ զեկուցել գնդի հերթապահին:

Հողված 289. Գնդի հերթապահին և նրա օգնականին հերթով, ինչպես նաև վաշտի հերթապահին թույլատրվում է գնդի հրամանատարի սահմանած ժամանակ չորսական ժամ պառկած հանգստանալ (քնել) առանց կոշիկների, հագուստը և հանդերձանքը չհանած:

Օրապահների ազատ հերթափոխին թույլատրվում է հերթով պառկած հանգստանալ (քնել) միայն քնի ազդարարումից մինչև վերկացը՝ առանց հագուստի:

Հավաքակայանի, հսկիչ-անցագրային կետի և ճաշարանի հերթապահներին, հերթապահ բուժակին (սանհրահանգչին), գնդի շտաբի հերթապահին և փողհար-թմբկահարին թույլատրվում է գիշերը պառկած հանգստանալ (քնել) առանց կոշիկների, հանդերձանքով և հագուստով:

Հողված 290. Օրվա վերակարգի հերթափոխը հանձնած զինծառայողները հերթը հանձնելու օրը ազատվում են պարապմունքներից և աշխատանքներից:

Հանգստյան և տոնական օրվա օրական վերակարգում եղած սպաներին և ենթասպաներին շաբաթվա ընթացքում հանգստյան օր է հատկացվում:

## Գնդի հերթապահը

Հոդված 291. Գնդի հերթապահը նշանակվում է գնդի վարչության և գումարտակների սպաներից, վաշտերի հրամանատարներից և նրանց համահավասար անձանցից: Նա պատասխանատու է գնդի ստորաբաժանումներին և վարչությանը տազնապի ազդարարման մասին ժամանակին ծանուցելու, գնդում ներքին կարգուկանոնի պահպանման և օրվա վերակարգի ծառայության կատարման համար, ինչպես նաև գնդի շտաբի և ծառայությունների սպաների և ենթասպաների ատրճանակների և զինամթերքի պահպանման համար: Գնդի հերթապահը ենթարկվում է գնդի հրամանատարին: Նրան է ենթարկվում գնդի ամբողջ օրվա վերակարգը:

Առանձին գումարտակներում և նրանց համահավասար զորամասերում թույլատրվում է զորամասի հերթապահ նշանակել դասակի հրամանատարներին, ինչպես նաև գումարտակի շտաբի և ծառայությունների ենթասպաներին:

Գնդի ներքին պահակախմբերի վերաբերմամբ գնդի հերթապահը ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կայազորային և պահակային ծառայությունների կանոնագրքի՝ պահակախմբերի հերթապահի մասին դրույթներով:

(291-րդ հոդվածը փոփ. 19.03.13 ՀՕ-20-Ն)

Հոդված 292. Հերթափոխումից առաջ նոր հերթապահը նշանակված ժամին ներկայանում է գնդի շտաբի պետին՝ հրահանգավորման և նշանաբառը (պայմանաբառը) ստանալու: Հերթափոխման ժամանակ գնդի նոր հերթապահը ստուգում է օրվա վերակարգի թվակազմը, սպառազինությունը, օրվա վերակարգի համար սահմանված համազգեստը, իրենց պարտականությունների իմացությունը, ցուցումներ է տալիս բացահայտված թերությունները վերացնելու համար և ներկայացնում հաջորդ օրվա համազգեստը:

Հերթափոխումից հետո նոր հերթապահը նախկին հերթապահից ընդունում է փաստաթղթերը (Հավելված 10), ինչպես նաև գնդի շտաբի և ծառայությունների սպաների ու ենթասպաների զենքն ու զինամթերքը: Չենքն ընդունում է հատ-հատ՝ համարներով և լրակազմով: Այնուհետև գնդի նախկին հերթապահի հետ համատեղ նա ստուգում է ծանուցման և ռադիոհաղթի ու քիմիական հետախուզության սարքերը, պահպանության տեխնիկական միջոցների սարքիչությունը,

կարգապահական վաշտ ուղարկվածների հաշվառման մատյանով ճշտում է կարգապահական վաշտ ուղարկվածների թվաքանակը և կարգապահական վաշտում նրանց գտնվելու ժամկետները:

(292-րդ հոդվածը փոփ. 14.04.11 ՀՕ-124-Ն, 19.03.13 ՀՕ-20-Ն)

Հոդված 293. Հերթապահության հանձնումից-ընդունումից և պահակախմբերի հերթափոխման մասին պահակապետերի զեկույցներից հետո նախկին և նոր հերթապահները զեկույցով ներկայանում են գնդի հրամանատարին:

Օրինակ՝ «Պարոն գնդապետ, ավագ լեյտենանտ Մելքոնյանը գնդի հերթապահությունը հանձնել է»: «Պարոն գնդապետ, կապիտան Մահակյանը գնդի հերթապահությունը ընդունել է»:

Այնուհետև գնդի նոր հերթապահը հայտնում է հերթապահության ընդունման ժամանակ բացահայտված բոլոր թերությունները, որոնք չէին կարող վերացվել փոխվող վերակարգի կողմից:

(293-րդ հոդվածը փոփ. 01.06.06 ՀՕ-127-Ն)

Հոդված 294. Գնդի հերթապահը պարտավոր է՝

- տազնապի ազդանշանը ստանալով անհապաղ տալ ստորաբաժանումների վերկացի ազդանշանը, զեկույցել գնդի հրամանատարին, ծանուցել նրա տեղակալներին և այլ պաշտոնատար անձանց ու մինչև նրանց ժամանումը ղեկավարել ստորաբաժանումների էլքը դեպի հավաքակետեր:

(պարբերությունն ուժը կորցրել է 14.04.11 ՀՕ-124-Ն)

- զորահավաքի ծանուցումը ստանալուն պես այդ մասին անհապաղ զեկույցել գնդի հրամանատարին ու շտաբի պետին և գործել նրանց ցուցումներին ու հրահանգներին համապատասխան:

- գնդի վարչության սպաներին և ենթասպաներին անձնական զենք և զինամթերք, ռադիոակտիվ ճառագայթման անհատական դոզաչափեր հատկացնել զենքի և զինամթերքի բացթողման համար սահմանված կարգով՝ ստորագրությամբ, իսկ տազնապի դեպքում՝ փոխարինման քարտերով: Ստորաբաժանումներում զենքի պահասենյակների ազդանշանային համակարգի չհիմնավորված գործելու դեպքում գնդի հերթապահը պարզում է դրա պատճառը և կազմակերպում ազդանշանային համակարգի անխափան աշխատանքը:

- թշնամու կողմից զանգվածային ոչնչացման զենք կիրառելու կամ ատոմային և քիմիական արդյունաբերության ձեռնարկություններում տեղի ունեցած վթարների հետևանքով ռադիոհաղթի և քիմիական

վտանգի առաջացման դեպքում գործել եղած հրահանգներին համապատասխան.

- հետևել ստորաբաժանումներում օրվա կանոնակարգի կատարմանը և ղեկավարել սահմանված ազդանշաններ տալը.

- օրական առնվազն երկու անգամ (մի անգամ՝ գիշերը) անձամբ ստուգել ստորաբաժանումներում օրվա վերակարգի ծառայության կատարումը և ներքին կարգուկանոնի պահպանումը, միջոցներ ձեռնարկել հանցագործությունները, պատահարները, գանգանքները կանխելու, անվտանգության պահանջների խախտումներ թույլ չտալու, ինչպես նաև բացահայտված թերությունները վերացնելու ուղղությամբ.

- մշտապես գիտենալ գնդի հրամանատարի գտնվելու վայրը, անհապաղ զեկուցել նրան գնդում տեղի ունեցած բոլոր պատահարների, ժամկետային ծառայության զինծառայողների ինքնակամ բացակայությունների և դրանց վերացման ուղղությամբ ձեռնարկված միջոցների մասին.

- գտնվել հերթապահի սենյակում, ծառայողական գործերով դուրս գալիս իր փոխարեն թողնել օգնականին և նրան հայտնել՝ ուր և որքան ժամանակով է գնում.

- գիտենալ ուսումնական դաշտերի շրջանները, ինչպես նաև վաշտերը որտեղ են անցկացնում պարապմունքները.

- տեղեկություններ ունենալ գնդի անձնակազմի, ինչպես նաև մարտական և տրանսպորտային մեքենաների բաշխման մասին, հավաքակայանի հերթապահի միջոցով վերահսկել մեքենաների վերադարձը հավաքակայան, գնդի հրամանատարին զեկուցել ուղերթում նրանց ուշացումների դեպքերի մասին, միջոցներ ձեռնարկել մեքենաների որոնման և դրանք հավաքակայան վերադարձնելու համար.

- ստուգել և ժամանակին ուղարկել գնդի նշանակած ստորաբաժանումները (խմբերը) և այդ մասին զեկուցել գնդի շտաբի պետին կամ հրամանատարին.

- ստուգել գնդի տեղակայման վայրից արձակվող ժամկետային ծառայության զինծառայողների արտաքին տեսքը և նրանց վերադարձի ժամանակի մասին նշումներ կատարել արձակման գրություններում, թղթատարներին (ցրիչներին) թույլատրել տեղաբաշխման սահմաններից դուրս գալ զինանշանով կնիքով հաստատված ծանուցման քարտերով.

(պարբերությունն ուժը կորցրել է 14.04.11 ՀՕ-124-Ն)

- գնդի տեղակայման տարածքում կամ նրա մերձակայքում հրդեհի բռնկման կամ տարերային աղետի դեպքում անհապաղ միջոցներ ձեռնարկել գնդի մարտական դրոշը, մարդկանց, սպառազինությունը, ռազմական տեխնիկան և նյութական միջոցները փրկելու համար, հրդեհի դեպքում հրշեջ խումբ կանչել և մինչև նրա ժամանումը կազմակերպել հրդեհի մարումը.

- նախքան կերակուրը բաժանելը բժշկի (բուժակի) հետ միասին ստուգել նրա որակը՝ համապատասխան գրանցումներ կատարելով պատրաստված կերակրի որակի վերահսկողության հաշվառման գրքում, թույլատրել նրա բաժանումը, կերակրի որակը կասկածի տակ առնելու դեպքում այդ մասին անհապաղ զեկուցել գնդի հրամանատարին, ճաշարանում անձամբ ներկա գտնվել կերակրի բաժանմանն ու ընդունելուն և վերահսկել այն ամբողջությամբ անձնակազմին հասցնելը.

- հետևել զորանոցներում և գնդի տարածքում մաքրությանն ու կարգուկանոնին.

- հատուկ դեպքերում ստորաբաժանումների հերթապահներին հրաման տալ կողպելու զորանոցների մուտքի դռները.

- օրվա ընթացքում գնդի հրամանատարի առաջին ժամանման դեպքում դիմավորել նրան, տալ «Զգա՛ստ» հրամանը և զեկուցել, իսկ հաջորդական ժամանումների դեպքում տալ «Զգաստ» հրաման և ներկայանալ:

Օրինակ՝ «Պարոն գնդապետ, իմ հերթապահության ընթացքում պատահարներ տեղի չեն ունեցել (կամ տեղի է ունեցել այս, այս): Գնդի հերթապահ կապիտան Սահակյան»:

Գնդի հրամանատարի տեղակալներին գնդի հերթապահը միայն ներկայանում է:

(294-րդ հոդվածը փոփ. 01.06.06 ՀՕ-127-Ն, փոփ., խմբ., լրաց. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 295. Գնդի հերթապահը երեկոյան ստուգումից (անվանականչից) և վերկացից հետո ստորաբաժանումների հերթապահներից զեկույցներ է ընդունում զորամասից բացակայողների, այդ թվում՝ կարգապահական վաշտում գտնվողների կամ զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողած կամ ժամանակին ծառայության չներկայացած զինծառայողների վերաբերյալ, որոնց ցուցակներն առավոտյան զեկույցից հետո ներկայացնում է գնդի հրամանատարին:

Իր հերթապահության ընթացքում օրվա վերակարգի ծառայության մեջ բացահայտված բոլոր թերությունների և գնդում ներքին կարգուկանոնի այն խախտումների մասին, որոնք չեն կարող վերացվել մինչև հերթապահության հանձնումը, գնդի հերթապահը գրառումներ է կատարում հերթապահության հանձնման և ընդունման գրքում (Հավելված 12): Գնդի հերթապահը հերթապահության հանձնման-ընդունման գիրքը ամեն օր ներկայացնում է գնդի հրամանատարին:

(295-րդ հոդվածը խմբ. 19.03.13 ՀՕ-20-Ն)

Հոդված 296. Գնդի հերթապահը դիմավորում և գնդի տարածքում ուղեկցում է՝

Հայաստանի Հանրապետության Նախագահին, ՀՀ Ազգային ժողովի նախագահին, ՀՀ վարչապետին և պետական կառավարման լիազորված մարմնի ղեկավարին (նախարարին), գեներալ-գնդապետներին, գնդի հրամանատարներից բարձր ուղղակի պետերին և տեսչական ստուգումների անցկացումը ղեկավարելու համար նշանակված անձանց:

Այդ անձանց դիմավորելիս՝ գնդի հերթապահը տալիս է «Զգա՛ստ» հրամանը և զեկուցում նրանց:

Օրինակ՝ «Պարոն գեներալ-գնդապետ, 2-րդ մոտոհրաձգային գունդը (այսինչ շրջանում) զբաղվում է մարտական պատրաստությամբ՝ պարապմունքների դասացուցակին համապատասխան: Գնդի հերթապահ կապիտան Կարապետյան»:

Վերոհիշյալ անձանց ժամանման մասին գնդի հերթապահն անհապաղ զեկուցում է գնդի հրամանատարին կամ նրան փոխարինողին:

Այն դեպքում, երբ ժամանած հրամանատարին (պետին) դիմավորում է գնդի հրամանատարը և զեկույց տալիս նրան, գնդի հերթապահը միայն ներկայանում է:

Վերը նշված գեներալների, ինչպես նաև այլ զորամասերի ավագ սպաների ժամանման դեպքում գնդի հերթապահը ներկայանում է նրանց:

Օրինակ՝ «Պարոն գեներալ մայոր: Գնդի հերթապահ կապիտան Պետրոսյան»: Այնուհետև նա ուղեկցում է նրանց գնդի հրամանատարի կամ նրան փոխարինողի մոտ:

Այլ զորամասերի մյուս զինծառայողներին, նրանց անձը և ժամանման նպատակները պարզելուց հետո, անհրաժեշտության դեպքում թույլատրվում է գունդ մտնել մեկանգամյա անցագրով:

(296-րդ հոդվածը փոփ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Գնդի հերթապահի օգնականը

Հոդված 297. Գնդի հերթապահի օգնականը նշանակվում է կրտսեր սպաներից կամ ենթասպաներից և ենթարկվում է գնդի հերթապահին: Նա պարտավոր է գիտենալ գնդի հերթապահի հրահանգը, կարողանալ գործածել գնդի հերթապահի մոտ եղած ծանուցման միջոցները, պահպանության տեխնիկական միջոցներն ու կապի միջոցները, ռադիոստանդարտի և քիմիական հետախուզության սարքերը, հերթապահի փոխարեն մնալիս կատարել նրա պարտականությունները:

Հոդված 298. Սպաներից նշանակված գնդի հերթապահի օգնականին ենթարկվում են օրվա վերակարգի բոլոր անձինք: Ներքին պահակախմբերի վերաբերմամբ նա ղեկավարվում է կայազորային և պահակային ծառայությունների կանոնագրքի՝ պահակախմբի հերթական օգնականի մասին դրույթներով:

Ենթասպաներից նշանակված գնդի հերթապահի օգնականին ենթարկվում են օրվա վերակարգի բոլոր անձինք, բացի սպաներից:

(298-րդ հոդվածը փոփ. 19.03.13 ՀՕ-20-Ն)

Հսկիչ-անցագրային կետի հերթապահը

Հոդված 299. Հսկիչ-անցագրային կետի հերթապահը նշանակվում է ենթասպաներից կամ սերժանտներից: Նա պատասխանատու է գունդ ժամանող (գնդից հեռացող) անձանց ներս թողնելու (դուրս գալու), ինչպես նաև որևէ ունեցվածքի դուրսբերման (ներկրման) ճշտության համար: Հսկիչ-անցագրային կետի հերթապահը ենթարկվում է գնդի հերթապահին և նրա օգնականին: Նրան են ենթարկվում հսկիչ-անցագրային կետի հերթապահի օգնականները:

Հերթապահության հանձնման և ընդունման մասին հին և նոր հերթապահները զեկուցում են գնդի հերթապահին:

(299-րդ հոդվածը լրաց. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 300. Հսկիչ-անցագրային կետի հերթապահը պարտավոր է՝  
- հերթափոխումից հետո ցուցակով ընդունել փաստաթղթերը, սարքավորումն ու գույքը (Հավելված 10).



- ստուգել գունդ ժամանողների անձը վկայող փաստաթղթերը, մեկանգամյա անցաթղթեր դուրս գրել այն անձանց թույլտվությամբ, որոնց ցուցակը հաստատված է գնդի հրամանատարի կողմից, ինչպես նաև գնդի հերթապահի ցուցումով.

- գնդի հերթապահին զեկուցել այն անձանց մասին, որոնց փաստաթղթերի ճշտությանը ինքը կասկածում է.

- ժամկետային ծառայության զինծառայողներին չթույլատրել գնդի տարածքից դուրս գալ առանց դրա իրավունքը տվող փաստաթղթի, սահմանված ձևով հագնված չլինելու դեպքում կամ թափփված տեսքով, իսկ հետիոտն շարքով գնացող խմբերին գիշերային ժամերին՝ առանց շարքի սկզբում և վերջում ազդանշանային լապտերների, իսկ ցերեկային ժամերին՝ առանց ազդանշանային դրոշակների.

- գտնվել հսկիչ-անցագրային կետում, գնդի հերթապահի թույլտվությամբ ծառայողական գործերով դուրս գալիս իր փոխարեն թողնել օգնականներից մեկին.

- հսկել իր օգնականների ծառայության կատարման ճշտությունը.

- գնդի հրամանատարի կամ նրա տեղակալների ժամանման դեպքում դիմավորել նրանց և ներկայանալ:

(300-րդ հոդվածը փոփ. 01.06.06 ՀՕ-127-Ն, 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 301. Հսկիչ-անցագրային կետի հերթապահը դիմավորում է այլ զորամասերի սպաներին և ներկայանում նրանց:

Օրինակ՝ «Պարոն գեներալ-մայոր: Հսկիչ-անցագրային կետի հերթապահ սերժանտ Հովհաննիսյան»:

Այնուհետև նա ժամանածների մասին անհապաղ զեկուցում է գնդի հերթապահին:

Հսկիչ-անցագրային կետի հերթապահի օգնականը

Հոդված 302. Հսկիչ-անցագրային կետի հերթապահի օգնականը նշանակվում է սերժանտներից և զինվորներից: Նա ենթարկվում է հսկիչ-անցագրային կետի հերթապահին:

Հերթապահի հերթական օգնականը անբացակա գտնվում է հսկիչ-անցագրային կետում և պատասխանատու է գունդ ժամանող անձանց ներս թողնելու, ինչպես նաև որևէ ունեցվածքի դուրսբերման կամ ներկրման ճշտության համար:

Հոդված 303. Հսկիչ-անցագրային կետի հերթապահի օգնականը պարտավոր է՝

- իր գնդի սպաներին, ենթասպաներին, պայմանագրով ծառայության անցած զինծառայողներին և կլին զինծառայողներին ներս թողնել անձնական վկայականներով, իսկ անձնապես (դեմքով) ճանաչելու դեպքում՝ առանց դրանց, ժամկետային ծառայության զինծառայողներին՝ արձակման գրություններով (արձակուրդային տոմսերով, գործուղման վկայականներով, կարգադրագրերով, ծանուցման քարտերով) այլ անձանց՝ անցագրերով.

- մշտական կամ մեկանգամյա անցագրերը ստուգելիս՝ դրանք համեմատել հսկիչ-անցագրային կետում եղած նշումների հետ, ստուգել լուսանկարի առկայությունը և համապատասխանությունը ներկայացնողին, հետևել, որպեսզի անցագրերը ժամկետանց չլինեն, իսկ մեկանգամյա անցագրերի վրա այցելուի դուրս գալու ժամանակ լինի անցագիրը տվող անձի նշումը.

- որևէ ունեցվածքի դուրսբերման կամ ներկրման ժամանակ նյութական բեռնագրով ստուգել՝ ինչ և ինչ քանակությամբ է թույլատրված անցկացնել, բաց թողնել միայն ուղեգրեր ունեցող մեքենաները.

- հսկիչ-անցագրային կետի հերթապահին զեկուցել ժամկետանց անցագիր ունեցող, ինչպես նաև այն անձանց մասին, որոնց փաստաթղթերի իսկությանն ինքը կասկածում է.

- հսկիչ-անցագրային կետի հերթապահին անհապաղ զեկուցել գնդի հրամանատարի, նրա տեղակալների, ինչպես նաև այլ զորամասերի սպաների ժամանման մասին:

Գումարտակի (գնդի ապահովման ստորաբաժանումների) հերթապահը

Հոդված 304. Գումարտակի (գնդի ապահովման ստորաբաժանումների) հերթապահը նշանակվում է սերժանտներից (ջոկերի, անձնակազմերի հրամանատար ենթասպաներից) և ենթարկվում է գնդի հերթապահին ու նրա օգնականին:

Գումարտակի հերթապահը գումարտակում ներքին ծառայության կարգով ենթարկվում է գումարտակի հրամանատարին, իսկ գնդի ապահովման ստորաբաժանումների հերթապահը՝ ստորաբաժանումներից մեկի հրամանատարին, որը գնդի հրամանով այդ ստորաբաժանումների ավագ է նշանակված:

Գումարտակի (գնդի ապահովման ստորաբաժանումների) հերթապահին իր պարտականությունները կատարում է վաշտի հերթապահի պարտականություններին համապատասխան: Ընդ որում, ապահովման բոլոր ստորաբաժանումների անձնակազմերի ուղղակի պետերի, գնդի հերթապահի, տեսչական ստուգումը անցկացնող անձանց, ինչպես նաև ներքին ծառայության կարգով իր վերադասի՝ գունդ ժամանելուն պես ապահովման ստորաբաժանումների հերթապահը պարտավոր է արձակել «Զգա՛ստ» հրամանը և զեկույց տալ, եթե այդ ժամանակ գնդի տեղակայման սահմաններից բացակայում են ծառայողական դիրքով բարձր պետերը:

Հոդված 305. Գնդի մյուս ստորաբաժանումներից անջատ (առանձին) տեղակայված գումարտակում գումարտակի հերթապահը կարող է նշանակվել սպաներից և ենթասպաներից: Այդ դեպքում իր պարտականությունները նա կատարում է գնդի հերթապահի պարտականություններին համապատասխան:

#### Վաշտի հերթապահը

Հոդված 306. Վաշտի հերթապահը նշանակվում է սերժանտներից և, որպես կանոն, առավել պատրաստված զինվորներից: Նա պատասխանատու է օրվա կարգուկանոնի ճշգրիտ կատարման և վաշտում ներքին կարգուկանոնի պահպանման համար, զենքի, զինամթերքի արկղերի, վաշտի ունեցվածքի, զինվորների և սերժանտների անձնական իրերի անվտանգության և օրապահների կողմից ծառայության ճիշտ կատարման համար: Վաշտի հերթապահը ենթարկվում է գնդի հերթապահին և նրա օգնականին, իսկ վաշտի ներքին ծառայության կարգով՝ վաշտի հրամանատարին և վաշտի ավագին: Նա վաշտի նույն կամ ավելի ցածր զինվորական կոչում ունեցող բոլոր զինծառայողների պետն է:

Հոդված 307. Հերթափոխումից առաջ վաշտի նոր հերթապահը ստուգում է վաշտի օրվա վերակարգի կազմը, գնում այն և ներկայացնում վաշտի ավագին: Վաշտի ավագի կատարած գնումից, իրենց պարտականությունների իմացության ստուգումից և գործնական պարապմունքների անցկացումից հետո վաշտի հերթապահը հին հերթապահից տեղեկություններ է ստանում մարդկանց առկայության ու բաշխման մասին և օրվա վերակարգը տանում հերթափոխման:

Հերթափոխումից հետո նոր հերթապահը հին հերթապահի հետ ստուգում և ըստ ցուցակի ընդունում է զենքը, զինամթերքի արկղերն ու նրանց վրայի կնիքները, ունեցվածքը, ստուգում է հրդեհամարիչ և ծանուցիչ միջոցների առկայությունն ու սարքինությունը, որից հետո հերթապահները ստորագրում են հերթապահության հանձնման և ընդունման գրքում (Հավելված 12):

Զենքն ընդունվում է հատ-հատ, ըստ համարների և լրակազմով:

Ընդ որում՝ ստուգվում է կողպեքների, պահպանման ազդանշանիչների, պահարանների կնիքների և այլ սարքավորումների սարքինությունը:

Ընդունելով հերթապահությունը՝ նոր հերթապահը հին հերթապահի հետ միասին հերթապահության հանձնման և ընդունման մասին զեկույցով ներկայանում են վաշտի հրամանատարին, նրա բացակայությամբ՝ վաշտի հրամանատարի տեղակալին, իսկ վերջինիս բացակայելու դեպքում՝ վաշտի ավագին:

Օրինակ՝ «Պարոն կապիտան, սերժանտ Ստեփանյանը վաշտի հերթապահությունը հանձնել է»: «Պարոն կապիտան, կրտսեր սերժանտ Կարապետյանը վաշտի հերթապահությունն ընդունել է»:

Այնուհետև վաշտի նոր հերթապահը հայտնում է հերթափոխման ժամանակ գնդի հերթապահի արած բոլոր դիտողություններն ու տված ցուցումները, ինչպես նաև հերթապահության ընդունման ժամանակ հայտնաբերված անսարքությունների կամ թերհանձնման մասին:

Հոդված 308. Վաշտի հերթապահը պարտավոր է՝

- տազնապի ազդարարման ժամանակ իրականացնել անձնակազմի վերկացք, ծանուցել վաշտի սպաներին, ենթասպաներին և պայմանագրով ծառայության անցած զինծառայողներին, մինչև նրանց վաշտ ժամանելը կատարել գնդի հերթապահի ցուցումները.

- հետևել վաշտում օրվա կանոնակարգի ճիշտ կատարմանը, սահմանված ժամերին կատարել անձնակազմի ընդհանուր վերկացք.

- գիտենալ վաշտի գտնվելու վայրը և նրան կանչելու կարգը, վաշտում մարդկանց առկայությունը, վերակարգում գտնվողների, հիվանդների, գնդի տեղակայման վայրից արձակվածների կամ խմբերի կազմում ուղարկվածների թիվը, ինչպես նաև զենքի առկայությունն ու ճշգրիտ ծախքը.

- զենքը, բացի ատրճանակներից, բաց թողնել միայն վաշտի հրամանատարի կամ ավագի հրամանով՝ այդ մասին գրառումներ կատարելով զենքի և զինամթերքի բացթողման գրքում (Հավելված 12),

զենքի ընդունման ժամանակ ստուգել համարներն ու լրակազմը, մշտապես իր մոտ ունենալ և ոչ ոքի չփոխանցել զենքի պահասենյակի բանալիները.

- վաշտում որևէ պատահարի և վաշտի զինվորների կամ սերժանտների միջև փոխհարաբերությունների կանոնադրություններով սահմանված կանոնների խախտման դեպքում անհապաղ միջոցներ ձեռնարկել կարգուկանոնի հաստատման համար, այդ մասին անմիջապես զեկուցել գնդի հերթապահին և վաշտի հրամանատարին կամ նրա տեղակալին, իսկ վերջիններիս բացակայությամբ՝ վաշտի ավագին.

- հետևել վաշտի հրդեհամարիչ միջոցների և զենքի պահասենյակների պահպանման ազդանշանիչների առկայությանն ու սարքին վիճակին, վաշտում հրդեհային անվտանգության պահանջների կատարմանը (ծխելը թույլատրել միայն դրա համար հատկացված հատուկ տեղերում, համազգեստի չորացումը՝ միայն չորանոցներում, վառարանները վառելու և լամպերն օգտագործելու կանոնների կատարմանը).

- գնդի հերթապահի հրամանով փականքներով կողպել զորանոցի դռները, իսկ այցելուներին ներս թողնել ազդանշանիչի գանգով՝ նախապես ծանոթանալուց հետո.

- հրդեհի բռնկման դեպքում հրշեջ խումբ կանչել, միջոցներ ձեռնարկել այն մարելու համար և անհապաղ զեկուցել գնդի հերթապահին ու վաշտի հրամանատարին, ինչպես նաև միջոցներ ձեռնարկել վտանգի ենթակա մարդկանց զենքը և ունեցվածքը շինություններից դուրս բերելու ուղղությամբ.

- ժամանակին փոխել օրապահներին, աշխատանքի նշանակված ստորաբաժանումներն ու տարբեր խմբերը վաշտի ավագի հրամանով ուղարկել աշխատանքի, բոլոր հիվանդներին և բուժքննության ենթակա անձանց ուղարկել բուժկետ.

- նշանակված ժամին շարել գնդի տեղակայման տարածքից արձակվողներին, այդ մասին զեկուցել վաշտի ավագին և նրա հրամանով դրանց ներկայացնել գնդի հերթապահին.

- ծառայողական գործերով վաշտի շինությունից դուրս գալիս, ինչպես նաև իր հանգստի ժամանակ իր պարտականությունների կատարումը հանձնարարել ազատ հերթափոխի օրապահներից մեկին.

- երեկոյան ստուգումից (անվանականից) հետո վաշտի ավագից տեղեկություններ ստանալ բացակայողների մասին, իսկ ինքնակամ բացակայողների առկայության դեպքում ստանալ նրանց

ազգանունները, անուններն ու հայրանունները և զեկուցել գնդի հերթապահին:

Օրինակ՝ «Պարոն կապիտան, առաջին տանկային վաշտում ստուգումն (անվանականչն) անցկացված է, բոլորը ներկա են, բացի արձակուրդում գտնվող երկու և վերակարգում գտնվող երեք հոգուց: Վաշտի հերթապահ սերժանտ Բաղդասարյան»:

- վերկացից հետո կապի տեխնիկական միջոցներով գնդի հերթապահին զեկուցել վաշտի անձնակազմի ներկայության (առկայության) և գիշերվա ընթացքում տեղի ունեցած պատահարների մասին, անհրաժեշտության դեպքում ներկայացնել արձակումից ուշացածների և ինքնակամ բացակայողների ցուցակները.

- հետևել վաշտի շինությունների խնամքով մաքրմանն ու պահպանմանը, դրանցում օդի սահմանված ջերմաստիճանի պահպանմանը, շինությունների լուսավորման կարգի պահպանմանը, ջեռուցմանը, օդափոխմանը, բակերում խմելու ջրի և լվացարաններում ջրի առկայությանը, ինչպես նաև վաշտին կցված տարածքի մաքրմանը.

- վաշտի անձնակազմի սնվելու ժամանակ ճաշարանում կարգուկանոն պահպանել, վաշտի ավագի ցուցումով ժամանակին հայտեր ներկայացնել ճաշարանի հերթապահին՝ կերակուր պահելու այն անձանց համար, ովքեր վերակարգում են գտնվում կամ բացակայում են ծառայողական այլ գործերով.

- ուղղակի պետերի՝ սկսած վաշտի հրամանատարից և ավելի բարձր, գնդի հերթապահի, ինչպես նաև տեսչական ստուգումներ անցկացնող անձանց՝ վաշտ ժամանելու դեպքում արձակել «Զգա՛ստ» հրամանը, զեկույց տալ և ուղեկցել նրանց վաշտի տարածքում:

Օրինակ՝ «Պարոն մայր, իմ հերթապահության ընթացքում պատահարներ չենք ունեցել (տեղի է ունեցել այս, այն): Վաշտը պարապում է հրաձգարանում: Վաշտի հերթապահ՝ սերժանտ Վարդանյան»:

Մյուս սպաներին, ենթասպաներին և վաշտի ավագին հերթապահը զեկույց չի տալիս, այլ միայն ներկայանում է:

Ուրիշ վաշտերի սպաների ժամանման դեպքում վաշտի հերթապահը ներկայանում է նրանց և ուղեկցում վաշտի հրամանատարի մոտ:

Եթե ժամանած հրամանատարին (պետին) դիմավորում է վաշտի հրամանատարը և զեկուցում նրան, վաշտի ներկա գտնվող հերթապահը զեկույց չի տալիս, այն միայն ներկայանում է:

(308-րդ հոդվածը փոփ. 01.06.06 ՀՕ-127-Ն, 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 309. Բնակավայրերում տեղակայվելու դեպքում վաշտի հերթապահը, բացի այդ, հետևում է, որպեսզի զինվորներն ու սերժանտները դուրս չգան վաշտի տեղակայման շրջանից, չմտնեն արգելված վայրեր, փողոցում գտնվելիս հագնված լինեն սահմանված կարգով և պահպանեն հասարակական կարգը: Կարգի խախտումներ թույլ տվածներին վաշտի հերթապահը բռնում է և ուղարկում վաշտի ավագի մոտ:

#### Վաշտի օրապահը

Հոդված 310. Վաշտի օրապահը նշանակվում է զինվորներից: Նա պատասխանատու է իր հսկողության տակ գտնվող զենքի, ատրճանակների պահարանների (արկղերի), զինամթերքի արկղերի, վաշտի ունեցվածքի, զինվորների և սերժանտների անձնական իրերի պահպանման համար: Վաշտի օրապահը ենթարկվում է վաշտի հերթապահին:

Հոդված 311. Վաշտի հերթական օրապահը ծառայությունը կատարում է զորանոցի շինության ներսում՝ մուտքի դռան մոտ, զենքի պահասենյակի մոտակայքում:

#### Նա պարտավոր է՝

- վաշտի շինությունից չհեռանալ առանց վաշտի հերթապահի թույլտվության, մշտապես հսկել զենքի պահասենյակը.
- կողմնակի անձանց ներս չթողնել, ինչպես նաև թույլ չտալ առանց վաշտի հերթապահի թույլտվության զորանոցից դուրս բերել զենք, զինամթերք, ունեցվածք և այլ իրեր.
- վաշտի հերթապահին անհապաղ զեկուցել վաշտում տեղի ունեցած բոլոր պատահարների, վաշտի զինվորների և սերժանտների միջև փոխհարաբերությունների՝ կանոնադրություններով սահմանված կանոնների խախտումների, նկատված անսարքությունների և հրդեհային անվտանգության պահանջների խախտումների մասին, միջոցներ ձեռնարկել դրանց վերացման համար.
- ընդհանուր վերկացի ժամանակ, ինչպես նաև գիշերը տազնապի կամ հրդեհի դեպքում արթնացնել անձնակազմին.
- շինություններում հետևել մաքրությանն ու կարգուկանոնին, զինծառայողներից պահանջել դրանց պահպանումը.

- զինծառայողներին թույլ չտալ ցուրտ եղանակներին, հատկապես գիշերը, չհագնված դուրս գալ շինություններից.

- հետևել, որ զինծառայողները ծխեն, կոշիկներն ու հագուստը մաքրեն դրա համար հատկացված շինություններում կամ տեղերում.

- ուղղակի պետերի՝ սկսած վաշտի հրամանատարներից և ավելի բարձր, և գնդի հերթապահի՝ վաշտ ժամանելու դեպքում տալ «Զգա՛ստ» հրամանը.

- վաշտի մյուս սպաների, ինչպես նաև վաշտի ավագի և ուրիշ վաշտերի զինծառայողների՝ վաշտ ժամանելու դեպքում կանչել հերթապահին: Օրինակ՝ «Վաշտի հերթապահ, մուտքի մոտ»:

Հերթական օրապահին արգելվում է նստել, հանել հանդերձանքը և արձակել հագուստի կոճակները:

Ազատ հերթափոխի օրապահը պարտավոր է մաքրություն և կարգ պահպանել վաշտի շինություններում ու ոչ մի տեղ չգնալ առանց վաշտի հերթապահի թույլտվության, օգնել նրան կարգուկանոն հաստատելու զինվորների և սերժանտների միջև փոխհարաբերությունների՝ զինվորական կանոնադրություններով սահմանված կանոնների խախտման դեպքում, վաշտի հերթապահին փոխարինելիս կատարել նրա պարտականությունները:

(311-րդ հոդվածը փոփ., խմբ. 01.06.06 ՀՕ-127-Ն, փոփ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 312. Բնակավայրերում վաշտը բնակարաններում տեղավորելու դեպքում օրապահներից մեկը պարտավոր է գտնվել՝ վաշտի հրամանատարի որոշած և վատ եղանակին պաշտպանվելու համար ծածկով սարքավորված տեղում:

Օրապահը պարտավոր է մշտապես գիտենալ վաշտի հերթապահի գտնվելու վայրը և հետևել զինծառայողների հասարակական կարգի և զինվորական համազգեստը կրելու կանոնների պահպանմանը: Նկատված բոլոր խախտումների մասին նա զեկուցում է վաշտի հերթապահին:

(312-րդ հոդվածը փոփ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

#### Ճաշարանի հերթապահը

Հոդված 313. Ճաշարանի հերթապահը նշանակվում է ենթասպաններից կամ սերժանտներից: Նա պատասխանատու է պահեստից մթերքի ստացման ճշտության, դրանք կաթսայի մեջ լրիվ

դնելու, կերակուրը սահմանված չափաբաժիններով ժամանակին բաժանելու, խոհանոցային գույքի և ամանեղենի անվնասության, ինչպես նաև ճաշարանի սանիտարահիգիենիկ վիճակի և դրանում կարգուկանոնի պահպանման համար: Ճաշարանի հերթապահը ենթարկվում է գնդի հերթապահին, նրա օգնականին, գնդի հրամանատարի՝ թիկունքի գծով տեղակալին և գնդի պարենային ծառայության պետին: Նրան են ենթարկվում ճաշարանում աշխատելու համար նշանակված օրվա վերակարգը և խոհարարները:

Հոդված 314. Ճաշարանի նոր հերթապահը սահմանված ժամին հրահանգներ է ստանում գնդի հրամանատարի՝ թիկունքի գծով տեղակալից իսկ նրա բացակայության դեպքում՝ պարենային ծառայության պետից:

Հերթափոխումից առաջ ճաշարանի նոր հերթապահը ստուգում է վերակարգի կազմը, լրացնում է ճաշարանի օրվա վերակարգի տեղեկագիրը և վերակարգը ներկայացնում բժշկական քննության: Հերթափոխումից հետո նա ցուցակով ընդունում է փաստաթղթերը (Հավելված 10), խոհանոցային գույքը և ամանեղենը, ստուգում տեխնոլոգիական սարքավորման սարքիներունը, աշխատանքի բաժանում կատարում ճաշարանի վերակարգի անձնակազմերի զինվորների միջև, անցկացնում անվտանգության պահանջների վերաբերյալ նրանց հրահանգավորումը:

Հերթապահության հանձնման և ընդունման մասին ճաշարանի հին և նոր հերթապահները զեկուցում են գնդի հրամանատարի՝ թիկունքի գծով տեղակալին կամ գնդի հերթապահին:

Հոդված 315. Ճաշարանի հերթապահը պարտավոր է՝

- գիտենալ բավարարման ցուցակում գրանցվածների թիվը և ճաշացուցակ-բաշխումը.

- վերահսկել հրահանգիչ խոհարարի (ավագ խոհարարի) պահեստից մթերքների ստացումը, դրանց քաշը և լավորակ լինելը, մթերքի որակը որոշելու համար անհրաժեշտության դեպքում կանչել բժշկին կամ բուժակին.

- հետևել մթերքի մշակմանը, ինչպես նաև այն բանին, որ մսի և ձկան մշակումը, պատրաստի կերակրի բացթողումը կատարեն միայն խոհարարները.

- ներկա գտնվել մթերքը կաթսայի մեջ դնելուն և հետևել, որ նախատեսված մթերքը կաթսայի մեջ դրվի ճիշտ քաշով.

- ներկա գտնվել միսն ու ձուկը չափաբաժինների բաժանելիս, ստուգել դրանց զանգվածը, ինչպես նաև պատրաստված կերակրի որակը վերահսկողության հաշվառման գրքում հրահանգիչ խոհարարի (ավագ խոհարարի) գրանցումների ճշտությունը.

- բուժքննություն չանցած զինվորներին թույլ չտալ ճաշարանում աշխատելու, հետևել աշխատանքի ժամանակ հիգիենայի կանոնների պահպանմանը.

- ճաշարանում մաքրություն և կարգուկանոն պահպանել, անձնակազմին թույլ չտալ նստելիս ճաշարանում գտնվել գլխարկներով, շինելներով և հատուկ (աշխատանքային) հագուստով.

- հետևել սեղաններին ժամանակին սպասքաղրմանն ու հավաքմանը, կազմակերպել ճաշարանախոհանոցային ամանեղենի որակով լվացումը, թույլ չտալ այն դուրս բերել ճաշարանից.

- չթույլատրել կերակրի բացթողումը առանց բժշկի (բուժակի) կողմից նրա որակի ստուգման և գնդի հերթապահի թույլտվության, հետևել կերակրի՝ ժամանակին և ճիշտ բաշխմանը և ստորաբաժանումներին նրա բացթողման հերթականության ճշգրիտ պահպանմանը.

- պահանջել, որ մթերքի պաշարները պահվեն մաքուր և կարգին, ապահովվի դրանց հուսալի պահպանումը.

- վաշտերի ավագների կամ վաշտերի (գումարտակների, ապահովման ստորաբաժանումների) հերթապահների հայտերով կերակուր բաց թողնել՝ չթույլատրելով այն սահմանված ժամկետներից երկար պահել.

- կազմակերպել մթերքի մշակումից հետո մնացորդները ժամանակին հավաքելը և հետևել ճաշարանին հարակից տարածքի մաքրությանը.

- կողմնակի անձանց ճաշարան չթողնել.

- ապահովել հրդեհային անվտանգության և տեխնոլոգիական սարքավորման շահագործման ժամանակ անվտանգության պահանջների կատարումը.

- բոլոր թերությունների մասին զեկուցել գնդի հերթապահին կամ նրա օգնականին.

- անմիջական պետերի՝ սկսած գնդի հրամանատարի տեղակալներից և ավելի բարձր, ինչպես նաև գնդի հերթապահի և նրա օգնականի՝ ճաշարան այցելելու դեպքում ներկայանալ նրանց:

Օրինակ՝ «Պարոն գնդապետ: Ճաշարանի հերթապահ՝ ենթասպա Բարսեղյան»:

Բուժկետի հերթապահ բժիշկը (բուժակը)  
(վերնագիրը փոփ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 316. Բուժկետի հերթապահ բժիշկը (բուժակը) պատասխանատու է բուժկետում ներքին կարգուկանոնի համար, հերթապահ բժիշկը՝ առաջին բժշկական օգնության, իսկ բուժակը՝ նախաբժշկական օգնության ցուցաբերման համար: Նա ենթարկվում է գնդի հերթապահին, նրա օգնականին և գնդի բուժկետի պետին: Նրան ենթարկվում են բուժկետի օրապահները:

Հերթապահության հանձնման և ընդունման մասին հին և նոր հերթապահները զեկուցում են բուժկետի պետին:

(316-րդ հոդվածը խմբ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 317. Բուժկետի հերթապահ բժիշկը (բուժակը) պարտավոր է՝

- գտնվել բուժկետում, ծառայողական գործերով դուրս գալիս իր փոխարեն թողնել բուժկետի օրապահին և հայտնել նրան՝ ուր և որքան ժամանակով է գնում.

- գիտենալ բուժկետում ստացիոնար բուժման մեջ գտնվող հիվանդների թիվը, նրանց հիվանդության բնույթը, հիվանդներից յուրաքանչյուրին նշանակված բուժումը և սնունդը, կատարել բժշկի նշանակումները.

- ճաշարանի հերթապահի կանչով ճաշարան գնալ՝ որոշելու ճաշարանին տրվող մթերքի որակը (լավորակ լինելը).

- նախքան բուժական ընդունելությունն սկսելը առանձնացնել (ընտրել) ընդունելության համար գրանցված զինծառայողների բուժգրքույկները և չափել հիվանդների ջերմությունը.

- հանկարծակի հիվանդացած զինծառայողների՝ բուժկետ ընդունվելու դեպքում ցուցաբերել բուժօգնություն և զեկուցել բուժկետի պետին կամ գորամասի հերթապահին.

- վաշտի հերթապահի կամ գնդի հերթապահի կանչով անհապաղ ներկայանալ հիվանդի (հիվանդացածի) մոտ՝ նրան օգնություն ցույց տալու, իսկ անհետաձվելի բժշկական օգնություն պահանջող դեպքերում հիվանդացածին անհապաղ ուղարկել բուժկետ և զեկուցել բժշկին.

- կատարել արձակուրդից, գործուղումից վերադարձողների, ճաշարանում վերակարգ նշանակվողների, ինչպես նաև ուղերթից առաջ՝ վարորդների բուժզննում.

- բուժկետի օրապահներից պահանջել մանրագին հսկողություն և խնամք հիվանդների նկատմամբ.

- հետևել հիվանդների համար նախատեսված սննդի որակի և նրա ժամանակին բաշխմանը բուժկետի (շենքի) մաքրմանն ու ախտահանմանը, ջերմաստիճանին ու օդափոխմանը.

- հերթապահությունն ընդունելիս՝ ստացականով ընդունել թունավոր և թմրեցուցիչ դեղանյութերը և այն պահարանների բանալիները, որոնցում դրանք պահվում են.

- հերթապահությունն ընդունելուց հետո գնդի հերթապահին տեղեկություններ տալ բուժկետում բուժման մեջ գտնվող հիվանդների թվի մասին.

- բուժկետ այցելած անմիջական պետերին՝ սկսած բուժկետի պետից և ավելի բարձր, ինչպես նաև գնդի հերթապահին ու նրա օգնականին ներկայանալ:

Օրինակ՝ «Պարոն մայր, հերթապահ բուժակ՝ ենթասպա Հարությունյան»:

Ներկայանալուց հետո հերթապահ բուժակը եկողին զեկուցում է բուժկետում հիվանդների առկայության և նրանց վիճակի մասին:

Բուժկետի օրապահ:

(317-րդ հոդվածը փոփ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 318. Բուժկետի օրապահը նշանակվում է սանիտարներից և ենթարկվում է հերթապահ բժշկին (բուժակին): Եթե բուժծառայության հաստիքում չկա սանիտարի պաշտոն, բուժկետի օրապահը նշանակվում է առողջացող (ապաքինվող) զինվորներից:

Նա պարտավոր է՝

- հերթապահ բժշկի (բուժակի) ցուցումով և նրա հսկողությամբ անցկացնել ընդունվող հիվանդների սանմշակումը.

- ընդունել և ախտահանման նախապատրաստել հիվանդների անձնական իրերը.

- սպասարկել հիվանդներին, նրանց մատուցել սնունդ և ջուր.

- մաքրել (կարգի բերել) բուժկետի շենքը.

- հետևել բուժկետում ներքին կարգուկանոնի պահպանմանը:

(318-րդ հոդվածը փոփ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Գնդի շտաբի հերթապահ

Հոդված 319. Գնդի շտաբի հերթապահը նշանակվում է գնդի վարչության ենթասպաներից և սերժանտներից: Նա պատասխանատու է շտաբի ծառայողական սենյակների պահպանման, շտաբի շենքի մաքրության, ցրիչների (թղթատարների) ծառայության ճիշտ կատարման, թղթակցության և հեռախոսագրերի ժամանակին ընդունման համար: Գնդի շտաբի հերթապահը ենթարկվում է գնդի հերթապահին, նրա օգնականին և գնդի շտաբի պետին:

Հերթապահության հանձնման և ընդունման մասին հին և նոր հերթապահները զեկուցում են գնդի շտաբի պետին և գնդի հերթապահին:

Հոդված 320. Գնդի շտաբի հերթապահը պարտավոր է՝

- ընդունել թղթակցությունը ոչ աշխատանքային ժամերին.
- ընդունել և հաղորդել ծառայողական հեռախոսագրերը.
- ղեկավարել ցրիչներին (թղթատարներին).

- մշտապես ներկա լինել շտաբի շենքում, այնտեղ պահպանել մաքրություն ու կարգուկանոն, կողմնակի անձանց շտաբի շենք մտնելու թույլտվություն տալ գնդի հրամանատարի սահմանած կարգով.

- տագնապի ազդարարման դեպքում անմիջապես տեղեկացնել բոլոր սպաներին, ենթասպաներին, պայմանագրային ծառայության զինծառայողներին ու գնդի վարչության կին զինծառայողներին.

- պահպանության տակ առնել ծառայողական սենյակները և պահել դրանց բանալիները.

- հետևել վառարանները վառելու կանոնների կատարմանը, իսկ աշխատանքային օրվա վերջում անցկացնել իրականացնել գնդի շտաբի շենքի գնում հակահրդեհային առումով.

- հրդեհի առաջացման դեպքում կանչել հրշեջ խումբ, այն հանգցնելու և փաստաթղթերն ու շտաբի ունեցվածքը փրկելու միջոցներ ձեռնարկել, այդ մասին անհապաղ զեկուցել գնդի հերթապահին և գնդի շտաբի պետին.

- գնդի շտաբի պետի և գնդի հրամանատարի մյուս տեղակալների ու նրանցից բարձր պետերի, ինչպես նաև զորամասերի սպաների՝ գնդի շտաբ գալու դեպքում ներկայանալ նրանց.

Օրինակ՝ «Պարո՛ւն մայր: Գնդի շտաբի հերթապահ՝ սերժանտ Պետրոսյան»:

(320-րդ հոդվածը լրաց. 14.04.11 ՀՕ-124-Ն)

## Հրշեջ վերակարգ

Հոդված 321. Հրշեջ վերակարգը նշանակվում է գնդի արտահաստիքային հրշեջ խմբից հետևյալ կազմով՝ վերակարգի պետ, վարորդներ և մարտական անձնակազմի մարտիկներ ըստ հաստատված հրշեջ մեքենաների կամ այլ ավտոմեքենաների (պոմպ) քանակի, պահակներ ըստ հրշեջ պահակակետերի քանակի: Հրշեջ վերակարգը ենթարկվում է գնդի հերթապահին և հրշեջ խմբի պետին:

Հոդված 322. Հրշեջ վերակարգը պարտավոր է՝

- հետևել հրդեհային անվտանգության պահանջների կատարմանը բոլոր ստորաբաժանումների շինություններում և գնդի ողջ տարածքում.

- հրշեջ - պահակային ծառայություն կատարել ըստ պահակակետերի ցանկի.

- հետևել օբյեկտներում հրշեջ միջոցների սարքինությամբ.

- օբյեկտների փակումից առաջ պահեստարանների, պահեստների պետերի և հավաքակայանի հերթապահի հետ համատեղ ստուգել հրշեջ անվտանգության պահանջների կատարումը և էլեկտրական ցանցերի անջատումը, այդ կանոնների պահպանման դեպքում նրանց հանձնել հրշեջ մետաղանիշեր (ժետոններ).

- պահակակետերի ցուցակով սահմանված ժամկետներում գնդի հերթապահին զեկուցել գնդում հրդեհային անվտանգության պահանջների կատարման մասին.

- հրդեհի դեպքում մասնակցել այն մարելուն:

Հերթապահության հանձնման և ընդունման մասին հրշեջ վերակարգի հին և նոր պետերը զեկուցում են գնդի արտահաստիքային հրշեջ խմբի պետին և գնդի հերթապահին:

Հրշեջ վերակարգն ապահովվում է հրդեհաշեջ անհրաժեշտ միջոցներով, իսկ հրշեջ ավտոմեքենաների (պոմպերի) մարտական անձնակազմերում ծառայող զինծառայողները՝ հատուկ անջրանցիկ գործվածքից բաձկոններով ու տաբատներով, գոտիներով և պողպատե սաղավարտներով:

(322-րդ հոդվածը փոփ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հերթապահ փողհար-թմբկահարը

Հոդված 323. Հերթապահ փողհար-թմբկահարը նշանակվում է ստորաբաժանումների պատրաստված զինվորներից և ենթարկվում է

գնդի հերթապահին ու նրա օգնականին: Նա պարտավոր է գտնվել գնդի հերթապահի սենյակի մոտակայքում և ազդանշաններ տալ գնդի հերթապահի կամ նրա օգնականի հրամանով:

Փողհար-թմբկահարի բացակայության դեպքում ազդանշաններ տալու համար կարող են օգտագործվել ձայնագրության վերարտադրման տեխնիկական միջոցներ:

## Գ Լ ՈՒ Խ 7

### ՎԵՐԿԱՑ ՏԱԳՆԱԳՈՎ

Հոդված 324. Գնդի տագնապով վերկացը անցկացնում են այն հրամանատարները (պետերը), որոնց այդ իրավունքը տվել է պետական կառավարման լիազորված մարմնի ղեկավարը (նախարարը):

Տագնապները լինում են մարտական և ուսումնական:

Հոդված 325. Մարտական տագնապով գնդի վերկացն անցկացվում է մարտական խնդիրների կատարման նախապատրաստման նպատակով: Ընդ որում, դուրս է բերվում գնդի ողջ անձնակազմը՝ իր ամբողջ սպառազինությամբ, ռազմական տեխնիկայով և այլ նյութական միջոցներով:

Հոդված 326. Մարտական տագնապով գնդի վերկացի կարգը սահմանվում է գնդի հրամանատարի անմիջական ղեկավարությամբ շտաբի մշակած և վերադաս հրամանատարի հաստատած՝ գնդի մարտական պատրաստականության բերման պլանով:

Պլանում պետք է նախատեսված լինեն՝

-գնդի մարտական պատրաստականության բերման ազդարարման և ղեկավարման կարգը (ուրվագիծը),

-մարտական տագնապ հայտարարելու, ստորաբաժանումները ծանուցելու իրավունք ունեցող անձի պաշտոնը, կոչումը, անունը և ազգանունը, ինչպես նաև սպաների, ենթասպաների և պայմանագրային զինվորական ծառայության անցած այլ զինծառայողների տեղեկացման ու հավաքի կարգը,

-գնդի մարտական պատրաստականության բերման հիմնական միջոցառումները,

-գնդի մարտական կիրառման (կենտրոնացման) շրջանները և գնդի ստորաբաժանումների տեղաբաշխման վայրերը, ինչպես նաև ելման բնագծերը, երթուղիների և զբաղեցման ու տեղաբաշխման կարգը,

-գնդի հավաքի շրջանը, ստորաբաժանումների հավաքակետերը և անձնակազմի դուրս գալու ու ռազմական տեխնիկայի դուրսբերման կարգը,

-համակողմանի ապահովման միջոցառումները,

-մարտական դրոշի դուրսբերման կարգը,

-զինամթերքի, պարենի և նյութական այլ միջոցների բեռնման ու մարտական կիրառման (կենտրոնացման) շրջանների դուրսբերման կարգը,

-գնդի տագնապով վերկացի և ստորաբաժանումների մարտական կիրառման (կենտրոնացման) շրջաններ դուրս բերելու պարետային ծառայության կազմակերպումը:

Պաշտպանության բնագավառում պետական լիազոր մարմնի ղեկավարի հրամանով կարող է սահմանվել այն գործառնների ցանկը, որոնցում մարտական տագնապով վերկացի կարգ կարող է չնախատեսվել և մարտական տագնապով վերկաց չիրականացվել:

(326-րդ հոդվածը խմբ. 01.06.06 ՀՕ-127-Ն, լրաց. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 327. Ուսումնական տագնապով գնդի վերկացն անցկացվում է մարտական տագնապով գործողություններին նախապատրաստելու նպատակով, գունդը (ստորաբաժանումը) զինավարժությունների դուրս բերելու ժամանակ, տարերային աղետի դեպքում, հրդեհի մարման և այլ խնդիրների լուծման համար: Ընդ որում գունդը (ստորաբաժանումը) գործում է ինչպես մարտական տագնապի դեպքում, նախատեսված սահմանափակումներով:

Հոդված 328. Բոլոր զինծառայողները պետք է հաստատապես իմանան տագնապի դեպքում գնդի (ստորաբաժանման) գործողությունների կարգի իրենց վերաբերող մասը:

Բոլոր դեպքերում տագնապի ազդարարման ժամանակ անձնակազմը պետք է գործի արագ և կազմակերպված՝ պահպանելով քողարկումը:



**ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄՆ ՈՒ ԱՄՐԱՊԵՏՈՒՄԸ**

**Ընդհանուր դրույթներ**

Հոդված 329. Զինծառայողների առողջության պահպանումն ու ամրապնդումը, ֆիզիկական զարգացումը իրենց զինվորական պարտքի կատարմանը նրանց նախապատրաստման կարևոր և անբաժան մասն է: Հրամանատարի (պետի) հոգածությունը ենթակաների առողջության նկատմամբ նրա հիմնական պարտականություններից մեկն է գործառնալի (ստորաբաժանման) կայուն մարտական պատրաստության ապահովման ուղղությամբ նրա գործունեության մեջ:

Հոդված 330. Զինծառայողների առողջության պահպանումն ու ամրապնդումը իրագործում են հրամանատարները՝ (պետերը) ծառայության և կենցաղի պայմանների առողջացման միջոցառումների անցկացումով,

նրանց պարբերական կոփումով, ֆիզիկական պատրաստությամբ և մարզական կանոնավոր պարապմունքներով,

սանիտարահիգիենիկ, հակահամաճարակային և բուժկանխարգելիչ միջոցառումների իրականացմամբ:

Զինծառայողների ծառայության և կենցաղի պայմանների առողջացումը

Հոդված 331. Զինծառայողների ամենօրյա գործունեությունը ցանկացած իրադրության մեջ պետք է իրագործվի զինվորական կանոնադրությունների ու նրանց ծառայության ու կենցաղի պայմանների առողջացման հրահանգների պահանջների պահպանումով: Ընդ որում, հաշվի են առնվում իրականացվող խնդիրների առանձնահատկությունները, գործառնալի տեղաբաշխման շրջանի կլիմայական պայմանները, բնապահպանական իրավիճակը, նյութական ապահովման և գորանոցային-բնակարանային ֆոնդի վիճակը:

Հոդված 332. Զինծառայողների ծառայության և կենցաղի պայմանների առողջացման ուղղությամբ հրամանատարների (պետերի) գործունեության հիմնական ուղղություններն են.

անվտանգության անհրաժեշտ պահանջների հաստատումը, զինծառայողներին ժամանակին հասցնելը, դրանց կատարման ապահովումը,

զինծառայողների տեղավորման, նրանց սննդի կազմակերպման, ջրամատակարարման և նյութական-կենցաղային ապահովման ձևերի մասին զինվորական կանոնադրության պահանջների ու սանիտարական նորմերի խիստ կատարումը,

օրվա կանոնակարգի և աշխատաժամանակի բաշխման ճշգրիտ կատարման կազմակերպումը,

բավարարման սահմանված նորմերը յուրաքանչյուր զինծառայողին ժամանակին և լրիվ հասցնելը,

զինծառայողների առողջության վրա վնասակար գործոնների ազդեցության վերացումը կամ նվազեցումը մինչև հաստատված սահմանը, գործառնալի (ստորաբաժանման) տեղակայման շրջանում բնապահպանական իրավիճակի առողջացման միջոցառումների անցկացումը:

Զինծառայողների կոփումը, ֆիզիկական պատրաստությամբ և սպորտով զբաղվելը

Հոդված 333. Զինծառայողների կոփումը, ֆիզպատրաստությամբ և սպորտով զբաղվելը իրականացվում է շրջապատող միջավայրի ֆիզիկական գործոնների զանազան կտրուկ փոփոխությունների, զինծառայության առանձնահատկությունների և մարտական խնդիրների կատարման հետ կապված պայմանների նկատմամբ նրանց օրգանիզմի տոկունության բարձրացման նպատակով:

Հոդված 334. Զինծառայողների կոփման միջոցառումներն անցկացնում են նրանց հրամանատարները բուժծառայության պետի և ֆիզպատրաստության ու սպորտի պետի սիստեմատիկ հսկողությամբ:

Այդ միջոցառումների պլանավորման ժամանակ հաշվի են առնվում զինծառայողների առողջական վիճակը, տարիքը, տեղանքի կլիմայական պայմանները:

Հոդված 335. Զինծառայողների կոփումը պետք է անցկացվի սիստեմատիկաբար և անընդհատ՝ ջրային, արեգակնային և օդային գործոնների համալիր օգտագործման ճանապարհով, դրանք գուցակցելով ֆիզպատրաստության և մարզական պարապմունքների հետ:

Զինծառայողների կոփման հիմնական միջոցներն են.

ամենօրյա բացօթյա ֆիզիկական վարժությունները,

մինչև գոտկատեղ սառը ջրով լվացումը կամ կարճատև սառը ցնցուղի ընդունումը,

կոկորդի ողողումը սառը ջրով, ինչպես նաև քնելուց առաջ ոտքերը սառը ջրով լվանալը,

ձմռանը դահուկային մարզումների և պարապմունքների անցկացումը, որոշ աշխատանքների կատարումը թեթև հագուստով,

ամռանը մարզական-գանգվածային միջոցառումների և պարապմունքների անցկացումը, որոշ աշխատանքների կատարումը թեթև հագուստով,

ամռանը մարզական-գանգվածային միջոցառումների և պարապմունքների անցկացումը թեթև հագուստով, արևի լոգանքի ընդունումը և լողը բաց ջրամբարներում՝ պարապմունքներից ու աշխատանքից ազատ ժամանակ և հանգստյան օրերին:

Հոդված 336. Սպորտի և ֆիզիկական պատրաստության պարապմունքները իրականացվում են առավոտյան մարզանքի, ուսումնական պարապմունքների, մարզական-գանգվածային աշխատանքների ժամանակ, զինծառայողների ուսումնամարզական գործունեության, ինչպես նաև ինքնուրույն մարզումների ընթացքում:

Պարապմունքների ժամանակ կատարվում են ֆիզիկական վարժություններ մարզումների զանազան ձևերի օգտագործումով և ֆիզիկական ծանրաբեռնվածությամբ տարբեր չափաքանակով զինված ուժերի տիպին և զորատեսակին զինծառայողների պատկանելիության, նրանց տարիքի և առողջական վիճակի հաշվառումով:

Մարզական պարապմունքներն անցկացվում են մարզական սեկցիաներում և թիմերում օրվա կանոնակարգում և ծառայաժամանակի բաշխումով սահմանված ժամկետում:

Սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումները

Հոդված 337. Յուրաքանչյուր զինծառայող պետք է հոգ տանի իր առողջության պահպանման համար, չթաքցնի հիվանդությունները, խիստ պահպանի անձնական և հասարակական հիգիենայի կանոնները, գերծ մնա վնասակար սովորություններից (ծխելուց, ակոհոլի և թմրադեղերի օգտագործումից):

Հոդված 338. Անձնական հիգիենայի կանոնների կատարումը ներառում է.

առավոտյան լվացվելը, ատամների մաքրելը,

ուտելուց առաջ ձեռքերը լվանալը,

քնելուց առաջ լվացվելը, ատամները մաքրելը և ոտքերը լվանալը,

ժամանակին սափրվելը, մազերը և եղունգները կտրելը,

ամեն շաբաթ բաղնիքում լողանալը՝ ներքին և անկողնու սպիտակեղենը, ոտքի փաթաթանները և գուլպաները փոխելով,

հագուստը, կոշիկները և անկողինը մաքուր պահելը, ենթաօձիքը ժամանակին փոխելը:

Զինծառայողի սանրվածքը, բեղերը պետք է լինեն կոկիկ, համապատասխանեն հիգիենայի պահանջներին և չխանգարեն անհատական պաշտպանության միջոցների օգտագործմանն ու հանդերձանքը կրելուն: Մորուք կրելը թույլատրվում է միայն սպաներին ու ենթասպաներին:

Հասարակական հիգիենայի կանոնները ներառում են՝ մաքրության պահպանումը ննջասենյակներում, շենքերի կանոնավոր օդափոխումը, մաքրության պահպանումը հասարակական վայրերում, ինչպես նաև գնդի տեղաբաշխման ողջ տարածքում:

Հոդված 339. Վարակիչ հիվանդությունների նկատմամբ զինծառայողների անընկալունակությունն ապահովելու համար կատարվում են կանխարգելիչ պատվաստումներ: Պատվաստումները կարող են լինել պլանային և համաճարակային նախանշանների դեպքում:

Գնդի ողջ անձնակազմի պլանային կանխարգելիչ պատվաստումները կատարվում են պատվաստումների օրացույցի համաձայն, իսկ համաճարակային նախանշանների դեպքում՝ ավագ հրամանատարի (պետի) հրամանով:

Զինծառայողները պատվաստումներից ազատվում են միայն բժշկի եզրակացության հիման վրա:

Պատվաստումների մասին նշումներ են կատարվում բժշկական գրքույկների և զինվորական գրքույկների մեջ:

Հոդված 340. Ջինձառայողը պարտավոր է հրամանատարությանը զեկուցել իր հետ նույն բնակարանում (հանրակացարանի սենյակում) բնակվող անձանց շրջանում վարակիչ հիվանդությունների առաջացման մասին և իր ծառայողական պարտականությունները կատարել բուժձառայության պետի եզրակացության հիման վրա՝ գնդի հրամանատարի թույլտվությամբ:

Հոդված 341. Գնդում վարակիչ հիվանդի հայտնաբերման դեպքում բժշկական ծառայության պետը անմիջապես այդ մասին զեկուցում է գնդի հրամանատարին, ավագ բժշկական պետին, անցկացնում է հիվանդների ակտիվ հայտնաբերում, մեկուսացում և հոսպիտալացում: Ստորաբաժանումներում կատարվում է ախտահանում, հսկողություն է սահմանվում այն անձանց նկատմամբ, ովքեր շփվել են հիվանդի հետ, ուժեղացվում է սանիտարահիգիենիկ հսկողությունը:

Անհրաժեշտության դեպքում գնդում մտցվում է դիտման (օբսերվացիայի) կամ շփարգելման (կարանտինի) ռեժիմ, դադարեցվում կամ կրճատվում է շփումը քաղաքացիական բնակչության հետ, գնդի ներսում արգելվում են անձնակազմի ժողովները կամ մարզամշակութային և այլ խմբակային միջոցառումները, ստեղծվում են կարանտինային գոտիներ:

(341-րդ հոդվածը փոփ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

#### Բուժկանխարգելիչ միջոցառումներ

Հոդված 342. Բուժկանխարգելիչ հիմնական միջոցառումներն են զինձառայողների դիսպանսերացումը, ամբուլատորային, ստացիոնար և առողջարանային բուժումը:

Վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով բուժձառայության առաջարկած կանխարգելիչ միջոցառումները պարտադիր են բոլոր զինձառայողների համար:

Հոդված 343. Դիսպանսերացումը ներառում է անձնակազմի առողջական վիճակի բժշկական հսկողությունը, հիվանդությունների վաղաժամ ակտիվ բացահայտումը, զինձառայողների ծառայության և կենցաղի պայմանների ուսումնասիրությունը, նրանց առողջության

վրա բացասաբար ազդող գործոնների բացահայտումը, կանխարգելիչ և բուժառողջարարական միջոցառումների անցկացումը:

Հոդված 344. Ջինձառայողների առողջական վիճակի բժշկական հսկողությունն իրականացվում է հետևյալ ուղիներով՝ անձնակազմի ամենօրյա հսկողություն մարտական նախապատրաստության ընթացքում և կենցաղում, զինձառայողների բուժզննում, զինձառայողների խորացված և հսկիչ-բժշկական քննություն, պլանային բուժզննումներ:

(344-րդ հոդվածը լրաց. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 345. Բուժզննումների ենթարկվում են՝ գնդի ամբողջ անձնակազմը՝ նախքան կանխարգելիչ պատվաստումներ կատարելը.

բոլոր սերժանտներն ու զինվորները՝ բաղնիքում լողանալուց առաջ. հերթապահ ուժերի (հերթափոխների) անձնակազմը՝ նախքան մարտական հերթապահության (մարտական ծառայության) անցնելը.

այն զինձառայողները, որոնց աշխատանքը կապված է անբարենպաստ գործոնների հնարավոր ազդեցության հետ, ինչպես նաև անձինք, որոնք գտնվում են դիսպանսերային անընդհատ հսկողության տակ՝ նրանց համար սահմանված ժամկետներում.

ճաշարաններում, մթերային պահեստներում, ջրամատակարարման օբյեկտներում, հացի փոերում, բաղնիքներում, լվացքատներում մշտապես աշխատող անձինք և սանիտարները՝ շաբաթական մեկ անգամ.

ճաշարանում վերակարգի նշանակած անձնակազմը՝ մինչև օրվա վերակարգի հերթափոխը.

արձակուրդից, գործողումներից, նոր ժամանած ժամկետային ծառայության բոլոր զինձառայողները, ինչպես նաև ապաքինումից հետո բուժական հիմնարկներից վերադարձած անձինք՝ գունդ ժամանելու օրը, մինչև ստորաբաժանումներ ուղարկվելը.

վարորդները՝ ուղերթ դուրս գալուց առաջ.

մարտական միջոցառումների մասնակիցները՝ մրցումներից առաջ.

կարգապահական վաշտ ուղարկվող, ինչպես նաև կարգապահական վաշտից ծառայության վայր վերադարձող զինձառայողները:

Խորացված բժշկական քննության են ենթարկվում սպայական, ենթասպայական կազմերի և շարքային կազմի պայմանագրային

զինծառայողները, ինչպես նաև պաշտպանության նախարարության համակարգում քաղաքացիական ծառայողները՝ տարեկան 1 անգամ՝ զինվորական բուժօգնություններում, իսկ պլանային բուժօգնման են ենթարկվում շարքային կազմի պարտադիր զինծառայողները՝ տարեկան 2 անգամ՝ ուսուցման ձմեռային և ամառային փուլերից առաջ:

Շարքային կազմի պարտադիր զինծառայողները խորացված բժշկական քննության կարող են ենթարկվել՝ ելնելով առողջական վիճակից:

(345-րդ հոդվածը խմբ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 346. Գնդի ստորաբաժանումների անձնակազմի բժշկական քննության և բուժօգնման ժամանակը, կարգը և տեղը հայտնվում են գնդի հրամանում: Արգելվում է ստորաբաժանումների բժշկական քննությունը և բուժօգնությունը նշանակել հանգստյան օրերին:

Հոդված 347. Վաշտը բժշկական քննության է ներկայացնում վաշտի հրամանատարը, իսկ բուժօգնման՝ վաշտի ավագը:

Վաշտի անձնակազմի բժշկական քննությանը պարտավոր են ներկա գտնվել վաշտի բոլոր սպաները և ենթասպաները: Նրանք բժշկին պետք է հայտնեն ենթակաների առողջական վիճակի իրենց դիտարկումները:

Վաշտի անձնակազմի բժշկական քննության և բուժօգնման արդյունքները բժիշկը գրանցում է բժշկական գրքույկների մեջ: Առողջական վիճակի պատճառով դիսպանսերային դինամիկ հսկողության կարիք ունեցող զինծառայողները հաշվառման են վերցվում և ենթարկվում են պարբերական ստուգիչ բժշկական քննությունների:

Վաշտի հրամանատարը պատասխանատու է ամբողջ անձնակազմը բժշկական քննության ենթարկվելու համար:

Հոդված 348. Որևէ պատճառով բժշկական քննության չներկայացած զինծառայողներին, առաջին իսկ հնարավորության դեպքում՝ վաշտի հրամանատարը ուղարկում է բուժկետ:

Հոդված 349. Գնդի անձնակազմի բժշկական քննության արդյունքները, ինչպես նաև բուժառողջարարական անհրաժեշտ միջոցառումների անցկացման վերաբերյալ առաջարկությունները գնդի բժշկական ծառայության պետը զեկուցում է գնդի հրամանատարին:

Հոդված 350. Զինծառայողը չպետք է թաքցնի իր հիվանդությունը: Հիվանդանալու դեպքում նա պարտավոր է այդ մասին անմիջապես զեկուցել իր անմիջական պետին և նրա թույլտվությամբ դիմել գնդի բուժկետ՝ բժշկական օգնություն ստանալու:

Հոդված 351. Ամբուլատոր ընդունելությունը գնդի բուժկետում կատարվում է օրվա կանոնակարգով սահմանված ժամերին: Հանկարծակի հիվանդացած կամ վնասվածք ստացած զինծառայողները օրվա ցանկացած ժամին անհապաղ ուղարկվում են գնդի բուժկետ:

Հոդված 352. Զինվորներին և սերժանտներին գնդի բուժկետ է ուղարկում վաշտի հերթապահը՝ վաշտի սանհրահանգչի կամ հիվանդների թվից նշանակված ավագի հրամանատարությամբ: Հիվանդների գրանցման գիրքը (Հավելված 12) վաշտի ավագի ստորագրությամբ ներկայացվում է գնդի բուժկետի հերթապահին ամբուլատոր ընդունելությունն սկսվելուց առնվազն 2 ժամ առաջ:

Բժիշկը հսկում է վաշտի հիվանդների գրքում գրանցված բոլոր զինծառայողների բուժկետ ներկայանալը:

Բժշկի (բուժակի) զինումից հետո հիվանդները բուժման են ուղարկվում գնդի բուժկետ, գնդից դուրս գտնվող բուժօգնության (հոսպիտալ, հիվանդանոց) կամ նրանց նշանակվում է ամբուլատոր բուժում՝ պայմանավորված հիվանդության բնույթով:

Սպաները, ենթասպաները, պայմանագրով ծառայության անցած զինծառայողները և կին զինծառայողները, ըստ բժշկի եզրակացության, բուժումը կարող են ստանալ տանը:

Հիվանդների գնման արդյունքների, ցույց տրված օգնության բնույթի և նշանակումների մասին բժիշկը համապատասխան նշումներ է կատարում բժշկական գրքույկներում, իսկ եզրակացությունները գրանցում է հիվանդների գրանցման գրքում:

Բժշկական օգնություն ստանալուց հետո զինվորները և սերժանտները վերադառնում են վաշտի սանհրահանգչի կամ ավագի հրամանատարությամբ: Անձնախմբի ավագը հիվանդների գրանցման գիրքը հասցնում է վաշտի հրամանատարին: Վաշտի ավագը, ըստ հիվանդների գրանցման գրքում բժշկի գրանցած եզրակացության և վաշտի հրամանատարի համապատասխան որոշման, անհրաժեշտ ցուցումներ է տալիս:

Հոդված 353. Աշխատանքից կամ պարապմունքներից լրիվ կամ մասնակիորեն ազատելու մասին եզրակացությունը տալիս է բժիշկը, իսկ այն գորամասերում, որտեղ հաստիքով բժիշկ չի նախատեսված, բուժակը՝ երեք օրից ոչ ավել ժամկետով: Անհրաժեշտության դեպքում կարելի է կրկին ազատել: Ծառայողական պարտականություններից լրիվ կամ մասնակիորեն ազատելու իրավունքը վերապահվում է գորամասի հրամանատարին (պետին)՝ բժշկի (բուժակի) ախտորոշման հիման վրա:

Ազատման ժամկետը լրանալուց հետո զինվորները և սերժանտները պետք է ուղարկվեն կրկնական բուժզննման, եթե ունեն դրա կարիքը:

Սպաներին, ենթասպաներին, պայմանագրով ծառայության անցած զինծառայողներին, կին զինծառայողներին ծառայողական պարտականություններից ազատելու և հիվանդությունից հետո ծառայության դուրս գալու մասին հայտնվում է գնդի հրամանում:

Ամբուլատոր բուժման նշանակում ստացած հիվանդները դեղորայք ընդունելու և բուժական այլ պրոցեդուրաներ ստանալու համար, ինչպես նաև բուժմասնագետների կոնսուլտացիաների կարիք ունեցողները գնդի բուժկետ են ուղարկվում հիվանդների գրանցման գրքում բժշկի նշած օրերին և ժամերին:

(353-րդ հոդվածը խմբ. 01.06.06 ՀՕ-127-Ն)

Հոդված 354. Դիետիկ սննդի կարիք ունեցող զինվորների և սերժանտների գրանցումը կատարվում է գնդի հրամանով մինչև երեք ամիս ժամկետով՝ գնդի բուժծառայության պետի եզրակացության հիման վրա:

Հոդված 355. Գնդի բուժկետի լազարեթում անցկացվում է հիվանդների ստացիոնար բուժում՝ մինչև 14 օր բուժման ժամկետով, իսկ տարափոխիկ հիվանդությունների դեպքում՝ մինչև բուժման ավարտը՝ պաշտպանության բնագավառում պետական լիազոր մարմնի ղեկավարի հրամանով սահմանված կարգով: Լազարեթ ընդունվելիս՝ հիվանդներն անցնում են սանմշակում:

(355-րդ հոդվածը փոփ., լրաց. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 356. Զինծառայողներին գնդից դուրս բուժման ուղարկում է գնդի հրամանատարը՝ ըստ բժշկի եզրակացության, իսկ անհապաղ օգնության համար՝ բժշկի բացակայության դեպքում՝ բուժկետի

հերթապահ բուժակը՝ միաժամանակ գեկուցելով գնդի բուժծառայության պետին և գնդի հերթապահին:

Հիվանդները բուժհիմնարկ են հասցվում գնդի հերթապահ սանիտարական տրանսպորտով՝ բժշկի (բուժակի) ուղեկցությամբ:

Գնդից դուրս բուժման ուղարկվելու դեպքում զինծառայողները պետք է հագնված լինեն տարվա եղանակին համապատասխան և ունենան ուղեգիր՝ գնդի հրամանատարի ստորագրությամբ, բժշկական գրքույկ, անձը վկայող փաստաթուղթ, անհրաժեշտ անձնական իրեր և պարենի ասեստատ, անհրաժեշտության դեպքում՝ տեղեկանք վնասվածքի մասին և բժշկական բնութագիր:

(356-րդ հոդվածը փոփ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 357. Գնդից դուրս ստացիոնար բուժման ընդունված զինծառայողների մասին, ինչպես նաև ապաքինվելուց հետո նրանց դուրսգրման մասին բուժհիմնարկի (գորամասի) պետը (հրամանատարը) պարտավոր է նույն օրը հաղորդել այն գնդի հրամանատարին, որտեղից եկել են այդ զինծառայողները:

Ընդունված հիվանդի մոտ վարակիչ հիվանդություն հայտնաբերելու դեպքում այդ մասին, և թունավորումներով, վնասվածքներով ընդունված հիվանդների մասին բուժհիմնարկի (գորամասի) պետը (հրամանատարը) պարտավոր է անհապաղ տեղեկացնել այն գնդի հրամանատարին, որտեղից եկել է հիվանդը (հիվանդները), իսկ վարակիչ հիվանդության մասին՝ նաև մոտակա սանիտարահամաճարակային հիմնարկությանը:

Արձակուրդի կամ գործուղման ժամանակ հիվանդացած զինծառայողներին ստացիոնար բուժման են ուղարկում զինվորական պարետները կամ զինվորական կոմիսարները՝ պաշտպանության բնագավառում պետական լիազոր մարմնի ղեկավարի հրամանով սահմանված կարգով:

Ապաքինված զինծառայողները զինվորական հոսպիտալից կամ հիվանդանոցից գունդ են ուղարկվում համապատասխան փաստաթղթերով, որոնք ժամանելուն պես հանձնում են վաշտի ավագին:

Կարգապահական վաշտում տույժ կրող զինծառայողները բժշկական հաստատություն տեղափոխվում և բժշկական հաստատությունից կարգապահական վաշտ վերադարձվում են կարգապահական վաշտի միջոցներով:

(357-րդ հոդվածը լրաց. 14.04.11 ՀՕ-124-Ն, 19.03.13 ՀՕ-20-Ն)

**Բաղնիքավացքային սպասարկումը**

Հոդված 358. Զինվորները և սերժանտները պետք է լողանան բաղնիքում շաբաթական 1 անգամից ոչ պակաս, իսկ խոհարարներն ու հացթուխները, դրանից բացի ամեն օր պետք է ցնցուղ ընդունեն: Մեխանիկ վարորդները (վարորդները) և մյուս զինվորներն ու սերժանտները, որոնք կապված են սպառազինության և զինվորական տեխնիկայի շահագործման ու սպասարկման հետ, ցնցուղ են ընդունում ըստ հարկի:

Բաղնիքում լողանալիս (ցնցուղ ընդունելիս)՝ ժամկետային ծառայության զինծառայողները ապահովվում են օձառով, սրբիչներով և ախտահանված ձիլոպներով:

Բաղնիքում լողանալու ժամանակը որոշվում է նախապես:

Հոդված 359. Վաշտը բաղնիք է գնում վաշտի ավագի հրամանատարությամբ: Ժամկետային ծառայության այն զինծառայողները, որոնք գտնվում են օրվա վերակարգում կամ աշխատանքի վերակարգում և կամ որևէ պատճառով բացակայում են, ինչպես նաև գործուղումներից և արձակուրդից վերադարձները վաշտի ավագի կողմից բաղնիք են ուղարկվում մեկ այլ ժամանակ սերժանտներից նշանակված ավագի հրամանատարությամբ (ղեկավարությամբ):

(մասն ուժը կորցրել է 19.03.13 ՀՕ-20-Ն)

Բաղնիքում կարգուկանոնին հետևելու համար սերժանտներից նշանակվում է բաղնիքի հերթապահ, իսկ անձնակազմի բուժզննումն անցկացնելու և լողանալու համար բուժօգնություն ցույց տալու համար նշանակվում է հերթապահ բուժակ (սանհրահանգիչ):

Լողացողների յուրաքանչյուր հերթից (հերթափոխից) հետո բաղնիքի շինությունները մաքրելու և ախտահանելու համար բաղնիքի հերթապահին ի տնօրինություն նշանակվում են անհրաժեշտ թվով զինվորներ:

(359-րդ հոդվածը փոփ. 19.03.13 ՀՕ-20-Ն)

Հոդված 360. Սպիտակեղենի լվացումը կատարվում է լվացքատներում: Լվացքի կարգը սահմանում է գնդի հրամանատարի՝ թիկունքի գծով տեղակալը:

Այնտեղ, ուր բամբակե գործվածքից համազգեստները հնարավոր չէ լվացքատներում լվանալ, ժամկետային ծառայության զինվորներին թույլատրվում է ինքնուրույն լվանալ դրանք այդ նպատակով առանձնացված և հատուկ կահավորված շինություններում: Համազգեստների չորացումը կատարվում է չորանոցներում կամ դրա համար հատկացված տեղերում:

Ներքին և անկողնու սպիտակեղենը, սրբիչները, ոտքի փաթաթանները և գուլպաները պետք է փոխվեն շաբաթական մեկ անգամ, բաղնիքում լողանալու օրերին, խոհարարների և հացթուխների ներքին սպիտակեղենը փոխվում է շաբաթական առնվազն երկու անգամ: Զինծառայողները ներքին մաքուր սպիտակեղենը, սրբիչները, ոտքի փաթաթանները, գուլպաները ստանում և կեղտոտ սպիտակեղենը հանձնում են անմիջապես բաղնիքում:

Անհրաժեշտության դեպքում սպիտակեղենը, սրբիչները, ոտքի փաթաթանները և գուլպաները կարող են ավելի հաճախ փոխվել:

Հոդված 361. Ներքին և անկողնու սպիտակեղենի հատուկ մշակումը կատարվում է գնդի հրամանատարի հատուկ հրամանով:

**Ե Ր Ր Ո Ր Դ Մ Ա Ս**

**ՄԱՐՏԱԿԱՆ ՀԵՐԹԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ**

**Գ Լ ՈՒ Խ 9**

**ՆԵՐՔԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՀԱՎԱՔԱԿԱՅԱՆՆԵՐՈՒՄ, ՀՐԱՁԳԱՐԱՆՆԵՐՈՒՄ  
(ՃԱՄԲԱՐՆԵՐՈՒՄ) ԶՈՐՔԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԵՎ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ  
ԺԱՄԱՆԱԿ**

Մարտական հերթապահությունը

Հոդված 362. Մարտական հերթապահությունը մարտական առաջադրանքի կատարումն է: Այն իրականացնում են զինված ուժերի տարբեր տեսակների և զորատեսակների զորամասերի ու ստորաբաժանումների նշանակված հերթապահ ուժերը և միջոցները: Հերթապահ ուժերի և միջոցների շարքն են դասվում մարտական

անձնակազմերը, կառավարման կետերի, մարտական ապահովման և սպասարկման ուժերի միջոցների հերթափոխերը:

Հոդված 363. Մարտական հերթապահությունը կազմակերպում են զորամասերի հրամանատարները: Նա պատասխանատու է հերթապահ ուժերի և միջոցների կողմից առաջադրված խնդիրների կատարման համար:

Զորամասերի հրամանատարների տեղակալները, զորատեսակների ու ծառայությունների պետերը պատասխանատու են հերթապահ ուժերի ու միջոցների մարտական պատրաստության ապահովման և նախապատրաստման համար՝ իրենց վերաբերող մասով:

Հոդված 364. Հերթապահ ուժերի ու միջոցների կազմը նրանց մարտական պատրաստության աստիճանը, մարտական հերթապահության տևողությունը, նրա անցկացման կարգը, անձնակազմի, սպառազինության և ռազմական տեխնիկայի՝ մարտական հերթապահության (մարտական ծառայության) անցնելուն նախապատրաստվելու և նրանց փոխվելու կարգը սահմանվում են զորամասի հրամանատարի հրամանով՝ սույն Կանոնագրքի, պետական կառավարման լիազորված մարմնի ղեկավարի (նախարարի), Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետի հրամանների ու դիրեկտիվների պահանջներին համապատասխան:

Հոդված 365. Արգելվում է մարտական հերթապահության նշանակել զինվորական երդում չտված, համապատասխան նախապատրաստության ծրագիրը սահմանված ծավալով չյուրացրած, առողջական խնդիրներ ունեցող զինծառայողներին, ինչպես նաև այն զինծառայողներին, որոնց նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել հրամանատարության հսկողությանը հանձնելը:

Մարտական հերթապահություն կատարելու կապակցությամբ չօգտագործված հանգստյան օրերի փոխարեն զինծառայողներին (բացի ժամկետային ծառայության զինծառայողներից) հանգիստ է տրվում շաբաթվա ընթացքում:

(365-րդ հոդվածը խմբ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 366. Անձնակազմի նախապատրաստումը մարտական հերթապահության կատարվում է ստորաբաժանումների, մարտական

անձնակազմերի, հերթապահ հերթափոխերի կազմում՝ զորամասի հրամանատարի հաստատած պլանի հիման վրա՝ ամեն անգամ հերթապահության անցնելուց առաջ:

Այն անցկացվում է զորամասի հրամանատարի կամ նրա հանձնարարությամբ՝ այլ անձանց կողմից՝ խնդիրների բնույթի ու ծավալի, զորամասի, ստորաբաժանման առանձնահատկությունների, մարտական հերթապահության կատարման տեղի ու ժամանակի հաշվառումով, մարտական հերթապահության նախապատրաստման դասարաններում կամ հատուկ նախապատրաստված տեղերում՝ ուսումնական (ուսումնամարզական) տեխնիկայի, ապարատային, մանրակերտների և ուսումնական ձեռնարկների օգտագործումով:

Սպառազինությունը և ռազմական տեխնիկան պատրաստվում են նախօրոք:

Հերթապահ ուժերի և միջոցների նախապատրաստման բոլոր միջոցառումները ավարտվում են մարտական հերթապահություն կատարելու նրանց պատրաստության ստուգումով: Ստուգման արդյունքները արտացոլվում են մարտական հերթապահության նախապատրաստության հաշվառման մատյանում: Զորամասի հրամանատարը մարտական հրաման է արձակում մարտական հերթապահության անցնելու մասին:

Հոդված 367. Մարտական հերթապահության անցնելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարը:

(367-րդ հոդվածը փոփ. 01.06.06 ՀՕ-127-Ն)

Հոդված 368. Մարտական հերթապահության անցնելու մասին հերթապահ ուժերի և միջոցների հրամանատարը (օպերատիվ հերթապահը, հերթափոխի անձնակազմի պետը, հրամանատարական կետի հերթապահը) զեկուցում է իր անմիջական պետին և կառավարման վերադաս կետին: Հերթապահ ուժերի և միջոցների հրամանատարը (օպերատիվ հերթապահը, հերթափոխի անձնակազմի պետը, հրամանատարական կետի հերթապահը) պարտավոր են մանրամասն գիտենալ իրադրությունը, գործել համարձակ և վճռականորեն և ապահովել մարտական խնդրի կատարումը:

Հոդված 369. Մարտական հերթապահության ընթացքում հերթապահ հերթափոխի հետ անցկացվում են առանձին և համալիր մարզումներ

(որոնց մի մասը ստուգողական) հերթապահ ուժերի և միջոցների հրամանատարների (օպերատիվ հերթապահների, հերթափոխների անձնակազմների պետերի, հրամանատարական կետի հերթապահների), և ավագ պետերի ղեկավարությամբ:

Բացի այդ, մարտական հերթապահության խնդիրների անմիջական կատարումից ազատ հերթապահ հերթափոխների անձնակազմների հետ պարապմունքներ են անցկացվում ըստ զորամասի շտաբի պետի հաստատած կարգացուցակի:

Հոդված 370. Հերթապահ ուժերի և միջոցների հրամանատարներին (օպերատիվ հերթապահներին, հերթափոխների անձնակազմների պետերին, հրամանատարական կետերի հերթապահներին) արգելվում է անձնակազմին տալ այնպիսի հրամաններ, որոնք շեղում են նրան մարտական հերթապահության իր պարտականությունների կատարումից և կարող են հանգեցնել մարտական առաջադրանքի խափանման:

Մարտական հերթապահության ժամանակ հերթապահ հերթափոխի անձնակազմին արգելվում է՝

որևէ մեկին, թեկուզ ժամանակավորապես, հանձնել մարտական հերթապահության պարտականությունների կատարումը առանց հերթապահ ուժերի և միջոցների հրամանատարի (օպերատիվ հերթապահի, հերթափոխի անձնակազմի պետի, հրամանատարական կետի հերթապահի) թույլտվության:

Չեղվել, զբաղվել այնպիսի գործերով, որոնք կապված չեն մարտական հերթապահության կատարման պարտականությունների հետ:

ինքնակամ լքել մարտական պահակակետը կամ մարտական հերթապահության այլ դիրքեր:

սպառազինության և ռազմական տեխնիկայի վրա նրանց սահմանված պատրաստությունն իջեցնող աշխատանք կատարել:

Այն զորամասերում (ստորաբաժանումում), որից առանձնացվում են հերթապահ ուժերն ու միջոցները, անձնակազմի արձակումը զորամասի տարածքից, պարապմունքները, մարզական և կուլտուր-զանգվածային միջոցառումները անցկացվում են այն հաշվով, որպեսզի անհրաժեշտության դեպքում սահմանված ժամկետներում ապահովվի հերթապահ հերթափոխների ուժեղացումը:

Հոդված 371. Պաշտոնատար անձանց կողմից մարտական հերթապահության ստուգման պարբերականությունը սահմանում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարը:

Մարտական հերթապահության կատարման ստուգումն իրականացվում է զորամասի հրամանատարի, նրա անմիջական պետերի կամ նրանց հանձնարարությամբ՝ այլ անձանց կողմից և այդ նպատակով մշակվում է մարտական հերթապահության ստուգման պլան:

Մարտական հերթապահության հերթափոխից հետո կատարվում է անձնակազմի ծառայության վերլուծությունը, և նրա վիճակը նշվում է զորամասի հրամանատարի հրամանում:

(371-րդ հոդվածը փոփ. 01.06.06 ՀՕ-127-Ն)

## **Գ Լ ՈՒ Խ 10**

### **ՆԵՐՔԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՎԱՔԱԿԱՅԱՆՆԵՐՈՒՄ**

Ընդհանուր դրույթներ

Հոդված 372. Հավաքակայան է կոչվում այն տարածքը, որը սարքավորված է սպառազինությունը և ռազմական տեխնիկան պահպանելու, սպասարկելու, նորոգելու և մարտական պատրաստության բերելու համար:

Հավաքակայանները կարող են լինել մշտական և դաշտային:

Մշտական հավաքակայանները սարքավորվում են գնդի մշտական տեղակայման վայրերում և հրաձգարաններում (ճամբարներում): Ընդ որում, սպառազինությունն ու ռազմական տեխնիկան տեղավորվում են փակվող պահեստարաններում կամ ծածկերի տակ, ինչպես նաև հուսալի պարիսպներով հրապարակներում: Հավաքակայաններում սարքավորվում են՝ հսկիչ-տեխնիկական կետ՝ հավաքակայանում հերթապահի, հսկիչ-տեխնիկական կետի պետի, երթևեկության անվտանգության դասարանի, վարորդների հրահանգավորման, մեքենաների ավագի և հավաքակայանի վերակարգի համար նախատեսված շինություններով լիցքավորման կետ, մաքրման և լվացման կետ, ամենօրյա տեխնիկական սպասարկման կետ, սպառազինության և ռազմական տեխնիկայի պահատեղեր և մարտական օգտագործման համար նրանց պատրաստության



ապահովման օբյեկտներ, տեխնիկայի սպասարկման համար այլ շինություններ (տեղեր) և անհրաժեշտ կենցաղային շինություններ:

Դաշտային հավաքակայանները կազմակերպվում են դաշտային պայմաններում զորամասի (ստորաբաժանման) ժամանակավոր դիրքավորմանը կից: Դրանք կազմակերպվում են սովորաբար յուրաքանչյուր գումարտակի (վաշտի) համար:

Հավաքակայանների կառուցվածքն ու սարքավորումը պետք է ապահովեն մեքենաների արագ և հարմար ելքը:

Հոդված 373. Հավաքակայանի տարածքը բաժանվում է հատվածների, որոնք կցվում են ստորաբաժանումներին: Այդ հատվածների սահմանները նշվում են ցուցանշաններով: Մշտական հավաքակայանի տարածքը պատրաստվում և սարքավորվում է պաշտպանության տեխնիկական միջոցներով, շրջապատող միջավայրի պաշտպանության կանոնների և նորմերի պահպանումն ապահովող սարքերով, կանաչապատվում է և լուսավորվում:

Հավաքակայանների բոլոր շենքերը, շենքերի և հավաքակայանի դարպասները համարակալվում են:

Հոդված 374. Պետք է կառուցվեն և շարժման համար մշտապես պիտանի պահվեն դեպի հավաքակայան և նրա ներսում տեղակայված շինություններն ու կառույցները տանող ճանապարհներ և հարմար մատույցներ:

Ամռանը չոր եղանակին ճանապարհները ջրվում են, իսկ ձմռանը՝ մաքրվում ձյունից:

Հավաքակայանի տարածքում ճանապարհներից դուրս քայլելն ու երթևեկելն արգելվում է:

Հավաքակայանի բոլոր ճանապարհներին տեղակայվում են մեքենաների շարժման ուղղության և արագության ցուցանշաններ և ճանապարհային ուրիշ նշաններ:

Հոդված 375. Հավաքակայանում ներքին ծառայության կազմակերպման, սպառազինության և ռազմական տեխնիկայի, հատուկ շինությունների, պահեստների ճիշտ պահպանման, մաքրության պահպանման, հակահրդեհային և բնապահպանական միջոցառումների անցկացման համար պատասխանատու է գնդի հրամանատարի սպառազինության գծով տեղակալը, իսկ այնտեղ, ուր այդ պաշտոնը հաստիքով նախատեսված չէ՝ ավտոմոբիլային

ծառայության պետը կամ գնդի տեխնիկական ծառայություններից մեկի պետը:

Ստորաբաժանումներին կցված սպառազինության, ռազմական տեխնիկայի շինությունների և հավաքակայանների տարածքների պահպանման համար պատասխանատու են ստորաբաժանումների հրամանատարները:

Հոդված 376. Մեքենաների տեխնիկական սպասարկումը կատարվում է նրանց յուրաքանչյուր ուղերթից հետո, ինչպես նաև նորմատիվներով սահմանված վազքից (բավականաչափ աշխատելուց) և պահպանումից հետո: Բացի այդ, կատարվում է նաև մեքենաների սեզոնային տեխնիկական սպասարկում:

Սպառազինության և ռազմական տեխնիկայի զննումն ու սպասարկումը, ինչպես նաև հավաքակայանների լրասարքավորումն ու բարեկարգումը կատարվում են հավաքակայանային, տնտեսական օրերին և սպառազինության ու ռազմական տեխնիկայի խնամքին հատկացված ժամանակ:

Սպասարկված սպառազինությունն ու ռազմական տեխնիկան կանգնեցվում է կայանատեղերում: Տարվա ցուրտ եղանակին չջեռուցվող պահեստարաններում և հավաքակայանի բաց հրապարակներում օդի ցածր ջերմաստիճանի պայմաններում շարժիչների հովացման համակարգից դատարկվում է ջուրը, սպառազինության և ռազմական տեխնիկայի վրայից հանվում են ակումուլյատորային մարտկոցները: Այդ դեպքում կախվում են ցուցանակներ՝ «Ջուրը դատարկված է» և «Ակումուլյատորային մարտկոցները հանված են» մակագրությամբ:

Արգելվում է կայանատեղերում կանգնեցնել չսպասարկված սպառազինությունն ու ռազմական տեխնիկան:

Չի թույլատրվում մեքենաները պահել հավաքակայանից դուրս, բացառությամբ այն մեքենաների, որոնք բեռնված են ռազմամթերքով և այլ նյութական միջոցներով և գտնվում են պահեստների տարածքում պահակախմբի հսկողության տակ:

Սպառազինության և ռազմական տեխնիկայի ստուգատեսի անցկացման ժամանակ գնդի հրամանատարն անցկացնում է նաև հավաքակայանների վիճակի ստուգում:

Հոդված 377. Մեքենաները հավաքակայանից դուրս են թողնվում ըստ գնդի հրամանատարի՝ նախապես հաստատված մեքենաների

օգտագործման կարգազրույց, տեխնիկապես սարքին վիճակում և սպասարկված, նրանց կցված վարորդներով, որոնք ունեն վարորդի անձը վկայող փաստաթուղթ և մեքենա վարելու իրավունք, անցել են նախուղերթային բժշկական ստուգում և ունեն ուղերթի ելնելու թույլտվություն, ձևակերպված ուղեգրեր, որոնք ստորագրված են գնդի հրամանատարի՝ սպառազինության գծով տեղակալի (սպառազինության և ռազմական տեխնիկայի շահագործման համար պատասխանատու պաշտոնատար անձի) կողմից և ունեն հսկիչ-տեխնիկական կետի պետի նշումը մեքենայի սարքին վիճակի մասին, ինչպես նաև հավաքակայանի հերթապահի նշումը արագաչափի ցուցումների և մեքենան հավաքակայանից դուրս թողնելու ժամանակի մասին:

Մեքենաների օգտագործումը պլանավորվում է մեքենաների սպասարկման, դրանք ուղերթին նախապատրաստելու և հանգստի համար վարորդներին ժամանակ հատկացնելու հաշվառումով:

Վերակարգով չնախատեսված մեքենաների բացթողումն իրականացվում է բացառիկ դեպքերում և միայն գնդի հրամանատարի թույլտվությամբ:

Հանգստյան և տոնական օրերին հավաքակայանից մեքենաների բացթողումը հասցվում է մինիմումի:

(377-րդ հոդվածը փոփ., լրաց. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 378. Երկու և ավելի մեքենաների ուղերթ դուրս գալու դեպքում նշանակվում է շարայան պետ:

Թե՛ շարայան կազմում և թե՛ առանձին մեքենաներով մարդկանց և պայթուցավտանգ բեռների տեղափոխման դեպքում յուրաքանչյուր մեքենայի համար նշանակվում է մեքենայի ավագ: Այլ դեպքերում մեքենաների ավագները նշանակվում են ըստ անհրաժեշտության՝ գնդի հրամանատարի որոշմամբ:

Շարայան պետը (մեքենայի ավագը) նշանակվում է ճանապարհային երթևեկության կանոններն իմացող սպաներից, ենթասպաներից կամ սերժանտներից: Նա պատասխանատու է առաջադրված խնդրի լուծման և մեքենայի (մեքենաների) ճիշտ շահագործման, մեքենայում (մեքենաներում) գտնվող անձնակազմի կարգապահության, նրա կողմից անվտանգության պահպանման համար:

Շարայան պետը (մեքենայի ավագը) պարտավոր է՝

- նախքան մեքենայի (մեքենաների) շարժվելը ստուգել մարդկանց նստեցման և բեռի բեռնման կանոնների պահպանումը, վերահսկել կարգուկանոնը նստեցման (բեռնման), իջեցման (բեռնաթափման) և մեքենաներում (մեքենայում) անձնակազմի տեղավորման ժամանակ:

- մեքենայի (մեքենաների) ընթացքի ժամանակ հետևել երթուղու, ինչպես նաև շարժման սահմանված արագության պահպանման, վարորդի (վարորդների) կողմից ճանապարհային երթևեկության կանոնների կատարմանը, իսկ մեքենաներում գտնվող անձնակազմի կողմից զինվորական կարգապահության անվտանգության պահանջների կատարմանը:

Շարայան պետին (մեքենայի ավագին) արգելվում է վարել մեքենան կամ ստիպել վարորդին՝ դեկը ուրիշին հանձնել, արձակել այնպիսի հրամաններ, որոնք հարկադրում են վարորդին խախտել ճանապարհային երթևեկության կանոնները կամ գերազանցել սահմանված արագությունը:

Շարայանների պետերը (մեքենաների ավագները) տվյալ փոխադրումը կազմակերպող անձինք կամ իրենց անմիջական պետերը հրահանգավորում են առաջադրանքների կատարման նպատակների, կարգի և ժամկետների մասին, ինչպես նաև երթևեկության անվտանգության պահանջների կատարման վերաբերյալ: Բացի այդ, ստորաբաժանումների հրամանատարները մեքենաների վարորդներին հրահանգավորում են մեքենաների շահագործման կանոնների պահպանման, ճանապարհային երթևեկության կանոնների և ուղերթում նրանց վարքագծի մասին:

Վարորդներին կտրականապես արգելվում է մեքենայի դեկը հանձնել որևէ մեկին:

Հոդված 379. Մեքենաների նախապատրաստումը ուղերթ դուրս գալուն իրականացվում է ստորաբաժանումների հրամանատարների կամ սպառազինության գծով նրանց տեղակալների (տեխնիկական մասի պետերի, ավտոմոբիլային ծառայության պետերի, ավագ տեխնիկների կամ վաշտերի տեխնիկների) ղեկավարությամբ:

Հավաքակայանից դուրս եկող և հավաքակայան վերադարձող մեքենաների տեխնիկական վիճակի հսկողությունն իրականացնում է հսկիչ-տեխնիկական կետի պետը:

Հոդված 380. Հավաքակայանի ներքին կարգուկանոնը և աշխատանքի կարգուկանոնը հայտնվում են գնդի հրամանում

(Հավելված 11): Հրամանով չնախատեսված ժամերին հավաքակալայան մտնելու և այնտեղ աշխատելու իրավունքը տալիս է միայն գնդի հրամանատարը:

Հոդված 381. Հավաքակալայանում աշխատանքի և պարապմունքների համար սահմանված ժամերին անձնակազմի մուտքը հավաքակալայան թույլատրվում է միայն շարքով՝ սպաների, ենթասպաների կամ սերժանտների հրամանատարությամբ:

Աշխատանքի համար սահմանված ժամերին տվյալ գնդի սպաների, ենթասպաների, պայմանագրով ծառայության անցած զինծառայողների և կին զինծառայողների մուտքը հավաքակալայան թույլատրվում է անձնական վկայականներով: Ծառայողական կարիքներով հավաքակալայան միայնակ եկած սերժանտների և զինվորների մուտքը հավաքակալայան թույլատրվում է զինվորական գրքույկներով՝ գնդի հրամանատարի՝ սպառազինության գծով տեղակալի թույլտվությամբ, ինչի մասին վերջինս տեղեկացնում է հավաքակալայանի հերթապահին:

Մեքենաները դուրս բերելու եկած անձնակազմի (վարորդների) մուտքը հավաքակալայան թույլատրվում է ներկայացվող ուղեգրերով:

Գնդի կազմի մեջ չմտնող անձինք հավաքակալայան կարող են մտնել միայն գնդի հրամանատարի՝ սպառազինության գծով տեղակալի ստորագրած միանգամյա անցաթղթերով և հատուկ նշանակված զինծառայողի ուղեկցությամբ:

Հավաքակալայանում գտնվող մեքենաներին և ռազմական տեխնիկային մոտենալու իրավունք ունեն միայն նրանց կցված զինծառայողները՝ պահեստարանները և հավաքակալայանի շինությունները բացելու իրավունք ունեցող անձանց թույլտվությամբ:

Տագնապի դեպքում մեքենաներին և ռազմական տեխնիկային մոտենալու կարգը սահմանում է գնդի հրամանատարը և շարադրվում համապատասխան հրահանգներում:

Հոդված 382. Մեքենաների վառոցների, մեքենաների լյուկերի, հավաքակալայանների շինությունների և հավաքակալայանի դարպասների բանալիների պահպանման կարգը պետք է ապահովի հավաքակալայանից մեքենաների ժամանակին դուրս գալը, ինչպես նաև բացառի անձնակազմի կողմից դրանց ինքնակամ օգտագործման դեպքերը:

Բանալիները պահվում են.

մեքենաների վառոցքի, փականների և լյուկերինը՝ մի լրակազմը հավաքակալայանի հերթապահի մոտ, մյուսը՝ վաշտի (գումարտակի, ապահովման ստորաբաժանումների) հերթապահի մոտ՝ կնքված արկղում, ուղեգրերի հետ միասին, տագնապի ազդարարման դեպքերի համար.

հավաքակալայանի շինություններինը և մուտքի դարպասներինը, մի լրակազմը՝ հավաքակալայանի հերթապահի մոտ, մյուսը՝ գնդի հերթապահի մոտ՝ կնքված արկղում:

(382-րդ հոդվածը փոփ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 383. Հավաքակալայանում ներքին կարգուկանոնի պահպանման համար նշանակվում են հավաքակալայանի հերթապահ, օրապահներ և հերթապահ քարշակների մեխանիկ-վարորդներ (վարորդներ):

Հավաքակալայանի հերթապահը օրապահներին կանգնեցնում է հավաքակալայանի մուտքերի մոտ, իսկ աշխատանքների կատարման ընթացքում՝ նաև հավաքակալայանի տարածքում:

Մշտական և դաշտային հավաքակալայանները շուրջօրյա հսկվում են պահակության կողմից՝ ժամապահներ դնելով: Պահակության հուսալիորեն գործող տեխնիկական միջոցներով հավաքակալայանները սարքավորելու դեպքում դրանք կարող է հսկել պահակություն՝ առանց ժամապահներ դնելու:

Հոդված 384. Սպառազինության և ռազմական տեխնիկայի բոլոր պահեստարանների և հրապարակների կնքման (կապարակնքման) կարգը, ինչպես նաև պահպանության հսկողությունը հանձնելուց հետո հավաքակալայան եկած սպառազինության և ռազմական տեխնիկայի պահպանման կարգը սահմանում է գնդի հրամանատարը:

Հավաքակալայանի հերթապահը

Հոդված 385. Գնդի հավաքակալայանի հերթապահը նշանակվում է սպաներից, ենթասպաներից, իսկ առանձին գումարտակում կարող է նշանակվել ենթասպաներից կամ սերժանտներից: Նա պատասխանատու է հավաքակալայանում ներքին կարգուկանոնի պահպանման և վերակարգի ծառայության համար: Հավաքակալայանի հերթապահը ենթարկվում է գնդի հերթապահին, հավաքակալայանում ներքին ծառայության կարգով՝ գնդի հրամանատարի

սպառազինության գծով տեղակալին, իսկ այնտեղ, ուր այդ պաշտոնը հաստիքով նախատեսված չէ՝ ավտոմոբիլային ծառայության պետին կամ գնդի տեխնիկական ծառայություններից մեկի պետին:

Նրան են ենթարկվում հավաքակայանի օրապահները և հերթապահ քարշակների մեխանիկ-վարորդները (վարորդները):

Հոդված 386. Հավաքակայանի նոր հերթապահը նշանակված ժամին հրահանգավորման համար ներկայանում է գնդի հրամանատարի՝ սպառազինության գծով տեղակալին:

Հերթափոխումից հետո հավաքակայանի նոր հերթապահը հին հերթապահից ընդունում է փաստաթղթերը և ունեցվածքը (Հավելված 10), նրա հետ շրջում հավաքակայանի տարածքում, նրա բոլոր շինություններում և ընդունում հավաքակայանի կնքված շինությունները, պահեստները, ինչպես նաև բաց հրապարակներում և ծածկերի տակ գտնվող սպառազինությունը, ռազմական տեխնիկան ու սարքավորումը:

Հերթապահության հանձնման-ընդունման գրքում նա գրանցում է այն թերությունները, որոնք չեն կարող վերացվել՝ հերթապահությունն ընդունելիս:

Հերթապահության հանձնման-ընդունման մասին հին և նոր հերթապահները զեկուցում են գնդի հրամանատարի՝ սպառազինության գծով տեղակալին և գնդի հերթապահին:

Հոդված 387. Հավաքակայանի հերթապահը պարտավոր է՝

- գտնվել իրեն հատկացված շինությունում, գնդի հերթապահի թույլտվությամբ ծառայողական գործերով որևէ տեղ գնալիս իր փոխարեն թողնել ազատ հերթապահի օրապահին և հայտնել նրան՝ ուր և որքան ժամանակով է գնում.

- մանրակրկիտ ստուգել հավաքակայան եկած անձանց անցաթղթերն ու անձը վկայող (հաստատող) փաստաթղթերը, միանգամայն անցաթղթերի վրա նշումներ կատարել հավաքակայան գալու և այնտեղից գնալու ժամի մասին, հերթափոխը հանձնելուց հետո անցաթղթերը հանձնել գնդի տեխնիկական մաս.

- հավաքակայանի շինությունների և պահեստների բացումը թույլատրել գնդի հրամանով նշանակված անձանց՝ այդ մասին գրանցումներ կատարելով համապատասխան գրքերում, ներկա գտնվել դրանք բացելու ժամանակ.

- անձամբ թույլատրել հավաքակայանից մեքենաների դուրս գալն ու նրանց երթնեկությունը հավաքակայանի ներսում.

- սահմանված կարգով վարել մեքենաների ելքի և վերադարձի մատյանը.

- հետևել, որպեսզի մեքենաները ուղերթերից ժամանակին վերադառնան, ուշանալու դեպքում զեկուցել գնդի հերթապահին.

- վերահսկել հավաքակայանի գույքի դուրսբերումը կամ ներսբերումը հավաքակայան՝ ուղեգրում կատարված նշումներին համապատասխան, ինչպես նաև հետևել, որպեսզի չթույլատրվի կողմնակի անձանց մուտքը հավաքակայանի տարածք.

- հսկել հավաքակայանում օրվա կանոնակարգի կատարումը և հետևել, թե որ ստորաբաժանումները ինչ աշխատանք են կատարում այնտեղ, թույլ չտալ մեքենաների, այլ տեխնիկայի կամ սարքավորումների նորոգման և սպասարկման հետ կապ չունեցող աշխատանքների կատարումը հավաքակայանում.

- մշտապես գիտենալ սարքին և անսարք մեքենաների, այլ տեխնիկայի և սպառազինության առկայությունը, ծախսը, քանակը.

- հետևել մաքրությանն ու կարգուկանոնին հավաքակայանի շինություններում և տարածքում, ինչպես նաև հետևել շրջակա միջավայրի պահպանության կանոնների կատարմանը.

- տարվա ցուրտ եղանակներին հետևել հավաքակայանի շինություններում և ջրայուղատաքացուցիչում վառարանները ժամանակին և ճիշտ վառելուն և բոլոր շինություններում սահմանված ջերմաստիճանը պահելուն, չջեռուցվող պահեստարաններում և հավաքակայանի բաց հրապարակներում ստուգել՝ դատարկված է արդյոք ջուրը շարժիչների հովացման համակարգերից, իսկ ուժեղ ցրտերին, դրանից բացի, մեքենաներից հանված են, արդյոք ակումուլյատորային մարտկոցները և կախված են, արդյոք, համապատասխան ցուցանակներ.

- հետևել հրդեհային անվտանգության պահանջների կատարմանը (Հավելված 16) և ստուգել հրդեհամարման և հրդեհային ազդանշանման միջոցների առկայությունն ու վիճակը, ինչպես նաև հերթապահ քարշակների պատրաստ լինելը հրդեհի դեպքում.

- միջոցներ ձեռնարկել հավաքակայան վերադարձած մեքենաների և այլ տեխնիկայի ժամանակին տեխսպասարկման համար.

- թույլ չտալ կայանատեղերում կանգնեցնելու չլիցքավորված մեքենաներ.

- հետևել, որպեսզի երեկոյան բոլոր աշխատանքների ավարտից հետո հավաքակայանի շինություններում հանգցվի լույսը և թողնվի միայն հերթապահ լուսավորումը, իսկ հավաքակայանի դրսի լուսավորումն միացվի:

- ստուգել տեխնիկական թունավոր հեղուկների պահպանման համար նախատեսված շինությունների (ցանկապատված հարթակների) դռների կողպեքների և կապարակնիքների (պլոմբների) առկայությունն ու սարքինությունը:

- անմիջական պետերի՝ սկսած գնդի հրամանատարից և ավելի բարձր, ինչպես նաև գնդի հերթապահի՝ հավաքակայան գալու դեպքում դիմավորել նրանց և զեկուցել:

Օրինակ՝ «Պարո՛ն մայր, իմ հերթապահության ժամանակ պատահարներ չեն եղել (կամ եղել է այս, այն...): Հավաքակայանի հերթապահ՝ լեյտենանտ Հարությունյան»:

Զեկույցն ավարտելուց հետո հերթապահը հավաքակայանի տարածքում ուղեկցում է եկած հրամանատարին (պետին):

Այն դեպքում, երբ եկած հրամանատարին (պետին) դիմավորում է գնդի հրամանատարը կամ սպառազինության գծով նրա տեղակալը և զեկուցում է նրան, հավաքակայանի հերթապահը զեկույց չի տալիս, այլ միայն ներկայանում է:

(387-րդ հոդվածը փոփ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 388. Հավաքակայանի հերթապահը մեքենաները հավաքակայանից դուրս է թողնում 375 հոդվածում նշված կարգով:

Մեքենայի հավաքակայան վերադառնալուց և հսկիչ տեխնիկական կետի պետի կողմից ստուգվելուց հետո հավաքակայանի հերթապահը ուղեգրում և մեքենաների ելքի ու վերադարձի մատյանում գրանցում է կատարում վերադարձի ժամանակի, արագաչափի ցուցմունքների մասին և երբ մեքենան ամբողջապես սպասարկվում ու լիցքավորվում է, այն ուղարկում է կայանատեղ կամ կազմակերպում դրա պահպանումը սահմանված կարգով, որից հետո մեքենայի անձնակազմին (վարորդին) թույլ է տալիս հեռանալ հավաքակայանից:

Հոդված 389. Հավաքակայանում հրդեհ բռնկվելու դեպքում հավաքակայանի հերթապահն անմիջապես հրշեջ խումբ է կանչում, միջոցներ է ձեռնարկում հրդեհը մարելու, մեքենաները դուրս բերելու և սպառազինությունը, ռազմական տեխնիկան ու նյութական այն միջոցները փրկելու համար և կատարվածի մասին զեկուցում գնդի

հերթապահին, գնդի հրամանատարին և սպառազինության գծով նրա տեղակալին:

Հոդված 390. Հավաքակայանում աշխատանքների ավարտից հետո հավաքակայանի հերթապահն ստուգում է, որպեսզի բոլոր շինություններում և հավաքակայանի տարածքում կատարվեն հրդեհային անվտանգության և շրջակա միջավայրի պահպանության պահանջները, կարգուկանոն հաստատվի, ստորաբաժանումների հրամանատարներից ընդունում է հավաքակայանի շինությունները, պահեստները, հարթակները, դրանք կնքելու թույլտվություն է տալիս և ինքը լրացուցիչ կնքում է դրանք կնիքով: Հրշեջ վերակարգի անձանց հետ համատեղ հավաքակայանն ստուգելուց և հրդեհային մետաղանիշ (ժետոն) ստանալուց հետո նա հավաքակայանը հանձնում է զինված պահակախմբի պահպանմանը:

Հավաքակայանի օրապահը

Հոդված 391. Հավաքակայանի օրապահը նշանակվում է զինվորների կամ սերժանտների կազմից: Նա պատասխանատու է հավաքակայանում սահմանված կարգուկանոնի պահպանման, մեքենաները հավաքակայանից դուրս թողնելու և դրանք ներս ընդունելու ճշտության համար: Հավաքակայանի օրապահը ենթարկվում է հավաքակայանի հերթապահին:

Հոդված 392. Հավաքակայանի օրապահը պարտավոր է՝

- զինձառայողներին, մեքենաները և այլ տեխնիկական հավաքակայանից դուրս թողնել և ներս ընդունել միայն հավաքակայանի հերթապահի թույլտվությամբ:

- հավաքակայանում հետևել մաքրությանն ու կարգուկանոնին:

- հավաքակայանի շինություններում և տարածքում թույլ չտալ ծխել և կրակ վառել, բացառությամբ դրա համար հատուկ հատկացված և սարքավորված տեղերի:

- հետևել, որպեսզի մեքենաները կայանատեղերից դուրս բերվեն (կայանատեղերում կանգնեցվեն) միայն գնդի հերթապահի թույլտվությամբ:

- հրդեհ բռնկվելու դեպքում անմիջապես զեկուցել հավաքակայանի հերթապահին և այն հանգցնելու միջոցներ ձեռնարկել:

- հավաքակայանում կարգուկանոնի խախտման դեպքերի մասին անմիջապես զեկուցել հավաքակայանի հերթապահին:

Հոդված 393. Հերթական օրապահը կանգնեցվում է հավաքակայանի մուտքի մոտ, իսկ ազատ հերթափոխի օրապահը հավաքակայանում աշխատանքի ժամերին գտնվում է նրա տարածքում և հետևում ներքին կարգուկանոնին, հրդեհային անվտանգության պահանջների կատարմանը և ոչ մի տեղ չի գնում առանց հավաքակայանի հերթապահի թույլտվության:

#### Հերթապահ քարշակի մեխանիկ-վարորդը (վարորդը)

Հոդված 394. Հերթապահ քարշակի մեխանիկ-վարորդը (վարորդը) նշանակվում է ստորաբաժանումների մեխանիկ-վարորդներից (վարորդներից) և պատասխանատու է սպառազինության ու ռազմական տեխնիկայի էվակուացմանը հերթական քարշակի մշտական պատրաստության համար: Նա ենթարկվում է հավաքակայանի հերթապահին:

Հոդված 395. Հերթապահ քարշակի մեխանիկ-վարորդը (վարորդը) պարտավոր է՝

- մշտապես գտնվել հավաքակայանի օրվա վերակարգի անձանց համար նախատեսված շինությունում:

- գիտենալ հավաքակայանի շինություններից սպառազինության, ռազմական տեխնիկայի և նյութական այլ միջոցների էվակուացման համար հերթապահ քարշակի օգտագործման կանոններն ու կարգը:

- հետևել քարշակի վրա կցաքարշի և սպառազինության ու ռազմական տեխնիկայի էվակուացման միջոցների առկայությանն ու սարքին վիճակին:

- պահպանել հերթապահ քարշակի շարժիչի սահմանված ջրային ռեժիմը, որն ապահովի քարշակի արագ և անխափան գործարկումը ցածր ջերմաստիճանների պայմաններում:

- հավաքակայանում հրդեհի բռնկման դեպքում գործի զցել հերթապահ քարշակը և հավաքակայանում հերթապահի ցուցումով ձեռնամուխ լինել սպառազինության, ռազմական տեխնիկայի ու նյութական ուրիշ միջոցների էվակուացմանը:

#### Գ Լ ՈՒ Խ 11

### ՆԵՐՔԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՐԱԶԳԱՐԱՆՆԵՐՈՒՄ (ՃԱՄԲԱՐՆԵՐՈՒՄ) ԶՈՐՔԵՐԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

#### Ընդհանուր դրույթներ

Հոդված 396. Զորքերը հրաձգարաններ (ճամբարներ) են դուրս գալիս, որպեսզի մարտական իրադրությանն առավելագույն մոտեցված պայմաններում բարձրացվի անձնակազմի դաշտային վարժաուսուցման մակարդակը, ամրապնդվեն նրա բարոյամարտական հատկանիշները և ֆիզիկական պատրաստությունը, զինվորական պարտքի կատարումը:

Զորքերի հրաձգարան դուրս գալու կարգը սահմանվում է մարտական պատրաստության պլանով կամ ավագ հրամանատարի (պետի) հրամանով:

Հոդված 397. Հրաձգարանում (ճամբարում) գտնվելու ժամանակ ներքին ծառայությունը գնդում և նրա ստորաբաժանումներում կազմակերպվում է ըստ Կանոնագրքի երկրորդ մասի և սույն գլխի դրույթների:

Գնդի հրամանատարը, սահմանելով օրվա կանոնակարգը, զինծառայողների ծառայողական ժամանակի ռեգլամենտը, հրաձգարանից (ճամբարից) ժամկետային ծառայության զինվորների և սերժանտների արձակման կարգը և ներքին կարգուկանոնի ուրիշ դրույթներ, պետք է հաշվի առնի ստորաբաժանումների խնդիրները վարժաուսուցման բարձրացման ուղղությամբ, նրանց դիրքավորման առանձնահատկությունները, ինչպես նաև ավագ հրամանատարի (պետի) հրաձգարանում (ճամբարում) սահմանած ընդհանուր կանոնները:

Հոդված 398. Հրաձգարանում (ճամբարում) տարբեր զորամիավորումների, զորամասերի (ստորաբաժանումների) հավաքների անցկացման ժամանակ ներքին ծառայությունը ղեկավարելու համար ավագ հրամանատարը (պետը) նշանակում է ճամբարային հավաքի պետ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև պաշտոնատար այլ անձինք:

Ճամբարային հավաքի պետը պատասխանատու է մարտական պատրաստության կազմակերպման և ընթացքի, անձնակազմի զինվորական կարգապահության և բարոյաեզրափակման վիճակի համար, ինչպես նաև հավաքում ներգրավված զորամասերում ներքին կարգուկանոնի ու նրանց կողմից շրջակա միջավայրի պահպանման պահանջների կատարման համար: Նա հավաքի բոլոր զորամասերի (ստորաբաժանումների) անմիջական պետն է: Ճամբարային հավաքի պետն իր պարտականությունները կատարում է ինչպես գնդի հրամանատարը՝ սույն գլխի առնչությամբ:

Հոդված 399. Ճամբարային հավաքի պետի հրամանով օրվա վերակարգ է նշանակվում ճամբարային հավաքի հերթապահը, որն իր պարտականությունները կատարում է գնդի հերթապահի պարտականություններին համապատասխան:

Հոդված 400. Հրաձգարանում գունդը (ստորաբաժանումը) տեղավորվում է շինություններում կամ ճամբարի ձևով (վրաններում): Մի քանի զորամասերի կամ տարբեր զորամիավորումների (զորամասերի) ստորաբաժանումների միաժամանակյա տեղավորման դեպքում տարածքը և շինությունները նրանց միջև բաժանում են ավագ հրամանատարը (պետը) կամ ճամբարային հավաքի պետը:

Շտաբները, բուժկետերը, արհեստանոցները, պահեստները, թիկունքի ծառայությունները (օբյեկտները) տեղավորվում են առավելապես շինություններում: Սպառազինությունն ու ռազմական տեխնիկան տեղավորվում են դաշտային հավաքակայանների պահեստարաններում և ծածկերի տակ, իսկ դրանց բացակայության դեպքում ծածկվում են ծածկոցներով կամ բրեզենտով:

Հոդված 401. Հրաձգարանի (ճամբարի) սահմանները, որոնցից այն կողմ անձնակազմին արգելվում է դուրս գալ, հայտարարվում են գնդի հրամանում:

Կողմնակի անձանց մուտքը հրաձգարան (ճամբար) կատարում է գնդի հրամանատարը սահմանաձև կանոններին համապատասխան՝ ըստ 258-261 հոդվածների պահանջների:

Հոդված 402. Հրաձգարաններում (ճամբարներում) բաց ջրամբարներում անձնակազմի լողանալու կարգը սահմանում է գնդի հրամանատարը (ճամբարային հավաքի պետը):

Լողանում են այդ նպատակի համար հատուկ հատկացված և համապատասխան ձևով սարքավորված տեղերում:

Զինվորներն ու սերժանտները լողանալու են գնում շարքով՝ ավագի հրամանատարությամբ:

Լողանալու ժամանակ կարգուկանոնին հետևելու, ջրում դժբախտ պատահարները կանխելու և բուժօգնություն ցույց տալու նպատակով նշանակվում են հերթապահ՝ սպաներից կամ ենթասպաներից, լողորդների հերթապահ խումբ և հերթապահ բուժակ (սանհրահանգի):

Ստորաբաժանումների հրամանատարները (անձնախմբերի ավագները) պարտավոր են լողանալու ժամանակ ավից հսկել լողացողներին:

Հոդված 403. Հրաձգարանի (ճամբարի) տարածքը պետք է մաքուր պահվի՝ հրդեհային անվտանգության (Հավելված 16) և շրջակա միջավայրի պահպանման պահանջների կատարումով: Աղբը հավաքվում և ամեն օր դուրս է բերվում սանվերահսկողության մարմինների հետ համաձայնեցված վայրեր, որոնք հրաձգարանում (ճամբարում) գնդի տեղավորման սահմաններից առնվազն 3 կմ հեռու են և որոշված են գերիշխող քամիների ուղղության հաշվառումով:

Հրաձգարանի (ճամբարի) տարածքում ճանապարհների վրա տեղադրվում են երթևեկության ուղղությունների ցուցանիշներ, ինչպես նաև ճանապարհային ազդանշաններ և ուղենիշներ, որոնք ցույց են տալիս մարտական և այլ մեքենաների շարժման թույլատրելի արագությունը: Թրթուրավոր տեխնիկայի համար սահմանվում են անվավոր տեխնիկայի շարժման երթուղիներից տարբեր երթուղիներ:

Գնդի տեղավորումը ճամբարի ձևով (վրաններում)

Հոդված 404. Ճամբարի ձևով (վրաններում) գնդի տեղավորման ժամանակ ճամբար դնելը կատարվում է Հավելված 15-ում շարադրված ցուցումներին համապատասխան: Գնդում ներքին ծառայությունն իրականացնելու համար նշանակվում է վերակարգ՝ 263-266 հոդվածներին համապատասխան: Օրվա վերակարգի հերթափոխումը կատարվում է գնդի հրամանատարի սահմանաձև ժամանակ, առջևի տողանի (բաժնեգծի, ճամբարագծի) առաջ, դեմքով դեպի դաշտը, գնդի ճամբարի կենտրոնի դիմաց:

Հոդված 405. Վաշտում նշանակվում է օրապահների երեք հերթափոխ, հերթական հերթափոխը գտնվում է առջևի բաժնեգծում, պահակակետի սնկի (սնկային ծածկի) մոտ, երկրորդ հերթափոխը պահակություն է անում վաշտի տեղաբաշխման շրջանում, իսկ երրորդը հանգստանում է: Վաշտի օրապահները իրենց պարտականությունները կատարում են 308, 309 հոդվածներին համապատասխան: Բացի այդ, օրապահները պարտավոր են հրամանները (կարգադրությունները) բարձրաձայն հաղորդել վրաններում գտնվող զինծառայողներին և մոտակայքում տեղակայված վաշտերի օրապահներին, հետևել, որպեսզի բնական պահանջները բավարարելու համար զինծառայողները գնան դրա համար հատկացված տեղերը:

Հոդված 406. Առավոտյան ստուգման և երեկոյան անվանականչի համար վաշտերը շարվում են իրենց առջևի կամ կողմնային տողանների վրա: Վատ եղանակին գնդի հերթապահի կարգադրությամբ երեկոյան ստուգումը (անվանականչը) թույլատրվում է անցկացնել ըստ վրանների:

Հոդված 407. Երեկոյան ստուգումն (անվանականչը) անցկացվում է գնդի (ճամբարային հավաքի) հերթապահի «Սկսել անվանականչը» հրամանով:

Երեկոյան անվանականչի համար հերթապահները և օրապահները գիծ են դուրս գալիս և շարվում 412 հոդվածի համաձայն, իսկ ստորաբաժանումները շարվելիս՝ վաշտերի ավագները կանգնում են դրանց առջևի և կողմնային գծերի վրա:

Հոդված 408. Գնդի (ճամբարային հավաքի) հերթապահը տալիս է «Զգա՛ստ» հրամանը և կարգադրում «Երեկոյահավաք շեփորել»: Նվագախումբը (փողհար-թմբկահարը) «Երեկոյահավաք» է շեփորում: Ընդհանուր ճամբարային երեկոյան անվանականչ անցկացնելիս՝ «Երեկոյահավաք» շեփորելուց հետո նվագախումբը կատարում է Հայաստանի Հանրապետության օրհներգը, որից հետո գնդի (ճամբարային հավաքի) հերթապահը տալիս է «Ազա՛տ, դեպի վրանները» հրամանը: Նվագախումբը քայլերգ է նվագում:

Սահմանված ժամին տրվում է «Ավարտ» ազդանշանը:

Անվանականչից հետո վաշտերի հերթապահները զեկույցով ներկայանում են գնդի (ճամբարային հավաքի) հերթապահին:

Հոդված 409. Լավ եղանակին ցերեկը և տաք գիշերներին գնդի (ճամբարային հավաքի) հերթապահի կարգադրությամբ օրապահները բարձրացնում են վրանների վարագույրները: Չոր եղանակին ճամբարի գծերը, ճանապարհները և վրանների միջև եղած ուղիները ջրվում են:

Հերթապահներին գիծ կանչելը

Հոդված 410. Հերթապահները գիծ են կանչվում, երբ ճամբար են գալիս:

Հայաստանի Հանրապետության Նախագահը և պետական կառավարման լիազորված մարմնի ղեկավարը (նախարարը), գեներալ-գնդապետները, բոլոր ուղղակի պետերը՝ սկսած գնդի հրամանատարից և ավելի բարձր, ու տեսչական և այլ ստուգումների անցկացումը ղեկավարելու համար նշանակված անձինք:

(410-րդ հոդվածը փոփ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 411. Հերթապահները գիծ են կանչվում նաև «ծանուցում» ազդանշանով և գնդի (ճամբարային հավաքի) հերթապահի հրամանով:

Հերթապահները գիծ են կանչվում գծի օրապահների միջոցով, որոնք հաղորդում են «Հերթապահնե՛ր, գիծ» կամ «1-ին վաշտի հերթապա՛հ, գիծ» հրամանը:

«Ավարտ» ազդանշանից մինչև «Վերկաց» ազդանշանը հերթապահներին գիծ կանչելու հրաման չի տրվում:

Հոդված 412. Հերթապահները, գիծ կանչվելիս, զբաղեցնում են իրենց տեղերը՝ կանգնելով դեմքով դեպի դաշտը:

վաշտի հերթապահները (բացի ձախթևայիններից)՝ իրենց վաշտերի աջ թևում, հերթական օրապահից մեկ քայլ առաջ, գումարտակի ձախաթևյան վաշտի հերթապահը՝ ձախ թևում:

գնդի (ճամբարային հավաքի) հերթապահը՝ դրոշի հենարանի դիմաց նրանից երեք քայլ առաջ, նրա օգնականը՝ հերթապահի հետևը, մեկ քայլ հեռավորության վրա:

հերթապահ փողհար-թմբկահարը՝ գնդի (ճամբարային հավաքի) հերթապահի օգնականի հետևը՝ վաշտերի հերթապահների գծի վրա:

Հոդված 413. Ճամբար եկող անձանց (նշված 410 հոդվածում) դիմավորելու համար գնդի (ճամբարային հավաքի) հերթապահը դուրս



է գալիս գնդի այն թևը, որտեղից սպասվում են եկողները, նշված անձանց տեղ հասնելուն պես նա զեկույց է տալիս նրանց և ուղեկցում:

Այն դեպքում, երբ եկած հրամանատարին (պետին) դիմավորում է գնդի հրամանատարը և զեկույց տալիս նրան, գնդի (ճամբարային հավաքի) հերթապահը միայն ներկայանում է:

## Գ Լ ՈՒ Խ 12

### ՆԵՐՔԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶՈՐՔԵՐԻ ՏԵՂԱՓՈՒՄԱՆ (ՓՈՒՄԱԴՐՄԱՆ) ԺԱՄԱՆԱԿ

#### Ընդհանուր դրույթներ

Հոդված 414. Ձորամասերը, ստորաբաժանումները և մեծ թվաքանակով անձնախմբերը երկաթուղային, ջրային տրանսպորտով փոխադրելու համար կազմավորվում են զինվորական էշելոններ:

Օդային տրանսպորտով տեղափոխվելիս՝ յուրաքանչյուր օդանավի համար կազմավորվում են զինվորական անձնախմբեր:

Յուրաքանչյուր զինվորական էշելոնի (անձնախմբի) տրվում է համար:

Հոդված 415. Զինվորական էշելոնի (անձնախմբի) անձնակազմը պետք է գիտենա և պահպանի վարքի սահմանված կանոնները և անվտանգության պահանջները զորքերի տեղափոխման ժամանակ:

Հոդված 416. Յուրաքանչյուր զինվորական էշելոնում զորամասի հրամանատարի հրամանով նշանակվում են զինվորական էշելոնի պետ, անձնակազմի հետ տարվող աշխատանքի գծով տեղակալ, մարտական ապահովման գծով օգնական, մատակարարման գծով օգնական, կապի պետ, բժիշկ (բուժակ):

Զինվորական անձնախմբում նշանակվում է անձնախմբի պետ:

Վագոնների (նավի մարդատար շինությունների) ավագներ նշանակում են փոխադրվող ստորաբաժանումների հրամանատարները կամ զինվորական էշելոնի պետը, իսկ օդանավերի սրահների օրապահները՝ զինվորական անձնախմբի պետը:

Զինվորական էշելոնի (անձնախմբի) պետի զինվորական կոչումը և ազգանունը, զինվորական էշելոնի (անձնախմբի) համարը հայտարարվում են ամբողջ անձնակազմին:

Հոդված 417. Ներքին և պահակային ծառայության համար զինվորական էշելոնում նշանակվում են՝

զինվորական էշելոնի հերթապահ և նրա օգնական,  
վաշտերի (նրանց համապատասխան ստորաբաժանումների) հերթապահներ,

վագոնների (նավերի մարդատար շինությունների, օդանավի սրահի) հերթապահներ և օրապահներ,

պահակախումբ,

հերթապահ ստորաբաժանում,

հերթապահ փողհար-թմբկահար:

Հոդված 418. Զինվորական էշելոնի (անձնախմբի) անձնակազմին արգելվում է՝

խառնվել ռազմական հաղորդակցության և տրանսպորտի մարմինների պաշտոնատար անձանց աշխատանքին.

կանգառի համար նախատեսված ժամանակից ավել կանգնեցնել գնացքը (նավը, օդանավը).

կանգնել կամ իջնել (օդանավում լքել տեղերը) մինչև սահմանված հրամանը կամ ազդանշան տալը, թռչել վագոններ (նավի տախտակամած) կամ ցած թռչել վագոններից (տախտակամածից) ընթացքի ժամանակ.

«կանգ» բռնակով կանգնեցնել գնացքը, բացի այն դեպքերից, երբ վտանգ է սպառնում գնացքի երթևեկության անվտանգությանը կամ մարդկանց կյանքին.

վագոնների (նավերի) վրա մակագրություններ անել, պլակատներ, կարգախոսներ և դրոշակներ փակցնել ու կախել.

նամակներում ու հեռագրերում նշել զորամասի անվանումը, հիշատակել փոխադրման մասին, ինչպես նաև այդ մասին զրուցել կողմնակի անձանց հետ, բեռնման, բեռնաթափման վայրերում վագոններում (նավի շինություններում, օդանավերում) նամակներ, թերթեր, թղթեր և այլն թողնել,

գտնվել վագոնների տանիքների, կառամատույցների վրա, արգելակման հարթակներում, մեքենաների խցիկներում և թափքերում, տանկերի աշտարակներին, բացի այդ, դիպչել կոնտակտային ցանցի մետաղական հենարաններին և հողակցող սարքերին, 2 մ-ից ավել մոտենալ կոնտակտային հաղորդալարերին.

գտնվել նավի ծառայողական շինություններում, նավի անձնակազմի աշխատանքի տեղերում, փրկամակույկներում, ելնել շյուզների (նավանցումների ջրարգելակների) պատերին:

Նստել կամ կանգնել վագոնների դռնախորշերում, հենվել վագոնների դռնափականքներին (նավերի եզրագերաններին):

վագոններում (նավերում) օգտագործել լուսավորության և ջեռուցման չսահմանված տեսակներ:

բեռնումից հետո կատարել տեխնիկայի լցավորում (լրացավորում):

առանց անհրաժեշտության քայլել երկաթուղային ուղեգծերով (նավահանգստի, օդակայանի տարածքով), կեղտոտել տարածքը, խարույկներ վառել կայարանների (նավահանգիստների, օդակայանների) տարածքում, առանց թույլտվության վերցնել էշելոնին (անձնախմբին) չպատկանող գույքը:

կանգառներում և ընթացքի ժամանակ վագոններից (նավերից) դուրս նետել աղբը, սննդի մնացորդներ և այլն:

(418-րդ հոդվածը փոփ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 419. Արգելվում է զինվորական էշելոնի հետ փոխադրել կողմնակի անձանց, ինչպես նաև զինվորական էշելոնի հետ կապ չունեցող բեռներ: Ձինվորական էշելոնի հետ տրանսպորտի պաշտոնատար անձանց, ինչպես նաև համընթաց զինվորական խմբերի երթևեկությունը թույլ է տալիս հաղորդակցության ճանապարհի պարետը:

Վտանգավոր բեռները փոխադրվում են էշելոնի պաշտոնատար անձանց, ռազմական հաղորդակցության և տրանսպորտի մարմինների մշտական հսկողության տակ, տրանսպորտի տարբեր տեսակներում գործող նորմատիվ փաստաթղթերին խիստ համապատասխան:

Հոդված 420. Ձինվորական էշելոնից (անձնախմբից) հետ ընկած զինծառայողը պարտավոր է ներկայանալ հաղորդակցության ճանապարհների զինվորական պարետին, իսկ նրա բացակայության դեպքում՝ կայարանի, նավահանգստի, օդակայանի պետին, զեկուցել (հայտնել) հետ մնալու պատճառը, նշել զինվորական էշելոնի (անձնախմբի) համարը և գործել ըստ ռազմական պարետի՝ կամ կայարանի (նավահանգստի, օդակայանի) պետի ցուցումների:

Ձինվորական էշելոնի (անձնախմբի) պետը

Հոդված 421. Ձինվորական էշելոնի (անձնախմբի) պետը պատասխանատու է զինվորական էշելոնի (անձնախմբի) մշտական մարտական պատրաստության, նրա բեռնման, փոխաբեռնման, բեռնաթափման համար, սպառազինության և ռազմական տեխնիկայի տեղադրման ու ամրացման ճշտության, զինվորական էշելոնի (անձնախմբի) անձնակազմի կողմից զինվորական փոխադրումների սահմանված կանոնների և անվտանգության պահանջների ու կարգի պահպանման համար, բազմակողմանի ապահովման և հակահրդեհային միջոցառումների կազմակերպման, փոխադրվող սպառազինության, ռազմական տեխնիկայի և նյութական այլ միջոցների, շարժակազմի ու նրա սարքավորման անվթարության համար, էշելոնի սանիտարափրկիչներին վիճակի համար:

Ձինվորական էշելոնի (անձնախմբի) պետը ենթարկվում է գորամասի հրամանատարին կամ զինվորական էշելոնը (անձնախումբը) կազմավորած անձին ու հաղորդակցության ճանապարհների պարետներին: Նա զինվորական էշելոնի (անձնախմբի) ողջ անձնակազմի անմիջական պետն է:

Հոդված 422. Ձինվորական էշելոնի (անձնախմբի) պետը պարտավոր է՝

- զինվորական էշելոնի (տրանսպորտի, օդանավի) բեռնումն սկսելուց առաջ անցկացնել անձնակազմի հրահանգավորում բեռնման-բեռնաթափման աշխատանքների կատարման և հաղորդակցության ճանապարհներով, հատկապես էլեկտրիֆիկացված երթուղային տեղամասերով ընթանալու ժամանակ անվտանգության պահանջների, հրդեհի առաջացման դեպքում գործողությունների և հրդեհային անվտանգության պահանջների վերաբերյալ, ստուգել հակահրդեհային միջոցառումների կատարումը վագոններում (նավերի մարդատար շինություններում), խոհանոցների, վառարանների (ջեռուցող, օդափոխիչ սարքերի) և հրդեհավտանգ այլ սարքավորումների տեղադրման ժամանակ:

- կազմակերպել կապը էշելոնում և նշանակել բեռնման-բեռնաթափման և այլ անձնախմբերի պետերին:

- սահմանված ժամկետներում և կազմակերպված անցկացնել զինվորական էշելոնի (անձնախմբի) բեռնումը, փոխաբեռնումը և բեռնաթափումը, ապահովել սպառազինության, ռազմական տեխնիկայի և նյութական այլ միջոցների տեղադրման և ամրացման

ճշտությունը, ինչպես նաև անհրաժեշտ կարգուկանոնը բեռնման-բեռնաթափման վայրերում.

- հետևել վագոնների (նավերի մարդատար շինությունների) ավագների կողմից հանովի զինվորական սարքավորումների ընդունմանը, բեռնաթափման վայրում դրանց հանձնմանը և ապահովել նրա անվթարությունը ընթացողիում.

- ապահովել անձնակազմի կողմից փոխադրումների կանոնների պահպանումը և անվտանգության պահանջների կատարումը, ինչպես նաև կարգուկանոնի պահպանումը գնացքի (նավի) կանգառների ժամանակ.

- զինվորական էշելոնում կազմակերպել համակողմանի ներքին և պահակային ծառայությունների, հակահրդեհային պաշտպանության ապահովումը, ինչպես նաև վերահսկել սպառազինության և ռազմական տեխնիկայի դրությունը, նրանց ամրացման վիճակը, ժամապահների և դիտորդների համար արգելափակոցների հուսալիությունը.

- ապահովել զինվորական էշելոնի (անձնախմբի) պատրաստությունը հանկարծակի բեռնաթափմանը և նշված շրջան ռազմերթով ընթանալու կամ մարտական առաջադրանքների կատարմանը.

- ապահովել զինվորական էշելոնի (անձնախմբի) տրանսպորտային փաստաթղթերի ժամանակին ձևակերպումը.

- սահմանել օրվա վերակարգի հերթափոխի ժամանակը, ինչպես նաև որոշել անձնակազմի սնման կարգը և հաստատել մթերքների բաշխումը.

- ընթացողում հաղորդակցության ուղիների զինվորական պարետներին զեկուցել զինվորական էշելոնի (անձնախմբի) վիճակի մասին և նրանց ներկայացնել երթուղային թերթիկը.

- ապահովել սանիտարահիգիենիկ կանոնների պահպանումը էշելոնում.

- հետ մնացած զինծառայողների մասին հայտնել հաղորդակցության ուղիների պարետին, իսկ այնտեղ, ուր նա չկա՝ այն կայարանի (նավահանգստի, օդակայանի) պետին, որտեղ նրանք հետ են մնացել.

- հակառակորդի գործողությունների, հրդեհների, ձնահոսքերի, ռոդոլուտների պատճառով հարկադրական կանգառների, ինչպես նաև վթարների և այլ պատահարների ժամանակ տրանսպորտային մարմիններին օգնություն ցույց տալ երթևեկությունը վերականգնելու գործում.

- հիվանդներին (վիրավորներին) տեղավորել զինվորական էշելոնի վագոն (կուպե, նավախցիկ) մեկուսարանում, իսկ նրանց, ովքեր չեն կարող շարունակել ճանապարհը, տեղավորել մոտակա զինվորական կամ քաղաքացիական բուժհիմնարկում, զինվորական էշելոնի (անձնախմբի) կազմից որևէ մեկի մահվան դեպքում մահացածի դիակը նրա իրերով, փաստաթղթերով, նամակներով և փողերով հանձնել մոտակա զինվորական հոսպիտալ կամ հիվանդանոց, իսկ ծովային երկարատև չվանցի դեպքում մահացածի դիակը թաղում են ըստ ծովային սովորույթի:

Ջինվորական էշելոնի (անձնախմբի) պետը իրավունք ունի անվճար օգտվել տրանսպորտի կապի միջոցներից (հեռագիր, հեռախոս, ռադիո)՝ զինվորական էշելոնի (անձնախմբի) տեղափոխման և ապահովման հարցերով բանակցություններ վարելու համար:

Հոդված 423. Փոխադրման հետ կապված հարցերը զինվորական էշելոնի (անձնախմբի) պետը լուծում է հաղորդակցության ուղիների զինվորական պետի հետ, իսկ այնտեղ, ուր նա չկա՝ կայարանի (նավահանգստի, օդակայանի) պետի հետ:

Հոդված 424. Նույն գնացքով (նավով, օդանավով) մի քանի զինվորական էշելոնների (անձնախմբի) ուղևորության դեպքում զինվորական էշելոններից (անձնախմբերից) մեկի պետը գորամասի պետի կամ հաղորդակցության ուղիների զինվորական պետի կողմից ավագ է նշանակվում մյուս զինվորական էշելոնների (անձնախմբի) պետերի նկատմամբ, ինչի մասին համապատասխան գրառումներ են կատարվում երթուղային թերթիկներում:

Հոդված 425. Տեխնիկական անսարքության պատճառով զինվորական էշելոնից վագոնները անջատելու դեպքում զինվորական էշելոնի պետը պահանջում է դրանց փոխարինում: Երբ դրանց փոխարինումը անհնար է, անձնակազմը ժամանակավորապես տեղավորվում է գնացքի մյուս վագոններում: Սպառազինությամբ և ռազմական տեխնիկայով վագոնների անջատման դեպքում նրանց հետ մնում են անձնակազմերը (վարորդները), իսկ ռազմական մյուս գույքի հետ՝ պահակախումբը: Միջոցներ են ձեռնարկում նշանակված վայրը դրանք արագ հասցնելու համար:

Զինվորական էջերնի պետի՝ անձնակազմի հետ տարվող աշխատանքի գծով տեղակալը

Հոդված 426. Զինվորական էջերնի պետը՝ անձնակազմի հետ տարվող աշխատանքի գծով տեղակալը, պատասխանատու է էջերնի անձնակազմի զինվորական կարգապահության և բարոյահոգեբանական վիճակի համար: Նա ենթարկվում է էջերնի պետին և ողջ անձնակազմի անմիջական պետն է, բացառությամբ էջերնի պետին անմիջականորեն ենթակա անձանցից:

Հոդված 427. Զինվորական էջերնի պետի՝ անձնակազմի հետ տարվող աշխատանքի գծով տեղակալը պարտավոր է՝

- էջերնի անձնակազմի հետ դաստիարակչական աշխատանք տանել՝ նրանց ազգային և հոգեբանական առանձնահատկությունների հաշվառումով, զգոնության և փոխադրման մասին տեղեկությունների գաղտնիությունը պահելու, սպառազինության, ռազմական տեխնիկայի և տրանսպորտային գույքի նկատմամբ հոգատար վերաբերմունքի ոգով.

- միջոցառումներ անցկացնել զինվորական կարգապահության ամրապնդման և իրավախախտումների կանխման, զինվորական ծառայության անվտանգության պայմանների ապահովման ուղղությամբ.

- իրականացնել անձնակազմի օբյեկտիվ և օպերատիվ տեղեկացումը, կազմակերպել և անձամբ անցկացնել հասարակական-պետական պատրաստության պարապմունքները.

- իրագործել էջերնի օրվա վերակարգի սոցիալ-հոգեբանական ապահովումը, հոգ տանել անձնակազմի հոգևոր պահանջմունքների բավարարման մասին, կազմակերպել նրա ժամանցը, ճանապարհի ընթացքում անձնակազմին ապահովել պարբերական հրատարակություններով, ճիշտ և հոգատար օգտագործել դաստիարակչական աշխատանքի անցկացման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներն ու գույքը.

- զինվորական էջերնի անձնակազմը մոբիլիզացնել տարբերային աղետների և այլ արտակարգ հանգամանքների հետևանքով խախտված երկպառակային երթևեկության վերականգնման աշխատանքների համար.

- ժամանակին զեկուցել զինվորական էջերնի պետին էջերնի անձնակազմի զինվորական կարգապահության և բարոյահոգեբանական վիճակի մասին:

(427-րդ հոդվածը փոփ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Զինվորական էջերնի պետի՝ մարտական ապահովման գծով օգնականը

Հոդված 428. Զինվորական էջերնի պետի՝ մարտական ապահովման գծով օգնականը պատասխանատու է զինվորական էջերնի պահպանման և պաշտպանության վիճակի համար: Նա ենթարկվում է զինվորական էջերնի պետին և զինվորական էջերնի մարտական ապահովման համար առանձնացված ստորաբաժանումների անձնակազմի պետն է:

Հոդված 429. Զինվորական էջերնի պետի մարտական ապահովման գծով օգնականը պարտավոր է՝

- մշակել և զինվորական էջերնի պետին զեկուցել փոխադրման ընթացքում մարտական ապահովման միջոցառումների մասին և ապահովել դրանց կատարումը.

- նշել անձնակազմի պատսպարանների, ինչպես նաև սպասման ու հավաքի շրջաններում և բեռնման-բեռնաթափման կայաններում (վայրերում) սպառազինության և ռազմական տեխնիկայի սարքավորման և օգտագործման կարգը.

- կազմակերպել ռադիացիոն, քիմիական և ոչ հատուկ մանրէաբանական (բակտերիոլոգիական) հետախուզություն, իսկ անհրաժեշտության դեպքում՝ սպառազինության, ռազմական տեխնիկայի, անձնակազմի զբաղեցված վագոնների կամ նավի շինությունների ապակտիվացում և գազազերծում.

- հետևել զինվորական էջերնի անձնակազմն անհատական պաշտպանության միջոցներով ապահովելուն.

- կազմակերպել երթևեկության կանոնավորումը և սպառազինության, ռազմական տեխնիկայի քողարկումը բեռնման և բեռնաթափման շրջաններում.

- կազմակերպել և վերահսկել պահակային ծառայությունը զինվորական էջերնում և հակաօդային պաշտպանության միջոցների մարտական հերթապահությունը.

- ապահովել հակահրդեհային միջոցների կատարումը.

- ռազմերթի անցնելու դեպքերի համար նախատեսել մարտական ապահովման միջոցառումներ:

Զինվորական էշելոնի պետի՝ մատակարարման գծով օգնականը

Հոդված 430. Զինվորական էշելոնի պետի՝ մատակարարման գծով օգնականը պատասխանատու է թիկունքի ծառայությունների գծով զինվորական էշելոնի ժամանակին և լրիվ ապահովման, ճանապարհին ջրամատակարարման, սննդի և բաղնիքավացքային սպասարկման կազմակերպման համար: Նա ենթարկվում է զինվորական էշելոնի պետին և իրեն անմիջական ենթակա անձնակազմի պետն է:

Հոդված 431. Զինվորական էշելոնի պետի՝ մատակարարման գծով օգնականը պարտավոր է՝

- գործարարի շտաբում ստանալ զինվորական էշելոնի անձնակազմը պարենով, գույքով ապահովելու և փոխադրման ժամանակ դրանց հաշվառման համար նախատեսված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը.

- ապահովել մեկնման կետում պարենի ստացումը սահմանված չափերով և նրա տեղափոխումը էշելոնով, ինչպես նաև պաշարի համալրումը ճանապարհին, ապահովել լավորակ սնունդ և սահմանված նորմայով մթերաբաժնի հասցնելը յուրաքանչյուր զինծառայողին, էշելոնում խոհանոցների բացակայության դեպքում կազմակերպել տաք սննդի ստացումը զինվորական պարենային կետերից.

- խոհանոցները և մարդատար վագոնները ապահովել վառելիքով, ջրով, գույքով, ամանեղենով և հրդեհամարիչ միջոցներով.

- էշելոնի բժշկի հետ համատեղ կատարել էշելոնի խոհանոցներում տաք սննդի պատրաստման համար անհրաժեշտ մթերքների բաշխումը և այն հաստատման ներկայացնել էշելոնի պետին.

- կազմակերպել մարդատար վագոնների սարքավորումների ճիշտ օգտագործումը, հետևել վագոններում (նավի մարդատար շինություններում) հրդեհամարիչ միջոցների և ջեռուցիչ սարքերի սարքինությանը.

- կազմակերպել էշելոնի անձնակազմի բաղնիքավացքային սպասարկում:

Վաշտի հրամանատարը

Հոդված 432. Վաշտի հրամանատարը ենթարկվում է իր անմիջական պետերին և զինվորական էշելոնի (անձնախմբի) պետին:

Սույն Կանոնագրքի համապատասխան հոդվածներում շարադրված իր ուղղակի պարտականությունների կատարումից բացի, վաշտի հրամանատարը պարտավոր է՝

- փոխադրման նախապատրաստել անձնակազմը, սպառազինությունը, ռազմական տեխնիկան, գույքը, ունեցվածքը և բեռնման պլանին համապատասխան բաշխել դրանք շարժակազմում (նավի շինություններում).

- անձնակազմին հրահանգավորել փոխադրման կանոնների և անվտանգության պահանջների մասին, հայտնել զինվորական էշելոնի (անձնախմբի) համարը, զինվորական էշելոնի (անձնախմբի) պետի զինվորական կոչումը և ազգանունը.

- էշելոնի պետի ցուցումով անձնակազմը բաժանել օրվա վերակարգի և բեռնման-բեռնաթափման ու այլ խմբերի, հնոցապաններ նշանակել.

- անձամբ ղեկավարել ստորաբաժանման բեռնումը, փոխադրումը և բեռնաթափումը, ապահովել սպառազինության, ռազմական տեխնիկայի և նյութական այլ միջոցների տեղադրումը, ամրացումն ու քողարկումը, վերահսկել դրանց վիճակը ճանապարհին.

- ստորաբաժանման անձնակազմի հետ կազմակերպել պարապմունքները.

- հետևել անձնակազմի կողմից զինվորական կարգապահության և փոխադրման սահմանված կանոնների պահպանմանը, ինչպես նաև վագոնների (նավերի, մարդատար շինությունների) սարքավորումների անվթարությանը:

Վագոնի (նավի մարդատար շինության) ավագը

Հոդված 433. Վագոնի (նավի մարդատար շինության) ավագը ենթարկվում է իր ստորաբաժանման հրամանատարին և զինվորական էշելոնի հերթապահին: Նա վագոնում (նավի մարդատար շինությունում) տեղավորված անձնակազմի ուղղակի պետն է:

Հոդված 434. Վագոնի (նավի մարդատար շինության) ավագը պարտավոր է՝

- ունենալ անձնակազմի ցուցակը, իմանալ վագոնում (նավի մարդատար շինությունում) տեղավորված սպառազինության և նյութական այլ միջոցների քանակը և մեկնումից առաջ ստուգել դրանց առկայությունը.

- մինչև բեռնումը ստուգել և ընդունել վագոնի (նավի մարդատար շինության) սարքավորումը, իսկ բեռնաթափումից հետո հանձնել այն անվնաս և սարքին վիճակում.

- ղեկավարել անձնակազմի նստեցումը, տեղավորումը և իջեցումը.

- նշանակել վագոնի (նավի մարդատար շինության) օրապահներ, հետևել նրանց ծառայության կատարմանը, ինչպես նաև զինծառայողներ առանձնացնել սնունդ, ջուր, վառելիք ստանալու և տարբեր աշխատանքներ կատարելու համար.

- հետևել ռազմական գաղտնիքի պահպանմանը, անձնակազմի կարգապահության, ներքին կարգուկանոնի, զինվորական համագգեստ կրելու կանոնների և անվտանգության պահանջների պահպանմանը.

- անձնակազմին թույլ չտալ առանց էշելոնի պետի թույլտվության կամ մինչև հրաման (ազդանշան) տալը վագոններից (նավի մարդատար շինություններից) դուրս գալ, դուրս բերել զենք, զինամթերք և այլ նյութական միջոցներ.

- արգելել երթևեկության թույլտվություն չունեցող անձանց, ինչպես նաև զինվորական էշելոնին չպատկանող բեռների փոխադրումը վագոններով (նավի մարդատար շինություններում).

- հետևել վագոններում (նավի մարդատար շինություններում) կանոնավոր ջերմաստիճանի պահպանմանը և հրդեհային անվտանգության պահանջների կատարմանը, վագոնում հրդեհի բռնկման դեպքում ձեռնարկել բոլոր միջոցները այն հանգցնելու համար և գնացքը կանգնեցնելու ազդանշաններ տալ, իսկ նավի վրա հրդեհի մարմանը գուզընթաց զեկուցել զինվորական էշելոնի հերթապահին.

- բեռնաթափմանը նախապատրաստվելու մասին ցուցումներ ստանալուց հետո հրամայել անձնակազմին հագնվել, վերցնել զենքը և անձնական իրերը, դադարեցնել վառարանները վառելը և հանգցնել կրակը.

- բեռնաթափումից հետո ստուգել՝ ամբողջ գույքն (ունեցվածքն) է հանված, և հանգցված են, արդյոք, վառարանները.

- ստորաբաժանման հրամանատարին և զինվորական էշելոնի հերթապահին զեկուցել հիվանդացած, հետ մնացած (ուշացած) զինծառայողների մասին, ինչպես նաև զենքի, զինվորական գույքի,

վագոնի (նավի մարդատար շինությունների) սարքավորման վնասվելու կամ կորուստի և այլ պատահարների մասին:

#### Զինվորական էշելոնի հերթապահը

Հոդված 435. Զինվորական էշելոնի հերթապահը նշանակվում է սպաներից և ենթարկվում է զինվորական էշելոնի պետին և տեղափոխվող գորամասի հրամանատարին: Նրան են ենթարկվում օրվա վերակարգը և վագոնների (նավի մարդատար շինությունների) ավագները:

Հոդված 436. Զինվորական էշելոնի հերթապահը ծառայության ժամանակ ղեկավարվում է 291-296 հոդվածներով: Բացի այդ նա պարտավոր է՝

- հետևել սպառազինությանը, ռազմական տեխնիկան և նյութական այլ միջոցները ստորաբաժանումների հրամանատարների կողմից պահակության պահպանությանը հանձնելուն, ինչպես նաև առաջին հերթափոխի ժամապահների կանգնեցմանը, պահպանությունը փոխելուն և հանձնելուն.

- ստուգել անձնակազմի առկայությունը, օրվա վերակարգի ծառայության կատարումը, հերթապահ ստորաբաժանման պատրաստությունը, ինչպես նաև հետևել անձնակազմի կողմից հրդեհային անվտանգության պահանջների կատարմանը.

- էշելոնում հետևել զինվորական կարգուկանոնին և կարգապահությանը, զինվորական փոխադրումների կանոնների և նյութական միջոցների պահպանմանը.

- զինվորական էշելոնի պետի ցուցումով ստորաբաժանումներին, վագոնների (նավի մարդատար շինությունների) ավագներին, պահակապետին հայտնել այն կանգառները, որտեղ անձնակազմին թույլատրված է դուրս գալ.

- ճանապարհին ապահովել տաք սննդի, ջրի, վառելիքի և լուսավորության միջոցների կազմակերպված ստացումը և բաշխումը.

- թույլ չտալ կողմնակի անձանց, բացի տրանսպորտի աշխատողներից, որոնք կապված են գնացքների (նավերի) սպասարկման հետ, մոտենալ զինվորական էշելոններին:

(436-րդ հոդվածը փոփ. 14.04.11 ՀՕ-124-Ն)

#### Վաշտի հերթապահը

Հոդված 437. Վաշտի հերթապահը ենթարկվում է զինվորական էջելոնի հերթապահին և նրա օգնականին, իսկ վաշտում ներքին ծառայության կարգով՝ վաշտի հրամանատարին և ավագին: Նրան են ենթարկվում այն վագոնների (նավերի մարդատար շինությունների) օրապահները, որոնցում գտնվում է վաշտի անձնակազմը:

Հոդված 438. Վաշտի հերթապահը կատարում է 306 - 309 հոդվածներով նախատեսված պարտականությունները: Բացի այդ, վաշտի հրամանատարի ցուցումներով և զինվորական էջելոնի հերթապահի թույլտվությամբ վաշտի հերթապահը կանգառներում պետք է ստուգի սպառազինության, ռազմական տեխնիկայի և նյութական այլ միջոցների ամրացման և քողարկման վիճակը, վերացնի անսարքությունները և այդ մասին զեկուցի հրամանատարին և զինվորական էջելոնի հերթապահին:

Վագոնի (նավի մարդատար շինության, օդանավի սրահի) օրապահը

Հոդված 439. Վագոնի (նավի մարդատար շինության, օդանավի սրահի) օրապահը ենթարկվում է վաշտի հերթապահին, վագոնի (նավի մարդատար շինության) ավագին, իսկ այնտեղ, ուր նրանք չկան՝ զինվորական անձնախմբի պետին:

Հոդված 440. Վագոնի (նավի մարդատար շինության, օդանավի սրահի) օրապահը պարտականությունները կատարում է 310, 311 հոդվածներին համապատասխան:

Բացի այդ, նա պարտավոր է՝

- անձնակազմը վագոն նստեցնելիս կամ վագոնից իջեցնելիս՝ տեղադրել ձեռնասանդուղք (հանովի շարժական սանդուղք) և հանել դռան փականքը, իսկ նստեցումն ու իջեցումը ավարտելուց հետո հավաքել ձեռնասանդուղքը (հանովի շարժական սանդուղքը) և տեղադրել դռան փականքը:

- նստեցումից հետո ստուգել մարդկանց առկայությունը և զեկուցել վագոնի (նավի մարդատար շինության) ավագին կամ զինվորական անձնախմբի պետին:

- անձնակազմին թույլ չտալ վագոնից (նավի մարդատար շինությունից) դուրս գալ սահմանված համապատասխան հրամանը

կամ ազդանշանը տրվելուց առաջ և ըստ սահմանված ձևի հագնված չլինելու դեպքում:

- հետևել վառարանները վառելուն և հրդեհային անվտանգության պահանջների պահպանմանը, ինչպես նաև բաքերում և դույլերում ջրի առկայությանը, բեռնաթափումից առաջ դադարեցնել վառարանները վառելը և հանգցնել կրակը:

- մաքրել վագոնը (նավի մարդատար շինությունը, օդանավի սրահը):

- հետևել սարքավորման և գույքի անվթարությանը (անվնասությանը):

- հետևել զինվորական էջելոնի (անձնախմբի) պետի և զինվորական էջելոնի հերթապահի ազդանշաններին և հրամաններին:

- թույլ չտալ վագոններից դուրս կախվել, հենվել դռան փականքներին և դրսի կողմից գտնվել դռնախորշում, նստել կամ կանգնել վագոնի դռնախորշում:

- հետևել, որպեսզի վագոնում բացվեն այն դռները, որոնք մատնանշված են զինվորական էջելոնի պետի կողմից:

- թույլ չտալ վագոններից (նավի մարդատար շինություններից) դուրս նետել աղբ, կերակրի մնացորդներ և այլն:

**Գ Լ ՈՒ Խ 13**  
**(զլուխը լրաց. 14.04.11 ՀՕ-124-Ն)**

**ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ**  
**ԱՊԱՀՈՎՈՒՄԸ**  
**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

Հոդված 441. Զինվորական ծառայության անվտանգության պահպանումը զորամասի, զորամիավորման (այսուհետ՝ զորամաս) ամենօրյա գործունեության ընթացքում հնարավոր վտանգավոր գործոնների ազդեցությունից զորամասի անձնակազմի և յուրաքանչյուր զինծառայողի, զորամասի տեղակայման վայրի և խնդիրների կատարման տարածքում ազգաբնակչության, նրանց գույքի, ինչպես նաև շրջակա միջավայրի պաշտպանվածության իրականացումն է:

(441-րդ հոդվածը լրաց. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 442. Զինվորական ծառայության անվտանգության պահպանման նպատակով զորամասի հրամանատարի հրամանով զորամասում ստեղծվում է զինվորական ծառայության

անվտանգության ապահովման մշտական հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով)՝ հրամանատարի տեղակալներից մեկի գլխավորությամբ: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են զորամասի շտաբի պետը, հրամանատարի՝ անձնակազմի հետ տարվող աշխատանքների, սպառազինության, թիկունքի գծով տեղակալները, զորատեսակների ու ծառայությունների պետերը:

(442-րդ հոդվածը լրաց. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 443. Հանձնաժողովը վերլուծում և առաջարկներ է ներկայացնում զորամասի հրամանատարին՝

1) ենթակա ստորաբաժանումների գործունեության ընթացքում զինվորական անվտանգության պահանջների ապահովմանն ուղղված միջոցառումների արդյունավետությունը և զինվորական ծառայության անվտանգության ընդհանուր վիճակի վերաբերյալ:

2) ստորաբաժանումների տեղակայման և մարտական պատրաստության պարապմունքների, վարժանքների, զորավարությունների անցկացման վայրերում առօրյա գործունեության ընթացքում զինվորական ծառայության անվտանգությանն սպառնացող վտանգների կանխատեսման, ինչպես նաև կանխարգելման հնարավոր գործողությունների վերաբերյալ:

3) պատասխանատու հրամանատարների (պետերի) կողմից անձնակազմի իրավական, սոցիալ-տնտեսական, կազմակերպատեխնիկական, բարոյահոգեբանական, բժշկական, ինչպես նաև շրջակա միջավայրի անվտանգության ապահովմանն ուղղությամբ իրականացվող գործունեության վերաբերյալ:

4) մարտական հերթապահության իրականացման, ռազմական տեխնիկայի և սպառազինության շահագործման ընթացքում, ինչպես նաև պարապմունքների ու աշխատանքների ժամանակ անվտանգության ապահովման վիճակի վերաբերյալ:

5) զինծառայողների կողմից կամ նրանց մասնակցությամբ տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարների վերլուծության ու դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումների պլանավորման և իրականացման վերաբերյալ:

6) զինվորական ծառայության անվտանգության ապահովման հարցերով զորամասի հրամանատարի հրամանների նախագծերի մշակման վերաբերյալ:

(443-րդ հոդվածը լրաց. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 444. Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվում են նիստերի միջոցով՝ զորամասի հրամանատարի հրամանով հաստատված տարեկան պլանի համաձայն, ոչ պակաս, քանի երեք ամիսը մեկ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության՝ արտահերթ:

(444-րդ հոդվածը լրաց. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 445. Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ հանձնաժողովի նախագահը յուրաքանչյուր ամիս զորամասի հրամանատարին և վերադաս մարմնի հանձնաժողովին ներկայացնում է գրավոր զեկույց: Զեկույցում արտացոլվում են զորամասում զինվորական ծառայության անվտանգության վիճակը, հանձնաժողովի տարեկան աշխատանքային պլանի կատարումը, ի հայտ եկած թերությունները և դրանց վերացման վերաբերյալ արված առաջարկությունները, հաշվետու ժամանակահատվածում անձնակազմի մահվան ելքով և խեղումներով ուղեկցված դեպքերի վերաբերյալ վերլուծությունը:

(445-րդ հոդվածը լրաց. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 446. Հանձնաժողովի գործունեության շրջանակում հանձնաժողովը մշակում և վարում է հետևյալ փաստաթղթերը:

1) հանձնաժողովի տարեկան աշխատանքային պլանը:

2) հանձնաժողովի նախագահի ամենամյա գրավոր զեկույցը զորամասի հրամանատարին և վերադաս մարմնի հանձնաժողովին:

3) հանձնաժողովի նիստերի արձանագրությունների մատյանը:

4) հանձնաժողովի անդամներին տրված հանձնարարականների հաշվառման մատյանը:

5) աշխատանքների ընթացքի վերաբերյալ զեկույցագրեր, գրավոր առաջարկություններ, այլ վերլուծական նյութեր:

(446-րդ հոդվածը լրաց. 14.04.11 ՀՕ-124-Ն)

**ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ  
ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ**



Հոդված 447. Զորամասում (ստորաբաժանումում) զինվորական ծառայության անվտանգության ապահովման՝ զինծառայողների զոհվելու (մահանալու), խեղումների (վիրավորումներ, վնասվածքներ, կոնտուզիաներ) դեպքերի կանխարգելման և հիվանդացության նվազեցմանն ուղղված հիմնական միջոցառումներն են՝

1) անձնակազմի հոգեբանական ապահովումը՝ զինծառայողների բարոյահոգեբանական վիճակի, ոչ կանոնադրական փոխհարաբերությունների և իրավախախտումների, այլ պատահարների ուսումնասիրության և վերլուծության, դրանց կանխարգելմանն ուղղված քայլերի, զինծառայողների շրջանում առողջ սոցիալ-հոգեբանական մթնոլորտի ձևավորման, սոցիալական արդարության սկզբունքի պահպանման ու իրավական պաշտպանվածության հիման վրա.

2) անձնակազմի կանոնավոր նախապատրաստումն ամենօրյա գործունեության միջոցառումների իրականացմանը՝ նախապես կազմակերպելով զինվորական ծառայության անվտանգության պահանջների ուսուցում, սույն Կանոնագրքի 8-րդ գլխով նախատեսված սանիտարահակահամաճարակային (կանխարգելիչ) և այլ միջոցառումների իրականացումը, վերահսկողությունն անձնակազմի՝ զինվորական ծառայության անվտանգության պահանջների (կանոնների) կատարման նկատմամբ.

3) զոհվելու (մահվան) և խեղումների (վիրավորումներ, վնասվածքներ, կոնտուզիաներ) դեպքերի կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացումն առաջին հերթին այն զինծառայողների շրջանում, որոնց առօրյա զինվորական ծառայության բնույթը վտանգներ է պարունակում կյանքի և առողջության համար.

4) անձնակազմի մշտական զգոնության պահպանումը, մարտական հերթապահության և օրվա վերակարգի ծառայության կանոնների ճշգրիտ կատարման ապահովումը.

5) հակահրդեհային անվտանգության կանոնների ապահովումը և անհրաժեշտության դեպքում փրկարարական աշխատանքների իրականացումը.

6) անձնակազմի կենցաղային պայմանների ապահովումը (գորանոցային-բնակարանային ֆոնդի ապահովում, առևտրակենցաղային, բաղնիքավացքատնային ծառայություն, ջրամատակարարում)՝ սահմանված չափանիշներին համապատասխան:

(447-րդ հոդվածը լրաց. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 448. Զորամասի կողմից իրականացվող և հարակից բնակավայրերի բնակչության կյանքին, առողջությանը և գույքին սպառնացող վտանգների կանխարգելմանն ուղղված հիմնական միջոցառումներն են՝

1) սպառազինության ու ռազմական տեխնիկայի շահագործման հետևանքով քաղաքացիական բնակչությանը, առանձին անձանց և քաղաքացիական օբյեկտներին վնաս հասցնելը կանխարգելելն ու կանխելը.

2) գորամասի՝ հնարավոր վտանգ ներկայացնող ռազմական օբյեկտների տեղակայումը բնակավայրերի սանիտարապաշտպանական գոտիների սահմաններից դուրս.

3) գորամասի հրամանատարության և տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցության կազմակերպումը՝ զինվորական ծառայության անվտանգության ապահովման պահանջների առավելագույն կատարման նպատակով:

(448-րդ հոդվածը լրաց. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 449. Զորամասի (ստորաբաժանման) ամենօրյա գործունեության ընթացքում հնարավոր սպառնալիքներից շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված հիմնական միջոցառումներն են՝

1) անձնակազմի ուսուցումն ու նախապատրաստումը՝ շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի շրջանակներում.

2) գորամասի (ստորաբաժանման) տեղակայման վայրում և ամենօրյա գործունեության միջոցառումների կատարման այլ տարածքներում շրջակա միջավայրի աղտոտման կանխումը.

3) գորամասի (ստորաբաժանման) ամենօրյա գործունեության, ինչպես նաև տեղի ունեցած վթարների հետևանքով շրջակա միջավայրին հասցված վնասի վերականգնման աշխատանքները:

(449-րդ հոդվածը լրաց. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հողված 450. Հայաստանի Հանրապետության օրենքներով ու նորմատիվ իրավական այլ ակտերով սահմանված դեպքերում զինվորական ծառայությամբ չպայմանավորված աշխատանքներում ընդգրկված զինծառայողների վրա տարածվում են նշված աշխատանքները կատարող այլ քաղաքացիների համար նախատեսված իրավական նորմերը:

(450-րդ հոդվածը լրաց. 14.04.11 ՀՕ-124-Ն)

**ՉՈՐԱՄԱՍԻ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ  
ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ**

Հողված 451. Չորամասի հրամանատարը պատասխանատու է զորամասի զինվորական ծառայության մշտական անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումների կազմակերպման համար: Ի լրումն հրամանատարների (պետերի)՝ սույն Կանոնադրքի 73-85 հոդվածներով սահմանված պարտականությունների՝ հրամանատարը պարտավոր է՝

1) կանխատեսել, վերլուծել, բացահայտել և կանխարգելել զինվորական ծառայության վտանգավոր գործոնները, որոնք զորամասի ամենօրյա գործունեության հետևանքով կարող են սպառնալիք հանդիսանալ զինծառայողների, ինչպես նաև բնակչության և շրջակա միջավայրի համար:

2) կանոնակարգել զինվորական ծառայության վտանգավոր գործոնների սահմանափակման (չեզոքացման) պայմաններն ու անվտանգության պահանջները՝ զորամասի ու դրա ստորաբաժանումների ամենօրյա գործունեության միջոցառումներն իրականացնելիս՝ հաշվի առնելով զինվորական ծառայության առանձնահատկությունները, զինվորական ծառայության անվտանգության ապահովման պարտադիր կազմակերպատեխնիկական միջոցառումների համալիրը:

3) մշտապես վերահսկել զինվորական ծառայության անվտանգության պահանջների կատարումը ստորաբաժանումների (ծառայությունների) ամենօրյա գործունեության ընթացքում:

4) զինված ուժերում վտանգավոր աշխատանքների սահմանված ցանկի հիման վրա զորամասում սահմանել մեծ վտանգավորություն պարունակող աշխատանքների ցանկը և դրանց անվտանգ (անվթար)

կատարման կարգը: Զինված ուժերում սահմանված վտանգավոր աշխատանքների ցանկը հաստատվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի նորմատիվ հրամանով:

5) ապահովել զինվորական ծառայության անվտանգության պահանջներին համապատասխան սպառազինության ու ռազմական տեխնիկայի պահպանության, շենքերի և շինությունների շահագործման, սարքավորումների օգտագործման, ինչպես նաև ծառայողական և հատուկ պարտականությունների իրականացման վայրերում աշխատանքների կատարման անվտանգությունը:

6) կայացրային պլանին համապատասխան՝ համագործակցելով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության տարածքային մարմինների հետ, կազմակերպել զորամասի ուժերի ու միջոցների մասնակցությունը զորամասի տեղակայման վայրում բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների վերաբերյալ զինծառայողների ու նրանց ընտանիքների անդամների իրազեկումը, արտակարգ իրավիճակների հետևանքների վերացումը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում զինծառայողների ու նրանց ընտանիքների անդամների, սպառազինության, ռազմական տեխնիկայի և այլ ունեցվածքի տարահանումը:

7) միջոցներ ձեռնարկել պատահարների և հանցագործությունների կանխարգելման ուղղությամբ, իսկ դրանց տեղի ունենալու դեպքում անհապաղ զեկուցել վերադաս հրամանատարությանը և իրազեկել համապատասխան իրավասու մարմիններին՝ ապահովելով դեպքի վայրի, հանցագործության գործիքների և այլ իրեղեն ապացույցների պահպանումը:

(451-րդ հոդվածը լրաց. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հողված 452. Չորամասի հրամանատարը, նրա տեղակալները, զորատեսակների ու ծառայությունների պետերը, ստորաբաժանումների հրամանատարներն ու նրանց տեղակալները, զորամասի (ստորաբաժանման) պաշտոնատար այլ անձինք պատասխանատու են ենթակա ստորաբաժանումների (ծառայությունների) զինվորական ծառայության անվտանգության պահանջների ապահովման համար՝ ծառայողական և հատուկ պարտականություններին ու սույն գլխի պահանջներին համապատասխան:

(452-րդ հոդվածը լրաց. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 453. Ամենօրյա գործունեության միջոցառումները կազմակերպող կամ դրանց ընթացքը ղեկավարող պաշտոնատար անձինք՝ անձնակազմերի պետեր, ավագներ կամ այլ պատասխանատուներ, ծառայողական ու հատուկ պարտականությունների կատարման վայրերում ամենօրյա գործունեության ընթացքում յուրաքանչյուր միջոցառում կազմակերպելիս և իրականացնելիս պարտավոր են՝

1) ճշտել զինվորական ծառայության վտանգավոր գործոնները, որոնք կարող են առաջանալ միջոցառումն իրականացնելիս, և որոշել (սահմանել) դրանց սահմանափակման (չեզոքացման) միջոցները.

2) սահմանել ամենօրյա գործունեության միջոցառումների կազմակերպման ու կատարման կարգը, ծառայողական ու հատուկ պարտականությունների կատարման համար հատկացված վայրում նշանակել ղեկավարներ, կատարողներ և վերահսկողություն իրականացնողներ.

3) անձամբ կազմակերպել զինվորական ծառայության անվտանգության պահանջների (կանոնների) ուսուցման պարապմունքներ և հրահանգավորումներ՝ ուղղված անձնակազմի կողմից ծառայողական ու հատուկ պարտականությունների կատարման անվտանգ հնարքների ու միջոցների տիրապետմանը.

4) ամենօրյա գործունեության միջոցառում անցկացնելու մեկնարկից առաջ անձամբ համոզվել, որ դրա համար ստեղծված են անվտանգ պայմաններ, ենթակաները յուրացրել են զինվորական ծառայության անվտանգության պահանջները (կանոնները) և ունեն դրանք կատարելու բավարար հմտություն, տիրապետում են վթարային իրավիճակներում գործելու կարգին և կարող են օգնություն ցուցաբերել տուժածներին.

5) ամենօրյա գործունեության միջոցառում անցկացնելու ժամանակ միջոցներ ձեռնարկել կանխելու զինծառայողների և քաղաքացիական անձանց մահվան, խեղումների, շրջակա միջավայրին վնաս հասցնելու հնարավոր ռիսկերը, իսկ անվտանգության պահանջների խախտում բացահայտելիս կամ վթարային իրավիճակ ստեղծվելու դեպքում անհապաղ դադարեցնել համապատասխան միջոցառման կատարումը:

(453-րդ հոդվածը լրաց. 14.04.11 ՀՕ-124-Ն)

Հոդված 454. Յուրաքանչյուր զինծառայող պարտավոր է խստագույն երպով պահպանել զինվորական ծառայության անվտանգության պահանջները (կանոնները): Այդ նպատակով նա պարտավոր է՝

1) լիարժեքորեն տիրապետել իր ծառայողական ու հատուկ պարտականությունների անվտանգ կատարման մեթոդներին ու հնարքներին, անցնել համապատասխան հրահանգավորում, ինչպես նաև հանձնել անվտանգության պահանջների կատարման տեսական գիտելիքների իմացության և գործնական հմտությունների կիրառման ստուգարք.

2) ճշգրտորեն կիրառել անհատական ու կոլեկտիվ պաշտպանության միջոցները, իսկ անհրաժեշտության դեպքում կարողանալ օգտագործել բուժկանխարգելիչ միջոցները և տուժածներին ցույց տալ առաջին օգնություն, զինվորական ծառայության անվտանգության պահանջների խախտումների և այլ արտակարգ իրավիճակների մասին անհապաղ զեկուցել անմիջական հրամանատարին (պետին).

3) սահմանված կարգով և ժամկետում անցնել բուժհետազոտություն:

(454-րդ հոդվածը լրաց. 14.04.11 ՀՕ-124-Ն)

(գլուխը լրաց. 14.04.11 ՀՕ-124-Ն)

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Օ Ր Ե Ն Ք Ը**

Ընդունված է 2010 թվականի դեկտեմբերի 22-ին

**ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

**ՔԱՂՎԱԾՔ**

**Հոդված 8. Կենսաթոշակի տեսակները**

Սույն օրենքով սահմանվում են կենսաթոշակի հետևյալ տեսակները.

1. աշխատանքային`
- 1) տարիքային,
- 2) արտոնյալ պայմաններով,
- 3) երկարամյա ծառայության,
- 4) հաշմանդամության,
- 5) կերակրողին կորցնելու դեպքում,
- 6) մասնակի.

**2. զինվորական`**

- 1) երկարամյա ծառայության,
- 2) հաշմանդամության,
- 3) կերակրողին կորցնելու դեպքում.

**Գ Լ ՈՒ Խ 3**

**ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇՇԱԿՆԵՐ**

**Հոդված 17. Զինվորական կենսաթոշակի իրավունքը**

1. Զինվորական կենսաթոշակի իրավունք ունի`

1) Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ոստիկանության, ազգային անվտանգության հանրապետական գործադիր մարմինների և Հայաստանի փրկարար ծառայության (այսուհետ նաև` համապատասխան մարմիններ) համակարգի

հրամանատարական և ոչ հրամանատարական (սպայական, ենթասպայական, շարքային) կազմի ծառայողը.

2) վարժական հավաքների կանչված զինապարտը և Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակիցը.

3) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայողը և դատական ակտերի հարկադիր կատարողը:

**Հոդված 18. Երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ նշանակելու պայմանները և ժամկետը**

1. Երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ է նշանակվում համապատասխան մարմիններում, ինչպես նաև քրեակատարողական և դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություններում ծառայությունը կարգավորող օրենքներով սահմանված կարգով և ժամկետներով ծառայած այն անձին (այսուհետ` զինծառայող), որը`

1) զինվորական ծառայությունից (այսուհետ նաև` զինծառայություն) սահմանված կարգով արձակվելու օրվա դրությամբ ունի առնվազն 20 օրացուցային տարվա զինվորական ծառայության ստաժ.

2) սահմանային տարիքը լրանալու կապակցությամբ կամ պայմանագրի գործողության ժամկետը լրանալու կապակցությամբ (սահմանային տարիքը լրացած լինելու դեպքում) զինվորական ծառայությունից արձակվելու օրվա դրությամբ ունի առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, որում զինվորական ծառայության ստաժը կազմում է առնվազն 12 օրացուցային տարի, 6 օրացուցային ամիս.

3) հաստիքների կրճատման կամ առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայությունից արձակվելու օրվա դրությամբ առնվազն 45 տարեկան է և ունի առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, որում զինվորական ծառայության ստաժը կազմում է առնվազն 12 օրացուցային տարի, 6 օրացուցային ամիս:

2. Զինծառայողին կենսաթոշակ է նշանակվում զինծառայությունից սահմանված կարգով արձակվելու դեպքում:

3. Երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակը նշանակվում է ցմահ:

**Հոդված 19. Երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելու կարգը**

1. Երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակը հաշվարկվում է  $G = Z \times X \times Q_1 + Q_2 \times X \times Q_2$  բանաձևով, որտեղ՝

G-ն կենսաթոշակի ամսական գումարն է,

Z-ն՝ հիմնական կենսաթոշակի չափը,

Q<sub>1</sub>-ն՝ զինվորական ծառայության ստաժի տարիները,

Q<sub>2</sub>-ն՝ զինվորական ծառայության ստաժի մեկ տարվա արժեքը,

Q<sub>1</sub>Q<sub>2</sub>-ն՝ զինծառայողի զբաղեցրած վերջին պաշտոնի համար «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված գործակիցը (այսուհետ՝ զինծառայողի անձնական գործակից):

2. Զինվորական ծառայության ստաժի մեկ տարվա արժեքը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Զինվորական ծառայության ստաժի մեկ տարվա արժեքը չի կարող պակաս լինել զինվորական ծառայության ստաժի մեկ տարվա արժեքի նախկինում սահմանված չափից:

*(19-րդ հոդվածը փոփ. 13.11.12 ՀՕ-202-Ն, խմբ. 11.12.13 ՀՕ-121-Ն)*

**Հոդված 20. Հաշմանդամության զինվորական կենսաթոշակ նշանակելու պայմանները և ժամկետը**

1. Հաշմանդամության զինվորական կենսաթոշակ նշանակվում է բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամ ճանաչված այն զինծառայողին, որը հաշմանդամ է ճանաչվել զինվորական ծառայության ընթացքում կամ զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակվելուց հետո՝ հինգ տարվա ընթացքում, սակայն զինծառայության ժամանակ ծագած հիվանդության, վնասվածքի կամ խեղման հետևանքով, այդ ժամկետից ուշ, սակայն զինծառայության ժամանակ ստացած վնասվածքի կամ խեղման հետևանքով:

2. Հաշմանդամության զինվորական կենսաթոշակը նշանակվում է անկախ զինվորական ծառայության տևողությունից:

3. Հաշմանդամության զինվորական կենսաթոշակը նշանակվում է հաշմանդամության ամբողջ ժամանակահատվածի համար:

*(20-րդ հոդվածը լրաց. 19.03.12 ՀՕ-100-Ն)*

**Հոդված 21. Հաշմանդամության զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելու կարգը**

1. Հաշմանդամության զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկվում է՝

1) առաջին խմբի հաշմանդամի համար՝ 20 տարվա զինվորական ծառայության ստաժ ունեցող այն զինծառայողի համար հաշվարկված երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի 70 տոկոսի չափով, որը զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակվելու օրվա դրությամբ զբաղեցրել է զինծառայության նույն պաշտոնը և ունեցել է նույն զինվորական կոչումը:

2) երկրորդ խմբի հաշմանդամի համար՝ 20 տարվա զինվորական ծառայության ստաժ ունեցող այն զինծառայողի համար հաշվարկված երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի 60 տոկոսի չափով, որը զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակվելու օրվա դրությամբ զբաղեցրել է զինծառայության նույն պաշտոնը և ունեցել է նույն զինվորական կոչումը:

3) երրորդ խմբի հաշմանդամի համար՝ 20 տարվա զինվորական ծառայության ստաժ ունեցող այն զինծառայողի համար հաշվարկված երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի 40 տոկոսի չափով, որը զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակվելու օրվա դրությամբ զբաղեցրել է զինծառայության նույն պաշտոնը և ունեցել է նույն զինվորական կոչումը:

2. Պարտադիր ժամկետային զինվորական ծառայության շարքային կազմի զինծառայողի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի չափը (ըստ հաշմանդամության խմբերի) սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. Մույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հաշվարկված հաշմանդամության զինվորական կենսաթոշակի չափը չի կարող ցածր լինել պարտադիր ժամկետային զինվորական ծառայության շարքային կազմի զինծառայողի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի չափից:

4. Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակցի (եթե նրա համար վարձատրության չափ սահմանված չի եղել) հաշմանդամության զինվորական կենսաթոշակը հաշվարկելիս հիմք է ընդունվում պայմանագրային ծառայության շարքային կազմի «ավագ սերժանտ» զինվորական կոչում և 20 տարվա զինվորական ծառայության ստաժ ունեցող զինծառայողի անձնական գործակիցը:

*(21-րդ հոդվածը փոփ. 13.11.12 ՀՕ-202-Ն, խմբ. 11.12.13 ՀՕ-121-Ն)*

**Հոդված 22. Կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակ նշանակելու պայմանները և ժամկետը**

1. Կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակ է նշանակվում զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի՝ սույն օրենքի 13-րդ հոդվածում նշված անդամներին՝ անկախ զինծառայողի զոհվելու (մահանալու) պատճառից, անցած ժամանակաշրջանից և ծառայության տևողությունից:

2. Սույն հոդվածի դրույթները տարածվում են նաև՝

1) զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակված և, անկախ ժամանակաշրջանից, մահացած այն զինծառայողի ընտանիքի անդամների վրա, որի մահվան պատճառը զինծառայության ընթացքում ստացած վնասվածքն է, խեղումը կամ ծագած հիվանդությունը:

2) ծառայողական պարտականությունները կատարելիս անհայտ կորած, ինչպես նաև մահացած ճանաչված զինծառայողների ընտանիքների անդամների վրա:

3. Կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակ է նշանակվում նաև զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակված և կենսաթոշակի իրավունք ձեռք բերած, սակայն կենսաթոշակ նշանակելու համար չդիմած և զինծառայությունից սահմանված կարգով արձակվելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, մահացած նախկին զինծառայողի ընտանիքի անդամներին:

**Հոդված 23. Կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելու կարգը**

1. Կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկվում է՝

1) յուրաքանչյուր երեխայի, առկա (ցերեկային) ուսուցմամբ սովորողի համար՝ մահացած կերակրողի վերջին զինծառայության պաշտոնը զբաղեցրած, նույն զինվորական կոչումը ունեցող և 20 տարվա զինվորական ծառայության ստաժ ունեցող զինծառայողի համար հաշվարկվող՝ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի 60 տոկոսի չափով:

2) երկու ծնողին կորցրած մինչև 18 տարեկան յուրաքանչյուր երեխայի, առկա (ցերեկային) ուսուցմամբ սովորողի համար՝ մահացած կերակրողի վերջին զինծառայության պաշտոնը զբաղեցրած, նույն զինվորական կոչումը և 20 տարվա զինվորական ծառայության ստաժ ունեցող զինծառայողի համար հաշվարկվող՝ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի 80 տոկոսի չափով:

3) ընտանիքի՝ սույն օրենքի 13-րդ հոդվածում նշված յուրաքանչյուր մյուս անդամի համար՝ մահացած կերակրողի վերջին զինծառայության պաշտոնը զբաղեցրած, նույն զինվորական կոչումը և 20 օրացուցային տարվա զինվորական ծառայության ստաժ ունեցող զինծառայողի համար հաշվարկվող՝ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի 40 տոկոսի չափով:

2. Պարտադիր ժամկետային զինվորական ծառայության շարքային կազմի մահացած (զոհված) զինծառայողի ընտանիքի անդամի (այդ թվում՝ երկու ծնողին կորցրած երեխայի, առկա (ցերեկային) ուսուցմամբ սովորողի) կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի չափը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված կարգով հաշվարկված՝ կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի չափը չի կարող պակաս լինել պարտադիր ժամկետային զինվորական ծառայության շարքային կազմի մահացած (զոհված) զինծառայողի ընտանիքի անդամի կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի չափից:

4. Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակցի (եթե նրա համար վարձատրության չափ սահմանված չի եղել) ընտանիքի անդամի կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելիս հիմք է ընդունվում պայմանագրային ծառայության շարքային կազմի «ավագ սերժանտ» զինվորական կոչում և 20 տարվա զինվորական ծառայության ստաժ ունեցող զինծառայողի անձնական գործակիցը:

*(23-րդ հոդվածը լրաց. 19.03.12 ՀՕ-100-Ն, փոփ. 13.11.12 ՀՕ-202-Ն, խմբ. 11.12.13 ՀՕ-121-Ն)*

**Հոդված 24.** **Զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելու համար դրամական բավարարումը որոշելու կարգը**  
*(հոդվածն ուժը կորցրել է 11.12.13 ՀՕ-121-Ն)*

**Գ Լ ՈՒ Խ 5**

**ՍՏՍԺՈՒՄ ՀԱՇՎԱՐԿՈՂ ԺԱՄԱՆԱԿԱԶԱՏՏՎԱԾՆԵՐԸ ԵՎ ՍՏՍԺԸ ՀԱՇՎԱՐԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ**

**Հոդված 31.** **Զինվորական ծառայության ստաժում հաշվառվող ժամանակահատվածները և դրանք հաշվարկելու առանձնահատկությունները**

1. Զինծառայողներին երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ զինվորական ծառայության ստաժում օրացուցային հաշվարկով հաշվառվում են՝

1) համապատասխան մարմինների համակարգերի հրամանատարական և ոչ հրամանատարական (սպայական, ենթասպայական, շարքային) կազմերի պաշտոններում զինծառայության, քրեակատարողական ծառայողի և հարկադիր կատարողի ծառայության, ինչպես նաև համապատասխան մարմինների ուսումնական հաստատություններում ուսման ժամանակահատվածները՝ անկախ զինվորական կամ հատուկ կոչման առկայությունից.

2) ԽՍՀՄ զինված ուժերում, ԽՍՀՄ պետական անվտանգության կոմիտեի և ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության համակարգերում զինվորական ծառայության, ինչպես նաև դրանց ուսումնական հաստատություններում ուսման ժամանակահատվածները՝ անկախ զինվորական կամ հատուկ կոչման առկայությունից.

3) դատապարտված կամ քրեական հետապնդման ենթարկված այն զինծառայողների՝ կալանքի տակ, ազատագրվման վայրում և արքայազնում գտնվելու ժամանակաշրջանները, որոնց նկատմամբ կայացվել է արդարացման դատավճիռ կամ ընդունվել քրեական գործը

կարճելու մասին որոշում՝ հանցագործության դեպքի, հանցակազմի բացակայության կամ հանցագործության կատարմանը մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու պատճառով:

2. Զինծառայողներին երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ զինվորական ծառայության ստաժի առկայության դեպքում զինվորական ծառայության ստաժում հաշվառվում են՝

1) եռակի չափով՝

ա. զինված ուժերի կազմում մարտական գործողություններին մասնակցելու ժամանակահատվածները,

բ. Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ մարտական գործողություններին մասնակցելու ժամանակահատվածը կամ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս զինվորական ծառայությունը՝ հատուկ մարտական առաջադրանք կատարելու դեպքում,

գ. 1986 թվականի ապրիլի 26-ից մինչև 1987 թվականի դեկտեմբերի 31-ը Չեռնոբիլի ատոմային էլեկտրակայանի վթարի հետևանքների վերացման աշխատանքներին զինծառայողների մասնակցության ժամանակահատվածը,

դ. սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված ժամանակահատվածը,

ե. մարտական գործողություններ կամ հատուկ առաջադրանք կատարելիս վիրավորված, կոնտուզիա, վնասվածք, խեղում կամ հիվանդություն ստացած զինծառայողների անընդհատ բուժման ժամանակահատվածը,

զ. զինծառայությունն այլ երկրների տարածքներում, որտեղ տեղի են ունեցել մարտական գործողություններ (բացի այն զինծառայողներից, ովքեր զինծառայությունից արձակվել են կամ այդ պետություններից հետ են կանչվել զինծառայողի կոչումը վարկաբեկող արարքների կապակցությամբ), ինչպես նաև այդ երկրներում վիրավորվելու, կոնտուզիա, վնասվածք, խեղում կամ հիվանդություն ստանալու կապակցությամբ բուժհիմնարկներում անընդհատ բուժման ժամանակահատվածը,

է. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ ժամանակահատվածներ.

2) կրկնակի չափով՝

ա. զինված ուժերի ավիացիոն ստորաբաժանումների օդաչուների ծառայության ժամանակահատվածը՝ թռիչքների տարեկան նորմաները կատարելու դեպքում,

բ. գերության ժամանակահատվածը, եթե զինծառայողը կամավոր չի գերվել և գերության ընթացքում Հայաստանի Հանրապետության դեմ հանցագործություն չի կատարել,

գ. 1961 թվականի հունվարի 1-ից մինչև 1982 թվականի դեկտեմբերի 31-ը զինվորական մասնագետների (բացի օդաչուներից)՝ այն երկրներ գործուղվելու ժամանակահատվածը, որոնց բանակները մարտական գործողություններ են կատարել կամ ռազմական օգնություն են ցույց տվել այլ երկրների (անկախ այդ մարտական գործողություններին նշված զինծառայողների մասնակցությունից),

դ. 1976 թվականի հունվարի 1-ից սկսած՝ ծովի մակերևույթից 2500 մետր և ավելի, իսկ 1997 թվականի օգոստոսի 11-ից՝ 2000 մետր և ավելի բարձրության բարձրլեռնային վայրերում զինծառայության ժամանակահատվածը,

ե. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ ժամանակահատվածներ.

### 3) մեկուկեսի չափով՝

ա. պարաշյուտիստների ծառայության ժամանակահատվածը՝ համապատասխան մարմինների սահմանած թռիչքների տարեկան նորմաները կատարելու դեպքում, և սակրավորների ծառայության ժամանակահատվածը,

բ. հատուկ ստորաբաժանումներում զինծառայող կանանց ծառայության ժամանակահատվածը՝ ըստ համապատասխան մարմինների սահմանած պաշտոնների ցանկի,

գ. զինծառայության ժամանակահատվածն այն վայրերում, որտեղ արտակարգ դրություն է հայտարարվել,

դ. 1992 թվականի փետրվարի 1-ից մինչև 1994 թվականի մայիսի 1-ը Հայաստանի Հանրապետության զինված ուժերում զինծառայության ժամանակահատվածը,

ե. 1973 թվականի ապրիլի 1-ից սկսած՝ ծովի մակերևույթից 1500 մետր և ավելի, իսկ 1998 թվականի նոյեմբերի 30-ից՝ 1700-2000 մետր բարձրության լեռնային վայրերում զինծառայության ժամանակահատվածը,

զ. 1988 թվականի հունվարի 1-ից մինչև 1990 թվականի դեկտեմբերի 1-ը Չեռնոբիլի ատոմային էլեկտրակայանի վթարի հետևանքների

վերացման աշխատանքներին զինծառայողների մասնակցության ժամանակահատվածը,

է. ազգային անվտանգության բնագավառի լիազորված պետական կառավարման մարմնի «Ա» ստորաբաժանումում զինծառայության ժամանակահատվածը,

ը. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ ժամանակահատվածներ.

4) այլ բնույթի գործունեության մեկ ամսվա ժամանակահատվածը՝ որպես մեկ ամսվա զինվորական ծառայություն՝

ա. մինչև զինվորական ծառայության անցնելը ԽՍՀՄ ԴՕՍԱԱՖ-ի և քաղաքացիական ավիացիայի համակարգերի օդաչուական և ինժեներատեխնիկական անձնակազմի անդամի աշխատանքային ստաժը,

բ. Հայաստանի Հանրապետության զինված ուժեր գորակոչված, սպայական կոչում ստացած և սպայական պաշտոնում առնվազն 5 տարի ծառայած սպաների՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների մագիստրատուրայում և ասպիրանտուրայում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության պատվերով սովորելու ժամանակահատվածը.

5) այլ բնույթի գործունեության մեկ տարվա ժամանակահատվածը՝ որպես 6 ամսվա զինվորական ծառայություն՝

ա. պահեստից գորակոչված սպայական անձնակազմի զինծառայողի՝ մինչև զինծառայության անցնելը բարձրագույն ուսումնական հաստատություններում առկա ուսման ժամանակահատվածը՝ 5 տարուց ոչ ավելի,

բ. Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության պատվերով սովորած, Հայաստանի Հանրապետության զինված ուժեր գորակոչված, սպայական կոչում ստացած ու սպայական պաշտոնում առնվազն 5 տարի ծառայած զինծառայողների ուսման ժամանակահատվածը:

3. Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտերին մասնակցած անձանց մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ է տրվում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

4. Զինվորական ծառայության ստաժը հաշվարկելու կանոնները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: